

ԱՍՏՎԱԾԱԺՎՋԱԿԱԿԱՆ ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԵՎՈՆ ԽԱՋԻԿՅԱՆ

ԵՂԻՇԵԻ
“ԱՐԱՐԱՃՈՑ
ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ”

"MATENADARAN"
MASHTOTS INSTITUTE OF OLD MANUSCRIPTS
UNDER THE COUNCIL OF MINISTERS OF THE
REPUBLIC OF ARMENIA

LEVON KHACHIKIAN

"The Interpretation of the Genesis" by
ELISHE

Edited by LEVON TER-PETROSIAN

ZVARTNOTS

Yerevan

1992

325
7-28
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԵՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2869
ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԵՂԻՇԵԻ
«Արարածոց մեկնությունը»

Խմբագրությամբ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

ԶՎԱՐԹՆՈՏ

Երևան

1992



Մատենաշարի գլխավոր խմբագիր՝

բանասիրական գիտությունների բեկնածու

Արմեն Տեր-Ստեփանյան

Խաչիկյան Լ. Ս.

№ 287

Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը»: Խմբ.՝ Լ. Տեր-

Պետրոսյան.- Եր.: Զվարթնոց.- 1992.- 328 էջ.

№ 0403000000 - 92

760 (01) - 92

ԳՄԴ 86.37

ISBN 5-8079-0652-7

Լ. Ս. Խաչիկյան

Հայ աստվածաբանական-դավանաբանական գրականության մեջ կարևոր տեղ են գրավում Աստվածաշնչի մեկնությունները: Հայաստանում ֆրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ սկսում ենք Աստվածաշնչի հայերեն մեկնությունների բնագրերի հրատարակության մատենաշար: Այս գաղափարը տարիներ առաջ հղացել էինք Գարեգին Խաչիկոպոս Ներսիսյանի և Եզնիկ վարդապետ Պետրոսյանի հետ միասին, բայց ինչ-ինչ պատճառներով մինչև օրս հնարավոր չի եղել այն իրագործել: Եվ ահա վերջերս Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդի կողմից արժանանալով ջերմ վերաբերմունքի և հովանավորության, ձեռնամուխ եղանք, վերջապես, սույն ծրագրի իրագործմանը:

Մեր նպատակը չէ հրատարակել նաև Աստվածաշնչի մեկնություններին նվիրված ուսումնասիրություններ: Մենք բավարարվելու ենք լոկ բնագրերի հրատարակությամբ, հետազոտական բնույթի գործերը թողնելով ավելի ուշ ժամանակների: Բացառություն է կազմում միայն մեծանուն գիտնական, ակադեմիկոս Լևոն

Խաչիկյանի «Եղիշեի «Արարածոց մեկնությունը»՝ ներկատի ունենալով վերջինիս գիտական մեծ արժեքը և այն հանգամանքը, որ այն գրված լինելով շուրջ 50 տարի առաջ, մինչև օրս եղել է անտիպ:

Մատենաշարն ընդգրկելու է ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական բոլոր մեկնությունները՝ անկախ հրատարակված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Նկատի ունենալով, որ մեկնությունների հիմնական մասն անտիպ է, մենք աշխատելու ենք դրանք հնարավորին չափ կարճ ժամանակում ներկայացնել ընթերցողներին՝ հրատարակելով տարբեր ձևագրերի հետ համեմատված և ճշգրտված բնագրեր:

Արմեն Տեր-Ստեփանյան

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՏ

Եղիշեի անունը ընթերցող լայն հասարակության, ի դեպ նույնիսկ մասնագետների շրջանում, համարյա քացառապես գուցորդվում է Վարդանանց պատերազմի անմահ հուշակոթողի՝ հայ պատմահայրենասիրական գրականության գլուխգործոցի հետ:

Հիշելի, Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկը աչքի է ընկնում այնպիսի բարձր գեղարվեստական արժանիքներով, համաժողովրդական պայքարի ոգեշնչող արտացոլմամբ և արդարության պաշտպանության արժանապատիվ գիտակցությամբ, որ հեղինակի մյուս գրական ստեղծագործությունները կամաբե ակամա ընկել են սուվերի մեջ: Հալանքար քերթը միայն գիտեն, որ բացի «Վարդանանց պատմությունից», Եղիշեն գրել է նաև մի շարք նաոեր և մեկնություններ, որոնք երկիցս հրատարակված լինելով հանդերձ պատշաճ ուշադրության չեն արժանացել բանասերների կողմից: Դրանք են՝ «Խրատ միանձանց», «Մեկնութիւն Յեսուայ և դատաւորաց», «Յաղօթսն, որ

ասէ հայր մեր», «Ի մկրտութիւնն Քրիստոսի», «Յայլակերպութիւնն Քրիստոսի», «Ի չարչարանսն Քրիստոսի», «Վասն դատաստանին և միւսանգամ գալըստեանն», «Վասն յիշատակաց մեռելոց», «Կանոնք» և «Վասն հոգւոց մարդկան» աշխատութիւնները, որոնք իրենց ծավալով զգալիորեն գերազանցում են նույնիսկ Եղիշեի «Պատմութեան» բնագիրը:

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, որ բերված ցանկում բացակայում է հեղինակի ևս մի կարևոր երկասիրություն, որի մասին որոշակի տեղեկություններ են պահպանված միջնադարյան աղբյուրներում: Խոսքը վերաբերում է Եղիշեի «Արարածոց մեկնութեանը», որի ամբողջական բնագիրը, դժբախտաբար, մեզ չի հասել, և դա, Լևոն Խաչիկյանի բնորոշմամբ, «հայ մատենագրության բերեա ամենացավալի կորուստը պետք է համարել»: Այս կտրական պնդումը նախ և առաջ բացատրվում է այն հանգամանքով, որ, դատելով պահպանված հատվածներից, Եղիշեի «Արարածոց մեկնությունը» եղել է հայ բնագիտական մտքի կարևորագույն հուշարձաններից մեկը, որում արծարծվել են բազմաթիվ հարցեր կապված տիեզերքի կառուցվածքի, երկնային մարմինների շարժման, օդերևութաբանական երևույթների, կենդանական ու բուսական աշխարհի, բժշկության, երաժշտության, ֆերականագիտության և այլ բնագավառների հետ: Մոտավորապես այս նկատառումով էլ Լևոն Խաչիկյանը փորձել է առկա նյութերի հիման վրա հնարավորության սահմաններում

վերականգնել Եղիշեի «Մեկնություն» բնագիրը, փորձի արդյունքներն ամփոփելով լեկցության առարկա աշխատության մեջ, որը որպես թեկնածուական դիսերտացիա հաջողությամբ պաշտպանել է 1945թ.:

Նման թեմայի հետազոտության հնարավորությունը ստալինյան բռնապետության ժամանակաշրջանում պայմանավորված էր հայրենական պատերազմի տարիներին խորհրդային ժողովուրդների հերոսական անցյալը ոգեկոչելու անհրաժեշտությունից բխող որոշ գիշումներով, որոնք, սակայն, շատ չանցած կրկին լուծության մատնվեցին, եթե չասեմք՝ կրկին դարձան վտանգավոր գաղափարներ: Ահա թե ինչու Լևոն Խաչիկյանի դիսերտացիան, որն իր գիտական մակարդակով չէր գիշում ո՛չ իր ժամանակի, ո՛չ էլ հետագայի շատ պատմաբանասիրական հետազոտությունների, այդպես էլ չիրատարակվեց պաշտպանությունից հետո: Մենագրությունը թերևս կարելի էր հրատարակել 50-ական թվականների վերջում, սակայն հեղինակն այդ ընթացքում զրադված լինելով այլ գիտական խնդիրներով, բնականաբար, կտրվել էր իր նախկին հետաքրքրություններից և հոգեբանորեն չէր կարող նորից կենտրոնանալ նրանց շուրջ:

Անտիպ լինելով հանդերձ, Լևոն Խաչիկյանի մենագրությունը անցած ավելի քան չորս տասնամյակների ընթացքում ամենևին դուրս չի մնացել գիտական շրջանառությունից: Աշխատության միակ մեխանագիր օրինակը հեղինակը սիրահոժար կերպով տրամադրել է հե-

տաճարավոր մասնագետներին, որոնք ոչ միայն առատորեն օգտվել են նրանից, այլև զարգացրել նրա առանձին դրույթները: Խաչիկյանի այս աշխատությունը բազմիցս հղված է, օրինակ, Փայլակ Անթարյանի, Սեն Արևշատյանի, Քնարիկ Տեր-Դավթյանի, Կիմ Մուրադյանի, Նիկոլայ Գևորգյանի, իմ և այլոց ուսումնասիրություններում: Նման հետաքրքրությունը բացատրվում է նրանով, որ արտաֆուստ նվիրված լինելով նեղ բանասիրական խնդրի, Խաչիկյանի աշխատությունը իրականում շոշափում է հայագիտական բազմապիսի ընդհանուր հարցեր՝ կապված Եղիշեի պատմության թվագրման, հունարան դպրոցի ձևավորման, հայ բնագիտական մտքի զարգացման, առանձին մատենագիրների գրական ժառանգության և այլ թեմաների հետ:

Ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել Խաչիկյանը, Եղիշեի «Արարածոց մեկնութեան» ամբողջական բնագիրը արդեն XIII դ. գոյություն չի ունեցել: Այդ մեկնությունից ընդարձակ հատվածներ են պահպանվել միայն՝ Վարդան Արևելցու «Լիով պատհառ Արարածոց» կամ «Մեկնութիւն հնգամատենի» երկասիրության մեջ, նույն հեղինակի «Ուսմունքի սուրբ գրոց» կամ «Ժըլլանք» հանրահայտ գրվածքում և Մաշտոցյան Մատենադարանի №№ 2679, 4161, 5254 ձեռագրերում: Ահա սրանք են Եղիշեի «Արարածոց մեկնութեան» հատվածների աղբյուրները: Նշված աղբյուրների բնությունը Խաչիկյանը կատարել է մեծագրության առաջին գլխում, որը վերնագրված է «Եղիշեի Արարածոց մեկնու-

թեան մեզ հասած հատվածները»:

Երկրորդ գլուխը նվիրված է Եղիշեի «Արարածոց մեկնութեան» հատվածների հարազատության հարցին, որի ուսումնասիրման անհրաժեշտությունը թելադրված է այն հանգամանքով, որ, նախ, Եղիշեի միևնույն հատվածները Վարդան Արևելցու «Հնգամատենի» մեկնության տարբեր ձեռագրերում երբեմն ընծայվում են այլ հեղինակների և երկրորդ, մեզ հասած բոլոր աղբյուրներն էլ ծագում են ոչ թե Եղիշեի աշխատության նախնական բնագրից, այլ IX-X դարերի մատենագիր Տիմոթեոս վարդապետի «Քաղուածոյ Արարածոց մեկնութեան» մի խմբագրված օրինակից:

Նյութերի հակասական տվյալների համադրումը և նրանց մանրակրկիտ բնությունը հեղինակին հանգեցնում է այն համոզման, որ մեզ հասած հատվածներն իրենց շարադրանքով ու բովանդակությամբ ներկայացնում են Եղիշեի նախնական բնագիրը, կրած լինելով միայն խմբագրական բնույթի որոշ փոփոխություններ ու սղումներ: Ուստի, «արդ ի չգոյն նախնական բնագրի, նրանք զգուշավոր օգտագործման դեպքում կարող են փոխարինել Եղիշեի բուն գործին»: Նույն գլխում Խաչիկյանը համոզիչ կերպով ապացուցում է, որ «Արարածոց մեկնութեան» պահպանված հատվածների հեղինակը ոչ այլ ոք է, եթե ոչ «Վարդանանց պատերազմի» անկրկնելի պատմագիրը:

Մենագրության երրորդ գլխում Լևոն Խաչիկյանը բնում է Եղիշեի «Արարածոց մեկնութեան» աղբյուր-

ների հարցը, նախ և առաջ պարզաբանելով «Ծննդոց գրքի» եղիշեի օգտագործած բնագրի բնույթը: Այնուհետև հետազոտողը բնագրական համեմատությունների միջոցով վեր է հանում եղիշեի մեկնության ոսկեդարյան թարգմանական աղբյուրները՝ Եվսեբիոս Եմեսացու «Մեկնութիւն Սուրբ գրոց», Հովհան Ոսկերեքանի «Յաղագս արարչութեան աշխարհի» և Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակական» աշխատությունները: Սակայն, ինչպես ցույց է տալիս Խաչիկյանը, եղիշեի աղբյուրների շարքում շատ ավելի նշանակալի դեր են կատարել հունարան դպրոցի առաջին շրջանի թարգմանությունները, այն է՝ Փիլոն Եբրայեցու համարյա բոլոր աշխատությունները, Հերմես Եռամեծի «Առ Ասկղեպիոս Սահմանք» գրվածքը, Պլատոնի «Առ Տիմեոս», Բերևս նաև այլ երկերը, «Բարոյախօս» ժողովածուն, Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւնը» և Հերակլիտես Եփեսացու «Վասն բնութեան» աշխատությունը:

Այս հանգամանքը հեղինակին հարկադրում է կանգ առնել հայագիտության երկու կարևորագույն խնդիրների՝ հունարան դպրոցի սկզբնավորման ժամանակի և եղիշեի «Պատմության» թվագրման վրա: Խաչիկյանը, մասնավորապես, վիճարկում է հունարան դպրոցի թարգմանությունների պարբերացման Մանանդյանի առաջարկած տեսակետը և դպրոցի սկզբնավորումը թվագրում V դ. երկրորդ կեսով, իր հզորակացությունն ամփոփելով հետևյալ տողերում. «Հունարան թարգմանությունները կարող էին համագոյակցել եթե ոչ ոսկե-

դարյան, ապա գոնե այսպես կոչված արծաթեդարյան գրական հուշարձանների հետ: Հետևաբար, պարտադիր չէ, որ հունարան դպրոցը մեխանիկորեն հաջորդեր հայ գրականության այն շրջանին, որը հետազոտողների կողմից սահմանափակվել է 450-572 թվականներին»:

Ինչպես հայտնի է, այս տեսակետը հետագայում պաշտպանել ու նոր փաստերով հիմնավորվել է մի շարք այլ հետազոտողների կողմից և այժմ տիրապետող դարձել հայրենական բանասիրության մեջ: Ընդգծում եմ՝ հայրենական, որովհետև արտասահմանում դեռ շարունակում են պաշտպանել Մանանդյանի և Ալինյանի տեսակետը:

Լևոն Խաչիկյանը որոշակի նպաստ է ներդրել նաև եղիշեի «Պատմության» գրության ժամանակը նշտելու գործում: Մասնավորապես, առաջին անգամ նրա աշխատության մեջ է առաջ ֆաշվել Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի առկայության կամ բացակայության հանգամանքը որպես թվագրման հուսալի միջոց օգտագործելու խնդիրը: Ինչպես հայտնի է, Կորյունի, Եզնիկի և եղիշեի երկերում ոչ միայն այդ պաշտամունքի հետք չկա, այլև բացակայում է Գրիգոր Լուսավորչի անունն անգամ, որ և հիմք է տալիս այդ երկերը թվագրել 440-460-ական թվականներով, որից հետո ստեղծված բոլոր գրական հուշարձաններում Լուսավորչին արդեն զբաղեցնում է կենտրոնական տեղերից մեկը: Տվյալ խնդրի առումով հետաքրքիր է նաև Խաչիկյանի այն դիտողությունը, որ մինչդեռ Ղազար Փար-

պեցու «Պատմութեան» մեջ Վարդանը և նրա զինակիցները, որպես կանոն, հիշվում են «սուրբ» տիտղոսով, ապա Եղիշեի երկում այդ տիտղոսը բացակայում է: Դա նշանակում է, որ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» պատմավեպը, իսկապես, գրվել է դեպքերից անմիջապես հետո, երբ հայոց եկեղեցին դեռևս պաշտոնապես չէր սրբացրել Ավարայրի հերոսներին:

Լևոն Խաչիկյանի աշխատության չորրորդ գլուխը քաժանված է երկու մասի, որոնցից առաջինում վեր է հանված և գնահատված Եղիշեի «Արարածոց մեկնութեան» արժեքը միջնադարի բնագիտական մտքի ուսումնասիրման տեսակետից: Խնդրի հանգամանալից հետազոտությունը բողոքելով այլևայլ գիտությունների պատմությունն ուսումնասիրող մասնագետներին, հեղինակը նպատակ է դրել, ընդհանուր պատկերացում տալու համար, նախնական ֆենոլոգիայի հենքի վրա «Մեկնութեան» առավել կարևորությունը ներկայացնող գիտական դրույթները: Խաչիկյանի բնորոշմամբ, Եղիշեի «Արարածոց մեկնութեան» մեջ շոշափված են տիեզերագիտության, բնագիտության, օդերևութաբանության, կենդանաբանության ու բուսաբանության բնագավառներին վերաբերող բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծված են ժամանակի գիտական մտքի մակարդակին համապատասխան: Շատ առումներով Եղիշեն տվյալ հարցում վեր է կանգնած ինչպես նախորդ, այնպես էլ հետագա դարերի մի շարք աստվածաբան գիտնականներից:

Նույն գլխի երկրորդ մասը վերնագրված է «Եղիշեի Արարածոց մեկնության ազդեցությունը հետագա դարերի հայ մատենագրության վրա»: Այստեղ ժամանակագրական կարգով ներկայացված են հայ մատենագրության այն բոլոր գիտական, գեղարվեստական, մեկնողական և պատմական հուշարձանները, որոնցում Խաչիկյանի կողմից բացահայտված են Եղիշեի երկի ուղղակի կամ միջնորդավորված ազդեցության անժըխտելի հետքեր: Դրանք ակնհայտ են, մասնավորապես, Անանիա Շիրակացու, Զաֆարիա Կաթողիկոսի, Հովհաննես Սարկավագի, իսկ Վարդան Արևելցու «Հնգամատենի մեկնութեան» միջնորդությամբ՝ նաև Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Խլաքեցու, Մատթեոս վարդապետի, Հովհաննես Թլկուրացու և այլ հեղինակների տիեզերագիտական, ֆերականագիտական, օդերևութաբանական, տոմարագիտական, անգամ դավանաբանական և աստվածաբանական աշխատություններում:

Մեծագրությունը կցված է նաև մի ընդարձակ հավելված, որում Լևոն Խաչիկյանը ներկայացրել է Եղիշեի «Արարածոց մեկնութեան» կարևորագույն հատվածների բնագրերը, քաղված հիմնականում Վարդան Արևելցու «Հնգամատենի մեկնութեան» ուր ընդօրինակություններից և ֆենոլոգիայի հենքի վրա մեծապես ազդեցություններից: Աշխատասիրողի արժիվում պահվում է Եղիշեի երկի բոլոր պահպանված հատվածների վերականգնված բնագիրը, որն անհրաժեշտ խմբագրությունից հետո կարող է հանձնվել մասնագետներին և ընթեր-

ցող լայն հասարակության դատին:

Ինչպես տեսնում ենք, Լևոն Խաչիկյանը, կարելի է ասել, անհայտությունից լույս աշխարհ է հանել մի անգնահատելի մատենագրական հուշարձան, որը սնված լինելով անտիկ գիտության և փիլիսոփայության ակունքներից, նոր դեր է խաղացել հայ միջնադարյան քննադատական մտքի զարգացման գործում:

Ի դեպ, ինչպես փայլուն կերպով ապացուցել է աշխատասիրողը, եղիշեն փաստորեն եղել է նորալատոնական փիլիսոփայության առաջին ջատագովն ու տարածողը Հայաստանում: Այս դրույթը հետագայում զարգացել և հանգամանալից հիմնավորում է ստացել, մասնավորապես, Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական գիտության ձևավորումը հին Հայաստանում» աշխատության մեջ (մի ամբողջ գլուխ այնտեղ նվիրված է այս հարցին):

Եթե փորձենք մի քանի խոսքով գնահատել Լևոն Խաչիկյանի աշխատության գիտական մակարդակը, ապա կարելի է նշել նրա հետևյալ բնորոշ առանձնահատկությունները.

1. Հիմնարարությունը՝ հարցերի համակողմանի և խոր քննությունը,

2. Կորևոր և երկրորդական խնդիրների հստակ գնազանում, խուսափումը մանր բանասիրական պրպրտումներից,

3. Փաստերի չափազանց զգուշավոր մեկնաբանությունը և անհիմն ենթադրությունների մերժումը,

4. Բանասիրական վերլուծության հետևողական մեթոդաբանության կիրառումը,

5. Փաստերի քննությունը հայագիտության խնդիրների ընդհանուր կոնտեքստում:

Ի դեպ, մոտավորապես այս կերպ է գնահատվել Խաչիկյանի ուսումնասիրությունը նաև ժամանակակիցների կողմից: Պահպանվել են նրա գիտական դեկավար Հակոբ Մանանդյանի, պաշտոնական ընդդիմախոսներ Երվանդ Տեր-Մինասյանի և Ստեփանոս Մալխասյանի կարծիքները, որոնցում աշխատությունը բարձր դրվատանքի արժանանալով, համարվել է հայագիտության կարևոր նվաճումներից մեկը: Որպես նմուշ բերենք մի փոքրիկ հատված Ստ. Մալխասյանի կարծիքից. «Տարակույս չկա, գրում է նա, որ ընկեր Լ. Խաչիկյանն ըստ ամենայնի արժանի է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի: Բայց ես մի քայլ էլ առաջ կգնամ: Դիտարկելով այս աշխատանքը շատ հիշեցնում է Ն. Մառի «Վարդան Այգեկցու առակները», որը նա գրել էր մագիստրոսական աստիճան ստանալու համար: Թե՛ Մառը և թե՛ Խաչիկյանը պեղումներ են կատարել հին ձեռագրերի մեջ և նրանցից հանել՝ լույս աշխարհ են բերել նոր կամ կորած մատենագրություն: Նրկուն էլ մանրակրկիտ և բարեխիղճ պրպտումներ են կատարել և լուսաբանել են մի քանի մատենագրական հարցեր: Եվ ինչպես որ Մառի պաշտոնական օպոնենտը առաջարկեց Մառի աշխատանքն ընդունել ոչ միայն իրրև մագիստրոսական, այլև իրրև դոկտորական աս-



տինանի արժանավոր գործ՝ այնպես էլ ես առաջարկում եմ Լ. Խաչիկյանի «Եղիշեի Արարածոց մեկնությունը» դիսերտացիան արժանավոր համարել՝ հեղինակին ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան տալու համար» (Լ. Խաչիկյանի արխիվից):

Գիտության աշխարհ մուտք գործող 27-ամյա երիտասարդի համար (1945 թ. Խաչիկյանը 27 տարեկան էր), սա, անշուշտ, միաժամանակ և՛ խրախուսիչ, և՛ պարտավորեցնող գնահատական էր, որը լիովին արդարացվեց Լևոն Խաչիկյանի հետագա փայլուն գիտական գործունեությամբ:

Լևոն Տեր-Պետրոսյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հերոսական ու զարմանալի է Ե դարի Հայ ժողովրդի պատմությունը: Եվ Հերոսական է ոչ միայն կենաց-մահու սխրագործություններով լի գոտեմարտերով, այլև այդ գոտեմարտերի դադարաբանական ակունքների խորությունը ու վճիռ իմաստություններով: Հայ ռազմիկի աղեղն ու սուրն այդ դարում պատվարեց օտար ուժերի գրոհները, պահպանելով երկրի ինքնավարությունը, նորաբողոք դիրն ու զրականությունը, ժողովրդի պատիվը, իսկ Հայ գիտնականի միտքն ու գրիչը ուղղություն ու նպատակասլացություն տվին այդ արդար գործի Համար պատկանդարանից Հանած նետերին: Հենց մտքի ու բազկի այդ գոտեմարտերում որպես մի կուռ ամբողջություն ձևավորվեց այն ժողովուրդը, որ կոչված էր դարեր շարունակ օտարերկրյա հրոսակախմբերի Հանդեպ պաշտպանելու իր Համակցության ազգային առանձնահատկությունները, իր դիրքը, լեզուն, գիտությունը, դպրոցները, իր կյանքի փրկիսովայությունը:

Ահա այդ պայծառ դարի երկու՝ սրի ու հրի, մտքի ու գրչի ճակատներով մաքառող գործչի՝ Եղիշեի լավագույն աշխատություններից մեկի բեկորները պեղելուն և բեկորների միջոցով ողջ աշխատության Հավանական կառուցվածքը պատկերելուն է նվիրված սույն Հետազոտությունը: Խոսքը վերաբերում է Եղիշեի Արարածոց, այսինքն՝ Ծննդոց գրքի մեկնությանը, որն օրգանապես

առնչվում է Ե դարի հերոսամարտերին: Հայ ժողովուրդըն իր գինական ուժով պաշտպանում էր իր գինվոր գիտնականի, ինչպես և նրա կուսակիցների տեսութայունն այն մասին, որ մարդն իր հոգով լինելով աստըծու հույանն ազգակից, արարչից ստացել է գործելակերպի անսահման ազատութուն, ինքնիշխան ազատ կամք, լավագույնը կամ վատթարն ընտրելու, ուղիղ կամ խոտոր ճանապարհով ընթանալու իր կենաց ճանապարհը: Օտարերկրյա բռնակալներն ինքնիշխան կամքով գործում են ընդդեմ լույսի, ճշմարտության՝ ընդդեմ աստծու, ուստի պետք է համաժողովրդական ուժերով ելնել ու պատվարել չարի, անիրավության խուժումը հայրենի երկրի սահմանները. այսպես էին քարոզում և այս էր բխում՝ հայոց բանակի մտքի մարտիկների տեսական դրույթներից: Հետևաբար հասկանալի են այն նկատառումները, որոնք թելադրել են Վարդանանց հերոսամարտերի անմահ ճառագրի գիտական աշխատության բեկորների հավաքման ու արժեքավորման գործի ձեռնարկման անհրաժեշտութայունը:

Աշխատանքի արդյունքները մեզ ստիպել են որոշ առումով շեղվել մեզ հուզող բանասիրական հարցերի շրջանակից և նախնական քննարկման ենթարկել նաև տիեզերագիտության, օդերևութաբանության, բնագիտության և այլ ճշգրիտ գիտությունների գծով կուտակված այն հարուստ փաստական նյութը, որի մասնագիտական ուսումնասիրման ու արժեքավորման

գործն այժմեական է ու անհետաձգելի:

Ձեռք կարող չնչել նաև, որ մեր հետազոտութայան մեջ որոշ հարցերի լուծման փոխարեն առաջարկված են միայն հավանական ենթադրութայուններ, իսկ երբեմն, աղբյուրների պակասութայան ու անբավարարութայան պատճառով հարցի լուծումը թողնված է հետագա ուսումնասիրողներին: Մեր մատենագրութայան պատմութայան հետ մերձավոր ծանոթութայուն ունեցող ամեն ոք ներողամիտ կլինի այդ բնույթի թերութայունների ու պակասների նկատմամբ: Անշուշտ կլինեն նաև վրիպումներ ու սխալներ, որոնց համար պատասխանատու են ոչ թե աղբյուրները, այլ այդ աղբյուրների ոչ հմուտ օգտագործողը:

«Արդ, այս չափ ասացեալքս բաւականացի ի մեր նուաստութենէս, - գրում էր իր ավարտական ատենախոսութայան մեջ Գլաձորի համալսարանի (ԺԴ դար) շրջանավարտներից մեկը, - եթէ էր ինչ բան հաւանական և արգասաւոր և մետ ի լաւն, ձերոց է շնորհ և արդիւնք յօժարամտութեան, ապա թէ արտաքոյ լաւին և յոյժ հեռի ի ճշմարտութենէն՝ այն մեր հեղգութեանս և փոքրատար ամանի մտացս, սակայն լերուք և յայսոսիկ առ մեզ երկայնամիտ և մարդասէր մշակք...»: Նույն համոզմամբ մենք ևս ներկայացնում ենք սույն աշխատանքը ի քննութայուն, խորին շնորհակալութայուն հայտնելով մեր մեծարգո ղեկավար Հ. Մանանդյանին և մեր մյուս ուսուցիչներին ու ավագ ընկերներին:

ԳԼՈՒԽ Ա
ԵՂԻՇԵՒԻ ԱՐԱՐԱԾՈՅ ՄԵԿԵՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ՀԱՍԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

Եղիշեի վարքագիծները միարժեք վկայում են, որ նա իր պատմությունից և հանրահայտ մյուս աշխատություններից դատ¹ գրել է նաև Հին կտակարանի Մենդոց (Աբարաժոց) գրքի մի մեկնություն: Այդ աշխատության կորուստը համարվել է ցավալի մի իրողություն, և այն հայտնաբերելու ուղղությամբ, որքան մեզ հայտնի է, որևէ լուրջ փորձ մեր բանասիրության կողմից չի կատարված:

Միակ, գծախտաբար անհաջող, փորձը Եղիշեի այդ կորած երկի երևան հանելու ուղղությամբ կատարել է բանասեր Ն. Ակինյանը, որ 1928 թվականին հրատարակել է Մենդոց գրքի որոշ մասերի մեկնության վերաբերյալ հարցերի և պատասխանների ձևով շարադրված մի բնագիր²:

Հրատարակիչն իր առաջաբանում նկատում է, որ «գրուածքս տարբեր է... այն Աբարաժոց մեկնութենէն, զոր յանունն Եղիշեի աչքի առջև ունեցած է Վարդան Արեւելցի իւր հնդամատենին քաղուածոյ մեկնութեան մէջ», այնուամենայնիվ «յեցած (Վիեննայի Մատենադարանի) թ. 99 ձեռագրին միակ վկայութեան վրա», ոչ միայն այն վերագրում է Վարդանանց պատմության հեղինակ Եղիշեին, այլև աշխատում է այդ վարկածը հաստատել այն իրողությամբ, որ իբր «գրուածքիս բո-

վանդակութիւնը, լեզուն, ոճը կկրեն հնութեան կնիք, որոնք լիովին կհամապատասխանեն նաև Եղիշէ վարդապետի ժամանակին և գրութեանց նկարագրին»³:

Որ այդ երկը ոչ մի գեպքում չի կարող Եղիշեի Աբարաժոց մեկնությունը լինել, գրական փաստերով անպարտապէս է բանասեր Ա. Վարդանյանի այդ առթիվ գրած գրախոսականում⁴: Վարդանյանի հիմնական աւարկությունները հանգում են հետևյալին.

ա) Այդ աշխատության մեջ բառացի մեջբերումներ կան կեղծ-Արիստոտելի «Յաղագս աշխարհի» աշխատությունից, որը, ըստ Հ. Մանանդյանի, թարգմանված կարող է լինել ամենաշուտը Զ դարի երկրորդ կեսին⁵:

բ) Անվիճելի հետքեր են նկատվում նաև կեղծ-Դիոնիսիոս Արիոպաղացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկի հայկական թարգմանության, որը կատարվել է 712 թվականին Ստեփանոս Այուսեցու կողմից: Հասկանալի է, որ Եղիշեն չէր կարող ոգտվել այդ թարգմանական երկերից:

գ) Այդ մեկնությունը ծանոթ է եղել մեր բանասիրության մեջ այլ հեղինակների անունով: Այսպես օրինակ՝ Ղ. Ալիշանն այնտեղից մեջբերումներ է անում իր «Հին հաւատք» աշխատության մեջ որպես Վահրամ Ռաբունու (Ժ. Գ. դար)⁶, իսկ Ն. Մառը որպես Վարդանի հեղինակություն⁷, որոնք ավելի հավանական ու համոզիչ են թաղրություններ կարող են համարվել, եթե նույնիսկ հիմնված չեն անթիտելի փաստերի վրա:

Վարդանյանի դատողություններին մեր կողմից

կավելացնենք Հետևյալը. Վիեննայի Մատենադարանի միակ՝ №99 գրչագիրը, որն այդ բնագիրը վերագրում է Եղիշեին, ժԹ դարի մի նորագույն արտագրություն է⁸: Այդ բնագրի մեր Մատենադարանում առկա և մեզ Հայտնի բոլոր գրչագրերը (№ 631, ժԴ-ժԵ դար, №775, 1761 թ., №1437, ժԸ դար, №2242, ժԷ դար, №2245, 1689 թ., №2252, ժԷ դար, ինչպես և Վիեննայի Մատենադարանի №324 գրչագիրը, (1305 թ.) հեղինակի վերաբերյալ չունեն որևէ հիշատակություն: №99 ձեռագիրն ընդօրինակող Սերոբե Պետրոսյանը հավանաբար իմանալով, որ Եղիշեն ունեցել է Արարածոց գրքի մեկնություն, կարող էր ենթադրաբար այն վերագրել Եղիշեին: Սակայն ենթադրությունների սահմաններում չդեգերելու համար բավական է մի քանի համեմատություններ կատարել այդ բնագրի և անվիճելիորեն Եղիշեին պատկանող Արարածոց մեկնության պահպանված հատվածների հետ, որպեսզի ակնհայտ դառնա այդ երկերի հեղինակներին նույնացնելու սխալը: Մենք գերադասում ենք, մի փոքր դժվարացնելով մեր աշխատանքը, մեկ-երկու համեմատություններ կատարել ոչ թե Արարածոց մեկնության մեր կողմից հավաքված հատվածների ու այդ բնագրի միջև, որոնց հեղինակի և հարազատության խնդիրները պետք է քննարկվեն մյուս գլուխներում, այլ Եղիշեի այնպիսի երկերի հետ, որոնց մասին կասկածներ չեն կարող հարուցվել:

Ն. Ակինյանի կողմից հրատարակված բնագրի հեղինակը «Զի՞նչ է էութիւն Հրեշտակաց, մարմին թէ՞»

անմարմին» հարցին պատասխանում է. «Վասն ասելոյն Դաւթի, թէ Որ արար զՀրեշտակս իւր ի Հողմն եւ պաշտաւնեայս իւր Հրոյ, զմանք մարմինս նորքս եւ անաւոր ետուն ամենայն աներեւութիցն: Բայց ճշմարիտ է անմարմինս զնոսա ասել. քանզի զանմարմնութիւն նոցին Դաւթ յայտ կամեցաւ առնել երկոքումք, նրբագոյն արարածովքն՝ Հողմ եւ Հուր զնոսա մակադրելով. զի եւ արարչութիւնն այնու երեւի մեծ եւ աննախանձ, թէ ոչ միայն մարմնաւորս, այլ եւ անմարմինս եստեղծ: Բայց զայն գիտել արժան է, թէ յորժամ առաքինն, մեկնին անտի ուր էինն»⁹:

Այդ նույն հարցին Եղիշեն իր «Վասն Հոգւոց մարդկան» գրվածքում, որն ինչպես կտեսնենք, նույնպես Արարածոց մեկնության հատվածներից է կազմված, տվել է իմաստասիրական, խոր բացատրություն. «Հոգիք Հրեշտակաց պարզ բնութիւն, անմարմին, անյող, անորակ, անքանակ, անձն կատարեալ. և կատարելութիւն անձին ոչ յումեքէ, այլ ինքնակատար էութիւն, կատարեալ դոյացութիւն»¹⁰: Հասկանալի է, որ միևնույն հարցի վերահիշյալ մեկնությունները չեն կարող նույն գրչից դուրս եկած լինել:

Ակինյանի հրատարակած բնագրի հեղինակը Ծընընդոց գրքի Ժ գլխի 8-9 համարները մեջ է բերում Աստվածաշնչի հրատարակված բնագրերին համապատասխան «Սկսաւ լինել (Ներբով) հսկայ...» ձևով, հակառակ այն բանի, որ Եղիշեն №2679 գրչագրում նույն հատվածը բերել է հուսական բնագրին համապատա-

սխան «սկա որսորդ» ձևով: Պարզ է, որ միևնույն հեղինակը չէր կարող Մենդոց գրքի երկու տարբեր խմբագրության բնագրեր գործածել, և նրանց տալ տարբեր մեկնություններ, որ ավելորդ ենք համարում մեջբերել:

Հրատարակված բնագրի հեղինակը խոսելով քաջքերի մասին հայտնում է, որ հավատում են, թե նրանք «...Աղեքսանդր կալեալ ունին ի Հոռոմ, եւ գԱրտաւաղը Հայոց թագաւոր ի Մասիս...» և այլն¹¹: Եղիշեն, ինչպես և Եղնիկ Կողբացի¹² Աղեքսանդրի մասին բոլորովին այլ բան են հաղորդում. «...Ապականացուի անմահանալն չէ հնար,-դրում է Եղիշեն,- և թէ էր լինէր իբրեւ զառասպելն, զոր ասեն Աղեքսանդրոս ոմն անմահ կայ, այնքան մաշեալ, որ լեզուն միայն է մընացեալ, զոր արկեալ ի շիշ՝ ասեն, հծծէ և ասէ. Ուրեմն թէ Ադամ անմահացեալ էր լինէր իբրեւ զիս»¹³:

Նման փաստերի թիվը կարելի է բազմապատկել, սակայն շարադրվելիք նյութն ինքնըստինքյան խոսելու է ի վնաս Ակինյանի ենթադրության, և ավելի փաստեր ցանկացող ամեն ոք կարող կլինի մեր կողմից հավաքված և հավելվածում բերվող հատվածների ու Ակինյանի հրատարակած բնագրի համապատասխան մասերի համեմատությամբ ստանալ լրացուցիչ փաստարկումներ¹⁴:

Եղիշեի Արարածոց մեկնության ամենից ավելի ընդարձակ և թվով շատ հատվածներ պահպանած աղբյուրը Վարդան Արևելցու Արարածոց գրքի հավաքածո մեկնությունն է՝ «Լիով պատճառ Արարածոց սատար-

եալ ի Վարդան վարդապետէ վասն կրթութեան մանկանց Սիոնի»:

Դեռևս 1865 թվականին Գ. Զարբհանալյանն իր «Պատմութիւն Հայերէն դպրութեանց» աշխատության մեջ գրել է. «Արարածոց մեկնութիւն մըն ալ շարադրած էր Եղիշէ, որուն կորուստը՝ մեծ զրկում մըն է Հայերէն դպրութեանց. և այս կորուստեան ցաւը աւելի զգալի կընեն անոր հատուածները, զոր իւր համանուն երկասիրութեանը մէջ առաջ կը բերէ Վարդան յանուն Եղիշէի»:

Կորուստը ցավել են նաև ուրիշները, սակայն ոչ մի փորձ չի կատարվել Վարդանի մոտ պահպանված հիշյալ հատվածները համադրելու իրար, ճշտելու նրանց պատկանելության հարցը, և ցույց տալու, թե որքանով նրանք կարող են փոխարինել չպահպանված բնագրին, ուստի և, ինչ չափով կարելի է ստացված արդյունքների հիման վրա գաղափար կազմել կորուստի մասին:

Որքան մեզ հայտնի է, առաջին անգամ Վարդանի «Լիով պատճառ Արարածոց» աշխատության մեջ պահպանված Եղիշեի հատվածներից մեկը գիտել են որպես Եղիշեի Արարածոց մեկնության հատված, և այնտեղից մի բառ են մուծել իրենց հոչակավոր «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» աշխատության մեջ բառգրքի հեղինակները (Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան): Իրենց առաջաբանում նրանք նշել են, որ Եղիշեի անվամբ «կան և հատուածք մեկնութեան Արարածոց, այսինքն գրոցն ծննդոց, ի գիրս այ-

լոց մատենագրաց. անձկալի է զամբողջ գործն տե-
սանել», - երազել են նրանք¹⁵:

«Եղիշ[էի] ծն[նդոց մեկնութիւն] առ Վարդանայ»
աղբյուրի նշմամբ բառարան է մուծվել «կնճթեղ» բա-
ռը՝ «կամ իբրեւ զփիղ ժանաւոր... ոչ կնճթեղ, ոչ ցոկեղ»
պարբերութեան Հիման վրա, որ իրոք, Ծննդոց գրքի Ա
գլխի 28 համարի Վարդանի կողմից Եղիշին վերա-
գրված մեկնողական հատվածի մասն է կազմում (Ա, էջ
19բ):

Բառգրքում տեղ են գտել նաև բազմաթիվ բառեր,
որոնք չնայած նույնպես քաղված են Վարդանի «Լիով
պատճառ արարածոց»-ում գտնվող Եղիշի հատված-
ներից, սակայն բառարանագիրներին կողմից ղեկավել են
իբրեւ Վարդանի և ոչ Եղիշի բառեր: Հավանաբար բա-
ռարանի հեղինակներին ծանոթ է եղել «Լիով պատ-
ճառ»-ի այնպիսի գրչաւիր օրինակ, որի լուսանցքնե-
րում ոչ ամենուրեք էին նշանակված Վարդանի կողմից
չարահյուսված հատվածների հեղինակների անուննե-
րը: Եղիշից որոշ բառեր, ուստի և հատվածներ էլ նը-
րանց ծանոթ են եղել Տոմար, Ոսկեփորիկ և Տոնական
ժողովածուներից. այսպես օրինակ Վարդանի մոտ
պահպանված ԾՆ. Ա, 17 համարի Եղիշի մեկնութեան
հատվածը նրանց ծանոթ է եղել ինչ որ տոմարից (այդ-
տեղից նրանք բառարանի մեջ մուծել են «ամառնա-
նամ», «արջասպնաներկ», «պողահասութիւն», «բառ-
նասառոյց» բառերը), Ծննդոց գրքի Ա գլխի 66 համարի
մեկնութեան հատվածը՝ Տոնական ժողովածուից, իսկ

ԺԷ, 5 համարի հետաքրքիր հատվածը, որից օրինակ են
բերել «սոսկ» բառի համար՝ Ոսկեփորիկ ժողովածուից:
Վարդանի մոտ պահպանված Եղիշի հատվածներից
մեծ թվով բառեր էլ գուրս են մնացել բառգրքից, մի
հանգամանք, որ ամրացնում է մեր համոզմունքը բա-
ռարանի հեղինակների կողմից օգտագործած բնագրի
թերի լինելու մասին:

Ավելի ընդարձակ տեղեկութուններ, ինչպես Վար-
դանի Հնգամատյանի մեկնութեան, որի առաջին գիրքն
է կազմում Արարածոց հատվածո մեկնութեանը, այն-
պես էլ նրա մեջ եղող Եղիշի հատվածների մասին
տալիս է Հ. Տաշյանն իր «Յուցակ հայերէն ձեռագրաց
Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» մեծար-
ժեք աշխատութեան մեջ, №229 գրչագրի նկարագրու-
թեան կապակցութեամբ¹⁶:

Հրատարակելով երկու փոքրիկ հատվածներ Եղիշի
մեկնութեաններից¹⁷, նա մանրամասնորեն նկարագ-
րում է Վարդանի Հնգամատյանի մեկնութեան վերո-
հիշյալ ձեռագիրը, և հատկապես վերարտադրում է Ծը-
նդոց գրքի մեկնութեան պատկերը¹⁸:

Վարդանի աշխատութեան մեջ եղող Եղիշի հատ-
վածների մասին մեզ հայտնի բոլոր տեղեկութունները
ամբողջացնելու ցանկութեանից ելնելով, ավելորդ չենք
համարում նշել նաև, որ Բաբգեն Կյուլեսերյանին ևս,
Ամրդուլու վանքի Մատենադարանի մի գրչագրից,
հայտնի են եղել Եղիշի մեկնութեան երեք հատված-
ներ, որոնց մասին նա, իր ընդարձակ ուսումնասիրու-

Թյան մեջ գրում է. «Մեր Մատենադարանի ձեռագիր-ներու մեջ Համառոտ Ճառքնտիր մը կայ, ընտիր Հավա-քածոյ մը քրիստոնեայ եկեղեցւոյ Հայրերէն. մեր Զա-քարիա կաթողիկոսի գրուածքներն էլ կան, ինչպէս նաև «Եղիշէի Հայոց Վարդապետի» ընծայուած խա-չելութեան և Թաղման ծանօթ գրուածքներէն երկու Հա-մառոտուած գլուխ: Այս ձեռագրին սկիզբը քանի մը պարապ թուղթ թողուած է, որոնց մէկ մասին վրայ տարբեր գրչէ մը ճառքնտրական գրուած մ'ընդօրի-նակուած է՝ կիսատ մնացած: Այս գրուածին լուսանց-քին վրայ երեք տեղ Եղիշ. նշանակուած է իբր կոչում այս մատենագրի գործերէն: Վերջին կոչումը «Եւ դո-ղան քան զնապաստակ, զոր զօղակ կոչեն քերթողքն որպէս ասէ Փիլոփն ոչ վայրապար, այլ վասն ղօղելոյն և վասն առաւել զարհուրական և երկչոտ բնութեան» և այլն: Հաւանաբար «Արարածոց մեկնութիւն» կոչուած գործէն է այս կոչումը: Անշուշտ կարեւոր նշան մ'է այս եղիշէի Փիլոփն հետ ունեցած սերտ կապը ցուցնելու, զոր հիներն ալ ճանչցած են»¹⁹: Ծանոթ լինելով Վար-դանի Արարածոց մեկնութեանը, դժվար չէ նկատել, որ Կյուլիսաբոյանին Հանդիպած նյութը, հակառակ նրա Հայտնած կարծիքի, ոչ թե «Ճառքնտրական գրված մ'է», այլ մի Հատված Վարդանի մեկնությունից, իսկ նրա մեջբերումը մի մաս՝ Ծն. գրքի ԽԹ գլխի 8-12 Հա-մարների Եղիշէի ընդարձակ մեկնությունից: Իսկ այժմ հարկ ենք համարում փոքր-ինչ ավելի մանրամասն կանգ առնել Վարդան Արեւելցու մեկնության ստեղծ-

ման հանգամանքների վրա:

1261 թվականին, Կիլիկյան և բուն Հայաստանի դիտական շրջաններում մեծ հեղինակություն վաստա-կած, կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցու (1221-1267) և Հեթում Թաղավորի հետ սերտ անձնա-կան հարաբերությունների մեջ եղող, Հայ եկեղեցական ու քաղաքական նշանավոր գործիչներից մեկը Հանդի-սացող Վարդան Արեւելցին, որ այդ ժամանակ հավա-նորեն գտնվում էր Կայանո բերդին մերձ սուրբ Անդրեի վանքում²⁰, «Ի միայնարանն իւր»²¹, Հաղպատի վան-քի առաջնորդ Համաղասպից և Սանահնի փակակալ Գրիգոր վարդապետից պատվեր է ստանում գրել «Վեր-լուծութիւն արարչապատում մովսիսական մատենիս»: Վարդանը դժվարանում է հանձն առնել այդ մեծ գոր-ծը. «Քանզի ի զգայութեան եաք, գրում է նա, մերում անբաւականութեանս՝ ի նսեմութենէ մտաց և ի ժամա-նակէ և ի հիւանդոտ կենաց» (այդ թվին Վարդանը պետք է որ վաթսուներեք ծերունի լիներ): Սակայն Տեր Համաղասպի «երեսաւք և գրով» խնդրանքներին բնդառաջելով, նա ձեռնարկում է այդ գործին: Գրքի մեկնության վերջում Վարդանը գետեղել է մի չափա-զանց հետաքրքիր հիշատակարան, որն ամբողջական և անաղարտ վիճակով պահպանվել է մեր Մատենադա-րանի №2510 զրչագրում և «Լիով պատճառ արարա-ծոց»-ի դրման հանգամանքների մասին պատմում է հետևյալը.

«... Ի թուիս ԶԺ (1261) եղև սկիզբն և կատարումն

Համառօտ վերլուծութեան արարչապատուժ մովսինս-
կան մատենիս ի խնդրոյ արհիական տեառն Համա-
գասպայ և վարդապետին Գրիգորի՝ փակակալին սուրբ
ուխտին Սանահնին, սատարութեամբ անարժան ծա-
ռայիս քրիստոնէից Վարդանայ, ի սիրոյ և ի մեծարոյ
երեսաց բռնադատեալ, քանզի ի զգայութեան էաք մե-
րում անբուականութեանս ի նսեմութենէ մտաց և ի
ժամանակէ և ի հիւանդոտ կենաց: Ապա, ի շատ ժամա-
նակաց Հարամդեալ ի վարդապետէն Գրիգորի ընդ-
դիմանալիք իրաւամբք, անվստահ եղեալ չիշխէաք
ձեռնարկել յիրս, որ վեր է քան զկարն մեր. ապա, զի
պատկառելի երեսօքն Հարկեց զմեզ տեառն Համագաս-
պաւ՝ երեսաւք և գրով անդադար, յաղթեցաք և հնա-
զանդեալ սկսաք յաստուած և յաղօթս նոցա վստա-
հացեալ ի դարնանալիս յեղանակն, առաջնորդ ու-
նելով զամուսն Հաւատոյ զԵղիշէ և զԵփրեմ և
զմեծն Ոսկիաբան և զայլսն, որ վաստակեալ էին ի
գիրքս յայս, ի տեղիս-տեղիս, և յորոց Հաւաքեալ էր
լուսաւոր վարդապետ[ն] Տիմոթէոս: Սակայն դիմեցաք
յոլով (°) և սուայտանաց՝ ներքոյ և արտաքոյ ի շմոր և
յամպոխե[ա]լ աւուրքս մեղսաբեր, վասն որոյ կասկա-
ծեմ, այլև գիտեմ իսկ եթէ սակաւ պակասութիւն և
պատճառ եպերանաց գտանէք պատահեալքս այսմ
գործոյ մեծի ընդ որս վարկապարզի անցաք. է զի ըզ-
հարկաւորն և զառաւել պիտանին թողեալ լինինք ի
սրբոցն բանից, և է զի Հանդէպ տեղ եղեալ, և դարձեալ՝
զոր ի մէնջ Համարձակեցաք զմիտս յաւելուլ զթւեց-

եալն պակաս, լինի ի դէպ և մնացեալ իցէ դարձեալ
Հարկաւոր բանեար անլուծանելի, այլ և հրամանայ-
տութն ստիպէին զմեզ ի շոյտն, և մեք ի կասկածոտ և
ի մուխտորա (°) կենացս մերոց երկուցեալք ել ի դուրս
եղաք և Համառաւտ գնացաք փութացեալք յաւարտն,
զոր տեսաք ի շնորհսն աստուծոյ և յողորմն նորայ, յե-
ղանակս ձմեռայնի ի հնգետասանն մարգաց ամսոյ և ի
քսանուհինկն նոյեմբերի, ի տաւնի սուրբ Հայրապետին
Պետրոսի՝ Աղեքսանդրու պատրիարքին, և երկիր պա-
ղաք Աստուծոյ առաջի ձեր ի շրթունս եկեղեցոյ և հա-
ւատոյ, և նովաւ աղաչեմ զամէնիսեան ներել մեզ ըզ-
լիանցանս աստուածաբար զթալով ի մեզ և ուղղելով
զթիւրութիւն մեր: Եւ թէ զշնորհն Յիսուսի Աստուծոյ
մերոյ զանարգամեծարն տէսանէք բախեալ ի մեզ, և
պիտանի ինչ ծնեալ յամուլ և յաղտեղեալ մտացս մե-
րոց՝ մի անարգէք, այլ մեծութիւն, պատիւ և փառք Աս-
տուծոյ, զոհութիւն և աւգնութիւն յազգս և յաղինս
ամենայն, յամենայն յաւիտեան և յաւիտենից յաւիտ-
եան սմա են: Շնորհս ունելով և աղօթս տալով Հարցո-
ղացն բանիցս, ընդ որս և մեզ աղաչեմ մասնաւորել
զառատ ողորմութիւն աստուծոյ ի թողութիւն մեզաց
մերոց, և անբիծ և անդատապարտ կալոյ մեզ առաջի
ահեղ ատենին աստուծոյ, ձեւք Հանդերձ և ամենայն
լրութեամբ քրիստոնէից: Եւ շնորհաւոր ձեզ և բարեմոն
և բարեշուք և բարեաց բազմաց կարապետ, եւ նախըն-
թաց զրքուկս այս վաստակ և աշխատութիւն փոքրիկ
փյուռն և հեղք մատանց մերոց և ձեռաց, երկրորդելոյ ի

ղիւրընթերց մատեան որդոյ իմոյ սիրեցելոյ Մարգարէի, որում և վարձ բարի տացէ նմայ Եփեսոս Քրիստոս, տէրն մեր յառատաձիր գանձուց իւրոց, և եղիցի ինքն աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն»²²:

Վարդանը, ինչպես տեսնում ենք, իր առաջադրանքը կատարել է բացառիկ կարճ ժամանակամիջոցում. սկսելով գարնանը, ողջ հնգամատյանը նա մեկնել է նույն՝ 1261 թվականի նոյեմբերի 25-ին, և ստեղծել է «Վասն կրթութեան մանկանց Սիոնի»²³ մի երկ, որն, ինչպես ցույց են տալիս փաստերը, տարածվել և լայն ընդունելութուն է գտել ողջ Հայաստանում, որպես դպրոցական առաջնակարգ ձեռնարկ և ընթերցանության գիրք²⁴:

Հետեւելով այսպես կոչված քաղվածու կամ չըթիւմ-մեկնութիւնների կառուցման ընդունված կանոններին, մասնավորապես իր ուսուցիչ Վանական Վարդապետի «Թորի մեկնութեան» մեջ կիրառված սկզբունքներին²⁵, Վարդանը ևս գերադասել է նոր մեկնութիւն գրելու փոխարեն ի մի բերել և լավագույն հատվածների շարահարութիւնը ամբողջացնել Արարածոց գրքի և Վեցօրեա գործոց վերաբերյալ իր ժամանակ գոյութիւն ունեցող բազմաթիվ մեկնութիւնների լավագույն մասերը²⁶: Նա աշխատութեան շարադրման ընթացքում նյութերի պակասութիւնն չպիտի դառնար բացի հայերեն հին թարգմանութիւններով առկա Եփրեմի, Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկերեւանի, Պիսիդեսի, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Աստվածաբանի և բազմա-

թիվ այլ հեղինակների երկերից, Վարդանը ձեռքի տակ, ինչպես տեսանք իր հիշատակարանից, ունեւր նաև «Լուսաւոր վարդապետ Տիմոթեոսի» կողմից Եղիշեի, Եփրեմի և Հովհան Ոսկերեւանի (Վարդանը միայն սըրանց՝ որպես գլխավորների անունն է շեշտում) երկերից արված ինչ-որ քաղվածու աշխատութիւն:

Այս քաղագրութեան խնդիրը մեզ հուզող հարցի կապակցութեամբ այնքան մեծ նշանակութիւն ունի, որ շեղվելով նյութից պիտի աշխատենք պարզել նրա ինչ լինելը, քանի որ այս հիշատակութեամբ ակնհայտ է դառնում, որ Եղիշեի Արարածոց մեկնութիւնը Վարդանի ժամանակ արդեն իր ամբողջութեամբ ու բնագրով գոյութիւնն չուներ, այլ պահպանվել էր միայն Տիմոթեոսի հավաքական մեկնութեան միջնորդութեամբ: Ո՞վ էր, ե՞րբ է ապրել, և ի՞նչ է արել հիշյալ Տիմոթեոսը. այս հարցերից և ոչ մեկի պատասխանը մեր մատենագրութեան հրապարակված պատմութիւնը չի տալիս, և մենք ստիպված դիմեցինք ձեռագրերին, որեւէ հիշատակութիւն կամ աղբյուր գտնելու հույսով: Մեր պրպտումները տվեցին դրական որոշ արդիւնքներ. Մատենադարանի №1981 գրչագրի 176ա-185բ էջերում (գրչագիրը գրված է ԺԳ-ԺԵ դարերում) պահպանվել է Արարածոց գրքի հատվածո մեկնութեան թերի ու համառոտ մի խմբագրութիւն՝ «Յառաջաբան համառոտ ի Մենդոց, զոր արաբեալ է Տիմոթիա լուսօր վարդապետի» վերնագրով²⁷:

Այդ գրվածքում Արարածոց մեկնութեան հատ-

վածներ են բերված Բարսեղից, Եփրեմից, Հիպոդիտոսից, Հովհանից (Ոսկեբերան), Դիոնիսիոսից, Կղեմեսից, Գրիգոր Նյուսացուց և Եգ. Համառոտագրությամբ նըշված մի հեղինակից, որի ով լինելը չհաջողվեց մեզ պարզել: Չնայած Եղիշեի անվամբ ոչ մի հատված չի պահպանված այդ Համառոտության մեջ, սակայն անկասկած է, որ այս գրվածքը Վարդանի հիշած Տիմոթեոս վարդապետի ընդարձակ մեկնության մի թերի խմբագրությունն է. այս եզրակացության օգտին կարելի է բերել և այն փաստը, որ ինչպես Համառոտության վերնագրում, այնպես էլ Վարդանի վերահիշյալ հիշատակարանում Տիմոթեոսը կոչված է «լուսաւոր վարդապետ», մի մակդիր, որ հաղվագյուտ է մեր մատենագրության մեջ: Տիմոթեոսն իհարկե ապրած պետք է լինի Վարդանից, այսինքն՝ ԺԳ դարից առաջ, կարելի է որոշ փաստերի միջոցով պարզել նրա ապրած ժամանակաշրջանը: Ինչպես ասացինք, նա իր հավաքական մեկնության մեջ հատվածներ է բերել նաև Գրիգոր Նյուսացու («Յաղազս բնութեան մարդոյ») և Դիոնիսիոս Արիոպագացու (հավանաբար «Յաղազս երկնային քահանայապետութեանց») երկերից, որոնցից առաջինը թարգմանվել է 772²⁸, իսկ երկրորդը 712²⁹ թվականին Ստեփանոս Սյունեցու կողմից. սրանից հետևում է, որ Տիմոթեոսը չէր կարող Ը դարից առաջ ապրած, ուստի և իր քաղվածո մեկնությունը հյուսած լինել: Այդ մեկնությունից մի շարք հատվածներ, ինչպես կտեսնենք ստորև, պահպանվել են 972-982 թվականներին ընդ-

րինակված հայկական հնագույն թղթյա գրչագրում, և այն էլ՝ անդամահատված ու խմբագրված վիճակում, ուստի հավանական է ենթադրել, որ Տիմոթեոսի երկը գրված պետք է լինի այդ գրչագրից առնվազն տասնամյակներ առաջ՝ 772-972 թթ. միջև, հավանաբար թղարի ընթացքում³⁰:

Տիմոթեոսի մասին անհրաժեշտ ենք համարում նըշել, որ նա, որքան կարելի է եզրակացնել մեզ հասած խմբագրված ու փոքրիկ գրվածքից, չի սահմանափակվել սոսկ քաղագրի դերով. նրա Համառոտ առաջաբանները, ինչպես և անհրաժեշտն ու լավագույնն ընտրելու կարողությունները ցույց են տալիս, որ հանձին նրա թղարում մենք ունեցել ենք մի իրոք «լուսաւոր վարդապետ»:

Արդ, հարց է ծագում, այդպիսի մի մեկնության առկայության դեպքում ինչ անհրաժեշտություն կար և ինչ նշանակութուն կարող էր ունենալ Վարդանի հավաքածո մեկնությունը, որը սակավ բացառությամբ նույն հեղինակների մեկնություններից հյուսած մի աշխատությունն է իրենից ներկայացնում: Այս հարցի պատասխանը մեր մատենագրության մեջ տեղ գտած նմանատիպ մի փաստի համեմատությամբ ստանում է իր դյուրին լուծումը: Ինչպես հայտնի է, Դիոնիսիոս Թրակացու երկը («Արուեստ Դիոնիսիայ քերականի») մի հին գրականության մեջ մեկնվել է Դավիթ, Մովսես, Պողոս (Անանուն)³¹, Ստեփանոս Սյունեցի և այլ հեղինակների կողմից, որոնց մեկնություններից ան-

Հրաժեշտ դիտած հատվածները շարահյուսել է իրար ժԱ դարի խոշոր գիտնական ու մատենագիր Գրիգոր Մազիստրոսը, իր կողմից ևս ավելացնելով կարևոր մեկնողական մասեր³²:

Սակայն այդ մեկնությունը ԺԳ դարում այլևս չէր բավարարում ընթերցող գիտական շրջանների պահանջներն ու ակնկալությունները, որովհետև, ինչպես գրում է Հովհաննես Երզնկացին իր Քերականի մեկնության Հիշատակարանում, «...դրանս մեկնողացն (Գրիգոր Մազիստրոս) ոչ էր խառնեալ ընդ միմեանս և ոչ զիւրաքանչիւր մեկնութիւն հանգէպ և կշիռ բանին եղեալ: Էին և այլ մեկնիչք, որք ոչ էին հանդիպեալ նրմա: Եւ բազումք ի մասանց բանին ոչ ունէին զմեկնութիւն. և էր զի կրկին և երեքկին էր եղեալ զերից մեկընչացն: Եւ կարգ շարադրութեան, թէ ո՞ր առաջին եւ ո՞ր երկրորդն, ոչ ունէր զյարմարութիւն: Սակաւայսորիկ որոց ոչ գոյր լուծումն տարակոյս առնէր մտաց եւ որոց կրկին էր՝ ձանձրութիւն ընթերցողին: Եւ նախադասութիւն և ստորադասութիւն ոչ ըստ տեղւոյ գոյով աշխատանս էր շարաբանութեան»³³: Այդ իսկ պատճառով Հովհաննես Երզնկացին, Վանականի «Յոբի մեկնութեան» և իր ուսուցիչ Վարդանի Հնգամատեանի ու Սաղմոսների մեկնությունների սկզբունքներով կազմում է մի նոր քերականի մեկնություն, որտեղ ոչ թե իրար ետևից շարադրված են այլևայլ հեղինակներից քաղված հատվածներ, որի պատճառով միևնույն պարբերության մեկնությունը կրկնվելով մի քանի անգամ,

կարող էր ձանձրույթ պատճառել զրբից օգտվողներին, այլ տարբեր հեղինակների ասույթները շաղկապված լինելով միմյանց, մի ամբողջական ու կուռ մեկնություն ձև էին ստացել:

Որ Տիմոթեոսի մեկնության կառուցվածքը համապատասխան է եղել Գրիգոր Մազիստրոսի «Մեկնութիւն Քերականին» աշխատության կառուցվածքին, կարելի է ամբապնդել նաև մի այլ ուշագրավ փաստով, որն ընձեռում է մեզ արդեն Հիշատակած №1981 դրչադրի ծանոթ նյութը: Ընդհանուր վերնագրից և մի քանի էջ բնագրից հետո այնտեղ բերված է մի ենթավերնագիր՝ «Պատճառ քաղութեան (քաղցրութեան) ջուրցն», որին հետևում են այդ հարցի կապակցությամբ այլևայլ կարծիքներ: Գրչագրում պահպանված բնագրի Հիշյալ թերություններն անգամ չեն խանգարում հանգելու այն եզրակացության, որ Տիմոթեոսի ողջ բնագրում առաջադրվող մեկնվելիք հարցի առթիվ իրար հաջորդել են տարբեր հեղինակներից ընդարձակ մեկնություններ, որի հետևանքով ստացվել է մտքի կտրտվածություն, կրկնություններ և այլն: Վարդանը ոչ միայն իր մեկնության մեջ շտկել է այդ թերությունը, այլև բնագիրը հարստացրել է ինչպես այլ հեղինակների, այնպես էլ իր ուսուցիչ Վանականի և իր սեփական մեկնություններով ու նյութերով:

Այսպիսով Վարդան Արևելցին վերադասավորել ու մշակել է Տիմոթեոս վարդապետի հավաքածու Արարածոց մեկնությունը և բազմաթիվ այլ հեղինակներից

քաղած նյութերի օգտագործմամբ շարադրել է Արարածոց գրքի մեկնություն իր արժեքավոր դպրոցական վերլուծությունը՝ որպես Հնգամատյանի մեկնություն առաջին դիրք:

Մեր Մատենադարանի մատենագիտական ցանկերում գրանցված են վերոհիշյալ աշխատություն 29 գրչագիր օրինակներ. դրանք են.

ա/ № 1003. գրիչ՝ Մարգար. տեղ՝ Կաֆա. ժամանակ՝ 1718.

բ/ 1004. երեք տարբեր գրիչներ. Լվով, 1636.

գ/ 1049. Ժէ դար.

դ/ 1050. Մարգարէ. Կաֆա, 1730.

ե/ 1051. ԺԸ դար.

զ/ 1052. Խաչատուր Լեւոնցի. 1647.

է/ 1031. Պետրոս. Աղբակ. 1398.

ը/ 1092. Վարդան. 1685.

թ/ 1093. Մարգարէ. 1730.

ժ/ 1094. Յովհաննէս. Գլաձոր. ԺԴ դ.

ժա/ 1135. Սիմէոն. Սիոն անապատ. 1288.

ժբ/ 1136. Սարգիս. 1381.

ժգ/ 1139. Ժէ-ԺԸ դար.

ժդ/ 1140. Թորոս. Լվով. 1615.

ժե/ 1230. Մանուկ. 1607.

ժզ/ 1267. Գեորգ. ԺԵ դար.

ժէ/ 1324. (քաղվածք). Հաղպատ. 1281.

ժը/ 1976. Պօղոս (մասն). Ժէ դար.

ժթ/ 2190. Աստուածատուր, Սահակ (մասն). ԺԸ դ.

ի/ 2510. Մխիթար. 1393.

իա/ 2604. Օշին. Արմենի անապատ. 1295.

իբ/ 3212. Ժէ դար.

իգ/ 3303. Սահակ Սարկավագ. 1611.

իդ/ 4262. Թադեոս վրդ. ԺԵ դար.

իե/ 5342. ԺԳ դար.

իզ/ 5575. Միքայել երէց. դյուղաքաղաք Մարզ-վան. 1602.

իէ/ 6419. Յակոբ. 1653.

իը/ 7452. Սարգիս. 1269.

իթ/ 8835. ԺԸ դար.

Բերված ցանկի ութ լավագույն գրչագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ կազմել ենք Վարդանի մեկնություն մեջ պահպանված Եղիշեի Հատվածների նախնական մի բնագիր, որը և օգտագործել ենք, ինչպես ուսումնասիրության մեջ, այնպես էլ Հավելվածում Հրատարակվող Հատվածների Համար: Այդ գրչագրերի փոքր-ինչ մանրամասն նկարագրությունները կտրվեն Հավելվածում, իսկ այստեղ Հարկ ենք Համարում մատնանշել միայն Հետևյալը:

Նախնական քննությունները ցույց տվին, որ №1267 (Ա) գրչագիրը պահպանել է գրություն բազմաթիվ Հնագույն ձևեր («այդ» փխ. «այլ», «թոյդ» փխ. «թոյլ», «թե» փխ. «թէ», «եթե» փխ. «եթէ», «մարդաբայդ», «տեսդեան» և այլն), ինչպես և ունի չափազանց պարզ ու կանոնավոր գրչություն, ուստի որոշեցինք այն դարձնել վերակազմվող նախնական բնագրի

Հիմք: Այդ նպատակով արտագրեցինք կենտ էջահամարների՝ աջ, իսկ զույգ էջահամարների՝ ձախ կողմում «Եղիշ», «Եղ», «Եղիշայի» կրճատումներով նշանակված բոլոր հատվածները, որոնք մեկնության հեղինակ Վարդանի հիշատակարանի համաձայն պետք է պատկանեին Եղիշ վարդապետին: Որպես արդյունք ստացվեցին 71 ընդարձակ կամ համառոտ հատվածներ՝ վերագրված Եղիշին: Ստացված արդյունքը №1136 (=Բ) գրչագրի լուսանցքների նույն նշումներով Եղիշին վերագրված հատվածների հետ համեմատելու ընթացքում պարզվեց, որ կան հատվածներ, որոնք Ա-ում վերագրված են այլ հեղինակների, և ընդհակառակը՝ մի շարք հատվածներ, որոնք Ա-ում վերագրված են Եղիշին, բայց ըստ Բ-ի պատկանում են այլ անձանց: Բացահայտվեցին նաև դեպքեր, երբ որևէ հատվածի ըսկրգբնավորություն կամ ավարտ Բ-ի տվյալներով ավելացավ կամ պակասեց մեկ-երկու տողով: Նույնպիսի տարբերություններ, առավել կամ սակավ չափերով, Ա գրչագրի նկատմամբ տվեցին նաև մյուս ձեռագրերը (№1135 = Գ, 1094 = Դ, 1050 = Ե, 2510 = Զ, 1324 = Է և 7452 = Ը): Այսպիսով, ավելացան բազմաթիվ հատվածներ, որ բացակայում էին Ա գրչագրում, և կասկածի տակ առնվեցին Ա-ում Եղիշին վերագրված մի քանի հատվածներ:

Ստացված բնագրերի մշակման առաջին քայլը, հասկանալի է, որ պետք է լիներ կասկածելի հատվածների մերժման կամ ընդունման նպատակով կատար-

վելիք ուսումնասիրությունը: Այս առումով քննելի են հատկապես այն հատվածները, որոնց հեղինակային պատկանելության հարցում Եղիշի հետ վիճում են այնպիսի մատենագիրներ, որոնց՝ Վարդանի, ինչպես և Տիմոթեոսի համար աղբյուր հանդիսացած երկերը պահպանված լինելով, հրատարակությամբ ծանոթ են բանասիրությանը: Այդպիսիք են, օրինակ, Եփրեմ Ասորու³⁴, Բարսեղ Կեսարացու³⁵, Փիլոն Երրայեցու³⁶ մեկնությունները: Անհրաժեշտ էր վիճելի հատվածները փնտրել նշված հեղինակների Արարածոց գրքի վերաբերյալ դրած մեկնություններում. գտնվելու դեպքում սխալ պիտի համարվեին այն գրչագրերի վկայությունները, որոնց համաձայն՝ հատվածի հեղինակը Եղիշն է, ուստի և վիճելի հարցը պիտի լուծվեր ի վնաս Եղիշի, և ընդհակառակը՝ չգտնվելու դեպքում վիճելի հատվածները կարելի էին վերագրել Եղիշին: Այս ճանապարհով մեզ հաջողվեց ճշտել բազմաթիվ հատվածների հեղինակների հարցը:

Այսպես, օրինակ, Դ և Ե գրչագրերի տվյալներով Մնեդոց գրքի Ա, 6 համարի մեկնության Եղիշին վերագրված հատվածը սկզբից իր մեջ էր առնում նաև այլ գրչագրերով Բարսեղ Կեսարացուն ընծայվող հատվածի շարունակելությունը («Խմանալ զաստուած գործ հաւատոյ է, սակայն ճառելն զնմանէ ժպրհութիւն է»): Բարսեղի «ձառք վասն վեցօրեայ արարչութեանն» աշխատության մեջ գտնելով այդ հատվածը, մենք այն հանկցինք Եղիշին պատկանող հատվածների շարքից:

կամ՝ Ծն. Բ, 19 համարի մի մեկնություն Բ, Գ, Զ գրչագրերում վերագրված է Եղիշեին («Յայտ է թէ անշնչիցն ևս կոչեաց անուանս...»), իսկ մեր համեմատած մյուս գրչագրերում՝ Փիլոնին: Փիլոն Երբայեցու «Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց» աշխատության մեջ³⁷ գտնելով այդ հատվածը (մի փոքր այլ շարադրությամբ), մենք այն նույնպես հանեցինք Եղիշեի հատվածների շարքից:

Սակայն այս ճանապարհով անհնարին է լուծել այնպիսի հատվածների հեղինակների վերաբերյալ եղած տարաձայնությունները, որոնց երկերը, Եղիշեի Արարածոց մեկնության նման, կամ չեն հասել մեզ, կամ էլ դեռևս անտիպ են, ուստի և անմատչելի՝ մեր Մատենադարանում ձեռագիր օրինակներ չգտնվելու հետեւանքով: Այդպիսի հեղինակների թվին է պատկանում Պիսիդեսը (է դար), որի «Յաղագս վեցօրեայ արարչութեան» չափածո գրվածքի հայերեն նույնպես չափածո թարգմանությունից միայն հատվածներ են հրատարակված «Բազմավեպ» ամսագրում³⁸, և Հովհան Ոսկերեւանը, որի «Ճառք յաղագս ստեղծման աշխարհի» երկի հայկական թարգմանության անվիճելի հետքեր են պահպանվել մեր գրչագրերում, սակայն ամբողջական բնագրի գոյությունը հավաստված չէ ինչպես հրապարակված, այնպես էլ մեզ հայտնի գրչագիր աղբյուրներում³⁹:

Նման դեպքերում, երբ վերոհիշյալ եղանակը իրագործելու հնարավորությունները բացառված էին, մենք

որևէ հատված ընդունել, ուստի և օգտագործել ենք մեր ուսումնասիրություն ընթացքում միայն այն դեպքում, երբ գրչագրերի հնագույն և թվով մեծ մասը այն վերագրում է Եղիշեին: Այսպես, Եղիշեի հատվածների միջից դուրս ենք հանել միմիայն Ը գրչագրի տվյալներով Եղիշեին ընծայվող (Ա - Պիսիդես) Ծն. Ա, 26 համարի մեկնության հատվածը, և կամ՝ Զ և Գ գրչագրերի տվյալներով Եղիշեին վերագրվող Ծն. Գ, 4-5 համարների մեկնության հատվածը, որն ըստ Ա-ի պատկանում է Հովհան Ոսկերեւանին և այլն:

Կասկածելի հատվածների հեղինակային պատկանելությունը պարզելու մի այլ, մեր կարծիքով հուսալի միջոցներից մեկն էլ, որի օգնությամբ դիմել ենք վերոհիշյալ ճանապարհներով եզրակացության հանգելու անհնարինության դեպքում, նրանց մտքերի, արտահայտությունների և հազվագյուտ բառերի խիստ ուշադիր և զգուշավոր համեմատությունն է Եղիշեին պատկանող հատվածների համապատասխան մտքերի ու արտահայտությունների հետ:

Այս ճանապարհով, մենք գոնե ներքոշարադրյալ հատվածների վերաբերյալ հանգել ենք անվիճելի այն եզրակացությանը, որ նրանք, չնայած գրչագրերի հակասական տեղեկություններին, պատկանում են Եղիշեի գրչին.

ա) Ըստ Բ գրչագրի՝ Ծն. Ա, 2 համարի մեկնությունից Եղիշեի հեղինակություն է մի փոքրիկ հատված, որ կարելի է ամբողջապես մեջ բերել. «Զի բեպէտ եւ հաս-

տատութիւնդ չեւ եւս էր եղեալ ի միջոցիդ, այլ քանձ-
րութիւն մըրկեալ հողմոյն ընդ երեսս երկնի ստուէր առ-
նէր երկիր առաքելով» (Ա, էջ 7բ):

Չնայած Համեմատման միջոցս բոլոր գրչագրերը
այս Հատվածի վերաբերյալ որպէս Հեղինակ չեն նշում
եղիչներն, այնուամենայնիւ, ճիշտ ենք Համարում Ք
գրչագրի տեղեկութիւնը, Հիմք ունենալով Վարդանի
մի այլ («Լուծմունք ի սուրբ գրոց») աշխատութեան Հե-
տեյալ վկայութիւնը. «Ապա թէ ասիցէ ոք՝ հաստատու-
թիւնն դեռ չէր լեալ և փակեալ գիրեղէն երկնիցն զլոյսն,
ընդէ՞ր էր խաւարն. ասէ ոմն ասորի Մովսէս անուն, և
մերն եղիշէ, թէ ամպով ծածկեաց Աստուած» (N° 2544,
էջ 81ա):

Այս Հատվածի սկզբնաղբիւրը, կարծում ենք, նա-
խորդ Հատվածն է Հանդիսանում:

բ) Ծն. Ա, 3 Համարի եղիչների մեկնութիւնից Վար-
դանի մոտ պահպանվել է մի ոչ ընդարձակ, սակայն
չափազանց հետաքրքիր Հատված («Բայց մի կարծես-
ցուք նոր արարչութիւնն զլոյսն արտաքոյ չորից տա-
րերցն, այլ իսպառ ի հրեղէն երկնիցն...» (Ա, էջ 8բ):
«Խզած» տերմինը՝ Հիմնականից, առաջնայինից են-
թակա, նրանից բխող այս Հասկացութեամբ տվյալ
գեպքից զատ գործածված է միմիայն N° N° 4166 և 5254
գրչագրերում պահպանված եղիչների Արարածոց մեկնու-
թեան Հատվածներից մեկում («...Եւ սոքա ոչ են սեռ,
այլ խզածք»), որոնց մասին մանրամասն խոսք կլինի
ստորև: Այս Հանգամանքը մեզ իրավունք է տալիս

պարզ գրչագրական սխալի հետեանք Համարել Դ գր-
չագրի տեղեկութիւնը քննարկվող Հատվածի Գրիգոր
Աստվածաբանին պատկանելու մասին (միջոցս բոլոր
գրչագրերն այն վերաբերում են եղիչներին):

գ) Ծն. Ա, 26 Համարի մեկնութեան շարունակու-
թիւնը (Ա, էջ 19ա), ըստ Ե, Զ, Ը գրչագրերի պատ-
կանում է եղիչներն, իսկ ըստ միջոցս գրչագրերի՝ Գրիգոր
Նյուսացուն: Այդպիսի Հակասական տեղեկութիւններ
են Հաղորդում գրչագրերը նաև Ծն. Զ, 21 Համարի մեկ-
նութեան վերջավորութեան վերաբերյալ (ըստ Ա, Բ, Զ,
Ը գրչագրերի՝ եղիչն, ըստ Գ, Դ-ի՝ Փիլոն, ըստ Ե-ի՝ Եփ-
րեմ): Հիմք ունենալով այդ Հատվածներում պահպան-
ված մի բնորոշ արտահայտութեան նույնութիւնը,
անվիճելի է դառնում դրանց միևնույն Հեղինակի կող-
մից գրված լինելու Հանգամանքը, իսկ քանի որ կրկըն-
վում է միայն եղիչների անունը որպէս այդ Հատվածների
Հեղինակ, ուստի խնդիրը լուծվում է առանց դժվարու-
թեան: Հմմտ.

Ծն. Ա, 26 համարի
մեկնութեանից

Ծն. Զ, 21 համարի
մեկնութեանից

«... Իսկ յառաջն ոչ այսպէս, այլ
ծնցնելին, եւ սնուցանելին և անե-
ցուցանելին. ընտանիք և վայրն -
նիւ վայելելին ի միասին. ճննդուկ
ընդ վարութեանի և կախաւ ընդ քա-
ղէի, եղն և առիւծ միասին ճարա-
կելին և ինձն առ ուլոյ մակաղէր»
(Ա, էջ 19ա):

«... Որպէս և ի մի սէր և խա-
ղաղութիւն կապեալ էին առ-
իւծ ընդ եղին և քաղալ ընդ
կախաւ, զայլ ընդ զառիւն և
ինձն ընդ ուլոյ» (Ա, էջ 42ա):

դ) Ծն. Բ, 7 Համարի («Եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի») մեկնության Հեղինակի վերաբերյալ ճշմարիտ Համարեցինք Դ և Ե զըզազրերի վկայությունը (միայն նրանք են այն վերագրում Եղիշեին), հենվելով Հատվածում հանդիպող «Հոգիացոյց», «Շնչացոյց» Հազվադեպ և Եղիշեին Հատուկ բառաձևերի վրա (Հմմտ. «խտացոյց», «կարծրացոյց» և այլն, №2544, էջ 85ր):

ե) Ծն. Գ, 8 Համարի Եղիշեի մեկնության մեջ կա հետևյալը. «Եւ է ինչ զոր ծածկեաց (Աստուած), որպէս գերկնիցն զարարն եւեթ ասաց եւ գերբն լռեաց, նոյնպէս եւ վասն ծառոյն գիտութեան բարւոյ և չարի ասաց և վասն պտղոյն լռեաց» (Ա, էջ 30ա): Բերված Հատվածը Հնարավորություն է տալիս Ծն. Ա, 1 Համարի մեկնության երկրորդ մասը, հակառակ Զ զըզազրի Հակասական վկայության, վերագրել Եղիշեին, քանի որ այնտեղ իրոք ասված է՝ «քանզի գերբն եւ զուրն եւ զորպէսն աշխարհի չասաց Մովսէս, այլ թէ ի սկզբանէ արար Աստուած...» (Ա, էջ 6բ): Մերժելի է նաև նույն Զ և Գ զըզազրերի Հակասական տեղեկությունը Ծն. Գ, 7 Համարի մեկնության՝ Եղիշեի զըզին պատկանելու վերաբերյալ, մի Հատված, որտեղ Եղիշեն իրոք Հայտնում է, որ Աստված խոսելով բարու և չարի գիտության ծառի մասին՝ «վասն պտղոյն լռեաց»⁴⁰:

զ) Ծն. Գ, 8 Համարի մեկնության սկզբնավորությունը, որ Բ, Դ, Ե, Զ, Ը զըզազրերը վերագրում են Եղիշեին, Ա-ն ընծայում է Փիլոնին, իսկ Գ-ն՝ Եփրե-

մին: Հենվելով ոչ միայն Հիշյալ Հեղինակների մեզ ծանոթ աշխատություններում նման Հատվածի բացակայության, այլև այն ուշադրավ փաստի վրա, որ այդ Հատվածը Համարյա բառացի կրկնվում է նաև Եղիշեի պատմության մեջ, Ա և Գ զըզազրերի Հակասական տեղեկությունները ի նկատի չենք ունենում:

է) Ծն. Ա, 28 Համարի մեկնությունը զըզազրերից միայն երեքն են վերագրում Եղիշեին (Ա, Ե, Ը): Հասկանալի է, որ չունենալով որևէ Հիմք, կասկածի տակ պիտի առնեինք այդ Հատվածը որպէս Եղիշեի Հեղինակություն, սակայն այն Համադրելով բոլոր զըզազրերի միաբերան վկայությամբ Եղիշեին պատկանող մի Հատվածի հետ (Ծն. Գ, 14), վիճելի հարցը լուծվում է Հօգուտ Եղիշեի: Հմմտ.

«Այլ եւ իշխանն օտարակերպ է յիշխեցելոցն, ոչ իրրեւ գառիւծ մազլաւոր, կամ իրրեւ գփիղ ծառաւոր, կամ իրրեւ գուարակ՝ եղջիւրաւոր, կամ իրրեւ զարծուիս՝ նապոաւորս, կամ իրրեւ զկոկորդիղոս՝ խեցեմորք...» (Ա, էջ 19բ):

«Դարձեալ զազանս այս ոչ մազլաւոր է որպէս գառիւծ, եւ ոչ ծանեւոր իրրեւ զարջ, եւ ոչ ճիրանաւոր իրրեւ զարծուի...» (Ա, էջ 31ա):

Այս եղանակով Հնարավոր է լինում պարզել ևս մի քանի վիճելի Հատվածներ, բայց դժբախտաբար դեռևս մնում են այնպիսիները, որոնց մասին վերջնական որևէ եզրակացություն Հանգել կարելի կլինի միայն մեր Մատենադարանում պահվող բոլոր զըզազրերի վկայություններն աչքի առաջ ունենալուց հետո: Մեր ուսում-

նասիրության ընթացքում խուսափել ենք այդպիսի կասկածելի հատվածների հիման վրա որևէ եզրակացություն կառուցելուց:

Եղիշեի Արարածոց մեկնությունից հատվածներ պահպանած կարևոր աղբյուրներից մյուսը Վարդան Արեւելցու «Լուծմունք ի սուրբ գրոց» կամ «Ժղլանք» աշխատությունն է: Այս աշխատությունը Վարդանը գրել է Կիլիկիայում գտնված տարիներին (1240-1246), երբ սերտ հարաբերությունների մեջ էր Կիլիկյան հայկական թագավորական տան անդամների և մերձավորների հետ⁴¹:

Անդուլ վանքում գտնված ժամանակ Հեթում թագավորն անձամբ այցելում է Վարդանին և խնդրում է գրել Քերականի մեկնութիւն, իսկ Թորոս քահանայի միջոցով՝ մի շարք այլ փոքրիկ աշխատություններ⁴². այս առթիվ իր գրած Հիշատակարանում Վարդանը հայտնում է.

«... Ձայս աշխատութիւն՝ տկար մարմնով կատարեցի, սիրով ձեր գօրացեալ և օժանդակեալ, և յիշեալ գոր ի ձեռն Թորոսի հրամայեցիք վասն իւղարերիցն կանաց գրել ձեզ, եւ ի խորհուրդ պատարագին. եւ ապա երեսօք, յԱնդուլն հրամայեցիք, որ գրեալ ձեզ ժղլանք ի մեկնութեանէն Քերականին. եւ ես այլ աւելի սիրով (կամեցայ) գրել ձեզ ձեռամբ լուծմունցս յԱւետարանէն եւ յԱրարածոցն... եւ ես շատ պատճառ ունէի որ խափանէր զիս յայս ձեռնարկութեան՝ տկարութիւն, և մութն խըրըքիս, և հողմ Պարխարու փոշխառն փչելով ընդ պա-

տուհանսն, և պաղ օդոյս, բայց սիրովն հրաշագործին յաղթահարեալ եղեմ պատճառն»⁴³:

Բերված հատվածի մեջ Հիշատակված հարցերի մեկնությունը մեզ հետաքրքրող երկն է, որ պահպանվել է մեր Մատենադարանի 12 գրչադրերում⁴⁴: Աշխատությունը վերնադրված է «Լուծմունք ի սուրբ գրոց Վարդանայ վարդապետի ի խնդրոյ քարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ»: Ամբողջ աշխատությունը, որ մեկ և կես մամուլից մի փոքր պակաս է, բաժանված է մի շարք գլուխների, որոնցում Վարդանը բացատրություններ է տալիս Աստվածաշնչի և հավատի վերաբերյալ բազմաթիվ հարցերի:

№750 գրչադրում, որը մեզ ծանոթ լավագույն և ամբողջական բնագրերից մեկն է, այն բաժանված է 53 փոքրիկ ենթագլուխների.

- ա) Վասն խնկարկու կանանցն.
- բ) Վասն հալուէի և խնկոյ.
- գ) Վասն խորհրդոյ սուրբ պատարագին.
- դ-ե) Հավաքեսցուք ծագիկս ի մարգաց աւետարանին պսակել զքեզ.
- զ) Վասն Մկրտչին և Յորդանանու.
- է) Վասն փորձողին սատանայի.
- ը) Վասն որոտման.
- թ) Վասն Քրիստոսի նշանին.
- ժ) Վասն Աւետարանին.
- ժա) Զինչ է զաւրութիւն տեառնստոյց ազաւթիցն.
- ժբ) [Վասն] Ղուկասու և Մարկոսի աւետարա-

նացն].

ժգ) Վասն Զաքարիայի.

ժդ) Վասն կնոջ պոռնկի.

ժե) Վասն մեծատան.

ժզ) Վասն առէլք կերայք ամենեքեան].

Կարմիր թանաքով՝ «Զկենդանի ծառ կենաց, պլտ-
ղոյս տերունական բանիցս անմահացուցիչ քաղցր ճա-
շակաց կերող ընթերցմանց, զլոյս վարդապետն Վար-
դան յիշատակեայ ի տէր Յիսուս Քրիստոս»:

ժէ) Վասն Յոհաննու աւետարանին].

«Զանյայտ գանձիս յայտնիչ զՎարդան գանձա-
պահ, որ փարթամանայք հոգւով յիշատակես ջիւք ի բա-
րերախտիլն ի տէր»:

ժը) Վասն ավագակին].

ժթ) Վասն երեք իրաց յանձն առելոց ի տեառնէ
յետ յարութեանն.

ի-իա) ի պատմութեանց սքանչելի Հաւրէն Յով-
հաննու Գառնեցւոյ].

իբ) Վանական վարդապետի ասացեալ բան հաւա-
տալի.

իգ) Այլ բան Վանականին ասացեալ.

իդ) Վասն Քրիստոսի.

«Սրբազան կաթողիկոսի Հայոց տեառն Կոստան-
դեա յիշատակ, այլ ճաշակ քեզ [Հեթում] ի վայրի մըր-
դոց. սահմանք մասանց պէս-պէս շարժմանց»:

իե) Վասն բառերու.

«Սրբազան կաթողիկոսին Հայոց ողորմեսցի տէր և

լոյս վարդապետի Վարդանայ, որ զբանքս յարմարեալ
է»:

իզ) Թէ որպէս իմանի աստուած.

իէ-լը) Մեկնութիւն ծննդոց զրոց.

Լ գլխից առաջ՝ «զխորին բանիցս մեկնող վարդա-
պետն Վարդան յիշեա՛ ի տէր Յիսուս»:

ԼԱ-ից առաջ՝ «Իմանալի լուսոյս ծագող լոյս վար-
դապետն Վարդան յիշեա ի տէր Յիսուս»:

լթ) Բանի գիրք են Աստուածաշունչք ընդունելիք.

խ) Զինչ է ասելն ես շուշան եմ հովտաց.

խա) Մովսէսի որդիքն ինչ եղան որ չեն յիշելի.

խբ) Մարիամ կոյս էր թէ ոչ.

խգ-խդ) Վասն Եզեկիելի տեսեանն].

խե) Այս քեզ յնգեկիելէ, իսկ ի Դաւթայ՝ ի թագա-
ւորակցէն քո սակաւ ինչ տացուք պատճառ.

խզ) Խոնարհեցոյ և ապրեցոյ ի՞նչ մտաւք ասեմք.

խէ) Զի՞նչ մտաւք ասեմք մեռելոցն ամբիժք.

խը) Վասն էր խառնեաց ձայնս և նուազս [Դա-
ւթ] 45.

լթթ) Լեզուքն որպէս բաժանեցան.

ծ) Որպէս ընթացան առաքեալքն հրամանաւ Հոգ-
ւոյն սրբոյ.

ժա) Ի՞նչ խորհուրդ է հինանցն կարգ աւետարա-
նացն.

ժբ) Քրիստոս զեկեղեցական աստիճանս որպէ՞ս ե-
ցոյց.

«Զարժանի յիշատակի զսուրբ վարդապետն Վար-

դան, լուսոյ բանիցս ծագաւդ, յիշեա ի տէր»:

ծգ) Վասն տօնից:

Իէ-լը ենթադրութիւններում Վարդանը Համառոտ, պարզ և դժուարամբռնելի ոճով շարադրում է Ծննդոց դրբի մեկնութեան կարոտ Հարցերը, սակայն սկզբից և եթ անհրաժեշտ է Համարում հիշեցնել պատվիրատու Հեթում թագավորին, որ «Կամ է մեր քեզ նիւթ բանի տալ և ոչ կարգաւ մեկնութիւն գրել, ապա և զոր ինչ նոր թուիլ մեզ գրտանել քեզ ի բացումն սրտի» (Զեռ. N°750, էջ 57բ):

Այդ ենթադրութիւններում այլևայլ աղբյուրների կողքին և ամենից Հաճախ Վարդանը օգտագործում է Եղիշի Արարածոց դրբի մեկնութիւնը, երբեմն, Հանվան հիշատակելով իր սիրելի հեղինակին՝ «Որպէս ասէն մերն Եղիշէ» (N°750, էջ 58բ), «Ասէ ոմն ասորի Մովսէս անուն և մերն Եղիշէ» (էջ 60ա), «Եղիշէ ասէ» (էջ 61ա), «Շատ ինչ ասեն զնմանէ, այլ գրեմ քեզ զԵղիշէին, զոր սիրեմ մանաւանդ և Հաճոյ է ինձ» (էջ 63ա) արտահայտութիւններով, իսկ երբեմն էլ առանց անվան հիշատակման⁴⁶ (նման դեպքերում մենք խուսափել ենք օգտվել այդ հատվածներից):

«Լուծմունք ի սուրբ գրոց» կամ «Ժղլանք» աշխատութեան մեջ Եղիշի Արարածոց մեկնութիւնից ընդամենը ութ հատվածներ են բերված, որոնք Ծննդոց դրբի հետևյալ համարներն են մեկնում. ա) Ծն. Ա, 1, բ) Ծն. Ա, 4, գ) Ծն. Ա, 2, դ) Ծն., Ա 3, ե) Ծն. Ա, 6, զ) Ծն. Ա, 16, է) Ծն. Գ, 1, ը) Ծն. Ը, 13:

Գրելով Հեթում թագավորի ու նրա մերձավորների համար, Վարդանն օգտագործել է միջին Հայերենի կիրիկյան խոսվածքը և աշխատել է նյութը պարզ ու դժուարմբռնելի ոճով շարադրել, ուստի բնական է եզրակացնել, որ Եղիշից բերված հատվածները կրել են լիզվական ու շարահյուսական որոշ փոփոխութիւններ և պարզեցվել են. այնուամենայնիւ այդ քաղվածքները կարող են զիտվել, եթե ոչ բնագրին հավասար ուժ ունեցող, ապա գոնե, առ ի չգոյէ բնագրի, նրան փոխարինող հատվածներ:

Մատենադարանի N°4166 գրչագրում պահպանվել են Եղիշի Արարածոց մեկնութեան թվով ինն հատվածներ (գրանց մասին մանրամասն խոսք կլինի ստորև), որոնցից երեքը համապատասխանում են Վարդանի քննարկվող «Լուծմունք ի սուրբ գրոց» աշխատութեան դ, դ և ե հատվածներին: Դրանց համեմատութիւնը ցույց է տալիս, որ, անգամ նմանատիպ աշխատութիւններում, երբ անհրաժեշտ է եղել պարզեցնել շարադրվող նյութը, Վարդանը մեջբերումներ կատարելով այլ հեղինակներից, հնարավորին չափ աշխատել է բնագիրը պահպանել առանց փոփոխութիւնների. դա ակնհայտ է գոնե Եղիշից արված մեջբերումների նրկատմամբ, մի հեղինակի, որին, ինչպես Վարդանն ինքն է գրում՝ «Սիրեմ մանաւանդ և Հաճոյ է ինձ»:

Ցույց տալու համար Վարդանի մեջբերած հատվածների հարադատութիւնը բնագրին, կարելի է բացարարվել թեկուզ մեկ համադրութեամբ.

«Հրեղէն երկինն շրջագա ոչ յոմ
մերձ բաժանի յերկուս կիսա -
գունդս ի վեր և ի վայր, ընդ հող-
մո խառնեալ շուրջ գա և չտայ
երկրի ի վայր ընկղմել, և իւր բը-
նական ծանրութիւնն ի վեր չթո-
ղու, զամենայն ի ներքս առեալ ո-
չինչ եթող արտառն»:

«Հրեղէն երկինն շրջագայէ ոչ
յոմ մերձ բաժանեալ յերկուս կի-
սագունդս ի վեր և ի վայր, և ընդ
հողմոյ խառնեալ շուրջ գայ, և
անդի ի վեր փչեալ չտայ երկրի ի
վայր ընկղմել: Եւ բնական ծան-
րութիւնն երկրի ի վեր չթողու: Եւ
է հրեղէնն երկին զամենայն ի
ներք վազեալ, և ոչ ինչ արտառոյ
է թողեալ, զի ի վեր և ի վայր և
շուրջանակաւ պատեալ է զամե-
նայնն»:

Ինչպես տեսնում ենք, տարբերություններն այն-
քան աննշան են, որ անգամ կարող են բացատրվել ոչ
թե՛ Վարդանի կողմից խմբագրված լինելու հանգա-
մանքով, այլ նրա օգտագործած գրչագրի առանձնա-
հատկություններով:

Այսպիսով, Եղիշեի Արարածոց գրքի մեկնության
երկրորդ կարևոր աղբյուրը հանդիսանում է Հեթում Ա
թագավորի պատվերով 1240-ական թվականներին
Վարդան Արևելյու գրած «Լուծմունք ի սուրբ գրոց»
(Ժղլանք) աշխատությունը:

Որքան մեզ հայտնի է, այս աշխատության Եղիշե-

ին պատկանող հատվածների միակ օգտագործողը եղել
է Ղ. Ալիշանը: Իր «Հին Հաւատք Հայոց» գրքում նա
գրում է. «Մեր շատգէտ Վարդան վարդապետ [պատ-
միչ] Եղիշէի ծննդոց մեկնութենէն առած գրէ, թէ «ի
վեր քան զեօթն մոլորակս՝ եօթն այլ աստղ կայ նշա-
նաւորք, յոյժ ցրտագոյն և ամենեւին սառնամանիք. և
են ի մէջ մոլարիցն և անմոլարից, և զհրաբորբոք ջեր-
մութիւն արփոյն՝ նոքա յինքեանս առնուն»⁴⁷: Ուրիշ
վարդապետ մ'այլ, նոյն Եղիշէէ առած, այս եօթն աստ-
ղերը անպար աստեղք կոչէ, որ թուի անպար՝ այ-
սինքն անշարժ, ինչպէս Համարուի բեւոն»⁴⁸:

Եղիշեի Արարածոց մեկնությունից հատվածներ
պահպանած մյուս կարևոր աղբյուրը մեր Մատենա-
դարանի № 2679 գրչագիր պատմագիտական նյութերի
ժողովածուն է, որը միաժամանակ հայկական հնա-
գույն թղթյա գրչագիրն է հանդիսանում (981 թ.):

Այդ հազվագյուտ արժեք ներկայացնող հուշար-
ձանը, որ պարունակում է 383 այլևայլ նյութեր, բազ-
մաթիվ երկերի միակ կամ հնագույն ընդգիրն է պահ-
պանել. այդ գրչագրից են կատարված Անանիա Շիրա-
կացու, Դավիթ Հարքացու և այլոց կարևորագույն աշ-
խատությունների հրատարակությունները⁴⁹:

Գրչագրի ընդարձակ նկարագրությունը մեզ կշե-
ղեր հիմնական նյութից. ընդհանրապես մենք խուսա-
փում ենք օգտագործված ձեռագրերի ընդարձակ նկա-
րագրությունները զետեղելուց, դա թողնելով Մատե-
նադարանի գրչագրերի «Մայր ցուցակին», որի հրա-

տարակման խնդիրը հայազիտության անհետաձգելի պահանջներից մեկն է: Այս գրչագրի նկարագրությունը ավելորդ ենք համարում ներկայացնել նաև այն պատճառով, որ արդեն տարիներ առաջ նրա մասին անհրաժեշտ տեղեկություններ, կարևոր հիշատակաբանների հետ միասին հրատարակել է Հ. Տաշյանը⁵⁰:

Գրչագրի ՄԼԲ (232-ըդ) հոդվածը, որ վերնագրված է «Զոր Փիղոնի ասացեալ է ի սակաւուց», իրենից ներկայացնում է Փիլոնի, Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի և Եղիշեի Արարածոց մեկնություններից կազմված մի քաղվածու:

Փիլոնին վերագրված մասը գրավում է գրչագրի 210բ-213ա էջերը. 213ա էջից «Եփրեմի սրբոյ» ենթավերնագրի տակ զետեղված են Ծննդոց գրքի է Գլխի մեկնության երեք փոքրիկ հատվածներ, ապա սկսվում է Եղիշեին ընծայված հատվածների մի փոքրիկ շարք «Երանելոյն Եղիշայի» ենթավերնագրով, որտեղ մեկնելով են ա) Ծն. Ը, 7 («Զուրց հեղեղ զբազմութիւն մեղացն կոչէ... իմասցեն յանձինս իւրեանց»), բ) Ծն. Թ, 1-2 («Ընդէ՞ր յետ ելանելոյն ի տապանէն... իսկ թրուչուն՝ խորհուրդս հպարտացեալս») և գ) Ծն. Թ, 13 («Զի՞նչ է եդից զաղեղն իմ յամպ... նետ կոչէ զհուրն») համարները:

Հաջորդ 213բ էջում «Եփրեմի սրբոյ» հինգ քաղվածքներից անմիջապես հետո, մինչև գրչագրի 217բ էջը, իրար հաջորդում են Եղիշեի Արարածոց մեկնություն մի շարք հատվածներ, որոնցում մեկնված են

Ծննդոց գրքի Թ, 25, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 28, Ժ, 1-2, 5, 6, 8-9, ԺԱ, 31(°), ԺԵ 9, 10 (3 հատված), 11 (2 հատված), 12, 13, 15, 16 (2 հատված), 17 և ԺԶ, 1, 2, 3, 4 համարները:

217բ-218ա էջերում բերված են Եփրեմից հինգ և Հովհան Ոսկեբերանից մեկ հատվածներ, որոնցից հետո «Երանելոյն Եղիշայի» խորագիրը կրող վերջին հատվածը («Իսահակայ ածէ կին Աբրահամ գեղեցիկ և իմաստուն... որդիս հաւրն երկնաւորի զարգարեալս սրբութեամբ», էջ 218բ):

Եղիշեի վերջին հատվածին հաջորդում են «Եփրեմի յԱրարածոց մեկնութենէի» չորս հատվածները, ապա մեջընդմեջ այլևայլ հատվածներ Ոսկեբերանից ու Եփրեմից՝ մինչև 221բ էջը, որից սկսվում է Հովհան Ոսկեբերանի մեր ուսումնասիրության հետ չառնչվող մի աշխատության հատակոտորը:

Առաջին հարցը, որ ծագում է Եղիշեի Հիշյալ հատվածների և Ընդհանրապես №2679 գրչագրի ՄԼԲ հոդվածի քննարկման ընթացքում, այդ հոդվածի և «Լուսաւոր վարդապետ» Տիմոթեոսի կողմից Եղիշեի, Եփրեմի և Հովհանի աշխատությունների հիման վրա կազմված Արարածոց գրքի քաղվածո մեկնության փոխհարաբերության հարցն է: Հոդվածն արդյոք չի՞ ներկայացնում այդ աշխատության մի մասը, և եթե ոչ, ապա ինչպիսի՞ կապերով է առնչվում նրա հետ. այս հարցերը լուծում են պահանջում:

Վարդան Արեւելցու Հնգամատյանի մեկնության

Հիշատակարանում պահպանված տեղեկությունը Տիմոթեոս վարդապետի քաղաքաբնակության մասին այնքան ընդհանուր և թուուցիկ է, որ եթե չլինեք մեզ արդեն ծանոթ N°1981 գրչագիրը, ապա դժվար կլինեք քիչ թե շատ ամբողջական դադափար կազմել նրա մասին: Սակայն անգամ միայն Հիշատակարանի տվյալներով կարելի էր Հաստատասխան պնդել, որ Տիմոթեոսի կազմած Արարածոց մեկնության մեջ առկա էին Եղիշեի, Եփրեմի, Ոսկեբերանի և այլոց երկերից քաղված այն բոլոր նյութերը, եթե ոչ ավելին, ինչ Վարդանը կարողացել է փոխ առնել և այլ սկզբունքներով շարահյուսել իր երկասիրության մեջ: Սրանից հետևում է, որ Տիմոթեոսի բնագրում էլի կարող ավելի Համառոտ շարադրություն մը տրված լինել Վարդանի մեկնության մեջ տեղ դրած այս կամ այն Հատվածը, գոնե այնպիսի երկերի, որոնց բնագիրը ամբողջությամբ իր նախնական ձևով Վարդանի ժամանակ արդեն գոյություն չունեին:

N°2679 գրչագրի Եղիշեին վերադրված և Վարդանի կողմից ևս բերված Հատվածների Համադրությունից ստանում ենք մի պատկեր, որ հակասում է տվյալ դատողությանը: Այդ Հատվածները կցկտուր են և շատ անգամ ավելի Համառոտ, քան Վարդանի Համապատասխան մասերը:

Վարդանի մոտ և N°2679 գրչագրում Մենուոց դրքի իրենց մեկնություններն ունեցող Համարներն են՝

Մն. Ը, 7.

Մն. Թ, 13, 24, 25, 26.

Մն. ԺԵ, 9-11:

Վերոհիշյալ Համապատասխան Հատվածների առընչություն ճշմարտացի պատկերը ստանալու Համար րավարար ենք Համարում երկու բնորոշ Համեմատություններից արվելիք եզրակացությունները. Համատ.

«Լիով պատեառ արարածոց» Գրչ. N° 2679, հոդված ՄԼԲ

«Ջաղեղն իմ դեմ, ասէ, յամպս. Եւ եղիցի ի գումարել ինձ զամպս ի վերայ երկրի, տեսից զաղեղն Եւ յիշեցից գուխսն իմ» (Մն. Թ, 13): Աղեղն դնէ զնշանն, զի ոչ հասարակ ջնջէ զերկիր, այլ մասամբ յարկանէ, իբր նետ՝ յաղեղանէ արձակեալ զմի ու հարկանէ ի մէջ րազմաց, և միոյ մասին և անդամոյ դիպի խոցն» (Ա, էջ 45ա):

«Ջի՞նչ է՝ եղից զաղեղն իմ յամպ (Մն. Թ, 13): Աստուծոյ զարուբիւն է աղեղն վասն փառատելոյ զխստութիւն աւդոյն, նետ կոչէ զհուրն» (Էջ 213ա):

«Սրափեցաւ Նոյ ի գինւոյն և զիտաց զինչ արար ընդ նա որդիս կրցեր» (Մն. Թ, 24) ... Թեպէտ երիցագոյն էր Բան զՅարէր՝ կրցեր կոչէ, զի զկրսերարար անմտութիւնն կալաւ յանձին շարժեալ ի չարէն, որ ընդ ազոաւուն արձակեցաւ ի Նոյէ. Եւ յելանելն ի տապանէն րունեալ ի կինն Քամայ, որ

«Ջի՞նչ է՝ սրափեցաւ Նոյ ի գինւոյն...»: Ընդէ՞ր զՔամ ի միջոցի զաւակին համարեալ երից եղբարցն այլ կրսեր անուանէ ասելով՝ Որ ինչ միանաւմտութիւնն կալաւ յանձին շարժեալ արար նմայ որդին կրսեր: Քամ միջնորդի էր, այդ վասն տեղացն կրտսերացաւ, զի բեպէտ չարութիւն աւագ է, այդ

ի դատերացն էր Կայննի, որ յիմարե- Աստուծոյ գարշելի է եւ կրսեր,
ցոյց զՔամ, որպէս Յեզարէլ զԱւա- որպէս մեղաւոր» (էջ 214բ):
յար ի ձեռն կախարդական հնարից,
ի բացեա ի գրոյ լինել ծնողին, որ
և երկրորդ արարիչ քէ ոք ասէ ոչ
վրիպէ, որոյ անարգողին մահու
վնիւ ետ Աստուած օրինօքն» (Ա,
էջ 45բ-46ա):

Տարբերություններն այնքան մեծ են, որ կարող են
անգամ կասկած հարուցել մեր առաջ եղող Հատված-
ների միևնույն հեղինակին պատկանելու վերաբերյալ:
Բարեբախտաբար №2679 գրչագրում պահպանված
Հատվածների լսմագրերը, որ հավանորեն գրիչ Ղուկաս
Վանանդեցին է, իր մի կարևոր նշամբ փարատում է
այդ կասկածը. Ծն. ԺԶ, 4 համարի մեկնություն վեր-
ջում նա գրում է. «Եթէ ուրեմ գիր կամ գտուկ պատ-
նառն չգրեցաք, մի՛ ոք լիցի մեղադիր. զի ուրեմ ուրեմ ոչ
գիրն, այդ փոխարկումն՝ վասն առատան[ալ]ոյ մտաց
գրեցաք» (էջ 217բ):

Մեր այս հնագույն ժողովածուն, չպետք է մոռա-
նալ, գրված է որդու կողմից իր հոր, այսինքն՝ ընտա-
նեկան պետքերի և հետաքրքրությունների բավարար-
ման համար: Այդ տիպի ժողովածուներն ընդհանրա-
պես որևէ բնագրի վերաբերյալ չպետք է դիտվեն որ-
պես պաշտոնականորեն ընդունված, եկեղեցու գիտա-
կան ու դավանաբանական խնդիրների գերագույն
մարմնի՝ վարդապետական ինստիտուտի կողմից հաս-

տատված աղբյուր. անհասական հանգամանքը այս
կամ այն բնագրի ընդօրինակման ընթացքում կարող է
վճռական դեր խաղացած լինել:

Մեզ հետաքրքրող մեկնողական Հատվածները,
կարծում ենք, առավել չափով պիտի ենթարկված լինեն
գրչի կողմից խոստովանված վերոհիշյալ հապավում-
ներին, ուստի՝ ավելի հեռացած նախնական բնագրից:
Եղիշեի մեկնությունները, ըստ երևույթին, այնքան էլ
չեն բավարարել Ղուկաս Վանանդեցուն, որի հետևան-
քով և Ծն. ԺԶ, 2 համարի Եղիշեի մեկնության կապակ-
ցությունը նա անհրաժեշտ է համարել արտահայտել իր
վերաբերմունքը, մեկնվող համարի բնագրի և մեկնու-
թյան միջև նա գրել է. «Ստոյգ այն է, զոր Ոսկեբերան
ասէ» (էջ 217ա): Ինչ կասկած, որ «ոչ ստոյգ» թվացող
հեղինակի Հատվածներն ամենամեծ հապավումների ու
լսմագրությունների ենթակա պիտի լինեին նրա հա-
մար:

Չնայած այս հանգամանքին, №2679 գրչագրում
պահպանված Հատվածները չափազանց կարևոր, ան-
գամ անգնահատելի վկայություն են Եղիշեի մեկնու-
թյան նախնական բնագրի, նրա օգտագործած Ծնդոց
գրքի, ինչպես և աղբյուրների հարցերը լուսաբանելու
համար:

Ուղղակի որևէ փաստի բացակայությունը, կարծում
ենք չի կարող արգելք լինել Հայտարարելու, որ Եփրե-
մի, Ոսկեբերանի և Եղիշեի Հատվածների չարահա-
մամբ կազմված Արարածոց մեկնություն №2679 գրչա-

գրում պահպանված խմբագրությունը ծագել է ոչ թե հիշյալ հեղինակների երկերի բնագրերից, այլ Տիմոթեոս վարդապետի հավաքածո մեկնությունից, որի համար ևս, ինչպես հայտնում է Վարդանը, որպես հիմնական ատաղձ ծառայել են Եփրեմի, Եղիշեի և Հովհան Ոսկեբերանի Արարածոց մեկնությունների հատվածները:

Հնագույն թղթյա ժողովածուի արժեքը մեզ համար էի սպառվում վերոհիշյալ հատվածներով. Ղուկաս Վանանդեցուն ենք մենք պարտական Եղիշեի Արարածոց մեկնության հատվածների մի այլ ընդարձակ խմբի փրկության գործում, հատվածներ, որոնց միակ աղբյուրն այդ ժողովածուն է և որոնց մասին, որպես Եղիշեի աշխատության չորրորդ կարևորագույն աղբյուրի, պարտք ենք համարում խոսել մանրամասնորեն:

1838 թվականին Վենետիկում հրատարակված «Սրբոյ Հորն մերոյ Եղիշեի վարդապետի մատենագրութիւնք» հատորի, ինչպես և նրա երկրորդ՝ 1859 թվականի տպագրության վերջին հոդվածը («Վասն հոգւոց մարդկան, թէ ուստի դան, եւ յետ եկանելոյ ի մարմնոյ առ ով երթան, կամ թէ առաւել իմաստնայցեն») հրատարակված է մի զրչագրից՝ «Գրելոյ ի ՆԼ [թուղջն]», որ անկասկած մեր Մատենադարանի քննարկվող ձեռագիրն է, որի 250բ-254ա էջերում, որպես ՅԱ-ՅԲ (301- 302) հոդվածներ գտնվում է այդ բնագիրը⁵¹:

Երկրորդ տպագրության հրատարակիչները հոգվածի առթիվ տալիս են հետևյալ ծանոթությունը.

«Ջհնգեսին հատակոտորսդ գորոց յիշեալ էաք յառաջնում տպագրութեանն, ցարդ չընկալեալ ուստեք զայլ օրինակ, յարեմք ի կատարած ճառիցս, անյար միմեանց որպէս գտաք յօրինակին գրելոյ ի ՆԼ. ոչ իրբև ամբողջ յօրինուած ճառի և ոչ դարձնալ անկարօտ պարզաբանութեան, ակն ունելով անթերի օրինակաց, յորոց միաբանութենէ թերևս ի յայտ դայցէ հարազատութիւն իմաստիցն»⁵²:

Նվ իրոք, չափազանց արժեքավոր և հետաքննելի այդ հոգվածը պարզաբանության մեծ կարիք է զգում. նրա «Ջի գոն և հոգիք...» սկզբնավորությունն առաջինն է մատնում հոգվածի ոչ ամբողջական լինելու հանգամանքը: Սկզբնավորությունից մի քանի պարբերություն հետո կարդում ենք. «Արդ որպէս վերագոյն ասացաք յերկնէ երկնայինքն և յերկրէ երկրայինքս, և մարդ խառնուած յերկնէ և յերկրէ...»⁵³, և կամ՝ «Որպէս վերագոյն ասացաք. կենդանածնեցան երկինք մօտաւորս իմանալիս և ոչ շօշափելիս»⁵⁴, սակայն «վերագոյն» այդպիսի հարցերի մասին անգամ ակնարկ չկա: Եզրակացությունը պարզ է. այդ հոգվածը մասն է ինչոր ընդարձակ մի աշխատության, որտեղ զանազան բացատրություններ են տրված եղել մարդու՝ երկնքից (= հուր, օդ) և երկրից (= ջուր, հող) առաջացած լինելու, ինչպես և երկնքի ու այլ արարածների արարչության մասին:

Այդպիսի հարցեր բնականորեն պիտի քննարկվեին և իրենց լուծումն ստանային Եղիշեի Արարածոց մեկ-

նության մեջ. ուստի՝ «Վասն Հոգւոց մարդկան»-ը ոչ թե ինչ-որ կորած ճառական զրգածքի, այլ Արարածոց մեկնության մասը պետք է լինի: Գալով նախնական այս եղբակացութեանը և շարունակելով աշխատանքը, մեզ հաջողվեց գտնել անժխտելի ապացույցներ այդ հնթադրութեան արդարացի լինելու մասին:

Ինչպես ասացինք, Հոգվածում երկու անգամ «որպէս վերագոյն ասացաք» արտահայտութեամբ հեղինակը, խուսափելով կրկնութենից, մատնանշում է աշխատութեան այն մասերը, որտեղ մանրամասնորեն քննարկվել և իրենց լուծումն են ստացել այդ հարցերը: Բարեբախտաբար այդ կամ նրանց նման մասերը պահպանվել են և հասել մեզ, առաջինը՝ Վարդանի «Լիով պատճառ արարածոց», իսկ երկրորդը «Լուծմունք ի սուրբ զրոց» աշխատութեան, ինչպես և №4166 զրգագրում պահպանված Հատվածներում (դրանց մասին գեոևս առիթ կունենանք խոսելու):

Առաջին Հատվածը, որով հեղինակն ընթերցողներին մատնացույց է անում աշխատութեան նախորդ մասերը, հետևյալն է.

«Արդ որպէս վերագոյն ասացաք՝ յերկնէ երկնային-
քն և յերկրէ երկրայինքն, և մարդ խառնուած յերկնէ
և յերկրէ. անասրագոյնց յերկնէ, թանձրագոյնս յերկ-
րէ»⁵⁵:

Այս հարցի մասին ընդարձակ և համապատասխան բացատրութիւն գտնում ենք Ծն. Թ, 3 Համարի Վարդանի կողմից Եղիշեի անվամբ բերած մեկնութեան մեջ,

որտեղ տալով հիշյալ («Ամենայն գեոևս, որ է կենդանի, ձեզ լիցի ի կերակուր») համարի մեկնութիւնը, Եղիշեն գրում է.

«... Յայն սակս, զի ուտէին աներաման՝ հրամայէ... ի բաց արձակել զօդ եւ զհուր եւ ապա ուտել զհոդ եւ զջուր, զի արուն և էգն շարժին ի խառնիլ եւ միաւորին. օդ եւ հուր աւելի է յարուէն, ջուր եւ երկիր յովով է յեզն: Հուրն մածուցանէ, ջուրն և հողն մածնուց, օդն սնուցանէ, չորքն միաբանեալ լինին մի գոյութիւն կենդանոյ...» (Ա, էջ 44բ):

Բերվածը բավարարում է մեր սպասելիքները փոխորդով Հատվածի վերաբերյալ, սակայն կա մի դժվարութիւն այն Եղիշեի կողմից ակնարկվող «վերագոյն» շարադրված Հատվածը համարելու համար. «Վասն Հոգւոց մարդկան» վերնագիրը կրող հինգ Հատվածները նվիրված են Ծննդոց գրքի Բ գլխի 7 Համարի («Փշաց յերեսս նորա շունչ կենդանի և եղև մարդն Հոգի կենդանի») մեկնութեանը, մինչդեռ վերահիշյալ մեկնողական Հատվածը, ինչպես ասացինք, վերաբերում է Ծն. Թ, 3 Համարին: Արդ, ինչպե՞ս կարող էր Եղիշեն երկրորդ գլխի մեկնութեան առիթով վկայակոչել իններորդ գլուխը, այն կոչելով «վերագոյն»: Ըստեղծված դժվարութիւնից հեշտութեամբ դուրս ենք գալիս, երբ հիշում ենք Եղիշեի մեջբերած այն մտքերն ու Հատվածները, որոնցում նա մեծ մասամբ բառացիորեն կրկնում է իր իսկ կողմից այլ կապակցութեամբ շարադրած որևէ արտահայտութիւն կամ միտք: Եղի-

չեն Բ գլխի 7 Համարի մեկնության ժամանակ հիշեցնում է, որ մինչ այդ ինքը խոսել է մարդու «խառնուած»-ի մասին. մեզ հասած հատվածներից այդ նյութի մասին խոսվում է Թ գլխի մեկնություններից մեկում, որ իրավունք է տալիս հնթադրելու նմանատիպ մի այլ հատվածի կորուստ մարդու արարչությանը վերաբերող առաջին գլխի մեկնության մասերից:

Երկրորդ անգամ Եղիշեն իր կողմից արդեն մեկնված մի հատված է մատնանշում հետևյալ նախադասության մեջ. «Որպէս վերագոյն ասացաք. կենդանանեցան երկինք մաւտաւորս իմանալիս և ոչ շաւշափելիս»⁵⁶: Այս վկայակոչման տեղը առանց դժվարությունների և երկրայության գտնվում է Վարդանի «Լուծմունք ի սուրբ գրոց» (Ժղլանք) աշխատության մեջ ծանոթ հատվածներից առաջինում, որտեղ կարդում ենք. «Որպէս կենդանանեցաւ երկիր, կենդանանեցաւ և երկինն, ախտականս զախտականսս, և ախտան՝ զանախտականսն ի հրոյ և յաւդոյ գոյացեալք...»⁵⁷:

Բերված փաստերից հետո դժվար թե տարակուսաներ ծագեն քննարկվող հինգ հատվածների՝ Եղիշեի Արարածոց մեկնության մասեր լինելու վերաբերյալ, այնուամենայնիվ ավելորդ չենք համարում գոյություն ունեցող այլ տվյալներով ամրացնել մեր եզրակացության հիմքերը⁵⁸:

ա) «Վասն հոգւոց մարդկան» վերնագրով հրատարակված գրվածքի առաջին էջում կարդում ենք.

«... Քանզի անհատ բնութիւն իմանամք զաստուած» (էջ 369): Նույն միտքը Եղիշեն հայտնում է Ծն. Ա, 1 համարի մեկնության՝ Վարդանի «Լիով պատճառ արարածոց»-ում պահպանված առաջին հատվածում, որն սկսվում է հենց «անմարմին և անհատական բնութիւն է աստուած» բառերով (Ա, էջ 6ա):

բ) «... Այլ նմա փչելն զնա հոգիացոյց, որպէս զանգոյսն գոյացոյց, որպէս զանհոգին հոգիացոյց և կենդանութիւն եդ ի վերայ նորա» (էջ 372) պարբերությունն իսկույն հիշեցնում է Եղիշեի՝ Վարդանի Արարածոց մեկնությունից հայտնի վերոհիշյալ հատվածի շարունակությունը՝ «Զաննիւթն նիւթացոյց և զանէն գոյացոյց, բան գոլով՝ ձայնիւ զամենայն ինչ արար» (Ա, էջ 6ա):

գ) «Զի թէ զմարդկան հոգւոյ կամի ոք ուսանել, զկայանս, մի թանձրագոյն մտաւք հայիցի երկրաքարչ ախտիւք ծանրացեալ, այլ թռուցեալ ըստ սրբոյն Պաւղոսի, որ ասէ՝ անճառելի տեղի, զոր դրախտ անուանեաց և երրորդ երկինս» հատվածը (էջ 375) նույնպես հարցի զրական լուծման համար կարևոր նշանակություն ունի: Հաջորդ էջերում քննվելիք №4166 գրչագրում պահպանված Եղիշեի Արարածոց մեկնության հատվածներից երկրորդը համարյա բառացի հաղորդում է վերոհիշյալ մեջբերման նյութի իմաստը («Պաւղոս այրն եբրայեցի առեալ յերրորդ յերկինս լուաւ աստուածախաւս բարբառս...») ⁵⁹:

Այսպիսի զուգահեռներ անցկացնելու համար նյու-

Թեր կարող են ընձեռել միայն միևնույն աշխատու-
թյան տարբեր մասերը, երբ հեղինակը այլևայլ առիթ-
ներով ստիպված է լինում շարադրել նման մտքեր և
օգտագործում է այդ մտքերի իր իսկ կազմած ձևակեր-
պումները:

դ) Ինչպես ասացինք, «Վասն հոգևոց մարդկան»
վերնագրով Հայտնի Հատվածները և՛ N°2679 գրչա-
գրում և՛ Հրատարակության մեջ բաժանված են հինգ
մասերի, սակայն Հրատարակիչները, հավանաբար ա-
վելորդ կարծելով այդ Հատվածների սկզբնավորու-
թյուններին գրչագրում նախորդող «Նորին (Եղիշեի)»
բառը, այն դուրս են թողել Հրատարակությունից: Մեզ
հետաքրքրող Հարցի պարզաբանման համար այդ բառն
ունի որոշ նշանակություն. դրա հիման վրա պարզ է
դառնում, որ այդ Հատվածներն իրար են կցվել իրոք
անջատվելով մի ամբողջական աշխատությունից. իսկ
Եղիշեի Արարածոց մեկնությունն, ինչպես արդեն ցույց
ենք տվել, N°2679 գրչագրի արտադրման ժամանակ,
այն է՝ 971-981 թվականներին, արդեն Հայտնի էր Տի-
մոթեոս վարդապետի քաղվածո մեկնության մեջ տեղ
գտած վկայություններով, այսինքն՝ անդամահատված
ձևով:

Թե ով է Եղիշեի Արարածոց մեկնությունից այդ
Հատվածները կցել իրար ու դարձրել մի առանձին հոդ-
ված, դժվար է որոշակի ասել. այդ գործը հավասարա-
պես հնարավոր է վերագրել ինչպես Տիմոթեոս «Լուսա-
ւոր վարդապետին», այնպես էլ գրիչ Ղուկաս Վանան-

դեցուն, կամ նրա նախադադար օրինակի գրչին:
Համենայն դեպս, մեզ հուզող Հարցերի առնչությամբ
այնքան կարևոր էլ չէ այդ խնդրի լուծումը:

Այդ Հատվածները չնայած իրենց թվով զիջում են
Վարդանի աշխատություններում և N°2679 գրչագրում
պահպանված մեզ Հայտնի մյուս Հատվածներին, այ-
նուամենայնիվ, բացառիկ արժեք են ներկայացնում Ե-
ղիշեի աշխատության նախնական ձևի ճանաչման հա-
մար: Իրենց ծավալով նրանք ամենաընդարձակն են,
չոչավիճող նյութն ավելի փխրիստոփայական քան կրո-
նական բովանդակությու՜ն ունի, հետաքրքիր տեղեկու-
թյուններ են պարունակում գուշակությունների ու
զյուլթանքների մասին, որ գոյություն են ունեցել հե-
ղինակի ժամանակ, և գրված են ղեղարվեստական ոճով
ու լեզվով՝ հատկանիշներ, որ թեպետ նկատվում են
նաև մյուս Հատվածներում, բայց, գուցե, առժեռով
խմբագրություններից ի Հայտ չեն գալիս նման պայ-
ծառությամբ:

Եղիշեի Արարածոց մեկնությունից Հատվածներ
պահպանած մեզ ծանոթ վերջին աղբյուրը մեր Մատե-
նադարանի N°4166 գրչագրի 200ա-201բ էջերում պահ-
պանված և «Սրբոյն Եղիշէի» վերնագիրը կրող գր-
վածքն է, որի մասին որոշ տեղեկություններ տվել ենք
արդեն Վարդանի «Լուծմունք ի սուրբ գրոց» աշխա-
տության քննարկման ընթացքում:

N°4166 գրչագիրն իրենից ներկայացնում է ճառերի,
մեկնությունների, պատմագիտական ու փիլիսոփայա-

կան նյութերի մի բացառիկ արժեք ներկայացնող ժողովածու⁶⁰, գրված է ԺԴ դարում Սարգիս գրչի կողմից Թաղադիրնի Համար (թերթ՝ 299, մեծություն 25 × 16,5, միասյուն, բոլորգիր, հիշատակարաններ ունի 13բ, 17բ, 35ա, 104բ, 142ա, 148բ և այլ էջերում)⁶¹:

Եղիշեի պահպանված Հատվածները (թվով ինը), այնքան Համառոտ են, որ անգամ դժվար է որոշել, թե Մենդոց գրքի ինչ Համարների մեկնություններից են քաղված: Որոշ կասկածանքով կարող ենք հետևյալն ասել. ա Հատվածը Մենդոց գրքի Գ գլխի մեկնության մասն է Հանդիսանում, բ-ն՝ Ա, 8, գ-ն և դ-ն՝ Ա, 1, ե-ն և է-ն՝ Ա, 15, ը-ն՝ ԺԱ, 1-9, իսկ զ և թ Հատվածներն անգամ թեպեև որոշելու հնարավորություն չեն ստալիս:

Հիշյալ Հատվածներից միայն չորսը (ա, գ, դ, ե) պահպանվել են նաև № 5254 գրչագրում (գրված է 1280 թվականին, Ավետիս գրչի կողմից Գեորգ քահանայի Համար, Մահկանաբերդի Դեղձուտի վանքում)⁶²: Ընկած թերթեր լինելու պատճառով մյուս Հատվածներն այժմ բացակայում են:

Ինչպես ասացինք, Հատվածները վերնագրված են «Սրբոյն Եղիշէի» բառերով, երկրորդ Հատվածը անջատված է առաջինից «յետ այլոց» արտահայտությամբ, իսկ մյուս բոլոր Հատվածներն սկզբից ունեն «այլ» բառը: «Ետ այլոց» բառերով Հատվածների քաղագիրը ցանկացել է ասել, որ Եղիշեն բերվող Հատվածը շարադրած է եղել իր երկում այլ Հատվածներից

հետո, իսկ մյուս դեպքերում՝ ավելի Համառոտելով, բացարար է Համարել նույն միտքն արտահայտելու համար «այլ» բառի գործածությունը: Հնարավոր է նաև «այլ» բառի «նույնպես», «նաև» նշանակությամբ գործածությունը:

Վերահիշյալ ծանոթությունը թերևս ավելորդ Համարվեր, եթե Վարդանի «Լիով պատճառ արարածոց»-ում «այլ» բառը գործածված չլիներ բոլորովին ուրիշ իմաստով: Այդ աշխատության մեզ ծանոթ օրինակներից մի մասի լուսանցքներում, հեղինակների հիշատակության փոխարեն երբեմն օգտագործված է նույն՝ «այլ» բառը: Սկզբում մենք կարծում էինք, թե № 4166 գրչագրի նման, այդ բառի տակ պետք է Հասկանալ նախորդ Հատվածի հեղինակի անունը: Սակայն միևնույն հեղինակներից Վարդանը Հաճախ բերելով իրար շարահյուսած մի քանի Հատվածներ և ցանկանալով նշել, որ Հատվածը չի հանդիսանում նախորդի անմիջական շարունակությունը, միշտ օգտագործել է տվյալ հեղինակի անվան իր Համառոտագրությունը՝ «Բրս» (Բարսեղ), «Փղ» (Փիլոն), «Գր. Ած» (Գրիգոր Աստուածաբան) և այլն, անգամ եթե ստիպված է եղել տվյալ անունը կրկնել բազմիցս. ուստի պարզ դարձավ, որ «այլ» բառը Վարդանի կողմից օգտագործվել է ուրիշ իմաստով և նրա տակ, Հավանորեն, պետք է փրնտրել մի որևէ հեղինակի անուն, որ նա չի ցանկացել բացահայտել:

Գրչագրերի Համեմատության ընթացքում գտնվե-

ցին օրինակներ, որոնցում «այլ» բառով նշված հատվածները վերագրվում էին աշխատության հեղինակ Վարդանին («Վրդ.» համառոտագրությամբ): Որ այդ գրչագրերի տվյալները պիտի ընդունվեն առանց վերապահության, կարելի է պնդել հենվելով թեկուզ Վարդանի մեզ արդեն ծանոթ հիշատակարանի այն վկայության վրա, ըստ որի՝ «է... գոր ի մէնջ համարձակեցաք զմիտս յաւելուլ, զթուեցեալն պակաս»: Արդ, եթէ «այլ»-ի տակ չի թաքնված մեկնության հեղինակ Վարդանը, ապա հավելումների մասին հայտնած նրա որոշակի վկայությունը պետք է կասկածի տակ առնել, որի համար բացարձակապես ոչ մի հիմք չունենք:

№4166 գրչագրում պահպանված հատվածները մեծ մասամբ տիեզերագիտական հարցեր են շոշափում. նրանց մասին խոսք կլինի պատշաճ առիթով:

Եղիշեի Արարածոց մեկնության բազմաթիվ հատվածներ Վարդանի «լիով պատճառ»-ի միջնորդությամբ օգտագործվել են նաև միջնադարյան մի շարք տոմարագետների, բանաստեղծների, դիտնականների և այլ մատենագիրների երկերում, հաճախ նրանց կողմից օգտագործված հատվածները որևէ փոփոխություն չեն կրել սակայն դրանց մասին նպատակահարմար ենք համարում խոսել ոչ թե այս, այլ մեր աշխատության վերջին գլխում, որը նվիրված է Եղիշեի Արարածոց մեկնության ազդեցությունը հետագա դարերի հայ մատենագրության վրա:

Ամփոփելով քննության ենթաբովանդակված աղբյուրների

ընթեռած ողջ նյութը, Եղիշեի Արարածոց մեկնությունից հատվածներ ենք ստանում Ծննդոց գրքի այն համարների վերաբերյալ, որոնք հերթականորեն շարադրված են ստորև բերվող ցանկում ⁵³.

Ծն., ԳԼՈՒԽ Ա (բաղկացած է 31 համարներից). 1, 1, 1 (Ե, Ժ), 1 (Ե), 2, 2 (°), 2 (Ժ), 3, 3, 3 (Ժ), 5, 5, 6, 6 (Ժ), 7, 8, 8 (° Ե), 10 (°), 14, 16, 16, 16 (Ե), 16 (Ե), 17, 17, 21, 22, 23, 24, 26, 28, 28 (°).

Ծն., Բ (25 համար). 2, 2, 4, 5, 6, 6, 7, 7 (°), 7, 7 (Է), 14 (°), 14, 18, 19, 19, 19, 20 (°), 21, 21, 25.

Ծն., Գ (24 համար). 1, 1 (° Ժ), 2-3, 4-5, 6, 7, 7, 7, 8, 8, 9, 10, 11 (°), 12, 13, 14, 14, 15, 16, 17, 17, 19 (°), 21, 22, 23, 24.

Ծն., Դ (26 համար). 1, 2, 2, 3, 4, 5, 8 (°), 8 (°), 9, 10 (°), 10, 13, 15, 16 (°), 24.

Ծն., Ե (32 համար). Մի փոքրիկ հատված 6-24 համարներից.

Ծն., Զ (22 համար). 3, 4, 5, 6 (°), 12, 14, 15, 16 (°), 17 (°), 18, 21, 22.

Ծն., Է (24 համար). 1, 4, 5, 6, 7-9, 10, 11, 17, 20.

Ծն., Ը (22 համար). 1 (°), 3-4, 5, 7, 8, 7 (Ղ), 13 (Ժ), 20, 21, 22.

Ծն., Թ (29 համար). 1, 3, 5, 9, 13, 12 (Ղ), 13 (Ղ), 25 (Ղ), 20 (Ղ), 21 (Ղ), 22 (Ղ), 23 (Ղ), 24 (Ղ), 26 (Ղ), 27 (Ղ), 28 (Ղ), 24, 25, 26, 27 (°).

Ծն., Ժ (32 համար). 5 (Ղ), 6 (Ղ), 8-9 (Ղ).

Ծն., ԺԱ (32 համար). 1-4, 5, 6, 7, 10, 12-26, 28,

31 (° Ղ), 32 (°), 1-9 (b).

Մն., ժԲ (20 համար). 1-9, 10-15, 10 (°).

Մն., ժԳ (18 համար). 10-13, 18.

Մն., ժԵ (21 համար). 3, 8, 9-14, 9 (Ղ), 10 (Ղ), 10 (Ղ), 10 (Ղ), 11 (Ղ), 11 (Ղ), 13 (Ղ), 15 (Ղ), 16 (Ղ), 17 (Ղ), 13 (°), 14 (°), 16 (°), 16-17 (°).

Մն., ժԶ (16 համար). 13 (°), 1 (Ղ), 2 (Ղ), 3 (Ղ), 4 (Ղ).

Մն., ժԷ (27 համար). 1, 5, 5 (°), 6, 9, 14.

Մն., ժԸ (33 համար). 2, 5, 6, 9, 10, 12, 14, 16, 17, 20 (°), 20-21, 26-32, 33.

Մն., ժԹ (38 համար). 1, 15, 17, 24 (°).

Մն., ԻԱ (34 համար). 1, 22, 23, 33.

Մն., ԻԲ (24 համար). 1, 3, 4, 8, 8, 12-15, 16, 17, 18 (°).

Մն., ԻԴ (67 համար). 51.

Մն., ԻԵ (34 համար) - ԻԶ (35 համար). Խառը հույժ կասկածելի հատվածներ. ԻԶ, 4. ԻԵ, 7, 9, 11, 12-16, 17, 18, 20-21, 21, 23, 25, 27, 28, 29-34. ԻԶ, 1.

Մն., ԻԷ (46 համար). 1, 2-7, 9, 11-12, 13, 15-16, 19, 20, 27, 28, 29, 30-36, 41 (°), 39, 42, 43-45.

Մն., ԻԸ (22 համար). 8-9, 10-11, 12, 16-17, 20-22.

Մն., ԻԹ (35 համար). 1, 7, 11, 12, 14, 19 (°), 30, 31-35.

Մն., Լ (33 համար). 1, 3, 7, 8, 11, 14, 19-20, 22-24, 25-32, 37-38, 42-43.

Մն., ԼԱ (55 համար). 1, 19, 17-19, 22-23, 55-ԼԲ,

2.

Մն., ԼԲ (32 համար). 10-11, 13, 22, 24, 25, 28 (°), 30 (°), 31.

Մն., ԼԳ (20 համար). 1, 18.

Մն., ԼԴ (31 համար). 1, 2-5, 6-7, 8-25, 26.

Մն., ԼԵ (29 համար). 1, 2, 4, 11, 14-20, 18, 22-23, 27-28.

Մն., ԼԶ (43 համար). 6, 17.

Մն., ԼԷ (36 համար). 2, 5, 9, 14-15, 18, 20-22, 24-28, 34-36.

Մն., ԼԸ (30 համար). 1-5, 11, 12, 14, 18-19, 20 (°), 27-28.

Մն., ԼԹ (23 համար). 1, 2, 6, 15, 20 (°), 22 (Համառոտ).

Մն., Խ (23 համար). Պատմված է Համառոտ կերպով.

Մն., ԽԱ (57 համար). 1, 14, 33, 45, 54-56.

Մն., ԽԲ (38 համար). 1-2, 3-4, 7 (°), 9 (°), 17, 21, 29, 36.

Մն., ԽԳ (31 համար). 26, 27, 34.

Մն., ԽԴ (34 համար). 1-5.

Մն., ԽԵ (28 համար). 2, 10, 25-26.

Մն., ԽԶ (34 համար). 1-29.

Մն., ԽԷ (31 համար). 1, 10, 9, 12, 14, 28-29.

Մն., ԽԸ (22 համար). 1-3, 7-11, 22.

Մն., ԽԹ (33 համար). 1, 3-12, 16, 19-26, 22-

Դիտելով Եղիշեի Արարածոց մեկնության պահպանված հատվածների ցանկը, առաջին հայացքից կարելի է կարծել, թե մեզ հասած մասերով համարյա ամբողջապես հնարավոր է վերականգնել կորած բնագիրը. դժբախտաբար դա այդպես չէ:

Այսպես, Վարդան Արևելցու մեկնության մեջ Եղիշեի երկից պահպանվել են Ծն., Ա գլխին վերաբերող երկու հատվածներ, և եթե չլինեին №4166 գրչագրում պահպանված հատվածները, ապա դժվար կլիներ որոշ գաղափար կազմել այդ կարևոր մասի մեկնության ծավալի մասին: Նշված ձեռագիրը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Եղիշեն շատ ավելի ընդարձակ է կանգ առել մեկնվող գրքի հատկապես առաջին մասերի վրա, շարադրելով ոչ միայն հարցի պատասխանը, այլև որևէ կերպ նրան առնչվող տիեզերագիտական-բնագիտական բազմաթիվ խնդիրներ:

Նույն հարցի կապակցությամբ՝ ձեռքի տակ ունեցած բազմաթիվ փաստերից վերցնենք ևս մի բնորոշ օրինակ: Վարդանի «Լիով պատճառ արարածոց»-ում Ծննդոց գրքի Բ գլխի 7 համարի մեկնության վերաբերյալ բերված է Եղիշեից միայն մեկ հատված, որ հետևյալն է.

«Եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի (Ծն. Բ, 7): Փչեաց օտար է. եւ ի հրեշտակաց եւս, բող թէ աստուծոյ անվայելուչ. այլ զիջանէ զիրք գտկարուքիւնս մեր ածել յուսումն, զի ի կենդանւոյ բերանոյ շունչ ջերմ ելանէ՝

յուրս օդ շնչելով, որպէս թէ զօդն ի տարերացս առեալ մարդոյն եւ զբանական հոգին վառէ ի նմա փչմամբն Աստուած մարդաբար, զոր փոխանակ՝ հոգիացոյց եւ կամ շնչացոյց ասելոյ փչեաց ասէ: Բայց եւ յովմբ, որ զշնորհաց հոգին ասեն» (Ա, էջ 22ա):

Եթե մեզ չջանողվեր ապացուցել, որ Եղիշեի «Վարդան հոգևոց մարդկան» վերնագրով հրատարակված հատվածները նույն (Ծն. Բ, 7) բնագրի մեկնության հատվածներն են, ապա պիտի ենթադրեինք, թե Վարդանի մեկնության մեջ պահպանված վերոհիշյալ փոքրիկ քաղվածքի գյուտով ծածկվում է մեզ չհասած Արարածոց մեկնության համապատասխան մասի կորուստը, ուստի կարող էինք բազմաթիվ տեղերում Եղիշեին մեղադրել առաջադրված խնդիրների մակերեսային և միակողմանի լուծում տալու համար:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ մեր հավարած հատվածները կարող են միայն մոտավոր, լավագույն դեպքում բավարար պատկերացում տալ այն մեծարժեք աշխատության մասին, որի ամբողջության կորուստը թերևս մեր հին գրականության ամենացավալի կորուստը պիտի համարել:

Այս հանգամանքը նկատվում է վերը բերված ցանկի ուշագիր քննությունից ևս: Այսպես, օրինակ, Ա գլխի 1, 2, 3, 17, Բ գլխի 2, 19, Գ գլխի 7, 8, 14 և այլ համարները Վարդանի մոտ մեկնված են երկու, երբեմն երեք հատվածներով, որից բնականորեն բխում է, որ Եղիշեի մեկնության բուն բնագիրը այնքան ընդարձակ

է եղել, որ քաղաղրին Հնարավորութիւնն է տվել, Համաձայն իր պատկերացումների ու ցանկութիւններին, Հաճախ նրանցից քաղել մեկից ավելի Հատվածներ, շարահարկներով դրանք այլ հեղինակների ասույթներին հետ. իսկ այդպիսի Հնարավորութիւնն կարող էր տալ միայն նյութը բազմակողմանիորեն մեկնած մի աղբյուր:

Եղիշեի Արարածոց մեկնութիւնն մեզ Հասած Հատվածների ցանկից օգտվելիս, նկատի պետք է ունենալ ևս մի Հանգամանք, որ չնայած բխում է վերն ասվածից, բայց պահանջում է Հատուկ ուշադրութիւն: Կան բազմաթիվ պարբերութիւններ, որոնք չնայած ցանկ են մուծված, բայց իրականում պահպանվել են միայն նրանց երկրորդական ու փոքր մասերի մեկնութիւնները: Այսպես, օրինակ, թեև ցանկում պահպանված Հատվածների շարքն է դասված Գ, 24 Համարի («Եւ եհան զԱդամ, եւ բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան. եւ հրամայեաց Քերոբեից բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց») մեկնութիւնը, բայց իրականում պահպանվել է ոչ թե հիշյալ Համարի ամբողջական, այլ միայն նրա երկրորդ մասի («Եւ հրամայեաց... ծառոյն կենաց») մեկնութիւնը: Կամ թե՛ Ա, 24 Համարի մեկնութիւնն պահպանված Հատվածը վերաբերվում է միայն նրա վերջին մասին, այն էլ չափազանց նեղ սահմաններում:

Մեր ձեռքի տակ եղած Հատվածների նշված թերութիւնները, ինչպես և սպասելի էր, վերաբերում են

գերազանցապես Արարածոց գրքի առաջին մասերի մեկնութիւններին, որովհետեւ այդ մասերի շարահարման Համար Վարդանը ձեռքի տակ ունեցել է Համեմատաբար շատ ավելի առատ նյութեր, քան մյուս մասերի Համար, ուստի և մեծ տեղ ստանալով այդ նյութերը (Հատկապես Բարսեղ Կեսարացու «Ճառք յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատութիւնը), բնականորեն պետք է քիչ օգտագործվելին կամ սղվելին Համապատասխան Հատվածների Եղիշեի մեկնութիւնները:

Այլ պատկեր է բացվում մեր առջև գրքի հետագա մասերում, ուր զերազանցապես բերված են Եղիշեի ու Եփրեմի մեկնութիւնները. անկասկած, այդ մասերն ավելի ամբողջական ու կատարյալ են, սակայն ցավոք նրանք առաջին մասերի գիտական նշանակութիւնը չունեն: Այնուամենայնիվ անթիւտելի է, որ Եղիշեի Արարածոց մեկնութիւնն պահպանված Հատվածները ոչ միայն Հնարավորութիւնն են տալիս բավարար զադափար կազմելու այդ կորած երկի մասին, այլև նյութ են բնօրինակում մեր հին մատենագրութիւնն բազմաթիվ երկերի հետ առնչվող այլևայլ հարցերի լուսաբանման Համար:

ԵՂԻՇԵՒԻ ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿԵՆՈՒԹԾԱՆ
ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՐԱՋԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԾԸ

Քննարկված աղբյուրներից քաղելով և կազմելով Եղիշի անվամբ հասած Արարածոց մեկնություն հատվածների բնագիրը, մեր առջև ծառանում են երկու կառուցողական խնդիրներ, որոնց դրական լուծումից է կախված այդ հատվածների հետագա բաղմանը և քննության և գնահատման հնարավորությունը: Այդ խնդիրներն են՝ ա) արդյոք այդ հատվածները անաղարտորեն են ներկայացնում նախնական բնագրի համապատասխան մասերը, թե՞ մեծ մասամբ անցնելով երկու տարբեր խմբագիր-քաղադիրների ձեռքով, նրանք չեն կարող փոխարինել նախնական բնագրին, և բ) դրանց հեղինակ ճանաչվող Եղիշին «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» հանրահայտ աշխատության հեղինակն է, թե՞ մի այլ համանուն անձնավորություն:

Այս երկու խնդիրներն այնքան սերտ կապված են միմյանց, որ հաճախ մի խնդրի լուծման նպատակով բերվող որևէ փաստարկում միաժամանակ օժանդակելու է մյուս խնդրի լուծմանը. այնուամենայնիվ դրանք քննարկում ենք նշված հերթականությամբ:

Առաջին խնդրի կապակցությամբ նախ պետք է

քննել Տիմոթեոս վարդապետի կազմած Արարածոց գրքի հավաքական մեկնության և ապա՝ Վարդան Արևելցու նմանատիպ աշխատության հարցը:

Տիմոթեոսի մեկնությանը, ինչպես ցույց է տրված, վիճակվել է Եղիշի աշխատության բախտը, ուստի հարցի լուծման համար կրկին անգամ մեծ նշանակություն է ստանում «Թառաջաբան համառոտ ի ծննդոց, զոր արարեալ է Տիմոթիա լուսօր վարդապետի» պատահիկը՝ պահպանված №1981 գրչագրում: Հիշեցնենք, որ այդ պատահիկը մի թերի համառոտագրություն է, քաղված Տիմոթեոսի նախնական բնագրից, և պարունակում է որոշ հատվածներ Բարսեղ Կեսարացու, Եփրեմի, Հիպոդիտեսի, Հովհան Ոսկեբերանի, Դիոնիսիոս Արիոպագացու, Կղեմեսի և Գրիգոր Նյուսացու երկերից:

Ձեռքի տակ ունենալով Բարսեղ Կեսարացու «Ճառք վասն վեցօրեայ արարչութեան» և Եփրեմ Ասորու «Տեսութիւն յաղագս մեկնութեան արարածոց» աշխատությունների ամբողջական բնագրերը, մենք հնարավորություն ունենք Տիմոթեոսի երկի վերոհիշյալ պատահիկի մեջ պահպանված այդ հեղինակների որոշ հատվածների համադրության միջոցով դրական արդյունքների հասնել առաջադրված խնդրի լուծման ասպարեզում: Խնդրի կարեորությունից ելնելով, մեզ թույլ ենք տալիս կատարել ընդարձակ համեմատություններ:

Արքայ Բարսեղի եպիսկոպոսի
Կեսարու Կապադովկացւոց
ճառք վասն վեցօրեայ ա -
րարչութեանն, Վենետիկ,
1830 թ.

«Ի սկզբանէ արար Աստուած
գերկինս և գերկիր: Այն բնու -
թիւն, որ ամենևին երանութիւն
է, աննախանգ քարերարութիւն,
գեղն ցանկալի, անյագն վայել -
չութիւն, սկիզբն կենաց, կենդա -
նութիւն արարածոց, բոլորմն
կենդանութեան, լոյսն աննա -
չելի, անհամեմատ իմաստու -
թիւն, որ սիրելին է ամենայն
խօսնոց...» (էջ 5):

«Բաւական են ուսուցանել
մեզ զպատմութիւն երկնից ա -
ռանց պանունազարդ բանից
ճշմարիտ պատգամքն՝ զոր
լուաք յնսայեայ, զոր ցուցա -
նէ ախպէս, թէ իրրև ըստ օ -
րինակի ծիսոյ հաստատեաց
Աստուած զհաստատութիւն
երկնից...» (էջ 15):

Այս երկու Հատվածների Համեմատությունից ար -

Յառաջարան յամառօտ ի
Ծննդոց, զոր արարեալ է
Տիմոթիա լուսաւոր վարդա -
պետի. N^o 1981գրչագիր .

«... Եւ թէ Աստուած արարիչ
նոցա, որ ամենևին երանութիւն է,
և աննախանգ քարերարութիւն,
անհամեմատ իմաստութիւն, և որ
բազմալին է բանակ[ան]աց...» (էջ
180ա):

«Եւ վասն հաստատութեան երկ -
նից բաւական է բանն ստացեալ
յնսայեայ, թէ ըստ օրինակի ծիս
հաստ[ատ]եաց» (էջ 180բ):

դեն կարելի է հանգել այն Հաստատ Համոզման, որ,
Տիմոթեոս վարդապետն իր աղբյուրներն օգտագործել է
ճշտությամբ: N^o 1981 գրչագրից վերը բերված Համա -
պատասխան Հատվածների պակասները չեն կարող վե -
րագրվել Տիմոթեոսին, որովհետև նորից ենք կրկնում,
այդ գրչագրի մեզ հետաքրքրող հոդվածը պարզապես
Տիմոթեոսի երկի մի սխալաշատ Համառոտադրություն
է: Բավական է նշել, որ Հակառակ Վարդանի ուղղակի
վկայության, ըստ որի՝ Տիմոթեոսի մեկնությունը
կազմված է եղել գլխավորապես Եղիշեի, Եփրեմի և Ոս -
կերերանի մեկնությունների շարահարմամբ, այդ Հա -
մառոտությունը Եղիշեի անվամբ չի պահպանել ան -
գամ մի Հատված: Իսկ Համեմատությունից ստացված
տարբերությունները, աննշանակալից լինելով Հան -
դերձ Հետաքննելի են, քանի որ Բարսեղի «Վեցօր -
եայքի» հրատարակված բնագիրը, ինչպես կարդում
ենք նրա առաջաբանում և Համոզվում մեր Մատենա -
դարանի N^o N^o 5353 և 5595 գրչագրերի հետ կատարած
հարեանցի Համեմատությունից, այնքան լի է աղավա -
ղումներով, որ իրավունք է տալիս այդ աննշան տար -
բերություններն անգամ ոչ թե Տիմոթեոսին կամ նրա
մեզ Հայտնի Համառոտ խմբագրությունը, այլ Բարսեղի
հրատարակված բնագրի թերություններին վերագրե -
լու²:

Եփրեմի մեկնության և Հիշյալ գրչագրի Համապա -
տասխան Հատվածների Համադրությունը նույնպես
գալիս է ամրացնելու մեր վերոհիշյալ եզրակացու -

Թյուռնն այն մասին, որ Տիմոթեոս վարդապետն իր աղբյուրներն օգտագործել է ճշտությամբ: Հմմտ.

Տեառն Եփեսոսի խորին Աստուծոյ տեսութիւն յաղագս մեկնութեան արարածոց 3.

Յառաջարան համառօտ ի նկնդոց, զոր արարեալ է Տիմոթիա լուսաւոր վարդապետի. գրչ. № 1031.

«Ի սկզբանէ հաստատեաց Աստուած զհաստատութիւն երկնից և զհաստատութիւն երկրի»: Քանզի վասն այսորիկ փոյր եղև Մովսիսի ի ձեռն յայտնութեան հոգւոյն օրինակարգութիւն ճշմարտութեան ընդդէմ մոլորութեան կոռապաշտութեանն առնել, զոր զարարածս արարիչ կարծէին լինել, սկսաւ ուսուցանել՝ թէ և զոյ արարիչ և հաստիչ աշխարհիս այսորիկ, և մի է Աստուած որ իսկն էր, և կարաց առնել զամենայն յոչընչէ. ի ձեռն այնորիկ ասաց Մովսէս, զի յաւանեցուցէ և հանէ՝ թէ ամենայն ինչ արարածք են: Եւ վասն զիցն զի կարծէին թէ ինքնութեամբ էին ի միտս պաշտօնէից իւրեանց, զի

«Ի սկզբանէ» հաստատեաց Աստուած զհաստատութիւն երկնի և զհաստատութիւն երկրի»: Եւ վասն այսորիկ փոյր եղև Մովսիսի օրինադրել ընդդէմ կոռապաշտութեան ի ձեռն յայտնութեան հոգւոյն, զի զարարածս արարիչ կարծէին: Սկսաւ ուսուցանել թէ զո արարիչ և յարգարիչ:

յայտ արասցէ թէ և նոքա արարածք են: Եւ սկսաւ ասել. իբրև ոյինչ էր ուրեք խորհեցաւ Աստուած ի կամս բարերարութեան իւրոյ, այն որ ոչն նորոգի ի գիտութեան իւրում առնել զտունս զայս զերկինս և զերկիր՝ որ ամենայն ինչ փակեալ էր ընդ նովաւ, զի ոչ եղև և ոչ ական թարբափել ի բանալ արտևանացն՝ սկիզբն առնէ պատուէրն հրամանին և յական բօքափել ի ձեռն հրամանի կատարեցան զործք» (էջ 1):

«Եւ զի ասէ՝ «հոգի Աստուծոյ շրջէր եւ զրգայր ի վերայ շուրջ» կամ զի թէ և ի կազմութենէ բերի էին, և ի ձեռն զրգելոյն կատարեալ լինէին, զի ի ձեռն շարժմանն, որ ի շնչելոյ անտի՝ զօրութիւն կենդանութեան իւրեանց ստանային, այլ զի և այսօր իսկ զրայ և զրգէ ի վերայ արարածոց, որպէս զի ոգի ամենայնի ի նմայ կախեալ կայ, զի եթէ ոչ առնու ի նմանէ շուռչս այս, որ փշեալ է ի մեզ, և հանգչի յայն

Սկիզբն առնէ պատուէր հրամանին եւ յական բոքափել, գործն կատարեցաւ, զի եղիցի վկայ Մովսէս Աստուծոյ...» (էջ 180ա):

«Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ շուրջ» կամ զի ի կազմութենէն բերի էր, և ի ձեռն հոգւոյն կատարեալ լինէին. զի ի ձեռն շարժմանն, որ ի հոգւոյն անդի զօրութեան՝ զկենդանութիւն իւրեանց ստանային.

Ջի հոգի ամենայն ի նմանէ կախեալ կայ այս, որ փշեացս ի մեզ. եթէ ի նմանէ ոչ առնու գծծումն՝ հեղձու. այլ ի նմանէ

ի գրգիչն՝ հեղձնուս: Կամ յասել իւրում վասն ջուրցն եւ խաւարին, որ ի վերայ նոցա, ետ խորհուրդ տկար մարդկան՝ իրքե նկարէ նոցա զխորհուրդ աւագանին մկրտութեան, զի սրբելոց էր նա ի գթութիւն գրգելոյ հոգւոյն սրբոյ: Քանզի զարարչութենէն Աստուծոյ պատմէր, ոչ եթէ արարած յայտ արար ընդ նմա ի վերայ ջուրցն որ գրգայր, այլ վասն հոգւոյն սրբոյ յայտ արար. իբր հայր ասէր, որդի գործէր, հոգին գրգայր» (էջ 3):

Եթե հասկանալի պատճառներով ի նկատի չունենանք N^o1981 զրչագրում պահպանված հատվածների համառոտությունը և զրչական մի շարք ոչ նշանակալից տարբերություններ, որոնք անխուսափելի են բոլոր տիպի բնագրերում, ապա կարևոր կարող են համարվել միայն Եփրեմի հաստիչ, զբաղւոյն, շնչեւոյ անտի և շունչ բառերի դիմաց զրչագրի տված յարգաբերչ, հոգւոյն, ի հոգւոյն անդի և զծծումն տարբերությունները: Դրանցից ո՞րն է համապատասխանում նախնական բնագրին, և ո՞րն է արդյունք հետագա աղավաղումների կամ խմբագրման, կարելի է պարզել միայն Եփրեմի քննարկվող աշխատության ասորական

գործնայր, եւ հանգչի ի գրգիչն իւր:

Դարձնալ նկարէ զխորհուրդ օագանին, զի ջուր օագանին սրբելոց [էր] ի հոգւոյն սրբոյ:

Յայտ առնէ, զի հայր ասէր, որդի գործէր, հոգին սուրբ գրգայր» (էջ 180ր):

բնագրի⁴ և հնագույն զրչագրերի ուսումնասիրման միջոցով: Այդ աշխատանքը, սակայն, մեզ չափազանց կշեղեր մեր հիմնական նպատակից և որևէ հսկան չանլեր ավելացնի վերոհիշյալ համեմատություններից բխող այն միակ ճիշտ եզրակացություն վրա, որ արդեն յարադրել ենք վերը, այն է՝ Տիմոթեոս վարդապետը կազմելով Արարածոց գրքի քաղվածո մեկնություն, իր «գտագործած աղբյուրների բնագրերը բերել է հարապատրեն, ուստի և խմբագրողի դեր չի ստանձնել:

Կարող են մեզ առարկել այն բանի համար, որ մենք մեթոդական սխալ ենք գործում երկու աղբյուրների համեմատություններից ստացված հետևությունները տարածելով մյուսների վրա: Նախ, այդպիսի առարկությունը սխալ կլինի այն պարզ պատճառով, որ կատարված համեմատությունների բնույթը, ինչպես և ստացված աղբյուրները Տիմոթեոսի աշխատանքի մեթոդին են վերաբերում, և ոչ այս կամ այն հեղինակի հանդեպ նրա ունեցած վերաբերմունքին, և երկրորդ՝ մենք կարող ենք բերել նման փաստեր նաև Տիմոթեոսի «գտագործած մյուս աղբյուրների հարադատության խնդրի դրական լուծման համար:

Մեր նպատակներից ելնելով կբավարարվենք Եղիշի բնագրի վերաբերյալ փաստերի համառոտակի շարադրմամբ:

Ինչպես արդեն տեսանք, «Վասն հոգւոց մարդկան» վերնագրով հրատարակված Հինգ հատվածները Եղիշի Արարածոց մեկնությունից պահպանել են մի

շարք բնորոշ արտահայտություններ և դատողություններ, որոնց համեմատությունը այլ աղբյուրներում Եղիշեի Արարածոց մեկնությունից պահպանված հատվածների հետ մեզ հնարավորություն տվեց ապացուցել նրանց միևնույն աշխատություն մասեր լինելու փաստը: Հասկանալի է, որ խմբագրված և իր նախնական կերպարը կորցրած որևէ երկ չէր կարող ընձեռել այդպիսի հնարավորություններ:

Սակայն ավելի նշանակալից է «Վասն հոգւոց մարդկան» գրվածքի առաջին հատվածում պահպանված «Արգ որպէս վերադոյն ասացաք՝ յերկնէ երկնայինքն և յերկրէ երկրայինքն, և մարդ խառնուած յերկնէ և յերկրէ. անաւսրագոյնն յերկնէ, թանձրագոյնս յերկրէ»⁵ արտահայտություն համեմատությունը Եղիշեի նախնական ձևով մեզ հասած «Ի չարչարանս Քրիստոսի» ճառի հետևյալ հատվածի հետ. «Եւ գգեցեալ [Քրիստոս] ոչ դիպուածոյ և ոչ յայլ ընդ այլոյ պատահումն, այլ զինքն ձևացոյց երկնիւ եւ երկրաւ եւ միջոցաւ. երկնիւ՝ ըստ միակին, որ է աստուածն բան. եւ երկրաւ՝ որ է մեր հողեղինութիւնս. իսկ միջոցաւ՝ թուական գօտեօք՝ ըստ եօթն զէայութեանցս: Զի որպէս ա՛ռ զհոգուտ մարմինս մեր, որ մասն է երկրի, նոյնպէս և զօգեղենն եւ զհրայինն, որ յերկնէ...»⁶:

Այսպիսի, ամեն մի սպասելիք գերազանցող, համեմատությունների հնարավորություն խմբագրված ու փոփոխված որևէ բնագիր, ինչ կասկած, չէր կարող տալ:

Վարդանի «Լիով պատճառ արարածոց» քաղվածո մեկնության մեջ պահպանված Եղիշեի աշխատության մասերի հարադատության հարցի լուծման համար փաստերն ավելի առատ են ու պերճախոս: Սակայն նախքան այդ փաստերի շարադրմանն անցնելը, անհրաժեշտ է մի համառոտ ակնարկով ցույց տալ Վարդանի այդ երկի ստեղծման հանգամանքներն ու նպատակները:

Վերադառնալով Կիլիկիայից և կատարելով Կոստանդին կաթողիկոսի հանձնարարությունները, Վարդանը մեկուսանում է սուրբ Անդրեի մենաստանում և գրադվում գրական, մանկավարժական եռուն գործունեության մեջ. հավանաբար այդտեղ է նա գրում իր Հիսսրանչ ներբողները Աստվածածնի, Գրիգոր Լուսավորչի ու նրա որդիների և Հովհան Օձնեցու մասին «Ի խընդրոյ տեառն Համազասպայ արհիեպիսկոպոսի մեծի աթոռոյն Հաղբատայ»⁷: Նույն անձնավորության և Սահահի վանքի փակակալ Գրիգոր վարդապետի խընդրանքով նա բացառիկ կարճ ժամկետում գրում է նաև Հնդամատյանի մեծածավալ մեկնությունը, որի ամենաարժեքավոր մասը քննարկվող Արարածոց գրքի մեկնությունն է: Ինչպես այս, այնպես էլ Վարդանի մյուս մեկնողական երկերը, որոնցում մեկնվող նյութը շարադրված է բազմակողմանիորեն և պարզ կերպով, հետապնդում են ուսուցողական նպատակ. Արարածոց մեկնության վերնագրում այդ հանգամանքը շեշտված է «Վասն կրթութեան մանկանց Սիոնի» արտա-

Հայտնությամբ:

Արարածոց գրքի վերաբերյալ ԺԳ դարում Հայերեն լեզվով առկա էին թե՛ թարգմանական և թե՛ Հայ հեղինակների կողմից գրված բազմաթիվ աշխատություններ, որոնց լավագույն և ժամանակի գիտական մակարդակին ու գաղափարական-քաղաքական միտումներին Համապատասխան մասերի շարահարությունները հնարավոր էր ստեղծել մի ամբողջական և կոռու դասագիրք-Հանրագիտարան, որին և ձեռնարկում է Վարդան Արևելցին:

Բազմաթիվ և ընդարձակ աշխատություններից լավագույնն ընտրելու, ինչպես և ընտրած Հատվածներն իրար շարահարելու ընթացքում, ինչ խոսք, շատ Հատվածներ պիտի Համառոտվեին. մեկից մյուսին անցնելու ընթացքում, մտքի կապը չկտրելու համար, պիտի ավելացվեին որոշ արտահայտություններ և կամ՝ մասամբ փոխվեին եղած Հատվածների վերջավորությունները և այլն և այլն:

Վարդանն ինքը չի թաքցնում, որ կատարել է որոշ լրացումներ և Հապշտապության հետևանքով չի կարող երաշխավորել գործի թերություններից զերծ լինելու հանգամանքը, ընդհակառակը՝ «է, - գրում է նա, - զի զհարկաւորն և դառաւել պիտանին թողեալ լինինք ի սրբոցն բանից, եւ է զի Հանդէպ տեղ եղեալ, եւ դարձեալ՝ գոր ի մէջն Համարձակեցաք զմիտս յաւելուլ ըզթուեցեալն պակաս. լինի ի դէպ և մնացեալ իցէ դարձեալ Հարկաւոր բանեար անլուծանելի...» և այլն:

Սակայն մեր և այլոց կողմից կատարված մի շարք համեմատություններ ցույց են տալիս, որ Վարդան Արևելցին, ինչպես իր «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» աշխատության⁸, այնպես էլ Հնգամատյանի մեկնության մեջ ղեկավարվել է այլ հեղինակներից բերվող Հատվածները անփոփոխ ներկայացնելու սկզբունքով, իրեն իրավունք վերապահելով միայն որոշ դեպքերում Համառոտելու իր մեկնության պահանջներին և Համապատասխանող այս կամ այն ընդարձակ Հատվածը:

Այս թեզի ապացուցման համար կարևոր ենք համարում բերել մի քանի բնորոշ օրինակներ:

Դեռ 1875 թվականին «Բազմավեպ» ամսագրի էջերում Ա. Սուքրյանն իր անստորագիր «Ընդհանուր տեսություն մը թարգմանութեանց վրա դատաստան ընելու» հոդվածում կատարել է մի քանի հետաքրքիր համեմատություններ Վարդանի քննարկվող աշխատության մեջ պահպանված է դարի հույն հեղինակ Գիորգ Պիսիդեսի վեցօրյա արարչության չափածո մեկնության Հայերեն թարգմանությունից բերված Հատվածների և այդ թարգմանության իր ձեռքի տակ ունեցած պատառիկի Համապատասխան մասերի միջև:

Ահա դրանցից մեկը⁹.

Պիսիդես

Վարդան

Ով մշտաշարժ երկնի բնուրեան

Ով մշտաշարժ երկնի բնութիւն

Գնդաձև իմաստագործ ձե- ղումնցն,	Գնդաձև իմաստագործ ձեղումնցն
Բարձրութեամբ լայնացեալ եւ ալսման հաստիւմ,	Ըստ բարձրութեան և խորութեան լայնացեալ
Սարիսիս եղեալ, յոչնչի հաստա- տեալ.	Անհաստիւմ սարսիսեալ, յոչնչի կառուցեալ.
Նախահայեաց սրատեսութեամբ ումն ասաց...	Նախահայեաց ումն ասաց
Ըստ աղօտարար ակնարկու - քեանն տեսութեան	Ընդ աղօտ տեսեալ.
Կամ գունդ կիսակտուր՝ հեցի օ- րինակաւ...	Գունդ կիսակտուր՝ հեցի օրի- նակաւ
Ի ներքուստ կուսէ ալ երևի բա- զուցեալ...	Ի ներքուստ կուսէ ալ երևի բա- զուցեալ...

Նկատվող տարբերությունները մեծ մասամբ գրը-
չական են և անշուշտ կուղղվեին, եթե Հոգվածագիրը
չբավարարվեր Վարդանի մեկնության մեկ բնագրով.
մեր օգտագործած գրչագրերից միայն մեկը (Ա, էջ 10ա)
հրատարակված հատվածից ուղղում է երկու տարբե-
րություն. այստեղ «բնութիւն» ընթերցվածի դիմաց
կարդում ենք «բնութեան» (1 տող), իսկ «եւի» բառի
դիմաց՝ «երեւի» (8 տող), այսինքն՝ Պիսիդեսի պատա-
ռիկի ընթերցվածներին համապատասխան: «Այսքան
հաստիւք սարսիսս եղեալ»-ի փոխարեն Վարդանն ունի
«Անհաստիւք սարսիսեալ», որ նույնպես գրչական սը-
խալի արդյունք է և կարող է ծագած լինել ինչպես
Վարդանի մեկնության արտագրությունների ընթաց-

քում, այնպես էլ Պիսիդեսի երկի նրա օգտագործած բը-
նագրից: «Այսքան» բառի հապավված գրությունից ո-
րևէ գրիչ չատ հեշտությամբ կարող էր կարդալ «ան»
ժխտական մասնիկը և այն կցել հաջորդ՝ «հաստիւք»
բառին:

Մյուս տարբերությունների մի մասը կարող է բա-
ցատրվել նաև Վարդանի կատարած խմբագրությունը:
«Ընդ աղօտարար ակնարկութեանն տեսութեան» (6
տող) մանվածապատ արտահայտության իմաստը
դյուրեմբ չենք զարձնելու և համառոտելու նպատակով
Վարդանը կարող էր դնել՝ «Ընդ աղօտ տեսեալ» և
այլն:

Այս համեմատությունից ակնբախ է դառնում
Վարդանի ցուցաբերած բացառիկ զգուշավոր և գիտա-
կան մոտեցումը օգտագործված ընագրի հանդեպ, որ
պատիվ է բերում մեր միջնադարյան բանասիրությա-
նը:

Վարդան Արևելցու մեկնության մի այլ հատվածի
ստիժիվ Ա. Սուքրյանը նշում է, որ այն «բոլորովին
քաղուածոյ է Բարսղի վեցօրէից, վասն զի բոլորն ալ
գտնելու համար բանալու է տպագրեալ ի սուրբ Ղազար
(1830) էջ 29, 30, ճառ ք.»¹⁰: Ծիշտ է նկատում Հոգվա-
ծագիրը, երբ գրում է, թե «Շարադրութեան համաձայ-
նութիւն ամենեւին ընդունայն է փնտրել», որովհետև
գեղարվեստական զեղումներով առատ, երկարախոս
Բարսեղի երկը միայն նման սեղմումներով կարող էր
տեղ գտնել ուսումնագիտական նպատակներով շարա-

դրված այդ երկի մեջ:

Սակայն անգամ Բարսեղի երկի ոչ բոլոր հատվածներն են սղվել Վարդանի կողմից. բաժանյալ են ք համարում մեր կատարած ընդարձակ համեմատությունների արդյունքներից միայն մեկ համառոտ օրինակով հաստատել մեր միտքը:

Բարսեղ, «Վասն վեցօրեայ
արարչութեանն»

Վարդան, «Լիով պատճառ
արարածոց»

«Ձոր օրինակ սկիզբն նա՜նս
պարհի ոչ նանապարհ է, եւ ոչ
սկսուած տանն տուն, սոյնպէս
և ոչ սկիզբն ժամանակին է ժա-
մանակ»¹¹:

«Ձի որպէս ոչ է սկիզբն տանն
տունն, և ոչ սկիզբն նանապար-
հին՝ նանապարհ, եւ ոչ սկիզբն
ժամանակին ժամանակ է»¹²:

Նույն եզրակացութեանն ենք հանգում, երբ համեմատում ենք նաեւ Եփրեմի, Փիլոնի, Անանիա Շիրակացու ընդգրկող Վարդանի կողմից խմբադրված համապատասխան հատվածների հետ:

Գրչական ընդլիթի տարբերությունների կողքին նկատվում է բնագրի իմաստը պարզելու, դուրըմբող-նելի դարձնելու և համառոտելու միտում, որի հետեւանքով Վարդանի կատարած քաղվածքները որոշ չափով հեռանալով իրենց նախնական տեսքից, այնուամենայնիվ պահպանում են բնագրի բովանդակու-թյունը և շարահյուսական ու քերականական առանձնահատկությունները. ուստի առ ի չգոյն բնագրի կա-

րող են բավարար չափով փոխարինել նրա կորուստը:

Մյուս հեղինակների երկերի նկատմամբ մեր կատարած ընդարձակ համեմատություններից ևս ստիպված ենք բավարարվել միայն Եփրեմի և Անանիա Շիրակացու մեկական հատվածների քննությամբ:

«Տեսոն Եփրեմի խորին
ասորոյ տեսութիւն յաղագս
մեկնութեան արարածոց»¹³

«Լիով պատճառ արարածոց
սատարեալ ի Վարդան վար-
դապետ»

«... Այլ ի Կայնէ եւրն պատ-
ծոց հատուցումն խնդրիցի. այն
խակ է զի զեւրն դար նորա տե-
սանին զերբել զտատանել նո-
րա. կամ զի եւրանն անարգե-
ին ընդ նմա, քանզի ասաց նա՝
բայ «ամենայն որ գտանիցէ
սպանցէ զիս» ասէ ցնա՝ ոչ...
(43 տող):

Կամ զեւրն պատիժսն լուծցէ
որ եկին ի վերայ նորա եւրն
յանցանաց, այսինքն այս ա-
ռաջին նախանձն, զի ոչ եղեւ
ընդունելի պատարագն, որ -
պէս եղբօրն իւրոյ. երկրորդ
նեղութիւն, յայնմիկ զի ասէ
«եկ երբամբ ի դաշտ. երրորդ

«Իսկ Կային եւրնապատիկ
եւրն ծննդով վնարէ, կամ եւրն
ծնունդ տեսցեն զԿային չար-
չարեալ. եւ քէ ոք սպանցէ զԿ-
յին նա տացէ, զնմայն եւրնեկի
պատիժն, որ լուծցէ ի վերայ իւր
արձակելով ի նմանէն:

Եւ դարձեալ եւրն են յանցանքն
Կայնի եւ եւրն պատիժն. առա-
ջին պատարագն անարժան, երկ-
րորդն՝ նախանձն առ եղբայրն,
երրորդն՝ խարկն ի գրօսանս եր-
բալ, չորրորդն՝ սպանանելն, հինգե-
րորդ՝ զի առաջի սպանաւ է, վե-
ցերորդ՝ զի եղբայր սպանաւ է,

սպանութիւն, և չորրորդ՝ զի
զեղրայրն իւր Խսպան, հինգե-
րորդ՝ զի նա եղև սպանող ա-
ռաշին, վեցերորդ՝ սուղ և
տրտմութիւն հարցն նորա,
եւթներորդ՝ զի ստեաց Աստու-
ծոյ, եւ ընդդէմ աշտրիկ Ե-
կին հասին ի վերայ նորա եւրն
պատիժքն. առաջինն՝ անիծեալ
լիշիբ դու յերկրէ, երկրորդն՝ մի
յաւելցէ քեզ տալ զգօրութիւն,
երրորդ՝ երեքումն յանապազորդ,
չորրորդ՝ տատանումն մարմնոյ,
հինգերորդ՝ զի օտարացաւ նա
յընտանութենէ Աստուծոյ: «Յե-
րեսաց քոց, ասէ, բազուցեալ ի-
ցեմ». վեցերորդ՝ նշանն զոր եղ
ի վերայ նորա, եւթներորդ՝ սահ-
մանն որ եղև ի մէջ նորա եւ ի
մէջ հարց նորա, զի օտարացաւ
նա յընտանութենէ առաջին հա-
մարձակութեան» (Լ. 2 33-35):

*Մեղքերի և պատիժների միայն թվահամարների
մեջ կան որոշ տարբերություններ, իսկ ընդհանուր առ-
մամբ Եփրեմի Հատվածի բովանդակությունը լրիվ կեր-
պով արտահայտում է Վարդանի իր խմբագրությունը:*

Շատ ավելի մոտ են բնագրին Անանիա Շիրակացու

Եւթներորդն՝ զի ստեաց Աստու-
ծոյ:

Առաջին պատիժ՝ անէծքն,
երկրորդ՝ յերկրի, զոր արեամբ ո-
ռոգեաց, երրորդ՝ գործելն վաս-
տակօք, չորրորդ՝ չտալն զգօրու-
թիւն, հինգերորդ՝ երեքումն, վեցե-
րորդ՝ տատանելն, եւթներորդ՝ նը-
շանն, որ եղաւ ի վերայ նորա»
(Ա, 35ա):

*աշխատություններից վերցրած Վարդանի երկու Հատ-
վածները, որոնցից առաջինը բնագրին կից բերում ենք
ստորև.*

Անանիա Շիրակացի

«Լիով պատճառ արարա-
ծոց սատարեալ ի Վարդան
վարդապետէ»

«Մինչդեռ էի յաղօթս առ առա-
ւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւ-
գինեայ եւ միտք իմ յայս խոր-
հուրդս ծփէին, ինչն էառ զիս: Եւ
տեսանէի որպէս քէ արեգակն ի
ծագելն խոնարհեալ յերկիր իջա-
նէր: Եւ ես յառաջն ընթանայի և
ի գիրկս ընդունէի զնա, եւ նա էր
պատանի անմուրուս, ոսկէգիւսակ,
եւ շրթունք բերանոյ նորա որպէս
քէ ոսկով լինէր օծեալ. եւ ինքն
պիտակս եւ փայլունս զգեցեալ
հանդերձս, եւ լոյս սաստիկ ելա-
նէր ի բերանոյն: Եւ ես ասացի
ցնա՝ երէ ի վաղնջուց ցանկացեալ
էի ի քեզ լսել քան. արդ՝ աղէ
պատմեա՝ ինչ երէ յորժամ ի
մէջ ծածկիս ու՛մ տաս լոյս,
զո՛ւն ալ կենդանիք ի ներքոյ

«... Վկայե Անանիայ Շիրակու-
նի, քէ մինչ կայի առ վարդապե-
տին իմոյ յուսումն իմաստասի-
րութեան, տարակուսեալ հայցէի
յԱստուծոյ գիտել զնա՜նա -
պարհն զիշերոյ արեգականն: Եւ
եկի ի տեսիլ, բուէր ինչ լինել ի
Վաղարշապատ քաղաքի եւ երե-
տեսանի անմուրուս, ոսկէգիւսակ,
եւ ինչն պատանի մի գեղեցիկ
տեսանելով զշրթունս իրբեւ օծ-
եալ ոսկով: Եւ իրբեւ տեսի ընդ
առաջ զնացի և ի գիրկս առի, եւ
ասեմ ո՞վ ես, եւ ասէ՝ արեգակն
եմ ես, զոր խնդրեցեր, եւ ասեմ
ապա գոհութիւն Աստուծոյ, որ
դու ես, ընդ ո՞ր երբաս զիշերն, եւ
ասաց՝ ի ներքոյ երկրի երբամ: Եւ
ասեմ՝ ի ներքոյ երկրի երկիր կամ
կենդանի կա՞յ, եւ ասէ ո՛չ, ալ

երկրի՝ եթէ ոչ: Եւ նա ասէ՝ ոչ, անփափայս եւ խորածորս եւ խո-
այլ լերանց եւ ափափայից, ձո- ոռչս: Եւ լուեալ գոհացայ զԱս-
րոց եւ անձաւաց անկենդանեաց տուծոյ»¹⁵ (Ա., էջ 15բ):

տամ լոյս»¹⁴:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ եթե Եղիշեի Արարածոց մեկնության հատվածները Վարդանի քաղ-
վածո մեկնության մեջ մուտք գործած լինեն անգամ
կրեւով նմանատիպ փոփոխություններ, դարձյալ մեր
առաջադրած հարցը՝ նրանց հարադատության և որ-
պես բնագրեր օգտագործելու հնարավորության վերա-
բերյալ, ստանում է դրական լուծում: Սակայն կան
տվյալներ, որոնք իրավունք են տալիս պնդելու, որ Ե-
ղիշեի հատվածները նույնիսկ այդպիսի աննշան փո-
փոխություններ և հապավումներ քիչ կրած պետք է
լինեն:

Ինչպես մեզ արդեն հայտնի է, իր «Լիով պատճառ
արարածոց»-ից ավելի քան տասնհինգ տարի առաջ
գրած «Լուծմունք ի սուրբ գրոց» (Ժղլանք) աշխատու-
թյան մեջ Վարդանը հանվանե հիշատակությամբ մեջ
է բերում Եղիշեի մի հատված, որն անփոփոխ ձևով
պահպանվել է նաև «Լիով պատճառ...»-ում և №4166
գրչագրում: Համատ.

№ 4166

«Լուծմունք ի «Լիով պատճառ
սուրբ գրոց» արարածոց»
(Ժղլանք)

«Ի վերո եւթմ մոլո- «Եւ ասէ Եղիշէ, թէ «Ասէ ուրեմ եւ սուրբն
րակացն, որք են ընդ ի վեր քան զեւթմ մո- Եղիշէ՝ ի վեր քան զեւ-
հրաին կամարանան լորակն, եւթմ աստղ թըն մոլորակսն այլ նը-
եւթմ անմուար աս- այլ կա նշանաւորք, ման նոցին եւթմ աս-
տեղք են, եւ են յոյժ ցրտագոյն եւ ա- տեղք են սաստիկ
ցուրտք, միջնորդ են մեծեւին սառնամա - ցուրտ քնուրեւամբ, որ
արեգական եւ արփո. նիք: Եւ են ընդ մէջ զերկնի զորորոքեալ
եւ զանշէջ տոչո - մոլարիցն եւ անմո - շերմութիւնն ցրտա -
րումն արփոյն, իւր - լարիցն: Եւ զհրարոր- ցուցեալ եւ քարեխառ-
նանց սաստիկ ցըր - բոք շերմութիւնն ար- նեալ տան ապա ի
տովն քարեխառնու- փոյն նոքա յինքեանս վայր՝ յեւթմ մոլո -
րիւն առնելով արե- առնուն եւ քարեխառն րակսն» (Ա., էջ 15ա):
գական մատուցա- առնեն, եւ եւթմ գո-
նեն, եւ արեգակն տիսդ տան ի մոլո-
տեալ հեղու ասղո՝ րակսդ» (ձեռ. №2544,
տեալ զցրտութիւնն էջ 96ա):
եւ լոյսն զշերմու -
րիւն մարմինն հը-
րոյ» (էջ 209ա):

Ինչպես պարզվում է բերված բնագրերի քննու-
թյունից, Վարդանը, օգտվելով Տիմոթեոսի մեկնության
մեջ եղած Եղիշեի այդ հատվածից, առաջին անգամ
1240-1246 և ապա, գրանից տարիներ հետո, 1261 թվա-

կանին, այնքան մոտ բառերով է շարադրում նույն պարբերությունը, որ հիմք է տալիս եզրակացնելու, թե նա այլ վերաբերմունք է ունեցել Եղիշեի հանդեպ, որի հեռևանքով նրանից կատարված մեջբերումները կրել են աննշան հապավումներ ու փոփոխություններ: Այդպիսի ուշադրավ մի փաստ էլ պահպանվել է Վարդանի պատմության մեջ: Լեզուների խառնակման դրվագը նկարագրելիս Վարդանը, վկայակոչելով Եղիշեին, շարադրում է նրա Ծննդոց գրքի ԺԱ գլխի 7 համարի («Եկայք ի ջցուք եւ խառնակնացուք զլեզուս դոցա») մեկնության բովանդակության մի մասը¹⁶, ոչ մի քայլ չընդվելով «Լիով պատճառ արարածոց»-ի համապատասխան բնագրից, եթե չհաշվենք մի քանի աննշան գրչական տարբերակները: Իհարկե անհիմն կլինի կարծել, թե Վարդանը ինչպես առաջին, այնպես էլ այս դեպքում, փոխանակ ըուն՝ Տիմոթեոսի խմբագրության իր ձեռքի տակ ունեցած օրինակից քաղելու ցանկացած հատվածը, հիշողությամբ կամ ընդօրինակելով վերատառերել է տարիներ առաջ իր կողմից շարադրված մի աշխատություն, պահպանելով նրա բոլոր առանձնահատկությունները: Ուստի անկասկած է, որ Վարդանը Եղիշեի հատվածներն օգտագործելիս բնագիրը պահպանել է ավելի հարազատությամբ, քան այդ արել է այլ հեղինակների հատվածների նկատմամբ: Այս առումով ավելորդ է հիշեցնել, որ «Ժղլանքում» արձանագրված խոստովանությամբ Եղիշեն Վարդանի ամենասիրելի հեղինակն է. «Յերկրորդ առուրն արար

զհաստատութիւնն,-գրում է նա,- շատ ինչ ասեն ըղնմանէ, այլ դրեմ քեզ զԵղիշեին, զոր սիրեմ մանաւանդ եւ հաճոյ է ինձ»¹⁷:

Այժմ անցնենք առաջագրված երկրորդ հարցի քննությանը, այն է՝ Եղիշեի անվամբ հասած Արարածոց մեկնության հատվածների հեղինակը «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» հռչակավոր պատմության հեղինակն է, թե՞ մի այլ համանուն կամ այդ անվան տակ թաքնված անձնավորություն:

Բացի հանրահայտ պատմագրից հայ մատենագրության մեջ հիշատակված են Եղիշե անունը կրող չորս այլ հեղինակներ.

ա) Եղիշե երէց, որին «Նոր Հայկազեան բառգրքի» հեղինակները վերագրել են «Համառօտ նկարագրութիւն Թաքորական լերին, և միայնակեցաց տեղւոյն՝ իրբեւ ուխտագնացութեամբ տեղեկացեալ...» աշխատությունը¹⁸:

բ) Եղիշա Կողբացի: Ա. Սուքրյանը, իր «Հելլենաբանութիւն և հելլենաբան թարգմանիչք Հայկական լեզուի (դար 2-ժ)» անստորագիր հոդվածում Եղիշա Կողբացի անվամբ մինչև ժ դարն ապրած ինչ-որ մատենագրի գոյություն է ենթադրում¹⁹, հենվելով ըստ երևույթին մեր հնագույն թղթա գրչագրում (№2679) պահպանված ՆԵ (405) համարը կրող «Թովմայի ուղղափառ վարդապետի եւ քահանայի հարցմունք առ մի ման քահանայ Տաճատ անուն եւ վարդապետ» հոդվածի վրա:

Զբաղարարվելով Ա. Սուքրյանի, ինչպես և Գ. Զարբհանալյանի²⁰ բերած համառոտ վկայությամբ, մենք ղեմեցինք բուն աղբյուրին, որտեղ Եղիշա Կողբացու անունը հիշատակված է հետևյալ պարբերության մեջ. «Ճշմարիտ է եւ մեք խոստովանիմք, բայց զերեքեանն գիտեմք ի վերայ մկրտութեանն զոր ուսուցանեն կենդանարար աղբերք տիգախոց կողին, զոր Կիւրեղ երուսաղէմի վկայ է եւ Յոհան Բիզանտացի եւ Եղիշայ Կողբացի, որով եւ գտեղիսդ ոչ բացայայտեցաք, գիտութեան հարցողին թողցուք, թող ճանաչէ զվկայսդ»²¹:

Բերված վկայությունը որեւէ տարակուսանքի տեղիք չի տալիս. Տաճատ վարդապետը պատասխանելով ժ դարի առաջին քառորդում ապրած Թովմա վարդապետի²² հարցմունքներին, հայտնում է, որ քննարկվող նյութին (Վերիստուխ մկրտութուն) իր կողմից տրվող բացատրության հաստատումը կա Կյուրեղ երուսաղեմացու, Հովհան Բյուզանդացու և Եղիշա Կողբացու երկերում, սակայն, նկատի ունենալով, որ Թովման ծանոթ կլինի հիշյալ հեղինակների երկերին, ավելորդ է համարում հաստատել իր դրույթը նրանցից հատվածներ բերելով («Զտեղիսդ ոչ բացայայտեցաք»):

Կյուրեղ երուսաղեմացու վերաբերյալ տարակուսանքներ չեն կարող հարուցվել. անկասկած է, որ Տաճատն ի նկատի ունի Դ դարի նշանավոր եկեղեցական հայրերից մեկին՝ Կյուրեղ երուսաղեմացուն (մահ. 386), որի «Կոչումն ընծայութեան» երկը «եկեղեցական մատենագրության ամենաարժեքավոր գործերից է և մեկը

մեր հնադույն ոսկեդարյան թարգմանություններից»²⁴:

Թվում է, թե երկբայության տեղիք չպետք է տարնալ Հովհան Բյուզանդացու անունը, սակայն, որքան էլ տարօրինակ է, Ա. Սուքրյանը նրան ևս, Եղիշե Կողբացու հետ միասին, հնարավոր է համարել դասել մինչև ժ դարն ապրած հայ հունաբան հեղինակների շարքը: Անկասկած է, որ Հովհան Բյուզանդացին ոչ այլ ոք է, քան հանրահայտ Հովհան Ոսկեբերանը, որին Կոստանդնուպոլսի (Բյուզանդիոնի) պատրիարք լինելու պատվին կոչել են նաև Բյուզանդացի:

Վերոհիշյալ հատվածի միակ վիճելի անունը մեզ հետաքրքրող «Եղիշա Կողբացի»-ն է: Հնարավոր է արդյոք ենթադրել, որ ժ դարի առաջին քառորդի մի մատենագիր իր թեզի հաստատման համար Կյուրեղին և Հովհան Ոսկեբերանին հավասար դասեր մի աննշան հայ հեղինակի, որի մասին, բացի նշվածից, ուրիշ տեղեկություն չի պահպանվել մեր մատենագրության մեջ: Նամանավանդ, այդ Եղիշեի գործերն այնքան հանրահայտ ու հեղինակավոր պետք է եղած լինեին գիտական այն շրջաններում, որոնց պատկանել են Տաճատ և Թովմա վարդապետները, որպեսզի առաջինը համոզված լիներ, թե իր ընթերցողներն անգամ առանց հղման պիտի ճանաչեն նրա աշխատությունները: Հայ մատենագրության մեջ Եղիշե անունով միակ հեղինակավոր գործիչը «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» հռչակավոր աշխատության հե-

դինական է, ուստի ոչ մի հիմք չունենք այդ անվան տակ մի այլ անձնավորություն փնտրելու:

Անհիմն է նաև Գ. Զարբհանալյանի **Եղիշե և Եզնիկ** անունների շփոթության մասին «թերևս»-ով հայտնած կարծիքը, որովհետև այդ անունների գրչական արտահայտությունները շփոթման եզրեր չեն տալիս և, որ ավելի կարևոր է, Տաճատի կողմից շոշափվող խնդրի՝ Քրիստոսի մկրտության մասին Եզնիկը որևէ աշխատություն կամ կարևոր միտք չունի (գոնե մեզ հայտնի չէ այդպիսին), մինչդեռ Եղիշեն, ինչպես հայտնի է, ունի սքանչելի լեզվով գրված և մեծ տարածում գտած «Ի մկրտութիւնն Քրիստոսի» ճառը²⁵:

Այսպիսով, ոչ միայն հերքվում է Եղիշե անունով ինչ-որ այլ Հայ հեղինակի գոյության մասին Ա. Սուքրյանի հայտնած կարծիքը, այլև ժ դարի մի վստահելի աղբյուրի հիման վրա հնարավոր է լինում պարզել Եղիշեի ծննդավայրը, այն է՝ Կողբ գյուղաքաղաքը: Այս առումով հետաքրքրական է «Նոր Հայկազեան բազմաթի» հեղինակների ունեցած տեղեկությունն այն մասին, որ Եղիշեն է «աշակերտակից Եզնիկայ»²⁶. այս անվանումների հիմքում հնարավոր է փնտրել նրանց հայրենակցության իրողությունը:

զ) **Եղիշե** անվամբ մի այլ վարդապետի գոյություն էլ ենթադրվել է անվավեր մի հիշատակագրության հիման վրա, ըստ որի՝ Արծրունյաց պատմության հեղինակ Թովման աշակերտել է ոմն Եղիշեի²⁷: «Պատ-

մութիւն տանն Արծրունեաց»-ի գյուտով ու հրատարակության (1852, Կ. Պոլիս), ինչպես Զարբհանալյանն է գրում՝ «Տեսնուեցաւ այն ենթադրութեան սխալ ըլլալը, թէ որ ուրիշ հոմանուն վարդապետի մը աշակերտ չուզենանք սեպել զինքն [գիշտմայ]»²⁸:

դ) Ցանկանալով սպառել մեր մատենագրության մեջ Եղիշե անունը կրող անձնավորությունների մասին եղած տեղեկությունները²⁹, ավելորդ չենք համարում նշել, որ մեր Մատենադարանի №7324 գրչագիրը պահպանել է «Հարցմունք Ամիրային տաճկաց և պատասխանիք զանազան Եղիշեի կրօնաւորի» վերնագրով մի անվավեր գրվածք, որին կցված է հետևյալ հիշատակարանը. «Ես՝ Բարդուղիմէոս՝ Հայոց թագավորի որդի, ծննդաբանութեան Արուսաի կոչեցեալ, ի ժամանակի բարկութեան իմոյ, յորժամ ծովացեալ մեղքն ընկղմեցին զիս, որ մատնեցա ի քանդ և ի կապանս, և թարգմանեցի զշահաւետ պատմութիւնս ի տանիկ գրոց...»:

Այս գրական հուշարձանը, որի հերոս կրոնավորի անունը այլ գրչագրերում փոխարինված է Մակարով, անկախ մեր նյութից, ունի կարևոր նշանակություն: Հարցմունքների հերոսը իր ճարտար լեզվով ու գիտություններով, առականներով, պատկերավոր ու համոզիչ համեմատությունների միջոցով կարողանում է «Տիղբոնի ամիրային» մահմեդականությունից դարձի բերել քրիստոնեության գիրկը:

Հիշատակարանում տեղեկություն կա նաև Եղիշեի ու ամիրայի միջև տեղի ունեցած վիճաբանության

տարեթվի մասին՝ «Յերկու Ճ և Ծ ամի թագաւորութեանն (թուականութեանն)» Հայոց (801) եղեն Հարցմունք ամիրային և Հրէին և Նեստորին ընդ կրօնաւորն»:

Համոզված լինելով, որ միջին Հայերենով գրված այդ երկը Հիշատակարանի հետ միասին անվավեր է, այնուամենայնիվ մեզ իրավունք չենք վերապահում առանց որևէ դրական փաստի ժխտել Եղիշե անունով ոմն կրօնավորի գոյության հնարավորությունը Հիշատակարանում նշված ժամանակաշրջանում:

Ինչպես տեսնում ենք, Եղիշե անվամբ մեզ Հայտնի վերոհիշյալ չորս անձնավորություններից երկուսը (Բ և Գ) թյուրիմացության որդյունք լինելով, Համանուն Հեղինակների կամ գործիչների գոյություն ենթադրելու ոչ մի հիմք չեն տալիս, իսկ վերջինը ոչ թե ինչ-որ աշխատության Հեղինակ է, այլ մի անվավեր գրվածքի քարոզիչ-հերոս, ուստի քննարկվող Արարածոց մեկնությունը չի կարող վերագրվել Հիշատակված Եղիշեներից որևէ մեկին:

Սակայն մեզ հուզող Հարցի կապակցությամբ վրձնական նշանակություն չի կարող ունենալ Եղիշե անվամբ այնպիսի մի անձնավորության բացակայությունը, որն Արարածոց դրքի Հեղինակային պատկանելության Հարցում իր գիտությամբ ու մատենադրական Հմտություններով մրցակից Հանդիսանա Եղիշե պատմագրին:

Մեկնությունը կարող է Եղիշեին վերագրված լինել

Հեղինակի անՀայտության, ինչպես և Հայ եկեղեցու դավանանքի Հանդեպ գործած մեղքերի պատճառով³⁰, ուստի առաջադրված Հարցի դրական կամ բացասական պատասխանը ղալու հնարավոր և Հաստատուն միակ միջոցը Արարածոց մեկնության մեր ձեռքի տակ եղած Հատվածների Համեմատությունն է Եղիշեի այն երկերի հետ, որոնց Հեղինակի վերաբերյալ կասկածներ չեն կարող Հարուցվել: Եթե այդ երկերի և Արարածոց մեկնության Հեղինակը միևնույն անձնավորությունն է, ապա Համեմատությունների ընթացքում ի Հայտ կգան բազմաթիվ ընդհանուր մտքեր, ոճական նմանություններ, տվյալ Հեղինակին Հատուկ բառերի կրկնություններ և այլն:

Մեր կողմից կատարված Համեմատությունները Հարցի դրական լուծման Համար ընձեռեցին անվիճելի ու նշանակալից մի շարք այդպիսի տվյալներ, որոնցից ակնառուները ներկայացնում ենք ստորև, Համոզված լինելով, որ հետագա, ավելի ուշադիր քննությունների ընթացքում ի Հայտ կգան մեր կողմից չնկատված նորանոր փաստեր:

«Արարածոց մեկնութենէ	Վասն Վարդանայ եւ Հայոց
Եղիշեի վարդապետի»	պատերազմին ³¹

«... Իբր կորովածիգ աղեղ -	«... Եգիտ սատանայ [զՅագկերտ]
նաւորք ի չար պատկանդարանէ	իւր գործակից, եւ զամենայն մը-
մախանաց նախանձուն ձգէին ի	բերեալ րոյնսն րափեաց ի րաց,

նա զնետս հայհոյութեան, որպէս զսիկիմ հարին աղեղամբ եւ խա-
րետութեամբ: Ահա մեղաւորք լա-
րեցին զաղեղունս իւրեանց,
պատրաստ արարին զնետս ձգել
ընդ խաւար այնոցիկ՝ ոյ՛մ ուղիղ
են սրտիւք» (Ա, էջ 91բ-92ա):

«է՛ մահ, որ մարմնոյ է, եւ է, որ
հոգւոյ: Որ մարմնով մեռանի՝
զպարտս վնարէ, եւ որ մարմնով
զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահու-
եւ հոգւով, նա է որ մահու մեռա-
նի» (Ա, էջ 65բ):

«... Զի մարք էր մասամբ նման
զոլ արարածոցս արարչին. զի որ-
պէս Աստուած յիմեան է և չի
նման տեղի, նոյնպէս եւ աշխար-
հըս յիմեան է. եւ որպէս Աստ-
ուած աներբ եւ անժամանակ է,
եւ աշխարհի արարչութեանն երբ
ոչ գրեցաւ. եւ որպէս ոչ ոք է զի-
տաւղ զգիարդն եւ զորպէսն Աս-
տուծոյ, նոյնպէս եւ ոչ ունի ա-
սել ոք բովանդակ զամենայն
արարածոցն զորպիսութիւն»

եւ ելից զնա իրրեւ զպատկուն -
դարան դեղով: ...Քանզի յոյժ
սիրելի էր նմա զխոռվութիւն,
արիւնհեղութիւն, վասն այնորիկ
յանձն իւր տարաբերէր, նքէ յո՛ւ
բափեցից զդառնութիւն շոյնից,
կամ ո՛ւր բացատրեցից զբազ-
մութիւն նետիցն» (էջ 7):

Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ
իմացեալ՝ անմահութիւն է: Որ
անմահութիւն է, իսկ որ գիտէ զմահ,
ոչ երկնչի ի մահու-
նէ, նա է որ մահու մեռա-
նի» (էջ 13):

«Ոչ սկիզբն առեալ յումեմէ լի-
նել Աստուած, այլ ինքն ինքեմբ
մշտնջենաւոր, ոչ ի տեղւոջ աւ-
րեմ, այլ ինքն ինքեան տեղի, եւ
ոչ ի ժամանակի իմիմ, այլ ժա-
մանակի ի նմանէ գոյացան, ոչ
միայն ի ան գերկիմս երեցագոյն,
այլ եւ ի ան գերկիմս մտաց
մարդկան և հրեշտակաց» (էջ
23):

(Ա, էջ 6բ):

«Մագաղաթն արքունի ոչ է
որիշ յայլոյ մագաղաթէ, այլ ա-
նօր եղեւ անուան բագաւորի. որ
ոք անարգէ զնա ոչ զմագաղաթին
մագաղաթ իմն զբուր, ապա ե-
տուգանս պահանջեն ի նմանէ,
քէ բան բագաւորին նկարի ի նը-
այլ մահուամբ՝ զանարգանս բա-
գաւորին» (Ա, էջ 30ա):

«Բայց այն որ ասէն երէ վասն
բոյժ միոյ մահ արար Աստուած,
վատարագոյն է պատառ մի
մահուամբ՝ զանարգանս բա-
գաւորին» (Ա, էջ 30ա):

«Նրկուս գունդս կարակնարո -
լորս օղեղէնս (Աստուած) խտա -
յոյց մածոյց, որովայնացոյց,
բերանացոյց եւ գեամատարած
լոյսն արկ ի նոսա: Զսեռն եւ
զյըստակն եւ զհրաշատն էարկ
յաման արեգական» (Ա, էջ 14ա):

«Այլ վասն արեգական երէ
կամիցիս ուսանել, զնշմարիտն
ասացից քեզ: Մասն է նա աշ-
խարհիս արարածոց, ի բագում
մասանց մի մասն որոշեալ է...
Վերինն ոչ ինչ մասն ունին ի
յաման արեգական» (Ա, էջ 14ա):

Ուշագրաւ նմանութեան եզրեր գտնուեմ ենք նաև
Արարածոց մեկնութեան և Եղիշեի այլ աշխատութիւն-
ների միջև: Այսպես, օրինակ, «Մեկնութիւն Յեսուայ եւ
ղատաւորաց»-ում Եղիշեն ունի «Դեւք ձրձիւք մուտ եւ
եւ առնէին ի փոր նորա, բերէին զեկամուտ դառնու-

թիւնն» և «... որ վատթարագոյն են ի տեսանել քան երամակս ձրձիտ աղուեսուց» Հատվածները³³, որոնք ուղղակի կապակցութեան մեջ են մտնում Արարածոց մեկնութեան «զի թափեսցէ զգիշատեալ դիակն տանն Ադամայ ի ձրձիտ փաղանգէ աղուեսուց» (Ա, էջ 85ա) արտահայտութեան հետ: Նշված փաստն արժանի է լուրջ ուշադրութեան մանավանդ այն պատճառով, որ ըստ Հայկազյան բառարանի՝ մեր մատենագրութեան մեջ «ձրձիտ» բառի գործածութեան այլ դեպքեր չեն արձանագրվել:

Նույն բառարանի տվյալների հիման վրա, որպես արդեն ապացուցված խնդրի լրացուցիչ և օժանդակ փաստեր, առաջարկում ենք Արարածոց մեկնութեանը քաղված հետևյալ բառերի շարքը, որոնք օգտագործված են միայն Եղիշեի կողմից.

Ազատորդի

Անծախական

Կաթնածուծ

Կենդանածնեցաւ

Հրձգութիւնք

Հրային (կամար)

Պատ առին

Պատկանդարան

Վայրավատեալ

Վայրաբեր

Տեռեցին բեռնակրութեամբ և այլն:

Չենք կասկածում, որ լայն հնարավորութիւններ

կան այդպիսի բառերի թիվը կրկնապատկելու և պատշաճորեն արժեքավորելու համար:

Առաջադրված հարցի վերջնական լուծման տեսակետից կարծում ենք, բերված փաստերը հիմնավոր են և թավարար, ուստի ավարտելով Եղիշեի Արարածոց մեկնութեան պահպանված հատվածների հարադատութեան հարցի քննարկումը, քննութեան արդյունքները ամփոփում ենք հետևյալ եզրահանգմամբ. ա) Եղիշեի Արարածոց մեկնութեան մեջ Հասած Հատվածներն ունեն բնագրի ուժ, բ) այդ հատվածների հեղինակը «Վամն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատութեան հեղինակ Եղիշե Կողբացին է³⁴:

ԵՂԻՇԵՒ ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿԼՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Որևէ երկի աղբյուրները վեր հանել՝ նշանակում է ցույց տալ զբաղան և գիտական այն սնունդը, որ ստացել է տվյալ երկի հեղինակը, փաստական ամուր հիմք ստեղծել նրա հասարակական-քաղաքական դեմքը լուսաբանելու, ինչպես և գիտական մակարդակը բնորոշելու համար: Իսկ աշխատանքի արդյունքները հաճախ, երբ քննարկվող նյութը մի հնադույն բնագիր է, ընձեռում են օժանդակ փաստեր ոչ միայն վերոհիշյալ նրա պատկաների իրականացման, այլև առաջնակարգ նշանակութուն ունեցող այլևայլ բանասիրական հարցերի լուծման կամ առաջադրման տեսակետից: Այդպիսի բնագրերի թվին է պատկանում նաև մեր կողմից քննարկվող Արարածոց մեկնությունը:

1. Մանդոց գրքի եղիշեի օգտագործած բնագիրը

Եղիշեի աղբյուրների մասին խոսելիս, առաջին հարցը, որ ծառանում է մեր առջև, Մանդոց գրքի նրա օգտագործած և մեկնած բնագրի հարցն է: Ի՞նչ բնագիր է նա ունեցել իր ձեռքի տակ. արդյոք մեր գրչագրերի մեծ մասում պահպանված և բազմաթիվ հրա-

տարակություններով հայտնի Աստվածաշու^ոնչը, Թե՞ մի այլ բնագիր, և կամ՝ Աստվածաշնչի ո՞ր գրքերն է նա հանվան հիշատակում և այլևայլ առիթներով ի՞նչ գրքերից է մեջբերումներ կատարում:

Այս վերջին հարցի պատասխանը դուրին է և շոշափված արդեն մեր բանասիրության մեջ: Ըստ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի՝ Եղիշեն իր պատմության էջերում հիշատակում կամ մեջբերումներ է անում Հին Կլտակարանի Մանդոց, Ելից, Թուոց, Երկրորդ Օրինաց, Յեսու Նաւհայ, Հոռութ, Թաղաւորաց Գ, Մնացորդաց Բ, Մակաբայեցոց Ա, Բ և Անգէոս գրքերից (ափելացնենք նաև Դատաւորաց գիրքը, որի մեկնությունն է գրել)¹: Արարածոց մեկնության մեր ձեռքի տակ եղած հատվածներում հիշատակություններ կան և մեջբերումներ են արված նաև հետևյալ գրքերից՝ Երգ Երգոց (Ա, 1), Եսայի (ՆԹ, 18. ՄԷ, 16), Սաղմոս (ՃԻ, 4, 2Թ, 4), Զաքարիա (ԺԲ, 7), Ժողովող (ԺԲ, 5), Եղեկիել (ԻԱ, 18-22) և այլն:

Ինչ վերաբերում է առաջին հարցին, ապա նրա լուծումը կապված է մեծ դժվարությունների հետ: Եղիշեի մեկնության հատվածները մեծ մասամբ հասած լինելով Վարդան Արևելցու մեկնության միջնորդությամբ, Մանդոց գրքի մեկնվելիք բնաբաններն անշուշտ պիտի խմբադրվեին ըստ ԺԳ դարում հայ եկեղեցու կողմից սրբագործված և համատարած օգտագործվող բնագրի: Ուստի Վարդանի մեկնությունից քաղված Արարածոց, Ինչպես և այլ գրքերի վկայակոչումները լավագույն

դեպքում կարող են բանասիրության համար նյութ ծառայել ԺԳ դարի բնագիրը վերականգնելու տեսակետից, որ անկախ նյութի հետաքրքրությունից չի կարող մտնել մեր ուսումնասիրության մեջ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Վարդանն իր հերթին Եղիշեի մեկնությանը ծանոթացել է Տիմոթեոս վարդապետի կազմած քաղվածուի միջնորդությամբ, կարծում ենք, այդ վկայակոչումները չեն կարող վրստահություն ներշնչել Եղիշեի օգտագործած սուրբգրական բնագրի նախնական տեսքը պատկերացնելու տեսակետից: Ուստի բանասիրական զգուշավորությունը մեզ թելադրում է առայժմ հրաժարվել առաջադրված հարցի քննարկումից, մանավանդ նկատի ունենալով Աստվածաշնչի հայերեն թարգմանության քննական հրատարակության բացակայության փաստը:

2. Եվսեբիոս Եմեսացի և Բարսեղ Կեսարացի (°)

Անգամ չունենալով դրական փաստեր, կարելի է հավանական համարել, որ Եղիշեն իր աշխատությունը գրելիս պետք է հատկապես ծանոթացած լիներ թե՛ հունարեն լեզվով և թե՛ հայկական թարգմանություններով գոյություն ունեցող այնպիսի երկերի, որոնք մեկնում էին նույն՝ Ծննդոց գիրքը: Այդպիսի երկերի թվին է պատկանում Եվսեբիոս Եմեսացու (մահ. 359 թ.) «Արարածոց մեկնութիւնը», որի հայերեն թարգմանությունը մեզ է հասել քրիստոնեական եկեղեցու մի

ավելի նշանավոր հեղինակության՝ Կյուրեղ Աղեքսանդրացու անունով: Այդ անունով էլ մեկնության 12 բնագրաձև հատվածներ հրատարակված են Թ. Թոռնյանի «Հատընտիր ընթերցուածք» աշխատության մեջ², որպես ոսկեդարյան հայերենի նմուշներ³: Հետագայում բանասեր Վ. Հովհաննիսյանը հմտալից ուսումնասիրությամբ պարզեց, որ խնդրո առարկա մեկնությունն իրականում պատկանում է Եվսեբիոս Եմեսացուն և, որ նրա հայերեն թարգմանությունն ամենայն հավանականությամբ իրականացրել է Եզնիկ Կողբացին⁴: Այսպիսով, մենք գործ ունենք Ծննդոց գրքի մի հնագույն և մեծարժեք մեկնության հետ, որին չէր կարող ծանոթ չլինել Եղիշեն:

Սակայն ձեռքի տակ չունենալով մեզ համար կարևոր նշանակություն ունեցող այդ երկի ամբողջական բնագիրը⁵, ստիպված ենք բավարարվել հրատարակված հատվածների և Եղիշեի մեկնության մեզ հասած մասերի համեմատությամբ: Համեմատությունը թեև խնդրի վերջնական լուծման համար բավարարարող չի տալիս, այնուամենայնիվ ստացված արդյունքի հիման վրա հնարավոր է հավանական համարել Եղիշեի կրած ազդեցությունը Եմեսացու մեկնությունից:

Եմեսացին իր մեկնության «Վասն արարչութեան անասնոց» հատվածում գրում է. «Նախ անասունքն ամենայն յառաջ քան զմարդն, նախ նոքա, որոց թագաւորելոցն էր, եւ ապա նա որ տիրելոցն էր. նախ տուն հարսանեացն, եւ ապա փեսայն, նախ արքունիք, եւ ա-

պա արքայն, նախ անդաստան, եւ ապա որ զստաց-
ուածն առնելոց էր»⁶: Շատ համանական է, որ Եղիշեն
Ծն. Ա, 26 համարի առթիւ գրած իր մեկնութեան մեջ
կախում ունի այս՝ հատվածից, սակայն Եղիշեի այդ
հատվածը լինելով կասկածելի (միայն Ը գրչադրի տըվ-
յալներով է այն Եղիշեին պատկանում), կասկածելի է
մնում և մեր հնարավոր ենթադրութեանը:

Մեզ հետաքրքրող հատվածի հեղինակը՝ լինի այն
Եղիշեն, Պիսիդեսը և կամ մի այլ մատենագիր, հայտ-
նում է, թե թագավորի պատվին տրվելիք խնջուքից
առաջ Հյուրընկալը «նախ հոգայ զտունն, ապա զբաղ-
մականն, եւ զկերակրոց եւ զըմբելեաց զյօրինուածս,
զերգեցիկս, զաշտանակս ճրագացն. եւ իբրեւ ահա կազ-
մէ զամենայն, ապա ասէ զթագաւորն ի ներքս» (Ա, էջ
13բ):

Կարծում ենք, որ Եվսեբիոս Եմեսացու աշխատու-
թեան ամբողջական բնագիրը կընձեռի նորանոր փաս-
տեր հարցի դրական լուծման համար⁷:

Բոլորովին տարբեր և տարօրինակ պատկեր ենք
ստանում, երբ Եղիշեի մեկնութեան մեջ փնտրում ենք
Բերսեղ Կեսարացու «Ճառք վասն վեցօրեայ արարչու-
թեանն» երկի ազդեցութեան հետքեր: Թվում է, թե
այդ երկի ոսկեդարյան թարգմանութեանը, որն իրոք
խոր հետքեր է թողել մեր մատենագրութեան՝ հատկա-
պես զիտական դրականութեան վրա, էէր կարող ան-
տեսվել Եղիշեի կողմից և պիտի հանդիսանար նրա
հիմնական աղբյուրներից մեկը: Սակայն մանրակրկիտ

քննութեանը մեզ բերեց հակառակ համոզման, այն է՝
Եղիշեն կամ ծանոթ չի եղել Բարսեղ Կեսարացու աշ-
խատութեանը և կամ ինչ-ինչ նկատառումներով չի
օգտագործել այն: Թեև խնդրո առարկա մեկնութեան-
ներում կան որոշ ընդհանուր մտքեր կամ նման նախա-
դասութեաններ, սակայն նրանք, բացի բնորոշ չլինե-
լուց, կարող էին գրվել նաև իրարից անկախ կամ այլ
աղբյուրների հիման վրա:

3. Հովհան Ոսկեբերան

Հովհան Ոսկեբերանի և Եղիշեի Արարածոց մեկնու-
թեանների կապի մասին հնարավոր է ավելի վճռական
եզրակացութեանների հանգել:

Ոսկեբերանի հսկայածավալ մատենագրական Ժա-
ռանգութեան մեջ պահպանվել են Ծննդոց գրքի թե-
մաներով գրված բազմաթիվ ճառագրական ստեղծա-
գործութեաններ, որոնք ամփոփված են հետևյալ շար-
քերում.

ա) «Ճառք 67 ի Գիրս Ծննդոց»⁸.

բ) «Ճառք 9 ի Գիրս Ծննդոց»⁹: Այս շարքը, բացի
իններորդ ճառից, հայտնի է նաև հայերեն թարգմա-
նութեամբ¹⁰:

գ) «Յաղագս արարչութեան աշխարհի ճառք 6»¹¹.
Որոշ հունարեն ձեռագրերում այս երկը վերագրված է
Սերբրիանոս Գաբազացուն:

դ) «Ճառք 3 ի Գիրս Ծննդոց»¹²: Սույն շարքի 3-րդ

ճառի մի մասը հայտնի է նաև հայերեն թարգմանությամբ¹³:

Մատենագիտական տվյալների ամբողջականությունը ապահովելու համար հիշենք նաև մեր գրչագրերում պահպանված հետևյալ հատակոտորները.

— «Յոհաննու Ոսկեբերանի մեկնութիւն ի վեց[աւրեայ] արարչութենէն ասացեալ սկիզբն սկզբանց. [Սկ.] Եթէ ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր. ընդ երկինս եւ յառաջ եւ ապա զերկիր, նախ զյարկն եւ ապա զյատակն, զի ոչ ընդ հարկաւորական կարգօք է Աստուած, թէ մարդկօրէն հիմն դնիցէ եւ կարգ ըստ կարգի շինիցէ եւ ապա զյարկն ի վերայ դնիցէ...»¹⁴.

— «Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ ի վեցօրեայ գրոց մեկնութենէ. [Սկ.] Եւ էին երկոքեան մերկ եւ ոչ ամաչէին: Եկայք, ո՛վ սիրելիք, եւ տեսէք աստ մեծասքանչ եւ զարմանալի կեանս, որպէս յերկինս այսպէս յերկրի բնակեալ էին եւ ի մարմնի՝ զանմարմնոց կեանս էին...»¹⁵.

— «Յոհաննու Ոսկեբերանի յԱրարածոց. Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդեան օր երրորդ. ստէպ ստէպ ուսուցանէ եւ հաստատէ զմիտս մեր, թէ յառաջ է տիրեան զգիշեր, եւ մի՛ զարմանար, թէ կրկնելով ասէ՝ եղեւ երեկոյ եւ վաղորդեան, զի եւ յետ այսչափ յիշելոյ մոլորեցան հրեայք եւ այլք բազումք հակառակին եւ զերեկոյ եւ զգիշեր ըսկիզբն աւուրն ասեն, եւ խաբեալ նստին ի խաւարի, եւ ճշմարտութեան ոչ հասանեն»¹⁶:

Որքան էլ տարօրինակ է, թվարկված նյութերի

չարքում եղիշեր Արարածոց մեկնությունը բնագրական աղբյուրներ է դրսևորում միայն «Յաղագս արարչութեան աշխարհի» երկի հետ, որն, ինչպես տեսանք, հունական ձեռագրերում մեղթ վերագրվում է Ոսկեբերանին, մերթ՝ Սեբերիանոս Գաբաշացուն: Խնդրի տարօրինակությունը կայանում է նրանում, որ մենք որևէ փաստ չունենք այդ երկի հայերեն թարգմանության գոյության մասին: Այդ իսկ պատճառով Եղիշերի Արարածոց մեկնությունը ստորև համեմատում ենք նրա հունարեն բնագրի հետ.

Ոսկեբերան, «Յաղագս	Հատուածք ի Մեկնութենէ
արարչութեան աշխարհի» ¹⁷	Արարածոց Եղիշերի վարդապետի

Ζητούμεν δὲ τοῦ θύει ο ἥ-
λιος, καὶ τοῦ τρέχει τὴν νύκτα...
ἥλιος ἀπατέλλων καὶ μέλλων θύ-
κειν, οὐχ ὑπὸ γῆν θύει, ἀλλ' ἐξ-
ελθὼν τὰ πέρατα τοῦ σύρου, τρέχει
εἰς τὰ βορρῖνα μέρη, ὡπερ
ὑπὸ τινα τοίχου κρυπτόμενος, μὴ
συνχωρούντων τῶν ὕδατων φανή-
ται αὐτοῦ τὸν δρόμον, καὶ τρέχει
κατὰ βορρῖνα μέρη, καὶ καταλαμ-
βάνει τὴν ἀνατολήν (էջ 452-
453).

«... Հոռ սմալց կից էր յար-
փին, եւ ըստ այլոց յայն կոյս
լեռանցն հիւսիսայ, ուր եւ գա-
րեգակն, ասեմ, ընթանալ գգի-
շերայն» (Ա, էջ 9ա):

Εἶπεν ὁ ὄφις τῇ γυναικί· Τί,
 ὅτι εἶπεν ὁ υἱὸς τοῦ Θεοῦ μὴ φάγῃς ἀ-
 πὸ πικρῶς ξύλου; Εἶδες τὸν ψεύ-
 την; Ὁ Θεὸς εἶπεν· Ἀπὸ πικρῶς
 ξύλου φάγεσθε, ὅσοι δ' ἐνὸς μὴ φά-
 γητε· ὁ ψεύστης λέγει· Διότι εἶπεν ὁ
 Θεός, ὅσοι πικρῶς ξύλου μὴ φάγῃς
 ὑμεῖς; (Էջ 486-487).

«Իսկ առժամ ցկիցնն Ձի՞ր է զի
 առաջ Աստուած յաւեանայն ծա-
 րոց որ ի Աքրիս եմ ի զքաղաքի
 այդոր մի ուսոյցէ՞... մեղմեխա-
 ճաւ իսկն զմէ զքանն իցոր թէ
 ուսանել կամ ի յաւեանայն ծա-
 րոց զչաւտելն միայն յիշելով,
 զի առաւել ցուցցէ զԱստուած
 չաղալմնալ զնոսս եւ յաւեանայ-
 նէ արգելեալ. եւ զիմքն բարե-
 կամ առաւել: Եւ գտաւմ խառ-
 նէր ընդ ճշմարիտն, զչաւտելն ի
 միայն ընդ աւեանայնիմ» (Ա, էջ
 28ա):

Բերված հատվածների համեմատությունը միան-
 դամայն աներկբա է դարձնում Եղիշեի ծանոթությունը
 Ոսկեբերանի «Յաղագս արարչութեան աշխարհի» եր-
 կին: Սակայն այն հանգամանքը, որ Եղիշեն այն վեր-
 առադրում է ոչ բառացի հարազատություն՝ և իր
 խոսքն ընդմիջում «ըստ ոմանց», «ասեն» արտահայ-
 տություններով, հիմք է տալիս ենթադրելու, որ նշված
 գործից նա օգտվել է ոչ թե անմիջականորեն, այլ ուրիշ
 աղբյուրի միջնորդությամբ: Այս ենթադրությունն, ի-
 հարկե, ամենևին չի բացառում, որ Ոսկեբերանի կամ
 Սեբերիանոս Գաբաղացու «Յաղագս արարչութեան աշ-
 խարհի» երկը երբեկից է կարող էր թարգմանված լինել
 հայերենի:

Եղիշեի աղբյուրներէ թվում պետք է հիշատակել
 նաև Եվանգելիոս Կեսարացու «Ժամանակականք» աշխա-
 տությունը¹⁸, որից անկասկած կախում ունեն Արարա-
 ծոց մեկնություն հետևյալ հատվածները.

Եւսերիոս, Ժամանակականք, Հատուածք ի մեկնութենէ
 մասն Ա. Արարածոց եղիշէի վար-
 դապետին

«Եւ ի մաւե՛ն՝ որ չոգաւ դադար - Արարատու լեռոն ոմանք ըզ-
 նաց ի Հայս եւ ցայժմ սակաւ ինչ Կորդուացն ասէն, այլ ճշմար -
 մասն ի Կորդուացոց լերինն ի Հա- տութիւնն յայտնի առնէ զնա ի
 յոց աշխարհին մնալ ճշխար ասեն» Մասիս գոլ...» (Ա, էջ 43բ):
 (Էջ 36-37):

«Պատմեն, թէ Քուշ ծնաւ զՆեր - «Ընդէ՞ր Քամ ծնանի՞ զՆեր -
 րովք, Քուշն է Եթովպացի, յորմէ րովդ, որ սկսաւ լինել սկայ որ-
 ծնեալ համարին զՆերրովք, զորմէ սորդ ընդդէմ Տեառն, եւ վասն
 եւ ասէ իսկ զիբ, թէ սկսաւ լինել այսորիկ ասացսն իբրեւ ըզ-
 սկայ ի վերայ երկրի, եւ էր սկայ Ներրովդ սկայ որսորդ ընդդէմ
 որսորդ առաջի Աստուծոյ, վասն Աստուծոյ... Քանզի Ներրովդ
 այնորիկ ասեն՝ թէ իբրեւ զՆերրովք Եթովպացի բարգմանի...»

Ակայ առաջի Աստուծոյ...» (էջ 109): (ձեռ. N° 2769, էջ 215ա):

«... Քանզի յանուանելոյ Աս - «Համարձակեցան ոմանք յար-
 տուծոյ դրախտին քնակութեան չէ տալնոցն ասկ՝ լինել մարդոյն

ուժեք հնար զժամանակսն նշանա-
կել...» (էջ 111):

ի դրախտին զհազար ամ... իսկ
մեք ընդդէմ ոչ կարեմք ասել
ինչ եւ ոչ գմերն հաստատել...»
(Ա., էջ 30ա):

Նահապետների ժամանակագրությունը և կենաց
տարիները Արարածոց մեկնության մեջ նույնպես չա-
քադրված են Եվսեբիոս Կեսարացու տվյալներին Հա-
մապատասխան, ուստի անկասկած է, որ Եղիշեն օգ-
տագործել է Եվսեբիոսի քննարկվող երկասիրությունը:

5. Փիլոն Եբրայեցու երկերը

Եղիշեի Արարածոց մեկնության վերհանված աղ-
բյուրները ըստ տիրապետող և Հիմնավորված կարծիք-
ների լինելով Հնագույն թարգմանություններ, չէին
կարող առաջ քաշել բանասիրական նոր հարցեր. Հաս-
կանալի է, որ որևէ Հեղինակ ձեռնարկելով մի գործի,
պետք է օգտվեր նույն կամ Հարակից խնդիրների վե-
րաբերյալ մայրենի լեզվով գոյություն ունեցող աշ-
խատություններից:

Շատ ավելի մեծ հետաքրքրություն են ներկայաց-
նում Եղիշեի մեկնության այն աղբյուրները, որոնց
թարգմանությունները լինելով Հունարան գալրոցի ար-
տադրանք, առնչվում են այդ գալրոցի առաջին շրջանի
թարգմանիչների գործունեության հետ, ուստի և նոր
տվյալներ են ընձեռում վերանայելու Համար այդ եր-
կերի թարգմանության ժամանակի մասին մեր բանա-

սիրության մեջ հայտնված կարծիքները:

Եղիշեի կողմից ամենահաճախ օգտագործված Հե-
ղինակը Փիլոն Եբրայեցին է: Եվ դա հասկանալի է,
քանի որ Փիլոնի երկերը ընդարձակ տեղեկություններ
պարունակելով Հունական գիտական մտքի կողմից
այլևայլ գիտությունների գծով մշակած արդյունք-
ների մասին, չէին կարող չգրավել Եղիշեի նման մի
մտածողի, որը, ինչպես վկայում է նրա վարքագրու-
թյուններից մեկը՝ «Տեղեակ իսկ (էր) արտաքնոցն Հան-
ճարոյ, ատենական փիլիսոփայական Հանդիսից»¹⁹:

Եղիշեի վրա Փիլոնի երկերի գործած ազդեցության
խնդիրը մեր բանասիրության մեջ շոշափվել է դեռևս
1822 թվականին: Փիլոնի աշխատությունների հրա-
տարակության առաջաբանում Մ. Ավգերյանը մատ-
նանշել է Եղիշեի «Պատմության» և Փիլոնի երկերի
հայերեն թարգմանությունների բնագրական կապը
Հաստատող մի քանի բնորոշ օրինակներ²⁰:

Բարգեն Կյուլեսերյանը Եղիշեին նվիրված իր մե-
նագրական ուսումնասիրության մեջ մանրամասնորեն
կանգ է առել ինչպես Մ. Ավգերյանի, այնպես էլ իր
կողմից նկատված այն բոլոր հատվածների վրա, որոնք
Փիլոնի երկերից անմիջականորեն մուտք են գործել Ե-
ղիշեի Պատմության և «Խրատ միանձանց» ու «Ի Թա-
րոր լերին» ճառերի էջերը²¹:

Փիլոնի երկերի համեմատությունը Եղիշեի Արա-
րածոց մեկնության հետ ավելի է ամրապնդում Փի-
լոն-Եղիշե աղբյուրի վերաբերյալ հայկական բանասի-

լուծթյան մեջ քաղաքացիութիւն ստացած տեսակներ։
Որեւէ առարկութեան ամեն մի հնարավորութիւն կան-
խելու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել
առավել թիվով փաստեր, քան անհրաժեշտ է քննարկ-
վող հարցի լուսաբանման համար։

Ինչպես և սպասելի էր, Եղիշեն իր մեկնութեան մեջ
առավել չափով օգտագործել է «Փիլոնի այնոցիկ որ ի
Լինելութեանն. խնդրոց և լուծմանց» աշխատութիւն-
նը, որը միևնույն՝ Արարածոց գրքին նվիրված մի հե-
տաքրքիր այլաբանական մեկնութիւն է։ Զեռքի տակ
ուենենք այդ աշխատութեան հետ անվիճելիորեն ա-
ռնչվող 12 հատվածներ, որոնցից կբերենք միայն յո-
թը՝ խոսսափելով ձգձգումներից։

Փիլոնի այնոցիկ որ ի Լի-
նելութեանն. խնդրոց և
լուծմանց²²

Հատուածք յԱրարածոց
մեկնութեանէ եղիշէի
վարդապետի

«... Զի եղի [կիցն] յառնէ, ոչ ի
հողոյն՝ որպէս նա, եւ ոչ ի սեր-
մանէ՝ որպէս որք յետ նորայն.
այլ բնութեամբ իմն միշտասի-
մանաւ. եւ որպէս յորբոյ շա-
ռաւել ի րաց հանել յայլ որբոյ
ծնունդ» (էջ 21)։

«Ոչ երեսեցաւ հարցումն գոլ ա-

«Եւ քէպէտ ոսկր մի էառ, այլ
զաւրութեամբ՝ գրուորին բնու-
թիւն, իրբեւ ածս ոստոց ծառոց.
եւ կամ մատուցս որբոյ, որ զա-
մեմայն ունի րովանդակ» (Ա., էջ
27ա)։

«Ողբայ ձայնիւ եւ ասէ՝ ու՞ր ես

սացեալդ, այլ սպառնումն իմն Աղամ. իրք ասել՝ յորմէ փառաց
եւ սաստ. ու՞ր ես այժմ, յորպիսի՞ յորպիսի անարգութիւն հասեր,
բարեաց, ո՞վ մարդ, փոխեցար. երկնայինդ եւ անմահդ երկրա-
զանմահութիւն եւ զբարեբաստիկ յին եւ մահկանացու եղեր» (Ա.,
կեանսն լեալ թողեալ՝ առ մահ էջ 30ա)։
փոխեցար, եւ առ բշտառութիւն՝
յորս քաղեալ ես» (էջ 30)։

«Այլ մի գուցէ քէ ոչ է ընդհա-
նուր սահման մարդկային կե-
նացս հարիւր և քսան ամեն, այլ
միայն յայն ժամն եղելոց մարդ-
կան՝ որք հանդերձեալ էին յապա-
կանութիւն դառնալ ջրհեղեղան,
յետ այսչափ բուռց ամաց՝ զորս
ձգտեաց հաշտ բարեբարն՝ տու-
եալ մեղաց ապաշխարութիւն»
(էջ 65)։

«Գիտել պարտ է առ նաող, զի
ոչ քան զամենայն բարձր լերինս
առաւելան հնգեհտասան կան-
գունքն, այլ քան զյոյժ երկայ-
նագոյնսն եւ քարձրագոյնս, այլ
քան զնստագոյնսն աւելի եւս»
(էջ 103-104)։

«Իսկ հարիւր և քսան ամեն ոչ
հասարակ ամենայն մարդոյ (Լ -
մարդկան) է ժամանակ, այլ մի-
ջոցն մինչեւ ցջրհեղեղն։ Զի Նոյ
եւ որդիք իւր եւ այլք աւելի (Լ -
յոլով) ժամանակս կեցին։ Այլ
զհարիւր և քսան ամեն տայ ա-
պաշտանաց ժամանակ մար-
դասէրն եւ ի չապաշտելն պա-
կասեցոյց զքսան ամեն՝ ի կարճել
զչարիսն» (Ա., էջ 39բ)։

«Հնգեհտասան կանգուն քարձ-
րացաւ շուրն քան զամենայն լե-
րինս քարձուցս. Յամօթ որոց (Լ -
որք) ասեմ կողմնաւոր եկեալ
զջրհեղեղն, զի քէ քան զյոյժ
քարձրագոյնսն հնգեհտասան կան-
գուն քարձրացաւ շուրն, քան ըզ-

նստագոյնսն ո՞րքան» (Ա, էջ 43ա):

«...Իսկ նետ արձակեալ ի ձեռն
աղեղան՝ մասինն երբեալ հասա-
նէ ի հեռաստան, անսխտու -
քեամբ մերձաւորին, եւ որ մօտն
կայ մնայ... Եւ քանզի ոչ նետ
ոք յամենայն տեղի հասանէ, այլ
միայն ի մեկուսի վայրն» (էջ
149):

«Իսկ ասացելոցս իննգ կենդա-
նեացս քնութիւնն՝ ընտանացեալք
են ընդ ամենայնին մասունս:
Երկրի՝ առջառ, քանզի արօրա-
ծի գէ եւ երկրագործ: Եւ ջրոյ՝ այծ
... Եւ օդոյ՝ խոյ... Իսկ քոչնոցն՝
(որ են) աղաւնիսն եւ տատրակն, ըն-
տանենայ առհասարակ ամենայն
երկին քաշխեալ որոշեալ ի մոլո-
րակացն եւ յանմոլարիցն շուրջ
յաժնումն...:

Բայց յաղագս երեմեանն գոլ իւ-
րաբանչիւր ոք, եւ երրորդին՝ ասա-
ցեալ է յառաջագոյն, քայց ասելի
է այժմ ըստ այլ տեսակս խորհրդոյ.
քանզի երեւցաւ իւրաբանչիւր ոք

«... Աղեղն դնէ զնշանն, զի ոչ
հասարակ ջնջէ զերկիր, այլ
մասամբ հարկանէ, իրր նետ յա-
ղեղանէ արձակեալ զմի ոք հար-
կանէ ի մէջ քաղմաց, եւ միոյ
մասին եւ անդամոյ դիպի խոցն»
(Ա, էջ 45ա):

«... Առ յիմոցն եւ զիմն ինձ
նութեայ, երինջ՝ ընդ հողոյ,
այծ՝ ընդ ջրոյ, խոյ՝ ընդ օդոյ,
աղաւնի՝ ընդ հրոյ, տատրակ,
եռեմեան, զի եզակի քնութեանն
եւ եռանձնեայ (Ը-երեք անձ -
նեայ) աստուածութեանն ընծա-
յէ (Ը-ընծայեաց), որ իւրաբան-
չիւր ոք ի զոցանէ յերիս քաժա-
նի ըստ Փիղոնի ասիցն» (Ա, էջ
51ա):

այնոցիկ՝ որ յետ լուսնիդ, երկիր եւ
ջուր եւ օդ, երրորդ գոլ»: (էջ 170-
173):

«Դարձեալ յայսքան (հառասուն) «... Քառասուն՝ շնչարերութիւն
յաւուրս յարգանդին տպաւորի արուին, երեսուն՝ ազգ, քսան՝ քիւ
սաղմն... Սակայն եւ երեսունն՝ զինուորութեան, տասն՝ քիւ կա-
ամային է անջրպետ մեկնու- տարելութեան» (Ա, էջ 55բ):
րեան լուսնոյն շրջանակք. եւ
քսանն՝ հասակի, եւ անցանելոյ
ըստ հասակ, եւ նախնեացն, եւ
զինուորութեան քիւ, եւ տաս -
ներեակն՝ ամենակատարն» (էջ
266-267):

*Անկասկած Փիլոնի նույն աշխատութիւնից են
քաղված նաեւ Եղիշեի Արարածոց մեկնութեան Հետե-
յալ Հատվածները.*

Ծն. Բ, 19 («Եւ ած զնոսա առ Աղամ...»),

Ծն. Բ, 21 («Կին շինուած կոչէ Աստուծոյ...»),

*Ծն. Է, 11 («... Քառասուն տիւ՝ զքառասունօր-
եայ...»),*

Ծն. Թ, 3 («Այլ իբրեւ զբանջար...») և այլն²³:

*Նշանակալից է, որ Եղիշեն լայնորեն օգտագործել է
ոչ միայն Փիլոնի նշված՝ «Լինելութեան (Ծննդոց)
դրժի մեկնութիւնը», այլ նաեւ Համարյա առանց բա-
ցառութեան, նրա մյուս բոլոր երկերը, որոնց թարգմա-
նութիւնները գոյութիւն են ունեցել Հայերէն լեզվով:
Այսպէս, օրինակ, «Յաղագս բան ունելոյ եւ անասուն*

կենդանեացդ» աշխատութիւնից մեզ հաջողվեց դանկ
երեք, «Յաղաղս յառաջախնամութեան առ Աղեքսանդ-
րոս» աշխատութիւնից՝ մեկ, իսկ «Աստուածային աւ-
րինացն աշխարհանութեան» աշխատութիւնից՝ հրէշու
հատվածներ, որոնք օգտագործվել են Եղիշեի կողմից:
Համատ.

Փիլոնի յաղագս բան
ունելոյ եւ ամասուն կեն-
դանեացդ²⁴

Հատուածի մեկնութենէ
Արարածոց գրոց Եղիշեի
վարդապետի

«Քանզի ահա ոմանի կենդանի
ամասունի հանդերձ ասացելով
առաքինութեամբս՝ եւ զարդա-
րութիւն կրեցին, զուղակի, եւ ցա-
մումային, եւ օղագնաց: Քան-
զի այն որ ըստ ծովուն՝ ի պիննո-
սին եւ ի պիննասպասելին հասա-
րակութիւն միարանութեան յայտ
է. քանզի կցորդութիւն ունի կե-
րակրոյ, եւ զոյգ զսա քաշխեալ
տանի» (Լ, էջ 155):

«Քանզի որսկս զկանանց տկա-
րութիւն անտէս արարեալ արին՝
որք ամենայն ուրեք զհասարակ
իրս քաղաքացն, որքան միանգամ

«Եւ ի ձկանց որ որոնեն, որ
սակրոս կոչին: Եւ եւ որք սէր եւ
քարեկամութիւն ունին եւ զորսա-
ցեալսն ի միասին նարակին, որ
պէս պիննեային (Լ - պիննային)
եւ պիննասպասեային» (Ա, էջ
17ա)

եւ նա տիրեսցէ զքեզ». զի նախ
հա՛յ արքային, եւ զի կամեցաւ
նոխանալ քան զայրն՝ նախ ուտե-
լով ի պաղոյն, (Լ - ապա) յիրա-

ըստ պատերազմի կամ ըստ խա - վի զրկեցաւ կինն ի հրապարակե
ղաղութեան իրէ եւ, միայն ին- արանց՝ յիշխանութենէ ի քաղա-
քանց կախեցին՝ զլացեալ զէգ քաղաքութենէ: Եւ առնէ տէրու-
ազգն ի քաղաքավարութիւն ան - քինն եւ ամենայն աստիճան
կար համարեալ» (Էջ 127): պատուական» (Ա, էջ 31բ):

«... Քանզի զողայ միշտ կենդա- «Իրրեւ զառիժ յարիցէ եւ
նիս այս (նապաստակ) եւ սար- զարհուրեցուցէ իրրեւ զորդիս
սեալ է. ոչ ումեք հաւատալ ամե- ջուրց զիշխանն մահու, իրրեւ
նեւին, ոչ ասեմ զազանաց, այլ եւ զգորսս, որ առաւել սարսելիք եւ
քնութեանն մասանց: Քանզի եւ զողան քան զնապաստակ, զոր
երկնչի եւ ի քղիմանէ վիժից աղ- զաւղակ կոչեն քերթողն, որ-
րեք, եւ ի ծովու նղփմանէ եւ ի պէս ասէ Փիլոն (Լ չունի ընդ-
հողմոյ եւ յօղոյ... Վասն որոյ զծվածը)» (Ա, էջ 86ա):
ինձ բուի՝ քերթողական ազգն
ոչ վայրապար զօղակ զնա -
պաստակն կարծել վասն զօղե-
լոյն եւ պախելոյ» (Էջ 160):

Փիլոնի յաղագս յառաջա-
խնամութեան առ Աղեքսանդ-
րոս

«Այլ եւ ոչ Քսենոփանէս, եւ կամ «Կարողին եղեն հերանոսի ի
Պարմենիդէս, եւ կամ նմպեղոյ - սէր միոյ կենդանւոյն Աստու-
լէս, կամ որք միանգամ այլ ծոյ, որ անուանեալ էր ի վերա
աստուածաբան, ըմբոնեցան ի միոյ ազգի: Եւ զիմեցին առ նա
քերթողականութենէ աստուածա- Սոկրատէսն եւ Պլատոն, Քսենո-
րիսի, այլ սակայն տեսութիւն փոն եւ Ամոն, եւ այլ, որք պար-

գրնութեանս խնդութեամբ ընկեշտ վարս ստացեալք, հաւակայեալք և առ հասարակ գատովք եւ իմաստասէր կամաւք եւ մեհալս իւրեանց կեանսն ի րանի մերձ եկին առ նա, հետաքարեպաշտութիւն և ի գովութիւն ցեալք ի կողմն» (Ա, էջ 74ա):

աստուածոցն նուիրեալք՝ բարի արք եղեն» (էջ 74):

Ինչպես պարզորոշ կերպով երևում է այս վերջին օրինակից, Եղիշեն ոչ թե կուրորեն ընդօրինակել է Փիլոնին, բաւացիորեն կրկնել նրա մտքերը, այլ գերազանցապես հետեւել է նրա մեկնողական մեթոդներին ու արտահայտչական եղանակներին: Այսպես, Փիլոնը խոսում է Քսենոֆոնի, Պարմենիդեսի, Էմպեդոկլեսի մասին, իսկ Եղիշեն՝ Սոկրատի, Պլատոնի, Քսենոֆոնի և Ամոնի²⁵: Փիլոնը հայտնում է, որ իր նշած անձինք բարեպաշտ կյանք վարելով՝ «բարի արք եղեն», իսկ Եղիշեի համոզմամբ՝ «Կաթողին եղեն ի սէր միոյ կենդանւոյն Աստուծոյ» կամ «Մերձ եկին առ նա (առ Աստուած)»: Սրանք տարբեր հայացքներ են, սակայն ոճական և կառուցվածքային առումով Եղիշեի կախումը Փիլոնից անկասկած է:

Եղիշեն ծանոթ է եղել նաև Փիլոնի «Աստուածային աւրինացն այլաբանութեան» աշխատությանը, որի հիման վրա և շարադրել է իր մեկնության հետևյալ երկու հատվածները.

ա) «Եւ երկոքին կողմունքն ամաչեցին. նոքա (Աղամ եւ Եւայ)՝ զի կերան եւ ոչ աստուածացան, իսկ չարն՝ զի ոչ մեռան ի նմին առուր, որպէս եւ կարծէրն,

այլ եւ այլոց եւս կենաց պատճառ եղեն՝ ծնանելով որդիս» (Ա, էջ 29ա)²⁶:

բ) «Ամենայն շնչոյ կենդանոյ զինչ եւ անուանեաց Աղամ, այն անուն է նորա», զի ոչ անդէպս ինչ կոչեաց... խոզն ի խուզողութենէն եւ այլք այսպիսիք» (Ա, էջ 26բ)²⁷:

Այսպիսով, Փիլոն երբայեցու ա) «Այնոցիկ որ ի լինելութեան խնդրոց եւ լուծմանց», բ) «Յաղագս բանունելոյ եւ անասուն կենդանեացը», գ) «Յաղագս յառաջախնամութեան առ Աղեքսանդրոս» և դ) «Աստուածային աւրինացն այլաբանութեան» աշխատությունները հայկական թարգմանությունները ծանոթ են եղել Եղիշեին և օգտագործվել նրա Արարածոց մեկնության մեջ:

Փիլոնի և Եղիշեի մեկնությունների միջև գոյություն ունեցող սերտ կապի մասին ավելի հետաքրքիր տվյալներ ենք ստանում, երբ համեմատության մեջ ենք դնում այդ երկու հեղինակների կիրառած մեթոդաբանական սկզբունքներն ու գրական հնարանքները:

Նման համեմատություններ կատարելու հնարավորություն են տալիս մասնավորապես Եղիշեի Արարածոց մեկնության №2679 գրչադրում պահպանված հատվածները, որոնք, չնայած մեզ արդեն ծանոթ իրենց թերություններին (համառոտություն, աղճատումներ և այլն), թվում է, թե կառուցվածքով ավելի մոտ են կանգնած նախնական բնագրին:

Արարածոց գրքի յուրաքանչյուր ընաբան այնտեղ

կատարում է ավյալ մեկնողական հատվածի վերնագրի դեր՝ կցվելով որևէ հարցական բառի. այսպես, օրինակ.

— Զի՞նչ է «սկսաւ Նոյ այր մշակ լինել երկրի» (Ծն, Թ, 20).

— Զի՞նչ է «արբի գինւոյն և արբեցաւ» (Թ, 20).

— Ընդէ՞ր Սեմայ յաղաւթս կացեալ այսպէս ասէ... (Թ, 26).

— Ընդէ՞ր ասէ՝ «Առ ինձ երինջ երեմեան...» (ԺԱ, 9) և այլն:

Մեկնության այս եղանակը փոխ է առնված Փիլոնի «Այնոցիկ որ ի լինելութեան» աշխատությունից, որտեղ նույնպես յուրաքանչյուր մեկնվող հատված վերնագրված է հիշյալ ձևով²⁸:

Եղիշեն գերազանցապես հետեւել է Անտիոքի մեկնողական դպրոցի խիստ գիտական, քերականական մեթոդին, որը ձևավորվել էր ի հակադրություն Ալեքսանդրիայի դպրոցի քմահաճ այլաբանական մեթոդի, սակայն Փիլոնի ազդեցությունն այնքան ուժեղ է եղել Եղիշեի վրա, որ վերջինս որոշ դեպքերում զիմել է նաև այլաբանական մեթոդին: Այսպես, օրինակ.

Ըստ Եղիշեի՝ «... Մեկնութեամբ երկիր՝ զմարմինս կոչէ, մշակ՝ զմիտս հոգւոյն» (ձեռ. N°2679, էջ 213բ), «Սթափելն Նոյի ազաշխարութեան աւրինակ է» (էջ 215բ), «Որ է աւրինակ արքայութեանն» (էջ 215ա) և այլն: Բերված հատվածների «մեկնութեամբ» և «աւրինակ է» բառերը փոխարինում են Փիլոնի երկերում նույն նպատակի համար գործածվող «առակէ», «նշա-

նակաւ է» և այլ բառերին:

Եղիշեի քննարկվող աշխատությունը լի է նաև փիլոնյան և ազդակից մյուս թարգմանական երկերին հատուկ բառերով, որոնց թիվը ամենազգուշ և համեստ հաշիվներով անցնում է 90-ից: Հմմտ.

Անապականութիւն (61ա) 29	Կատարելութիւն (55բ)
Առէ (6ա)	Հոլովակամ (58ա)
Ապականացու (61բ)	Միաբանութիւն (47բ)
Աստուածազանգոյն (20բ)	Ծարժութիւն (6ա)
Բարեխառնութիւն (15ա)	Որակացայ (89ա)
Բերանացեալ (14ա)	Սակամայ (53ա)
Բոլորածիր (11ա)	Սուղաբանութիւն (18ա)
Գոյացութիւն (43ա)	Տեսակամ (52բ)
Երկրայութիւն (96բ)	Տնտեսութիւն (N°2679, 218բ)
Զուգակշիռ (10ա)	Տրամագիծ (N°2679, 217ա)
Իմաստակ (19ա)	Քաղաքավարութիւն (94ա)
Կանխասացութիւն (93բ)	Քերթող (65ա) և այլն:

Անշուշտ, բառերի այս շարքում կարող են գտնվել այնպիսիները, որոնք գործածվել են նաև նախափիլոնյան թարգմանական երկերում, սակայն անհայտ լինելով «Նոր Հայկազեան Բառգրքի» հեղինակներին՝ չեն նշվել մեզ համար ուղեցույցի դեր կատարած նրանց հանրահռչակ բառաբանում: Այդուհանդերձ դա ոչ մի կերպ չի կարող խախտել դրական փաստերի վրա հիմնված մեր այն եզրակացությունը, ըստ որի՝ Եղիշեն իր Արարածոց մեկնության մեջ լայնորեն օգտագործել է

Փիլոն Երրայեցու երկերի հայկական թարգմանությունները՝ ինչպես ընդարձակ քաղվածքներ կատարելու, այնպես էլ այդ երկերի նորակազմ բառամթերքը և մեկնողական մեթոդները յուրացնելու ուղիով:

6. Հերմես Եռամեծ

Հունարան դպրոցի մյուս կարևոր արտադրանքը, որից Եղիշեն մեջբերումներ է կատարել, «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք» երկի թարգմանությունն է, որը պահպանվել է մեր Մատենադարանի վեց ձեռագրերում՝ №№ 419, 538, 1500, 1838 (թերի), 2269 և 2303: Այս ձեռագրերի համեմատությամբ Հ. Մանանդյանը պատրաստել է նշված երկի քննական բնագիրը, որը, հուսանք, մոտ ապագայում կդրվի մասնագետների տրամադրության տակ³⁰:

III-IV դարերում Եգիպտոսում տարածում գտած «Հերմեսյան գրականության» այս հետաքրքիր նմուշը, որի հունարեն սկզբնագիրն ըստ երևույթին չի պահպանվել, բովանդակությամբ իմաստասիրական մի աշխատություն է Աստու և մարդկանց փոխհարաբերությունների («Աստուած մարդոյ իշխէ և մարդ յամենայնի...», «Աստուած մարդասէր և մարդ աստուածասէր...», «Աստուած ոչ երևի առանց մարդոյ...» և այլն), մարդու՝ որպես Աստուծո կողմից ստեղծված արարածի, նյութական աշխարհի բաղկացուցիչ տարրերի (հուր, օդ, ջուր, հող), կենդանի հասկացություն, անձի և

մարմնի («Մարմինն առանց անձի մեռեալ է...»), մտքի և անձի («Միտք՝ անձին արարիչ...») հարաբերությունների և այլ խնդիրների մասին: Գրված է գյուրմբբունի լեզվով, որ բոլորովին տարբերվում է մոլի հունաբանությամբ թարգմանված երկերի լեզվից: Հ. Մանանդյանի բանավոր կարծիքի համաձայն՝ ազգակից է հունարան դպրոցի առաջին շրջանի թարգմանական երկերին³¹:

Եղիշեն իր Արարածոց մեկնության մեջ երկիցս, իսկ պատմության մեջ մեկ անգամ, համարյա բառացիորեն օգտագործում է «Սահմանք»-ի բնագիրը: Այդ կապը ակնառու դարձնելու նպատակով ստորև զուգադրում ենք մեզ հետաքրքրող հատվածները՝ «Սահմանք»-ի համապատասխան մասերը քաղելով №419 գրչազրից (1777 թ.).

Հերմ[ե]ս[ի] եռամեծի առ

Հատուածի յարարածոց

Ասկղիպէոս. Ստեմանի

մեկնութենէ եղիշէի վար-

դապետի

«Աստուած իմանալի աշխարհ, «Բարոն ասաց մարգարէն երեւ աշխարհ զգալի Աստուած, մարդ աշխարհ զոլ, աշխարհարարն եւ ֆակտի աշխարհ, Աստուած ան- աշխարհ եւ մարդ: Աստուած՝ ի- շարժելի աշխարհ. երկին շարժուն մանալի աշխարհ, աշխարհ՝ աշխարհ, մարդ բանաւոր աշ- զգալի, մարդ՝ զգալի, եւ իմա- խարհ. ապա երեւ ուրեմն աշ- նալի աշխարհ...» (Ա, էջ 20բ): խարհի 32:

Արդ անշարժելի աշխարհ՝ Աստ -
ուած, իսկ բանաւոր աշխարհ՝
մարդ...» (Լճ 93բ):

«Բան մտաց արբանեակ է, զի
զոր կամին միտմն՝ զայս եւ բանն
բարգմանէ, միտմն զամենայն ինչ
տեսանեմ, իսկ աչք՝ զամենայն
աչաց մտաց բարգմանեմ, իսկ
մարմնական: Սակայն միտմն ա -
չաց ոչ լինին գէտ, այլ աչք՝ մը -
տաց: Մտաց ոչ ինչ անկաս է, ջաց,
բայց անուն ոչ ընդունի,
բանի՝ ոչ ինչ աննառնելի, լուռ
վասն որոյ եւ խաւսել իսկ ոչ
կալով՝ իմանաս, խօսելով՝ խօսիս,
կարեմն զմամնէ բանի» (Ա, Լճ
Բանգի ի լուսբան միտմն յղանայ 26բ):

զբան, որ ի լուսբանէ եւ ի մտաց
բան մու փրկութիւն, որ ի բանէ
բան մի կորուստ, զի վասն մարմ -
նոյն՝ մարդն մահկանացու, բայց
վասն բանին՝ անմահ. որ զբանն ոչ
իմանայ՝ միտս ոչ ունի, որ խօսի
առանց մտաց՝ ոչ ինչ ասէ, ոչ ինչ
իմանալով, միտս ոչ ունի եւ խօ -
սի...» (Լճ 94բ):

«Վասն Վարդանայ եւ

Հայոց պատերազմին»

«Մահ իմացեալ՝ անմահութիւն, «Որսլէս եւ ասաց ոմն ի հնումն.

ոչ իմացեալ՝ մահ: Մահկանացու՝ մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ
ընդ անմահիւն անկեալ դնին, իմացեալ՝ անմահութիւն է»³³:
բայց անմահին մահկանացուցս
սպասաւոր լինին...» (Լճ 96բ):

*Ինչպես նկատուի ենք, առաջին և երրորդ Հատ -
վածներում Եղիշեն «բարւոք ասաց ոմն» և «որպէս ա -
սաց ոմն» արտահայտութիւններով ինքն իսկ վկայում
է, որ այդ Հատվածները փոխ են առնված այլ Հեղինա -
կից:*

*Կարծում ենք, ոչ մի տարակույս չի կարող լինել
այն մասին, որ «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս
Սահմանք» Թարգմանական երկը եղել է Եղիշեի կա -
րեւորագույն աղբյուրներից մեկը»³⁴:*

7. Պատճեն

Հանրահայտ փաստ է, որ նորպատոնականութիւն -
նը, ինչպես և քրիստոնեական աշխարհայացքով մեկ -
նաբանված Պատճենը, շատ մեծ ու խոր ազդեցութիւն
են թողել ողջ քրիստոնեական գրականութեան վրա:
Հայ գրականութիւնն այս առումով չի ուսումնասիր -
ված, և մենք իհարկեւ անկարող ենք առանց մեր խնդրի
չըմանալներից էսպես դուրս գալու, պատշաճորեն շո -
ւափել այդ կարեւոր հարցը: Մի արտաքին, թերեւ ճար -
տասանական հմտութիւնից բխող արտահայտու -
թյամբ անդամ, որով Մովսէս Խորենացին ցանկանում
է մեծարել իր ուսուցչին (նրան կոչելով «Նոր Պղա -

տոն»³⁵), կարելի է մոտավոր դադափար կազմել այն մասին, թե հայ ընթերցող շրջաններին որքանով էր ծանոթ և հարգի Պլատոնն ու նրա ուսմունքը:

Եղիշեի համոզմամբ՝ Պլատոնը, Սոկրատը, ինչպես և նորպլատոնականության նախահայր Ամոնիոս Սակկասը սոսկ հեթանոս մտածողներ չեն. «Կաթոզին եղեն հեթանոսք,- գրում է նա,- ի սէր միոյ կենդանւոյն Աստուծոյ... եւ դիմեցին առ նա Սոկրատէսն եւ Պլատոն, Քսենոփոն եւ Ամոն, եւ այլք որք պարկեշտ վարս ստացեալք, հաւատովք եւ իմաստասէր կամաւք, եւ բանիւ մերձ եկին առ նա՝ հեռացեալք ի կոողն» (Ա, էջ 74ա): Ուստի տարօրինակ չէ, երբ նույն գրքում, Մն. Բ, 7 համարի («Եւ եղեւ մարդն հոգի կենդանի») մեկնութեան առթիւ, Եղիշեն հանձնեմ վկայակոչում է Պլատոնի հետևյալ հատվածը.

«Հոգին եղեւ մարդն՝ կենդանի, անձնաւոր. այլ մարմինն գործիք է նորա ըստ Պլատոնի, թէ ես եւ իմն որ է անձն, իմն՝ մարմինն, եւ իմոյքն՝ գոյքն, ոչ էրէց եւ ոչ կրսեր, ինքն քան զինքն, այլ միեւնոյն...» (Ա, էջ 22ա):

Բերված հատվածի աղբյուրը գտնելու համար մենք բնականորեն պետք է աչքի անցկացնենք Պլատոնի երկերի մեջ հասած հայերեն թարգմանությունները, որոնք են.

ա) «Պլատոնի օրէնք»³⁶.

բ) «Պլատոնի ի Մինոպա»³⁷.

գ) «Պլատոնի յԵլթիփոն»³⁸.

դ) «Պլատոնի Սոկրատայ պատասխանի»³⁹.

ե) «Պլատոնի առ Տիմէոս»⁴⁰:

Նշված երկերում Եղիշեի վերոհիշյալ հատվածի աղբյուրի որոնման ուղղութեամբ կատարած մեր պլանային պրոյեկտները ընթացքում բարեբախտաբար Պլատոնի «Առ Տիմէոս» երկի թարգմանության մեջ հանդիպեցինք մի հատվածի, որը փարատեց մեր մեջ առաջացած կասկածը Եղիշեի կողմից Պլատոնի երկերի հայկական թարգմանություններն օգտագործված լինելու վերաբերյալ: Համատ.

«Պլատոնի առ Տիմէոս՝
Սակս բնութեան»

Հատուած՝ յԱրարածոց
մեկնութեան Եղիշեի

«... եւ առանց հրոյ ոչ երբէք «Ձի առանց հողոյ ոչ լինի լինիցի ինչ երեւելի, եւ ոչ շօշա - բանձրութիւն շաշափելի. եւ փելի՝ առանց հաստատնոյ ուրուք, ունց ջրոյ կալումն եւ ըմբոնու - եւ հաստատուն՝ առանց երկրի՝ մրն, եւ ոչ առանց աւոյ՝ շար - ոչ»⁴²:

ժուրիւն, եւ առանց հրոյ՝ երեւումն» (Ա, էջ 6ա):

Չնայած բերված հատվածում Եղիշեն համարյա բառացի կրկնում է Պլատոնին, այնուամենայնիվ չի կարելի բացառել, որ Եղիշեն կարող էր օգտվել ոչ թե նշված երկի հայերեն թարգմանությունից, այլ նրա հունարեն բնագրից: Խնդրի դրական կամ բացասական լուծումն առաջարկելու համար հարկավոր էին օժան-

դակ այլ փաստեր, և այդպիսի մի փաստ մեզ ընձեռեց Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց» աշխատությունը: Օգտագործելով Եղիշեի Արարածոց մեկնության՝ «Բայց մի կարծեսցուք նոր արարչություն զլոյսն արտաքոյ չորից տարեցն, այլ խզած ի հրեղէն երկնիցն, զյատակութիւն լուսոյն յայրեցողութենէն ի վայր կորզելով» (Ա, էջ 8բ) հատվածը, Գրիգոր Տաթևացին այն շարադրում է հետևյալ կերպ. «Վարդապետք եկեղեցւոյ տսն ըստ Պղատոնի՝ լոյսն խզումն է ի տարրական հըրոյ, որ յատաշին օրն դոյացաւ»⁴³:

Գրիգոր Տաթևացին նկատել է, որ Եղիշեն (վարդապետք եկեղեցւոյ) իր վերոհիշյալ կարծիքը փոխ է առել Պլատոնից, իսկ նա հնարավորություն կունենար դա պարզելու, եթե ձեռքի տակ ունենար Պլատոնի երկերի հայկական թարգմանությունները: Ենթադրել, թե Տաթևացին ևս օգտագործել է հունարեն բնագրերը՝ անհնարին է ու բոլորովին անհիմն, ուստի հավանական է եզրակացնել, որ Եղիշեն իր Արարածոց մեկնության մեջ օգտագործել է Պլատոնի «Առ Տիմէոս», գուցե և այլ երկերի, հայկական թարգմանությունը:

8. Հերակլիտ Եփեսացի

Դժվար է որոշել անմիջաբա՞ր, թե՞ այլ հեղինակների միջնորդությամբ Եղիշեն ծանոթ է եղել նաև հունական հռչակավոր դիալեկտիկ Հերակլիտ Եփեսացու (մահ. մ. թ. ա. 475 թ.) «Վասն բնութեան» աշխա-

տությունը: Այդ երկից, որ բաղկացած է եղել երեք՝ բընափիլիսոփայական, քաղաքական և աստվածաբանական մասերից, պահպանվել ու Դիոգենեսի, Պլուտարքոսի, Ստոբեոսի, Հիպոդիտեսի և այլոց միջնորդությամբ մեզ են հասել միայն աննշան հատակոտորներ:

Եղիշեն Հերակլիտին և նրա «Վասն բնութեան» աշխատությունը հիշատակում է Մենդոց գրքի ԺԵ գլխի 10 համարի («Հատ զնա ընդ մէջ, եւ եղ զէմ ընդ զէմ») մեկնության կապակցությամբ. «Նաեւ երկիր բաժանի յերկուս մասունս, եւ էն զէմ ընդ զէմ լերինք եւ դաշտք հայեցեալք, ջուրք ի քաղցր եւ ախտատուք. քաղցր ըմպելին է աղբերց եւ գետոց, եւ աղտաղտակ՝ ծովային եւ ժանգային: Եւ աւղ ի Դ բաժանի՝ յամառն, ի ձմեռն, ի դարուն, եւ յաշուն, որ է աւրինակ ոգւոյ ի մարմնի, իսկ փոփոխելն՝ մեղաց եւ արդարութեան: Այսով Հերակլիտոս իմացեալ զբնութիւնս՝ գիրս յաւրինէ վասն բնութեանս, եւ բազում աշխատեալ եւ իմացեալ»⁴⁴:

Հատվածի վերջին՝ «Եւ բազում աշխատեալ եւ իմացեալ» բառերի հիման վրա կարող է դայթակղություն առաջանալ ենթադրելու, թե Եղիշեի ձեռքի տակ եղել է ինչ-որ ամբողջական բնագիր, սակայն ավելի հավանական ենք համարում, որ Եղիշեն Հերակլիտի ու նրա երկի մասին տեղեկացել է կամ Հիպոդիտեսի մի աշխատությունից⁴⁵ և կամ մի այլ հեղինակի միջնորդությամբ⁴⁶:

Բոլոր դեպքերում մի բան անկասկած է, որ Եղիշեի

ծանոթությունները հունական գիտական գրականու-
թյան հետ՝ լինի դա բնագրերի, թե հայկական թարգ-
մանությունների միջոցով, բազմակողմանի են, խոր ու
հիմնավոր այն աստիճան, որ գերազանցում են ժամա-
նակի հայ գիտական մտքի հանդեպ անգամ լավատե-
սորեն տրամադրված ամեն սպասելիք:

9. Բարոյախոս

Եղիշեի օգտագործած աղբյուրների շարքում, հիմ-
նավոր փաստեր ունենալով, դնում ենք նաև «Բարոյա-
խօսի» հայերեն թարգմանությունը, լիովին ըմբռնելով
հարցի լրջությունն ու կարևորությունը:

Ն. Մառը՝ հայկական բնագրի հմուտ հրատարա-
կիչ-ուսումնասիրողն արդեն նկատել է, որ Եղիշեի Ա-
զաթանդեղոսի, Դավիթ Անհաղթի և Եղիշեի շարունա-
կողի (°) երկերում հանդիպում են բարոյախոսական մո-
տիվներ, սակայն զգուշորեն կանխել է այդ փաստերի
հիման վրա «Բարոյախօսի» թարգմանության ժամա-
նակը որոշելու ամեն մի փորձ, գրելով՝ «... Կենդանա-
կան մոտիվները հայերի մեջ շատ տարածված էին ան-
կախ Բարոյախոսից նաև այլ թարգմանական երկերի
միջոցով: Առատ նյութ էին տալիս (այս առումով) Փի-
լոնի աշխատությունները...»⁴⁷:

Եղիշեի Արարածոց մեկնության մեջ ևս հանդի-
պում են «բարոյախոսական» բնույթի մի շարք մոտիվ-
ներ, որոնց անմիջական կախումը հայկական «Բարո-

յախօս»-ից անհավանական է: Այսպես, օրինակ.

ա) «... Իբրեւ զառիւծ յարիցէ եւ զարհուրեցուցէ
իրբեւ զորդիս ջուրց զիշխանն մահու, իբրեւ զգորտս, որ
առաւել սարսելիք են եւ դողան քան զնապաստակ, զոր
դաւդակ կոչեն քերթողքն» (Ա, էջ 86):

բ) «... Են ի ձկանց որ որոճեն, որ սակրոսք կոչին:
Եւ են, որք սէր եւ բարեկամութիւն ունին, եւ զոր-
սացեալսն ի միասին ճարակեն, որպէս պիննհայքն եւ
պիննասպասեայքն» (Ա, էջ 17ա):

գ) «... Ամենայն կենդանիք եւ դադանք չեն ան-
մասն ի բանական հնարից, բնականաբար ունելով առ
իւրեանց փրկութիւնն եւ աւգտակարն» (կասկածելի
հատված. Ա, էջ 28ա):

դ) «Զպերճն, զխրոխտն, զհզաւրն, զհամառաւտն,
զահագիւնն ամենայն զազանաց՝ առիւծ, որ է անուն ի
յառնլոյն կոչեցեալ...» (Ա, էջ 84բ):

ե) «Առիւծ՝ յորմէ սարսէ ամենայն կենդանիք մին-
չեւ արիւն, ասէն, միզէլ, եւ ինքն ինքեան զէշ արկանէ»
(Ա, էջ 86ա) և այլն:

Այս օրինակներից առաջին երկուսը, ինչպես ցույց է
տրված այլ առիթով, փոխ են առնված Փիլոնի «Յա-
ղաքս բան ունելոյ եւ անասուն կենդանեացը» աշխա-
տությունից⁴⁸: Չենք կասկածում, որ մյուս հատված-
ների աղբյուրը նույնպես կարելի է գտնել Փիլոնի կամ
այլոց երկերում, եթե անհրաժեշտություն զգացվի
փնտրտութքներ կատարելու այդ ուղղությամբ:

«Բարոյախօս»-ի հայկական թարգմանությունը Ե-

դիշխի աղբյուրները շարքը դասելու համար մենք, իհարկե, ձեռքի տակ պետք է ունենայինք ոչ թե նմանատիպ կենդանական մոտիվներ, այլ անմիջապես «Բարոյախօս»-ից բխող հասկացումներ: Ահա դրանք.

Բարոյախօս⁴⁹

Հատուած՝ յԱբարածաց
մեկնութեան եղիշէի

«Ակացութեան վասն առեւծուն, որ թագաւոր է ամենայն գազա - նաց կամ թէ ամենայն իսկ անասնոց» (էջ 2):

«Նրկորոյ քարէ առեւծուն, Յորժամ ննջէ՝ արքուն կայալ իւր, անջելով գայսն ի քաց ունի, որ՝ անգի ի քաց լինի, որպէս յԱւրի-նուրիւն արեւուքեանցն ասէր, թէ՛ նա ննջեմ եւ սիրտ իմ արքուն կայ: Թէպէտ մարմինն ննջէր երբեք, այլ աստուածութիւնն ցանկ արքուն կայր, որպէս միշտ ընդ աշտէ հար արքուն եւ անուն, ըստ այնմ թէ՛ Ոչ ննջիցէ եւ ոչ ի ֆուն երբայ սպանալանմ Իս - րայեղի» (էջ 3-4):

«... Քանզի ասէ զառիւծ է, թէ ննջելով գայսն ի քաց ունի, որպէս եւ Տէրն մեր՝ մեռեալ մարմնովն եւ կենդանի գոյով աստուածութեամբն, ըստ այնմ երբեք՝ «նա ննջեմ եւ սիրտ իմ արքուն է»: Սիրտ զանաւ կենդանի աստուածութիւնն կոչէ արքուն գոյով անմիտիկի բնութեամբ, զի ոչ ննջէ եւ ոչ ի ֆուն երբայ պահպանմ Իսրայելի» (Ա., էջ 85ր):

«...Դայ հայրն յաւուր երրորդի եւ փչէ ի նակաւն եւ յարուցանէ զարքուցանել, քայց եթէ ինքն: զնա: Նոյնպէս եւ ամենակալն Աստուած հայրն ամենեցուն յարոյց զորդին իւր զանդրանիկն ամենայն արարածոց զտէր մեր Յիսուս Քրիստոս. ապա ուրեմն թարեաւ ասաց Յակոբ, թէ՛ Կորին առեւծու եւ ո՞վ յարուցանէ զնա» (էջ 4):

Բերված փաստերն այնքան պերճախոս են, որ մեկնաբանությունների կարիք չեն զգուժ. անկասկած է, որ եղիշեն իր մեկնության մեջ օգտագործել է «Բարոյախօս»-ի Հայկական թարգմանության մի բնագիր, որը շատ մոտ է կանգնած եղել Ն. Մառի Հրատարակած բնագրին:

10. Դիտնիսիոս Թրակացի

Որոշ Հիմքեր կան նախադրելու համար, որ եղիշեն ծանոթ է եղել նաև Դիտնիսիոս Թրակացու «Քերականություն» և Դավիթ Փիլիսոփայի «Մեկնութիւն քերականին» աշխատություններին:

Դիտնիսիոսի «Արուեստ»-ը, որը հունարան դպրոցի Հնագույն շրջանի թարգմանական արտադրանքներից է⁵⁰, դարեր շարունակ Հայ քերականագիտության հիմնաքարն է հանդիսացել. վերջինս գերազանցապէս

զարգացել ու ծավալվել է որպես այդ երկի մեկնողական գրականություն, ուստի տարօրինակ կլիներ, եթե Եղիշեն, իր երկերում օգտագործելով հունարան դպրոցի հնագույն հուշարձանները, բոլորովին անտեսած լիներ Թրակացու գործը: Այնուամենայնիվ առկա փաստերի հիման վրա հարցի վերջնական ու գրական լուծում անհնար է առաջարկել: Նշենք միայն, որ Եղիշեի կողմից այլևայլ առիթներով հիշատակված քերականական տերմինները համընկնում են Թրակացու, թերևս ավելի ճիշտ կլինի ասել՝ հունարան դպրոցի Ա շրջանում ստեղծված, համապատասխան տերմիններին: Համատ.

Անուն (Ա, էջ 48ա)

Բառ. (48ա)

Բան (48ա)

Բարբառ (53ա)

Թավ (53ա)

Հոլովական (անուանք. 58ա)

Թոգնական (28բ^o)

Պարբեկութիւն (53ա)

Սոսկ (53ա)

Ստուգաբանութիւն (48ա) և այլն:

Սրանց որոշ մասը Եղիշեի կողմից այնպիսի գուգորդությամբ է օգտագործված, որ հիշեցնում է Թրակացու համապատասխան ձևակերպումները. այսպես, օրինակ, Թրակացու մոտ կարդում ենք. «Այլ երկարն եւ սուղն ի չափ ոտիցն պիտի: Թաւն ի վերայ ձայնաւոր գրոյ թաւացելոյ. սոսկն ի վերայ ձայնաւոր գրոյ սոս-

կացելոյ»⁵¹: Իսկ Եղիշեն ունի. «Եւ ընդ ամենայնի միաբանի (Ա ձայնավորը), ընդ պարզին պարզանայ եւ ընդ թաւին թաւանայ եւ ընդ սոսկին սոսկանայ...» (Ա, էջ 53ա):

Եվ կամ՝ «Անուն է մասն բանի հոլովական» (Թրակացի)⁵² - «Հոլովական անուանք» (Եղիշեն. Ա, էջ 58ա) և այլն:

Կարծում ենք, որ Թրակացու հետքերի սակավությունը Եղիշեի քննարկվող երկում պետք է բացատրվի նաև մեկնության նյութով, որը հեղինակին քերականական տիպի դատողություններ անելու լայն հնարավորություններ չի տվել:

Ծննդոց դրքի Բ, 19 համարի («Եւ ամ զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեսցէ զնոսա. եւ ամենայն շնչոյ կենդանւոյ զինչ եւ անուանեաց Ադամ, այն անուն է նորա») մեկնության կապակցությամբ Եղիշեն գրում է. «Զի ոչ անդէպս կոչեաց (Ադամ զանուանս կենդանեաց), այլ զյարմարն եւ զնմանն»: Այս միտքը պատահական մի դատողություն է, այլ լեզվաբանական սկզբունք, որից ելնելով, ինչպես ինքը Եղիշեն, այնպես էլ մեր մատենագիրներից ոմանք երբեմն տվել են բազմաթիվ բառերի սրամիտ, ժամանակի լեզվաբանական մտքի մակարդակին համապատասխան բացատրություններ:

Ըստ այդ սկզբունքի՝ Եղիշեն առյուծ բառը ծագած է համարում «յառնել» բայից, «եզն» ի հեզութենէն, շուն՝ ի շողոքորթելոյն, կատուն՝ ի տան կալոյն,

խոզն ի խուզողութենէն և այլք այսպիսիք» (Ա, էջ 26բ): Այս կապակցութեամբ հետաքրքիր է հետևյալ փաստը.

Դավիթ փիլիսոփան, մեկնելով Դիոնիսիոսի «ստուգաբանութեան գիւտ» հասկացութիւնը, գրում է.

«... Ստուգաբանութեան ձևք են երեք, յիշէն, յարուեստէն, ի ձայնէն: Եւ յարացոյց առաջնումն սափոր, եւ երկրորդին՝ փայտհատ, եւ երրորդին ճնճողակ: Բայց ոչ ամենեցուն է գիւտս այս, այլ խոհեմագունիցն եւ եթ»⁵³:

Քերականական այդ սկզբունքը Եղիշեն փոխ է առել Դավթի⁵³, թե՞ հակառակը՝ Դավթը Եղիշեից, դժվար է առայժմ որոշել⁵⁴: Կարծում ենք, ավելի հավանական է, որ այդ երկու հեղինակները, յուրացրած լինելով հունական քերականագիտութիւնը, միմյանցից անկախ կանգնած են եղել միևնույն տեսակետի վրա:

Ամփոփելով հունաբան դպրոցի հնագույն արտադրանքներից Եղիշեի անմիջական կախումը ցույց տվող փաստերի շարադրումը, տեսնում ենք, որ Եղիշեն Արաածոց գրքի իր Մեկնութիւնը գրելիս օգտագործել է հետևյալ երկերի հայերեն թարգմանութիւնները.

1. Փիլոն Եբրայեցու

ա) Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց,

բ) Յաղագս բան ունելոյ և անասուն կենդանեացդ,

գ) Յաղագս առաջախնամութեանն առ Աղեք-

սանդրոս,

դ) Աստուածային աւրինացն այլաբանութեան,

2. Հերմեայ Եռամեծի առ Ասկղիպիոս Սահմանք,

3. Պլատոնի առ Տիմէոս Սակս բնութեան,

4. Բարոյախօս,

5. Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւն»:

Հունաբան դպրոցի սկզբնավորման ժամանակը պարզելու համար ստացված արդյունքներն անկասկած ունեն հսկայական նշանակութիւն, սակայն նախքան այդ հարցին անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում դոնե համառոտակի կանգ առնել Եղիշեի վերաբերյալ եղած այն քննադատութիւններէ վրա, որոնց նպատակն է եղել խախտել Եղիշեի և դարի երկրորդ կեսի մատենագիր լինելու հիմքը և տեղաշարժել նրան առնվազն մեկ դարով:

Եղիշեի ամենախիստ քննադատ ներսես Ակինյանը, որը միաժամանակ գրադվել է նաև հունաբան դպրոցին առնչվող հարցերով, չատ լավ ըմբռնել է, որ քանի դեռ Եղիշեի գիրքը որպես Ե դարի հեղինակի՝ անխախտ է մնում, ապա խոսք չի կարող լինել հունաբան դպրոցի սկզբնավորութիւնը Զ, կամ ինչպես ինքն է կարծում է դար տեղափոխելու մասին⁵⁵:

Եվ քանի որ, ինչպես մեզ է թվում, Եղիշեի գիրքը որպես Ե դարի հեղինակի իսկապես չի խախտված, ու խախտելու լուրջ հիմքեր չկան, ապա հետևում է, որ հունաբան դպրոցի սկզբնավորումը կատարվել է ավելի վաղ, քան ենթադրված է մի շարք ուսումնասիրու-

թյուններում:

Մեկ առ մեկ ներկայացնել և նորանոր փաստերով ժխտել Եղիշեի քննադատների կարծիքները՝ ոչ միայն մեզ չափազանց կշեղեր մեր նյութից, որ միայն նրա Արարածոց մեկնության Հատակոտորների լուսաբանմանն է միտում, այլև կլիներ մի ավելորդ կրկնություն և. Տեր-Մինասյանի և Մ. Աբեղյանի ուսումնասիրությունների⁵⁶: Ուստի, ի լրացումն այս երկու Հմտագույն հետազոտողների նշած փաստարկների, հարկ ենք համարում կատարել միայն հետևյալ դիտողությունները:

Ղազար Փարպեցին, որն իր պատմությունն ամենայն հավանականությամբ գրել է և դարի վերջին տասնամյակում, Վարդան Մամիկոնյանին ու նրա մերձավոր զինակիցներին համարյա ամենուրեք հիշատակում է «սուրբ» կամ «երանելի» մակդիրներով⁵⁷:

Այս հետաքրքիր փաստը, որ մեզ մատնացույց է արել մեծարգո հայագետ Մ. Հասրաթյանը, կարևոր նշանակություն ունի առաջադրված հարցի լուծման գործում: Հասկանալի է, որ Փարպեցին այդ մակդիրները գործածելով, ելնում էր հայոց եկեղեցու համապատասխան քայլից, որ արված էր արդեն Վարդանանց հերոսական ապստամբության մասնակիցներին եկեղեցու համար նահատակված սրբերի շարքը դասելու ուղղությամբ: Ոչ միայն դժվար, այլև անհնար է պատկերացնել, որ Ղազարը սեփական նախաձեռնությամբ կարող էր «Սուրբ այրն Աստուծոյ» կոչել պաշ-

տոնական եկեղեցու կողմից չսրբացված մի անձնավորություն, ուստի պետք է ենթադրել, որ Ավարայրի դաշտում զոհված հերոսները Փարպեցու «Պատմություն» հրապարակ զալուց առաջ արդեն հայ եկեղեցու սրբերի շարքն էին դասվել:

Սրանից հետևում է, որ Ջ կամ է դարերում, երբ այս փաստը ամրապնդված պետք է լիներ նաև տասնամյակների ավանդույթով, որևէ հեղինակ չէր կարող այլ կերպ կոչել Վարդանին, քան «սուրբ», «սուրբ այրն Աստուծոյ» և այլն: Եղիշեի պատմության մեջ, սակայն, Վարդանը ոչ մի անգամ նման ձևով չի հիշատակված: Միայն ժամանակակից և դեպքերին ականատես պատմիչը, որը ոչ միայն եղել է Վարդան Մամիկոնյանի ծանոթը, այլև նրա մերձավոր մարդկանցից մեկը⁵⁸, կարող էր նրան հիշատակելիս բավարարվել միայն սպարապետ հորջորջմամբ, երբեմն անունն անգամ չնշելով:

Յարժույթ ենք, որ սույն խնդիրը Եղիշեի՝ 451 թվականի դեպքերին ժամանակակից լինելու հարցի դրական լուծման տեսակետից այնքան պարզ է, որ լրացուցիչ մեկնաբանություն անհրաժեշտություն չի զգացվում:

Հաջորդ փաստը, որի վրա ուզում ենք հրավիրել մասնագետների ուշադրությունը, որքան մեզ հայտնի է, բանասիրական նախորդ ուսումնասիրություններում նույնպես չի շոշափված: Խոսքը վերաբերում է այսպես կոչված «Գրիգոր Լուսավորչի պաշտամունքին»⁵⁹, որը

Հետադոտողների կարծիքով ձևավորվել է Ե դարի երկրորդ կեսին և իր վառ դրսևորումը գտել այդ շրջանի հայ պատմագրության մեջ (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի):

Մինչդեռ Եղիշեի պատմության մեջ, ինչպես նաև նրա մյուս աշխատություններում, Գրիգորի մասին որևէ Հիշատակություն, բազմաթիվ հարմար առիթների գոյության պայմաններում, բացակայում է: Այս առումով հատկապես բնորոշ է Հետևյալ դրվագը, որտեղ ուղղակի խոսվում է Տրդատ թագավորի օրոք Հայաստանում քրիստոնեության տարածման մասին. «Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի աղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախոյսող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր Հայրէնի աշխարհիս, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսաւորեաց զխաւարային կողմունս հիւսիսոյ, զոր և այժմ կամին ի մէնջ կորդել հանել խաւարասէր որդիքն արեւելից»⁶⁰:

Եղիշեն ոչ մի քաղաքական կամ կուսակցական շարժառիթ չէր կարող ունենալ Գրիգոր Լուսավորչին չհիշատակելու համար: Ընդհակառակը, լինելով Մամիկոնյան տան, անձամբ սպարապետի՝ մերձավորներից մեկը, նա առիթը բաց չափտի թողնել շեշտելու համար, որ իր պատմության հերոսը Հայոց Լուսավորչի վերջին ժառանգ Սահակի թոռն է և «որդիացեալը»: Գրիգոր

Լուսավորչի մասին որևէ հիշատակության բացակայությունը Եղիշեի մոտ մի նշանակալից ապացույց է այն մասին, որ Վարդանանց պատերազմի պատմության, ուստի և մեր կողմից քննարկվող Արարածոց մեկնության հեղինակը ապրել է Լուսավորչի պաշտամունքի տարածումից առաջ, այսինքն՝ ժամանակակից է 451 թվականի հերոսական դեպքերին:

Մեզ միանգամայն հավանական է թվում Ստ. Մալխասյանի այն տեսակետը, որի համաձայն՝ Եղիշեն իր «Պատմությունը» գրել է 460-ական թվականներին⁶¹: Եթե ընդունենք, որ դրանից հետո նա ապրել է ևս 10-15 տարի, քանի որ որոշ աղբյուրների վկայությամբ կյանքի վերջին շրջանում երկար ժամանակ արվել է ճգնակեցության⁶², ապա Արարածոց մեկնությունը կարելի է թվագրել 470-ական թվականներով: Այս թվականներն էլ, ահա, մենք ընդունում ենք որպես Եղիշեի օգտագործած հունարան թարգմանությունների իրադրության վերջին ժամկետ (terminus ante quem):

Սույն հետևությունից հետո անհրաժեշտ է կանգ առնել հունարան զպրոցի այն արտադրանքների վրա, որոնց թարգմանությունների ժամանակի վերաբերյալ բանասիրության մեջ եղել են մեր եզրակացությանը չհամապատասխանող կարծիքներ:

«Պղատոնի իմաստասիրի տրամախոսությունը»-ի հրատարակիչ Ա. Սուքրյանը, հենվելով Գրիգոր Մալխասրոսի «Առ վարդապետն Սարգիս» թղթի «Ոչ եմք

երբէք դադարեալ ի թարգմանութենէ եւս. բազում մատենաւ, զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատենան Պլատոնի, զՏիմէոսի տրամաբանութեանն եւ զՓեգոփնի, յորս բոլոր ճառսն նախադիտականին այն պարփակեալ կայ»⁶³ արտահայտութեան վրա, իր հրատարակած երկերի թարգմանութիւնը վերագրել է Գրիգոր Մագիստրոսին⁶⁴:

Այս եզրակացութեան դեմ ունենք առարկութիւններ, Գրիգոր Մագիստրոսը խոսում է Տիմէոսի և Փեգոփնի տրամախոսութիւնների մասին, մինչդեռ Վենետիկյան գրչագիրը պարունակում է «Ի Մինովս, և յաղագս Օրինի», «Յեւթիփոռն կամ յաղագս Սրբոյ», «Սոկրատայ պատասխանի» և «Առ Տիմէոս» երկերի թարգմանութիւնը⁶⁵:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Մագիստրոսի հիշատակած երկու երկերից մեկը (Փեգոփն) բացակայում է այդ գրչագրում, իսկ դրա փոխարեն այնտեղ առկա են երեք այլ երկեր, որոնց թարգմանութեան մասին Գրիգոր Մագիստրոսը ոչինչ չի հաղորդում: Եվ ապա, որ ամենի կտրուկ է, այդ թարգմանութիւնների լեզուն ոչ մի ազգակցութիւն ցույց չտալով Մագիստրոսի լեզվին, թե՛ բառապաշարով և թե՛ շարահիշուկութեամբ առնչվում է հունարան դպրոցի հնագույն արտադրանքներին:

Գրաքարի ամենահմուտ մասնագետներ Գ. Ավետիքյանը, իմ. Սյուրմելյանն ու Մ. Ավգերյանը իրենց մեծարժեք բառարանում Պլատոնի հայկական թարգ-

մանութիւնների մասին գրում են. «Պլատոնի մեծահամբաւ յոյն փիլիսոփայի տրամախոսութիւնք ընդարձակք կոչեցեալք Տիմէի, կամ Մինովսայ Օրենսգրի, և յաղագս Օրինաց ի ԺԲ գիրս, և զրոյցք ընդ Սոկրատ և եւթիփոռն, և ատենախոսութիւն կամ պատասխանատոութիւն իրրե ի բերանոյ Սոկրատայ փիլիսոփայի: Թարգմանութիւն Հին՝ պահպամբ Հելլենարանութեան...: Տուցանէ Գրիգոր Մագիստրոս, թէ և ինքն աշխատասիրեալ իցէ ի թարգմանել զտրամաբանութիւն Տիմէի ևն, բայց թարգմանութիւն օրինակիս մերոյ երեւի և ևս հնագոյն»⁶⁶:

Նկատենք նաև, որ մեր մատենագրութեան մեջ սա միակ դեպքը չէ, երբ միևնույն երկը թարգմանվում է երկու անգամ. որպես օրինակ նշենք «Յովհաննու յայտնութեան» և Կեղծ-Դիոնիսիոս Արիոպագացու երկերի կրկնակի թարգմանութիւնների փաստը⁶⁷:

Մեր Հին մատենագրականների ու մշակութային կենտրոնների միջև սերտ կապերի բացակայութեան պայմաններում՝ զոյնութիւն ունեցող բազմաթիվ երկերի թարգմանութիւններ կարող էին ոմանց ծանոթ չլինել, ուստի և թարգմանվել երկիցս: Այնպես որ Պլատոնի երկերի՝ Գրիգոր Մագիստրոսի կողմից կատարված թարգմանութիւնը ոչ մի կերպ չի կարող խախտել Հիմնավոր փաստերով ամրապնդված մեր այն եզրակացութիւնը, ըստ որի դրանք (զոնն անվիճելիորեն Տիմէոսի տրամախոսութիւնը) հայերեն թարգմանված պետք է լինեն ոչ ուշ քան 470-ական թվականները⁶⁸:

Անհրաժեշտ է կանգ առնել նաև «Բարոյախօս»-ի ու Դիոնիսիոս Թրակացու Քերականության թարգմանությունների ժամանակի հարցի վրա:

Շատերն աշխատել են բացատրել «Բարոյախօսը» և դարի հայկական թարգմանությունների թվին դասելու հնարավորությունը, լավագույն դեպքում այն համարելով միջին օղակ հուշարձանի հին և նոր խմբագրությունների միջև, որը մի շարք առանձնահատկություններով ավելի մոտենում է հնագույն խմբագրություններին: Սակայն ինչպես ցույց է տվել Ն. Մառը, և դարի հայ մատենագիրները ծանոթ են եղել «Բարոյախօս»-ում շոշափված խնդիրներին. հատկապես հետաքրքիր և անկասկած է նշանակել կողմից «Բարոյախօս»-ի 14-րդ հոդվածի («Վասն մրջման») օգտագործման փաստը: Այդուհանդերձ ելնելով իր այն համոզմունքից, ըստ որի՝ «հայ գրականության նոր (հունարան - Լ. Խ.) դարաշրջանի կարևոր պահը համընկել է Զ-ի դարերի միջև ընկած մի ինչ-որ շրջանի», Ն. Մառը «Բարոյախօս»-ի թարգմանությունը ևս համարում է այդ դարերի արդյունք⁶⁹:

Մեր կարծիքով՝ քննարկվող հարցի կապակցությամբ ավելի ճիշտ դիրքավորում ունի Գ. Տեր-Մլկրտչյանը, որի տեսակետն իր հրատարակության առաջաբանի ծանոթագրություններից մեկում գետեղել է Ն. Մառը⁷⁰: Ըստ Գ. Տեր-Մլկրտչյանի՝ «Բարոյախօս»-ի թարգմանությունը շատ ավելի հին կարելի էր համարել, եթե չլինեին վերնագրին հաջորդող հետևյալ տո-

ղերը. «Զբարս իւրաքանչիւր ազգաց զաղափարելով արտասանեալ ունի յինքեան տառս, եւ զանազան կերպարանս նշանակէ, զոմանս գերադանցեալս վերնոյն կերպարանի եւ զոմանս ստորանկեալս սանդարմատականացն հոգւոյն, եւ է վասն այսոցիկ»⁷¹:

Ինչպես իրավացիորեն դիտել է Գ. Տեր-Մլկրտչյանը, այս պարբերության առաստաանել, զաղափարել, տառ (մենք կալեւացնեինք նաև՝ աստրաանկեալ) բառերը փրկոյան թարգմանությունների հետ են առնչվում: Սակայն այս հանգամանքը ոչ մի կերպ չի կարող խախտել թարգմանության ժամանակի վերաբերյալ այլ տվյալներով հիմնավորված որևէ եզրակացություն, քանի որ ակնհայտ է, որ նշված տողերը թարգմանչի կողմից չեն գրվել. եթե անտեսենք անգամ լեզվական առանձնահատկությունները, նման պնդման համար բավական է նաև միայն հետևյալը: Վրաց «Բարոյախօս»-ը, որ թարգմանված է անմիջաբար հայերենից, և հարադատորեն պահպանել է հայկական բնագրի բոլոր առանձնահատկությունները, չունի վերնագրին կցված այդ ծանոթությունը, ուստի հասկանալի է, որ միջամտությունը կատարված պետք է լինի ուչ ժամանակներում, վրացերեն թարգմանությունից (ըստ Մառի՝ Ը դար) հետո:

Կրկնում ենք, հունարան դպրոցի ծագման ժամանակաշրջանի մասին չունենալով որևէ կանխակալ կարծիք, անհնար է «Բարոյախօս»-ի հայկական թարգմանության terminus post quem non-ը 470-ական

թվականներից այս կողմ բերել, ավելին՝ Եզնիկի կողմից 14-րդ հոգևածի օգտագործման փաստը կարող է հիմք ծառայել նրա թարգմանություն ժամանակը անգամ նշված թվականից մի քանի տասնամյակ առաջ մղելու համար:

Նույն դատողությունները ստիպված ենք կրկնելու նաև Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայերեն թարգմանության ժամանակի մասին Ն. Ադոնցի հայտնած կարծիքի առթիվ. «Հունարան դպրոցի ծագման և զարգացման ժամանակի որոշման ընթացքում, զբոլմ է նա, պետք է նկատի առնվեն առաջին անգամ այժմ հրապարակ եկող քերականական մեկնությունները: Նրանք, դպրոցի այլ արտադրանքների հանդեպ ունեն այն առավելությունը, որ ի դեմս մի շարք հեղինակների՝ զարգացման շարունակական դժով ներկայացնում են գիտության մի որոշ բնագավառ: Մեզ հետաքրքրող շրջանի համար Ստեփանոս (Սյունեցի) հանդիսանում է քերականական գիտության վերջին ներկայացուցիչը, և նրա երկը իր որակով նշանակալիորեն հեռու է կանգնած Դավթի աշխատանքից, և բոլորովին էլ տվյալ գիտության ծաղկումը չի ավետում: Ստեփանոսի ժամանակը լավ հայտնի է, Մովսեսը՝ նրա ուսուցիչը՝ առաջ է նրանից, իսկ ավելի վաղ են Անանուն ու Դավիթը: Սրանով արդեն փոխադրվում ենք է դար, որի սահմաններում հավանաբար պետք է որոշել և հիշյալ քերականների ժամանակը»⁷²:

Ինչպես տեսնում ենք, Ն. Ադոնցի եզրակացու-

թյուններն արտահայտված են չափազանց անվստահ և թեական ձևով. սակայն անգամ անչափ զգուշություն պայմաններում Ադոնցը, մեր կարծիքով, թույլ է տվել մի քանի անհիմն ենթադրություններ. նախ՝ Մովսես Քերականին Ստեփանոս Սյունեցու ուսուցիչ համարելու համար դրական փաստեր գոյություն ունեն, երկրորդ՝ որևէ գիտության, տվյալ դեպքում քերականության զարգացման ու անկման այնպիսի արագ ընթացք, ինչպիսին պատկերացրել է Ն. Ադոնցը, դժվար է ենթադրել: Մի՞թե ընդամենը մեկ հարյուրամյակի ընթացքում հնարավոր կարելի է համարել միևնույն աշխատությունը մեկնող չորս երկերի անհրաժեշտություն, որոնք զգալիորեն տարբերվում են իրարից (մանավանդ Դավթի և Ստեփանոս Սյունեցու մեկնությունները): Ավելի բնական չէ՞ ենթադրել, որ Ստեփանոսին Դավթից անջատում են շատ ավելի երկար տարիներ, որոնց ընթացքում և բնական կլիներ միևնույն երկի չորս այլևայլ մեկնությունների ստեղծումը:

Այնուամենայնիվ մենք չենք ցանկանում Ն. Ադոնցի գիտողությունները բոլորովին խոտելի համարել, միայն գտնում ենք, որ քանի դեռ նրանք պատշաճորեն չեն հիմնավորված, ապա չեն կարող խախտել փաստական նշանակալից հիմքերի վրա կառուցված մեր կարծիքը՝ Նդիշեի կողմից Թրակացու քերականության հայկական թարգմանության և նրան ազգակից Փիլոնյան երկերի օգտագործման, ուստի այդ երկերի ոչ

ուչ քան 470-ական թվականները թարգմանված լինելու մասին⁷³:

Հունաբան դպրոցի սկզբնավորման, կամ ավելի ճիշտ Հունաբան դպրոցի առաջին շրջանի արտադրանքների ժամանակի վերաբերյալ մեր կողմից առաջարկվող թվականները հակասում են հայոց լեզվի պատմության և զարգացման հանգրվանների մասին որոշ մասնագետների կողմից հայտնած կարծիքներին:

Հայկական բանասիրության մեջ իշխել և որոշ առամաք այժմ էլ իշխում է այն պատկերացումը, ըստ որի՝ հայոց լեզուն հնագույն շրջանում հաջորդաբար անցել է զարգացման հետևյալ փուլերով՝ *ռափնաբայան* (մինչև 450-ական թթ.), *աթնաթեպարցան* (450-572 թթ.) և *հունաբան* (սկսած Զ դարի վերջից)⁷⁴:

Այսպիսի կտրուկ և միազիծ պարբերաբանումը, սակայն, մեզ որոշ չափով հակասաբանական է թվում, որովհետև նրանում հաշվի չի առնված ժամանակի որևէ հատվածում գրականության տարբեր ժանրերին ներկայացվող լեզվատեսական և գործնական պահանջների իրողությունը, այսինքն՝ այն հանգամանքը, որ տարբեր լսարանների հասցեագրված ստեղծագործությունները բնականաբար պետք է ունենային իրենց յուրահատկությունները:

Այսպես, մեր մատենագրության հայրերը քրիստոնեությունն արժատավորելու նպատակով ձեռնարկելով Սուրբ Գրքի թարգմանությանը, հասկանալի է, որ ջանք չպիտի խնային ժողովրդին հասկանալի լեզվով

այն շարադրելու համար: Սուրբ Գրքից հետո անհրաժեշտ էր ունենալ եկեղեցական հայրերի մեկնողական և քարոզչական երկերը, որոնք անհրաժեշտ միջոցներ էին նույն քրիստոնեություն արժատավորման նպատակների իրագործման համար:

Այնուհետև, հայ մտավորականները շփվելով ժամանակի մշակութային խոշոր կենտրոնների հետ, յուրացնելով և իրենց հետ հայրենիք բերելով գիտական մտքի վրա իշխող արտաքին հեղինակների երկերը, սկսում են դրանց թարգմանությունը: Այդ երկերը ոչ թե սպասարկելու էին ժողովրդի լայն շերտերի պահանջները, այլ գինելու էին մտավորականությանը, սնունդ և հիմքեր էին ընձեռելու նրան հայ ժողովրդի ազգային շահերի համար երկու ճակատով մղվելիք պայքարում հաջող գոտեմարտելու գործում:

Այդ նպատակներին ծառայելու կոչված երկերը, լինելով փիլիսոփայական ու գիտական բնույթի, պետք է հնարավորին չափ ճշգրիտ արտահայտեն բնագրերի յուրաքանչյուր միտք կամ ձևակերպում: Եթե առաջին տիպի երկերի թարգմանիչը կարող էր բավարարվել «երկրաչափություն» հասկացության դիմաց դնելով «սահմանաց և բաժնից պայմանք» արտահայտությունը, կամ «առողաբան խոսք» փոխարեն՝ «ճարտարութիւն՝ որ զկայանս աստեղացն նշմարէ և զսահմանսն կատարէ», իսկ «առաջնա հաստատություն» փոխարեն՝ «հանգամանք հերձելոյ զմարմինս» և այլն⁷⁵, ապա այդպես չէին կարող թարգմանվել գիտական-

փրկիսոփայական երկերը: Յուրաքանչյուր տերմինի դիմաց պետք է գտնվեր կամ ստեղծվեր համապատասխան հայկականը, իսկ բազմաթիվ հասկացությունների համարժեքների բացակայությունը դեպքում, բնականաբար, պիտի դիմեն այս առումով կատարյալ ու մշակված հունարեն լեզվի սկզբունքներին և աշխատելն նրա նմանողությամբ համապատասխան տերմիններ ստեղծել նաև հայերենում: Դա մշակութային մի մեծ հեղափոխություն էր, չափազանց նշանակալից երեւոյթ, որի դրական արդյունքները ոչ միայն յուրացվեցին ու մտան ամենօրյա գործածության մեջ, այլև հարատևեցին և այժմ էլ մեր գիտական ու փրկիսոփայական լեզվի հիմնական բառապաշարն են հանդիսանում:

Արծարծված խնդրի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում բերել մի չափազանց նշանակալից արտաքին վկայություն, որը կարող է կարևոր նշանակություն ունենալ մեր գրականության պատմության հրեանագույն շրջանների ժամանակագրական հարցերի լուծման գործում:

Կյուրեղ Աղեքսանդրացուն վերադրված, բայց իրականում Եվսեբիոս Եմեսացուն պատկանող «Արարածոց մեկնություն» մեջ⁷⁶ շոշափված է Թարգմանական ըսկզբունքներին վերաբերող մի հույժ կարևոր հարց. հեղինակը խիստ քննադատության է ենթարկում Թարգմանական այն սկզբունքը, որի համաձայն բնագրի յուրաքանչյուր բառի դիմաց պետք է դրվի Թարգ-

մանվող լեզվի համապատասխան բառը, առանց ուշադրություն դարձնելու պարբերություն մտքին: Եվսեբիոսը հատկապես հարձակվում է այս սկզբունքի մոլի ներկայացուցիչ Ակյուղասի դեմ: Ինչպես հայտնի է, հուդայական այս գործիչը մ. թ. Բ դարի կեսերին ձեռնարկել էր Աստվածաշնչի մի նոր հունարեն թարգմանություն, որը «Յոթանասնից» բնագրից տարբերվում էր մանավանդ ծայրահեղ բառացիությամբ: Ակյուղասի Թարգմանական սկզբունքի անհեթեթությունը ցույց տալու համար Եվսեբիոսը բերում է հետևյալ օրինակը: Ակյուղասի մոտ Մենդոց գրքի «Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր» նախադասությունը եբրայական բնագրի ստրկական հետևողությամբ Թարգմանված է «Ի զլիսոյն արար Աստուած զերկին և զերկիր», առանց միտ դնելու այն բանին, որ դրանով հունարենում անմտություն է գուրս դալիս և բնագրի իմաստը աղավաղվում է, զի «զլիսոյն յոյնք ոչ զի սկզբանէն դիտեն, այլ կարճ ի կարճոյ»:

Եմեսացին իրավացի կերպով նկատում է, որ «Եթէ ոք ոչ այսպիսի պայմանաւ (այսինքն՝ իր սկզբունքով) Թարգմանութեանն վարիցի՝ բազում աշխատութիւն ընթերցողացն յաճախէ, առ ի չարելոյ զմիտսն հանդիսիւն՝ զոր առաջի դնիցէ, եւ բռնադատիցէ զամենայն կարգ, որ անդ կայցէ՝ յայլ միտս, զոր ոչ եւ բանին իսկ յանձն առնուցուն»⁷⁷:

Թարգմանական այս երկու իրարամերժ սկզբունքները, անշուշտ գոյություն են ունեցել նաև Հայաստա-

նում, ուստի չպետք է բացառել, որ հունաբան թարգմանությունները կարող էին համագոյակցել եթե ոչ ոսկեդարյան, ապա գոնե այսպես կոչված արծաթեդարյան գրական հուշարձանների հետ: Հետևաբար պարտադիր է, որ հունաբան դպրոցը մեխանիկորեն հաջորդեր հայ գրականության այն շրջանին, որը հետազոտողների կողմից սահմանափակվում է 450-572 թվականներով:

Ինչպես բազմաթիվ փաստերով աշխատեցինք ցույց տալ, Եղիշեն ծանոթ է եղել հունաբան դպրոցի թարգմանություններին, սակայն իր ոճով ու շարադրանդանակով նա հունաբան հեղինակ է, այլ ավելի լայն կապերով առնչվում է «Արծաթեդարյան» կոչվող շրջանում արտադրված երկերի լեզվական սկզբունքներին: Սրանից հետևում է արդյոք, որ այդ հակասության լուծման միակ ճանապարհը, ինչպես կարծում է Ն. Ակինյանը, Եղիշենին է դարի հեղինակ համարելու մեջ է: Բնավ երբեք: Պատկանելով հեղինակների այն խմբին, որոնք հետևել են Մեսրոպի հիմնած դպրոցին ու գրական ավանդույթներին, Եղիշեն իր երկերում օգտագործել է նաև տերմիններ, որոնք ստեղծվել էին հունաբան դպրոցի կողմից, և որոնց համարժեքները «Ռսկեդարյան» հայերենի բառարանում բացակայում էին:

Այսպիսով, Եղիշեն իր «Արարածոց մեկնութեան» մեջ օգտագործել է ինչպես ոսկեդարյան, այնպես էլ հունաբան դպրոցի առաջին շրջանի մի շարք թարգմանական հուշարձաններ: Սրանից հետևում է, որ հունա-

բան և «Հայկաբան» դպրոցները, ոչ թե հաջորդել են իրար՝ որպես միևնույն գրականության դարգացման տարբեր շրջաններ, այլ ավելի վաղ ժամանակներից քան ենթադրվել է, գոյություն են ունեցել կողք կողքի՝ որպես միևնույն գրականության գրական ժանրերի և ընթերցող շրջանների պահանջներից բխող լեզվական ու ոճական տարբեր ուղղություններ:

Եղել են ժամանակներ, երբ այս կամ այն խմբավորումը որդեգրելով հիշյալ դպրոցներից որևէ մեկի ավանդույթներն ու առանձնահատկությունները, հակադրվել է մրցակից խմբավորման ուղղությանը, սակայն այդ դպրոցներից յուրաքանչյուրի արտադրանքը յուրացվել ու օգտագործվել է հայ մատենագրական շրջանների կողմից՝ անկախ կուսակցական պատկանելությունից ու հակադիր շահերի:

Այդ դպրոցները սկսած է դարից ձուլվելով միմյանց, իրենց առանձնահատկությունների դրական փոխադրեցություններով, հիմք են ծառայել այն լեզվի ստեղծմանը, որը հարատևել է որպես հայոց տիրապետող գրական լեզու մինչև ԺԲ դար (միջին հայերենի ծնունդը) և նրանից էլ հետո, մինչև արդյան աշխարհարարի հաղթանակը:

**ԵԶՐԵՆԻ ԱՐԱՐԱԾՈՅ ՄԵԿԼՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵՔԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱ
ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

1. «Արարածոց մեկնության» արժեքը.

Հին Կտակարանի Մենդոց գրքի, և Հատկապես նրա առաջին երեք գլուխների (Վեցօրեայ արարչութեան), մեկնությունները միջնադարում կատարում էին գիտական Հանրագիտարանների դեր, որոնց ատաղձը Հանգիստանում էր քրիստոնեական աստվածաբանությունը և անտիկ գիտությունն ու փիլիսոփայությունը:

Այդ տիպի մեկնություններն ընդհանուր առմամբ նպատակ ունեին ներկայացնելու աշխարհի ստեղծագործման եկեղեցու կողմից ընդունված պատկերացումը, որը հակադրվելով հունական մտածողների աշխարհայեցողությանը, պետք է Հաստատեր Աստվածաշնչի ճշմարտությունը և միևնույն ժամանակ ցույց տար Աստծու՝ որպես արարչի իմաստությունն ու մեծահոգությունը:

Այդպիսի մեկնություններում շոշափվում էին բազմաթիվ հարցեր երկնքի և երկրի կառուցվածքի, երկնային մարմինների հատկությունների, օդերևույթաբանական երևույթների, մոլորակների, բույսերի,

կենդանական աշխարհի և մարդու վերաբերյալ: Այսպիսով, առանձին գիտական բնագավառների բացակայության պայմաններում, այդ գրքի մեկնությունները կոչված էին բավարարելու ընթերցող շրջանների ծավալը բնագիտության, տիեզերագիտության, կենդանաբանության, բուսաբանության և այլ գիտությունների վճով:

Մեծ մասամբ գրված լինելով գեղարվեստորեն և բարձր ոճով, նրանք բավարարում էին նաև ընթերցողների գեղագիտական պահանջները, ուստի Հասկանալի է, թե ինչու միջնադարում Համարյա բոլոր նըշանավոր եկեղեցական Հայրերը անգրագարձել են Մընընդոց գրքին, նրան նվիրելով բազմաթիվ արժեքավոր մեկնություններ:

Միայն Հայ գրականության մեջ, մի կողմ թողած քաղաքական բնույթի երկերը, բացի քննարկվող աշխատությունից, գոյություն են ունեցել նաև Մենդոց գրքին նվիրված հետևյալ թարգմանական և ինքնուրույն մեկնությունները.

ա) Փիլոն Եբրայեցու (Ա դար).

բ) Եվսեբիոս Եմեսացու (Դ դար).

գ) Եփրեմ Ասորու (Դ դար).

դ) Եպիփան Կիպրացու (Դ դար. Հասել է մի չնչին մասը).

ե) Բարսեղ Կեսարացու (Դ դար).

զ) Հովհան Ոսկեբերանի (Դ-Ե դդ.).

է) Գեորգ Պիսիդեսի (Ե դար).

ը) Ստեփանոս Սյունեցու (Ը դար)։

թ) Տիրանի (Ժ դար) ¹։

ժ) Բարդուղիմեոս Մարաղացու (ԺԴ դար) ²։

ժա) Հակոբ կաթողիկոսի ³։

ժբ) Կուրնելիոսի ⁴ և այլն։

Այս պարզ թվարկումն անգամ ցույց է տալիս, որ գիտական հարցեր շոշափող նման երկերը մեծ պահանջարկ ունեին Հայաստանում։

Ե դարում, երբ Հայ ուսանողները ժամանակի մշակութային խոշոր կենտրոններում աստվածաբանական գիտություններին զուգընթաց ուսանում էին նաև հունական անտիկ գիտությունն ու փիլիսոփայությունը, երբ բուն Հայաստանում առկա էին Պլատոնի ու Արիստոտելի գաղափարները յուրացնելու կարող մտավոր ուժեր, հասկանալի է, որ Մենդոց գրքի մեկնությունների միջնադարին հատուկ կրոնա-աստվածաբանական ընդթը որոշ չափով պետք է տեղի տար գիտափիլիսոփայական կողմին։

Եղիշեն գրում էր ընթերցող այնպիսի շրջանների համար, որոնց՝ գիտությունն ու փիլիսոփայությունն անհրաժեշտ էին ինչպես զրադաշտականության, այնպես էլ ժողովրդի միասնական ուժերը ջլատող այլևայլ հերձվածների դեմ մղվող մարտերում։ Այդ շրջանները Աստվածաշնչի ամենանշանավոր գրքերի կարևորագույն մեկնությունների առկա թարգմանություններով արդեն Ե դարի առաջին կեսին ունեին անհրաժեշտ քանակությամբ ու որակի երկեր՝ ըմբռնելու և տարածելու

համար երկրի զինական ու մտավոր ուժերի հավաքագրման նպատակին ծառայող քրիստոնեությունը։

Նրանք ծարավի էին գիտական ու փիլիսոփայական երկերի, և ահա այդ ծարավին կոչված էր մասամբ հագուրդ տալու Եղիշեի Արարածոց մեկնությունը՝ մի աշխատություն, որն ինչպես տեսանք, ամփոփում էր ոչ միայն և ոչ այնքան ժամանակի եկեղեցական հայրերի գաղափարներն ու տեսակետները, այլև անտիկ գիտության ու փիլիսոփայության նվաճումները, իհարկե միայն այն չափով, որքան հնարավորություն էր տալիս նորալատնականության գաղափարական ազդեցության տակ գտնվող հեղինակի, ազգային-ազատագրական պատերազմում սրով և գրչով մարտնչող մարտիկի, բայց միևնույն ժամանակ Հայ եկեղեցու վարդապետ-գործչի աշխարհայացքը։

Եղիշեի մեկնությունն անկասկած պետք է այլևայլ գիտությունների պատմությունն ուսումնասիրող մասնագետների կողմից առաջիկայում ենթարկվի մանրակրկիտ հետախուզման և գնահատվի ըստ արժանվույն։ Մենք միայն ընդհանուր պատկերացում տալու նպատակով ցանկանում ենք նախնական քննության ենթարկել մեկնության մեջ տարբեր գիտությունների գրծով կարևոր թվացող մի քանի հատվածներ։

Սակայն նախքան Եղիշեի աշխատության գիտական արժանիքների բացահայտմանն անցնելը, փորձենք պարզել, թե արդյոք նա իր փիլիսոփայական հայացքներով եկեղեցական-կրոնական աշխարհայեցո-

դուլթյան սահմաններում է դեգերում, թե՞ յուրացնելով Պլատոնի, Փիլոն Եբրայեցու, Հերմեսի և այլոց գաղափարները, մերձենում է իր դարի ամենաառաջավոր մտածողներին՝ նորապլատոնականներին:

Այլևայլ առիթներով մեր կողմից մեջբերված գաղափարն հատվածներ ինքնին վկայում են Եղիշեի՝ նորապլատոնական փիլիսոփայական ուղղությանը հարող մատենագիր լինելու մասին: Ինչպես նորապլատոնականության հիմնադիր Պլոտինի, այնպես էլ Եղիշեի փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա մեծ ազդեցություն են գործել Պլատոնի, ստոյիկյան դպրոցի, հուդայականության ու գնոստիկականության ներկայացուցիչների հայացքները: Պլոտինի ուսմունքը հանդուժ է հետևյալին. «Աստված՝ ամեն էություն հիմքը, պետք է ավելի բարձր լինի, քան ամենայն մտածողություն և էություն. նրանից են ելնում աստիճանական կարգավորությամբ բոլոր էությունները և բոլորի մեջ հոգին է, որ առաջնակարգ դեր է կատարում, մարմինը հոգու արարածն է, իսկ նյութը միայն պակասություն է: Այսպիսով տարբերություն է գրվում գերբնական գաղափարների աշխարհի և զգայական աշխարհի մեջ: Որովհետև նյութը չար է և պակասություն, այդ պատճառով տեսանելի աշխարհում նյութի հետ միացած հոգիները անհրաժեշտաբար ձգտում են աստիճան առ աստիճան ազատվելով նյութից, մոտենալ կրկին Աստծուն, որ բացարձակ աննյութ հոգի է: Այդ նպատակին հասնելու համար, հոգեկան ուժերը պիտի միանան հա-

յեցողության մեջ և սպասեն, մինչև գոյության նախնական հիմունքը հայտնագործե իրեն հոգու մեջ: Միստիքական հափշտակության մեջ է գտնում ճգնությունը իր դրական կատարելությունը: Հրճվանքով տեղեկանում է հոգին, որ նախասկզբի հետ միանալով, կրկին Աստված է դարձել և բարձր աշխարհի բոլոր հասություններից ու գիտությունից»⁵:

Նույն աշխարհում բունման տարրերն ամենուրեք հանդիպում են նաև Եղիշեի ինչպես մեր կողմից քննարկվող, այնպես էլ մյուս աշխատություններում: Այսպես, օրինակ. «Անմարմին եւ անհատական բնութիւն է Աստուած, եւ յամենայնի բաւական...» (Ա, էջ 6ա), «Աստուած յինքեան է՝ չիք նմա տեղի... աներբ եւ անժամանակ է... ոչ ոք է գիտաւղ զգիարդն եւ զորպէսն Աստուծոյ» (Ա, էջ 6բ), «Զնորա սահման լինելութեան ոչ ոք գիտէ»⁶ և այլն:

Ավելի բնորոշ է Եղիշեի հետևյալ միտքը, ըստ որի՝ բոլոր էություններն աստիճանական կարգավորությամբ ծագում են Աստծուց, լինելով հոգու այլևայլ կերպափոխություններ. «Հոգիք հրեշտակաց,՝ դրում է նա,՝ պարզ բնութիւն, անմարմին, անյաւղ, անորակ, անքանակ, անձն կատարեալ, եւ կատարելութիւն անձին ոչ յումեքէ, այլ ինքնակատար էութիւն, կատարեալ գոյացութիւն: Իսկ հոգիք մարդկան՝ գոյացութիւն պարզ, էութիւն հստակ, սուրբ, մաքուր, իմացական բրնութիւն, ձեւ սկզբնատպին... անմահ տեւողութիւն... անհատ զաւրութիւն...»⁷, կամ՝ «... Մաւտաւոր Աս-

տուծոյ բնութեանն, Հրեշտականման և ի նոյն էութե-
նէ այլ Հոգի միայն...»⁸ և այլն:

«Աստուծոյ բնութեանը մաւտաւոր» մարդկային
այդ Հոգին ժամանակավորապես կապվում է «ընդ ա-
նարգ նիւթոյս»⁹, որ է Հուր, ջուր, օդ, Հող, մինչդեռ Հո-
գին ստեղծված է Հրի, Հողմի և լույսի միացութեամբ:
Հոգու համար ծանր ու անտանելի է մարմնի Հետ
«տնկեցութիւնը», Հոգին «հանապազաթեւի թեթեւու-
թեամբ» ձգտում է դեպի վեր՝ դեպի սկզբնատիպը, իսկ
մարմինը վայրաբեր ծանրութեամբ՝ «մշտաշարժ երկ-
րասողութեամբ» հակվում է ներքև՝ դեպի երկիր. «Ա-
պականացուն աւ անապականն ոչ կարեն կալ առ միմ-
եանս՝ իբր զգինի եւ զմրուրն, - գրում է Եղիշեն, - ջա-
նայ ելանել մրուր ի վերայ գինւոյ, շահէ եւ փքայ եւ ի
հարկէ իջանէ ներքոյ» (Ա, էջ 68բ):

Սկզբնատիպին՝ Աստուծոն մերձենալու և «վերին Ե-
րուսաղեմի» հաճույքները վայելելու համար մարդն,
ըստ Եղիշեի, միստիքական հափշտակութեամբ, ճգնու-
թեամբ պետք է հասնի բարոյական կատարելութեան:
Մարդու կատարյալ, աստվածային ապրելակերպը նկա-
րագրված է նրա «Բան խրատու յաղագս միանձանց»
աշխատութեան մեջ¹⁰: Ըստ նրա՝ կատարյալ մարդկա-
յին տիպարները նրանք են, ովքեր «... են ի մարմնի եւ
կամօք հոտուն զանձինս իւրեանց յաստուածապաշտու-
թիւն, անզատին ի տղայութենէ խոկան՝ կրթին ի վըշ-
տամբերութիւն, հեռանան ի հայրենի բնակութենէն, եւ
վարին յանապատ յանշէն երկիր ...»¹¹:

Ճգնութեամբ, պահքով, աղոթքներով սպանելով
թանձր ու ապականացու մարմնի պահանջները, Հոգին
երազի միջոցով և հայեցողութեամբ կարողանում է
կապվել սկզբնատիպի հետ, զգալ իրեն ոչ «ի մարմնի,
այլ յերկինս», որովհետեւ մարդու միաբը, որ Հոգու
մասն է կազմում, ի վիճակի է տեսնելու անտեսանելին
և լսելու անլսելին. «Զաներեւոյթսն, - գրում է նա, -
միտք միայն իմանան առանց աչաց և ականջաց...,
հաստատ տեսութիւն մտացն է քան զաչացն» (Ա, էջ
26բ):

Մարմինն ու Հոգին այդպես շարունակում են ի-
րենց համակեցութիւնը, մինչև որ Հոգին ազատվելով
իր թշնամի «տնկեցից», վերանում է դեպի աստվածա-
յին թագավորութիւն, ուր չկան հակասութիւններ,
այլ տիրում է համաշարիութեան և ներդաշնակութիւն:

Ահա հիմնական գծերով այն հայացքները, որոն-
ցով Եղիշեն անմիջաբար կապվում է նորալատոնական
փիլիսոփայութեան հետ¹²:

Ուստի Եղիշեի մեկնութեան՝ որպէս տրեգիքագիտա-
կան ու բնագիտական հարուստ նյութեր պարունակող
մի երկի գնահատութեան հարցում միշտ աչքի առաջ
պետք է ունենալ այն հանգամանքը, որ նա ականառու և
անժխտելի կապերով առնչվում է նորալատոնական
փիլիսոփայական գիտական շրջանների հետ և նրանց
գինանոցից է փոխ առնում իր գիտական հայացքները:
Թե որքանով նա միևնույն ժամանակ ինքնուրույն մը-
տածող ու գիտնական է, այս հարցի լուծումը թողնում

ենք ուրիշ հետազոտողների, սակայն այստեղ պարտք ենք համարում նշել, որ հաճախ նա գիտական տեսակետից անդրադառնում է այնպիսի խնդիրների, որոնց քննարկումից հրաժարվում է, օրինակ, Բարսեղ Կեսարացու նման հանրահայտ ու հեղինակավոր մի գիտնական:

Իսկ այժմ տեսնենք, թե Եղիշեն հիմնականում ինչ գիտական հարցեր է շոշափում իր «Արարածոց մեկնութեան» մեջ:

Տիեզերքի հիմքում, ըստ նրա, ընկած են չորս տարրեր՝ հող, ջուր, օդ, հուր, «չորք տարր նիւթեղէն», որ ի սկզբանէ Աստված ստեղծել է արարչագործության համար¹³: Այն զեպքերում, երբ Աստվածաշնչում խոսվում է տարրերից միայն մեկի՝ որպես որևէ կենդանու կամ երևույթի առաջացման սկզբնանյութի մասին, զորությամբ պետք է հասկանալ, որ մյուս տարրերը նույնպես մասնակցել են դրան. «Այլ և թեպէտ երբեմն երկրի, եւ արդ ջրոյ հրաճայէ բղխել, այլ երեքին եւս տարերքն լուան եւ ի չորից դոյացան ամենայն կենդանիք» (Ա, էջ 17ա):

Չորս տարրերից յուրաքանչյուրին առնչվում են այլևայլ հատկություններ և կեցության ձևեր, որոնք այդ տարրերի նկատմամբ «խզանք» են: Այսպես, օրինակ, լույսը, որ ըստ Ծննդոց գրքի Աստված ստեղծեց ասելով՝ «Եղիցի լոյս», Եղիշեի կարծիքով նոր արարչություն չէ «արտաքոյ չորից տարերցն, այլ խզած ի հրեղէն երկնից, զյատակութիւն լուսոյն յայրեցողութե-

նէն ի վայր կորզելով... քանզի լոյսն ծնունդ է հրոյ, եւ այլ է ծնունդն եւ այլ է ծնաւդն» (Ա, էջ 8բ)¹⁴:

Նույնպես և մյուս երեք տարրերից յուրաքանչյուրն ունի իր «խզած»-ները. «այլ է խստութիւն հողմոյ եւ այլ է սննդական աւդ, այլ է գիճութիւն ջրոյ, ուստի ծնունդ լինի, եւ այլ է անուշութիւն նորա, որ փոփոխի ի գոյնս, ի համս եւ ի հոտս, այլ խոշորութիւն հողոյ՝ քարուտն եւ այլ քրքիրն եւ արգաւանդն ի բերս բուսոց» (Ա, էջ 8բ)¹⁵:

Այդ չորս սկզբնական տարրերն առնչվելով միմյանց՝ լրացնում են մեկը մյուսին և ստեղծում բնության բազմազան երևույթները, առարկաներն ու իրերը, այսպես. «Առանց հողոյ ոչ լինի թանձրութիւն շաւշափելի, եւ առանց ջրոյ՝ կալումն եւ ըմբռնումն, եւ ոչ առանց աւդոյ՝ շարժութիւն, եւ առանց հրոյ՝ երևուումն» (Ա, էջ 6ա):

Տարրերից թեթևագույնը հուրն է, ծանրագույնը՝ երկիրը (հողը), ուստի և «ծանր գոլով (երկիր) զներքին վայրն էառ, եւ ջուր՝ թեթեւ քան զերկիր և ծանր քան զաւդ ի վերոյ հողոյ եւ ներքոյ աւդոյ գետեղեցաւ, եւ աւդ ծանր գոլով քան զհուր, զի զիջութիւն ջրոյ գոյ ի նմա՝ ի ներքոյ հրոյն կայացաւ» (Ա, էջ 6ա):

Այս օրինաչափությամբ էլ, ըստ Եղիշեի, տիեզերքն ստացել է իր չրջանաձև կառուցվածքը. երկիրը դտնըվում է տիեզերքի կենտրոնում, ջրի կեսը պատում է այն՝ առաջացնելով ծովեր ու գետեր, իսկ մյուս կեսը Աստված բարձրացնելով օդից վեր ստեղծել է ջրեղեն

կամարը՝ Հրեղեն երկնի «կիզողական հրի» այրեցողությունից երկիրը պահպանելու, ինչպես և երկրի ծանրությունը չավելացնելու նպատակով:

Ի՞նչպես է, որ Ղրեղեն կամարի Ղրեբը գտնվելով օդի և Հրեղեն երկնի միջև, չեն թափվում ցած՝ դեպի երկիր. էջ՞ որ դա հակասում է բնական օրենքներին, որոնց համաձայն «թեթևն ի վեր եւ ծանրն ի վայր» պետք է լիներ: Ըստ Եղիշեի դա արված է հենց այն նրպատակով, որ որևէ մեկը չկարողանա ասել՝ «թէ բնութեանն զհետ գնաց Արարիչն»¹⁶, «Եւ էջ գարմանք, գրում է նա, - յորժամ տեսանեմք Ղուրս յամպս կապեալ» (Ա, էջ 10ա):

Երկիրը չընկալուած է օդով, որն իր հերթին բաղկացած է մի շարք շերտերից. դրանցից վերիններն են՝ Ործուտը (ործալ բայից - սիրտ խառնել) և Մղձկուտը (=խեղդիչ), «ուր ոչ կարեն ընթանալ թռչունք, զի այրին թեւաթափեալք եւ անկանին յերկիր»: Իսկ Ի՞նչպես երկիրը, ծանր լինելով օդից, անշարժ կանգնած է մնում նրա կենտրոնում: Այս հարցը հուշել է բոլոր տիեզերագետներին ու եկեղեցական հայրերին, և հետաքրքիր է, որ Բարսեղ Կեսարացին հրաժարվել է նրան պատասխանելուց. «Եւ դարձեալ տամ խրատ հաւանութեան, գրում է նա, - զի մի անկանիցիմք յայսպիսի աշխատութիւն, մտանել ի խնդիր եւ ասել, թէ յէ՞որ վերայ կայցէ երկիրս, կամ յէ՞որ վերայ հաստատեալ եղեալ իցեն զհիմունս նորա... Զեռն Աստուծոյ միայն բաւական է ունել հաստատուն անշարժ գամենայն բնութիւնս աշխար-

հի»¹⁷:

Մինչդեռ Եղիշեն տալիս է նաև այս հարցի գիտական պատասխանը. «Իւր ծանրութիւն բնական, գրում է նա, - չթողու զինքն ի վեր, եւ ի ներքուստ հողմոյն բռնութիւնն՝ ի վայր» (Ա, էջ 6ա-6բ):

Հրային կամարից ցած գտնվում են մոլորակները, որոնց անունները Եղիշեի մեկնության մեջ¹⁸ տարբերվում են հետագայում, հավանաբար Անանիա Շիրակացու կողմից մեր մատենագրության մեջ մտցված անուններից¹⁹: Դրանք են.

Լուծ = (Շիր. Փայլածու) = Մերկուրի

Եղջերի = (Շիր. Լուսաբեր) = Վեներա

Արտախոյր = (Շիր. Լուսնթաղ) = Յուպիտեր

Ծպաւոր = (Շիր. Հրատ) = Մարս

Փառազնոտ = (Շիր. Երեւակ) = Սատուրն:

Լուսինն իր լույսը ստանում է արեգակից. «Զի տայ (արեգակն զլոյսն իւր ի լուսին) մինչ լնու զպահարանս, եւ առնու մինչ հանէ գամենայն» (Ա, էջ 78բ), կամ՝ «Այլ զի՞ ասէ զարեգակն մեծ քան զլուսին, զի մեծ է, որ տայ քան որ առնու, զի տայ լոյս լուսնի արեգակն, մինչև լնու զնա եւ հանէ՝ մինչեւ սպառէ» (Ա, էջ 15ա): Արեգակը գտնվում է յոթերորդ «պարունակ»-ում, այսինքն՝ երկնքի յոթերորդ շրջանի մեջ, Հրային կամարից ցած:

Եղիշեն ուշագրավ բացատրություն է տալիս արեգակի և լուսնի խաճարումներին. երբ լուսինը և արեգակը գտնվում են երկնքի տարբեր կիսագնդերում (զի-

ցուք՝ լուսինը ներքին, իսկ արեգակը՝ վերին) և միևնույն տրամագծի վրա, ապա արեգակը չի կարողանում իր լույսը հասցնել լուսնին, որից և նա խավարում է: Իսկ երբ և՛ արեգակը, և՛ լուսինը գտնվում են վերին կիսագնդում, լուսնին իրենից վեր գտնվող արեգակի և երկրի միջին տեղը ընկնելով, արգելակում է նրա ճառագայթները և խավարման պատրանք ստեղծում: Ահա այդ հետաքրքիր հատվածը. «Լուսնին ի լրման, կամ ի միջոցի, կամ մերձ ի հինն, եւ դիպի լուսնին ի վերին կիսագնդին եւ արեգակն ի ներքին կիսագնդին՝ կշիռ միմեանց ի միջի տրամագծին, ի միում ժամու, ոչ բաւէ արեգակն ըստ սովորութեանն ձգել լոյս յանիւ լուսնին (եւ) ընդ հիւսւսաին կողմն խաւարի լուսին: Իսկ յորժամ երկոքին իցեն ի վերինում կիսագնդին եւ զոյգ դիպին, զի արեգակն վերո է քան զլուսին, ի դէմ անկեալ արեգականն լուսին թուի կորընչիլ արեգակն...»²⁰:

Յոթ մոլորակներից վեր, անմիջապես հրային երկնին կից, ըստ Եղիշեի, գտնվում են յոթ անմոլար աստղեր, որոնք «են ցուրտք, միջնորդ են արեգական եւ արփոյ. եւ զանչէջ տոչորումն արփոյն իւրեանց սաստիկ ցրտովն թարեխառնութիւն առնելով արեգականն մատուցանեն, եւ արեգակն առեալ՝ հեղու աւղն...»²¹:

Այսպիսով, ըստ Եղիշեի, ինչպես բոլոր մոլորակները, այնպես էլ անմոլար աստղերը սեփական լույսից զուրկ են և լույսը միջնորդաբար ստանում են հրային կամարից, որը և կոչվում է արփի:

Արեգակը գիշերը ընթանում է «յայնկոյս լերանցն

հիւսիսոյ» (Ա, էջ 9ա)՝ դեպի Օվկիանոսի խորքը, որի պատճառով էլ ցող է ցանում երկրի վրա²²:

Հետաքրքիր է նաև Եղիշեի իմացությունը վայր բնկնող աստղերի մասին. արեգակը իր գիշերային արագընթաց արշավանքով բախվում է օդի պարունակներին ու ճեղքեր առաջացնում, այդ ճեղքերից «եռան փայլատակունք առ ի ցրելոյ ուժգնութեան աւղոյն եւ վաղվաղակի ծածկի, եւ հիացեալ՝ աստեղաց թափումն ասեն, որ ոչ է իսկ»²³:

Արեգակն, ըստ Եղիշեի, բացի ամենօրյա արևելքից-արևմուտք շրջադայությունից, ըստ երևույթին տարին մեկ անգամ, շարժվում է նաև դեպի հարավ, ապա կրկին հյուսիս. այս շարժման արդյունք են տարվա չորս եղանակները, պտուղների համը, մարդկանց և կենդանիների մաշկի գույնը և այլն. «Թորժամ ի հարաւ շարժի արեգակն սառնառոյց պաղին կողմանք հիւսւսոյ, եւ ձմեռնային ցրտութիւնն աղղէ ի միջոցս աշխարհի, եւ աշխարհն Հնդկաց ամառնանայ ի պտղահասութիւն, քանզի ծով հրեղէն է հարաւ վասն բնական ջերմութեանն, եւ արեգակն եւս տայ նմա օգնութիւն: Եւ զմեր բքախառն ձմեռնն առնէ նոցա քաջախառնութիւն, եւ պտուղք աշխարհին որ բղխեն որիչ են ի պտոյ մերոյ աշխարհիս՝ համով եւ հոտով եւ գունով. եւ եւղք են խունկք յոլովազոյն ունին զմասունս հրոյ, եւ սեաւ մաղձ յոլով է ի մարդիկն, վասն որոյ լինին իրեւ զարջասպնաներկս. եւ ոչխարք՝ անբրդաբերք, ուղտք եւ գոմեշք՝ մերկք եւ լերկք, բայց քանզի հրուտք են, առող-

շարերք եւ երկարակեացք են բնակիչքն: Եւ մեզ դարձեալ անտի բանին դրուենք գարնայնոյն, իբրեւ արեգակն ի յայս կոյս (Ա - սայլգ կոյս) կամի չուել հրեղէն իւրովք զօրաւքն. եւ հիւսիսայինն ընդդէմ նորա գումարեալ իբր նիգակաւ հարկանէ, եւ անդրէն փախչի, եւ նորա զհետ մտեալ առ սակաւ սակաւ մաշելով զնա տանի ի տեղի իւր» (Ա, էջ 14բ):

Լուսնի շարժումը, ինչպես և փուլերը, ըստ Եղիշեի, նույնպես մեծ ազդեցութիւն են գործում բնության ու կենդանական աշխարհի վրա. «... Ի լնուլն (լուսնի) լընուեն ծովք եւ կենդանիք՝ ուղղով, եւ ծառք՝ կեղեւով, եւ ի թերանալն թերանան: Եւ յիրաւի ասացաւ եւ նա մեծ ընդ արեգական, յորժամ այսքան փոփոխմունք հետեւին նմա... ուստի գոյանան համք եւ հոտք յառողջութիւն...: Նոյնպէս եւ դասք աստեղաց գործակից լինին արեգական եւ լուսնի, ոչ միայն զարդարելով գերկին ի նոցա զատչիլն, ի ձեռն մոլորակաց եւ անմոլարից աստեղաց, հանդէտ նոցա աւգնականութիւն մատուցանեն արեգական հոլովման եւ լուսնի, բարեխառնութիւնս առնելով, կարի ցրտութեան եւ ջերմութեան» (Ա, էջ 14բ-15ա):

Զնայած արարչագործութեան բոլոր օրերի վերաբերյալ հատմաներ չեն պահպանվիլ մեզ հասած աղբյուրներում, և պահպանված հատմաներից շատերն էլ հասկնալիս այդ մասերում դժբախտաբար թերի ու ընդհատ են, այնուամենայնիւ կարելի է մի ամփոփ գաղափար ստանալ նաև Եղիշեի կենդանաբանական ու

բնագիտական հայացքների մասին:

Ինչպես ողջ տիեզերքն ու մարդը, այնպես էլ բոլոր կենդանիներն ու բույսերը, ըստ Եղիշեի, առաջացել են նույն չորս տարրերի այլևայլ քանակային զուգորդում-թյուններից, որոնցում քանակապես գերիշխում է ջուրը. «Ջուր է սերմ կենդանւոյ, գրում է Եղիշեն, եւ ջրով ծնանի եւ սնանի հատ ցորենոյ» (Ա, էջ 76ա): Ծննդոց գրքի Ա, 21 համարի մեկնութեան մեջ Եղիշեն գրում է²⁴. «Ոչ ասաց անբան շունչ՝ հանին ջուրքն, քանզի եւ բանականաց մարմինք եւս ի ջրոյ գոյացան: Զի զառաջինն ի տարերացս արարան կենդանիք եւ յետոյ ի ծնաւդաց, այլ միջնորդ բոլորին ջուրն է, որպէս սերմ ի ծնաւդաց հատեալ ջուր է...»²⁵: Ի չորից գոյացան ամենայն կենդանիք, որպէս ռսկերքն՝ զքարաւտն, ջիղքն եւ նեարդքն եւ արիւն՝ զհուր, շունչ եւ շարժումն՝ զօդն ունի, թանձրութիւն՝ զջուրն: Այսոքիկ միապէս գտանին ջրայնոց եւ ցամաքայնոց» (Ա, էջ 17ա):

Նույն չորս տարրերի տարբեր քանակային կապակցութիւններով են բացատրվում նաև սեռերը. «Օդ եւ հուր աւելի է յարուէն, գրում է Եղիշեն, ջուր եւ երկիր յոլով է յէդն, հուրն մածուցանէ, ջուրն եւ հոդն մածնուն, օդն սնուցանէ, չորքն միաբանեալ լինին մի գութիւն կենդանոյ» (Ա, էջ 44բ):

Մարդու և կենդանիների կազմութիւնն ու հոգեկանը, ըստ Եղիշեի, բնորոշվում են մի շարք ընդհանուր գծերով. կենդանիները նույնպես ունեն «զցաւելին եւ

զարչարելին» (Ա, էջ 44բ), «չեն անմասն ի բանական
Հնարից, բնականաբար ունելով առ իւրեանց փրկու-
թիւնն եւ ազտակարն» (Ա, էջ 28ա), «արեամբ ազգա-
կից են մարդ եւ անասուն» (Ա, էջ 44բ) և այլն:

Ինչպես մարդու, այնպես էլ կենդանու սաղմը
ծնողի արգանդում նույն բնախոսական պայմաննե-
րում է զարգանում. «... ի կենդանութիւն եւ յաճումն
եւ ի սնունդ, եւ մի է առ անասունն եւ առ մարդ» (Ա,
էջ 44բ):

Մարդու և կենդանիների միակ տարբերությունը
մարդկային հոգին է, որը, ինչպես արդեն տեսանք, ըստ
Եղիշեի, ազգակից է Աստծու էությանը, իսկ մյուս կող-
մերով մարդը նույն կենդանին է. այս միտքը Հատկա-
պես շեշտված ենք գտնում Հետեյալ Հատվածում. «Ա-
մենայն եղականք երկու են, անապական եւ ապակա-
նացու, եւ երկիր մայր է բոլորին, որ անանցութեամբն
զանապականութիւն ունի: Եւ ծնունդք նորա յարգոյք
անհատութեամբ եւ ինքն՝ յաւիտենական: Եւ ողորմու-
թեամբ մարդ մասն գոյով սմա՝ մարմնով փոփոխի եւ
շարժի, եւ հոգին կայ եւ մնայ որպէս էն...» (Ա, էջ 61բ):

Ինչպես վերը նշվեց, ըստ Եղիշեի, ջուրն է կենդա-
նական աշխարհի հիմնական տարրը, ջուրն է նաև բու-
սականության գոյացուցիչն ու կեցուցիչը. «Ծառ ո-
ռոգեալ յարմատ, — գրում է նա, — եւ ջրով եռայ ի վեր
յոստսն եւ ի ծայրսն, շարժելով գտունկն ի տերեւ, ի
ծաղիկ եւ ի պտուղ. դոյն, ի հոտ, ի համ: Եւ թէ չեռայ ի
վեր ջուրն՝ գոսանայ եւ չորանայ ի յայրումն հրոյ...»

(Ա, էջ 51բ):

Եղիշեն լավատեղյակ է նաև բույսերի բուժիչ հատ-
կություններին: Նա շատ լավ գիտե, որ «Ոչ ամենայն
բանջար ուտելի է, որպէս ցմախ, բանգ, շաղինդը եւ
այլք, որք դառինք եւ ոմանք մահաբերք իսկ են» (Ա, էջ
44բ), «Ոչ է ուտելի (մանրագոր), այլ հոտոտելի, եւ բը-
ժիշկք քուն ածեն հիւանդաց» (Ա, էջ 68ա), «Իհտին՝
դեղ, որ ի Գաղաադ լինի ի ծաղիկս եւ յարմատս, կամ
ամբրաւ, որպէս ասեն, կամ շաքար, որ ի մեղրէ եւ ի
կորեկանէ կազմեցաւ» (Ա, էջ 77ա)²⁶ և այլն:

Հետաքրքրվելով բնագիտությամբ, Եղիշեն ան-
շուշտ ծանոթ պետք է լինէր տեսական բժշկագիտու-
թյան, մարդակազմության և հարակից բնագավառնե-
րին առնչվող կարևորագույն հարցերին՝ եթե ոչ իբրև
մասնագետ, ապա բառիս լայն առումով, որպես իմաս-
տասեր: Ուստի բնականաբար նրա մեկնության մեջ
գտնում ենք թեկուզ հարևանցիորեն արտահայտված
որոշ մտքեր, որոնք կարևոր խորհրդածությունների ա-
ռիթ կարող են տալ բժշկության պատմաբաններին:

Օրինակ, թվում է, Եղիշեն ծանոթ է ժառանգա-
կանության և բնածին որոշ ընդունակությունների
գոյությանը, երբ գրում է. «Շնորհ զոր տացէ Աստուած
ումեք յարգանդէ ծնողացն սկսանի ի գոյացուցանելն
եւ ի սնունդս ստեանց կաթինն...» և այլն (Ա, էջ 92բ):
եվ կամ՝ նա՞ տեղյակ է հոգեկան կացություններին հա-
մապատասխան մարդու դեմքի արտահայտության և
գունավորման փոփոխությունների փաստին, երբ գրում

է. «Որ երկնչի՝ լսնանան երեսքն, եւ որ ամաչէ՝ գեղնի եւ շառագունի, եւ որ նախանձի՝ կապուտակի...» և այլն (Ա, էջ 67բ):

Անչափ հետաքրքիր են Արարածոց մեկնութեան մեղ հասած հատվածներէց մի քանիստում պահպանված որոշ տեքմիկներ, որոնք մասնադիտական քննարկման ենթարկվելով, կարող են լույս սփռել բժշկադիտութեան և այլ գիտութեաններէ նախնական վիճակի վրա:

Բերենք մի օրինակ. մեկնելով Ծննդոց գրքի ԺԸ, 9 համարը և դատողութեաններ անելով Սառայի ամուսնութեան մասին, Եղիշեն գրում է՝ «Ոչ դեղ, եւ ոչ արմատ, եւ ոչ դիւթող եմուտ ի խորան նորա վասն որպէս ծնութեան» (Ա, էջ 55ա): Այս փոքրիկ հատվածը ցույց է տալիս, որ Հայաստանում սովորութեան է եղել զանազան գեղերի ու արմատների գործադրութեամբ բուժել ամուսնութեանը, և բուժողի կամ մանկաբարձի գերն ստանձնողները եղել են դիւթողները, որոնք վհուկներին ու հարցուկներին նման՝ հեթանոսական պաշտամունքի սպասավորներ էին:

Ընդհանրապէս Եղիշեի մեկնութեանը լի է սնահամատութեաններին, գուշակութեաններին և հեթանոսական Համատալիքների վերաբերյալ տվյալներով: Եղիշեն մերժում է ամեն տիպի գուշակութեաններն ու սնահամատութեանները, որովհետեւ նրա համոզմամբ՝ Աստված մարդուն տվել է ինքնիշխանութուն, ազատ գործունեութեան և իր կյանքն ըստ իր Հայեցողութեան վարելու իրավունք, ուստի բոլոր տիպի երազահմայու-

թեաններն ու գուշակութեանները՝ «Ի բաց մերժեալ է յիկեղեցւոյ Քրիստոսի ըստ ճշմարտապէս գրոց, զի այս հեթանոսաց է եւ ոչ քրիստոնէից»²⁷:

Այս առումով մեզ ուշադրավ է թվում հատկապես հետևյալ հատվածը, որտեղ Եղիշեն թվարկում է մի շարք հեթանոսական մոլորութեաններ. «Ապա թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ՝ օտար խորհրդովք նշանագիրս գծել կամ մարգարէանալ առ յապայսն եւ երազահմայ լինել, ցնորել մոլորութեան երազահմայ ստութեան, ընդ անկոխելին գնալ պողոտայ անքրիստոնէաբար, եւ բնական ի մեզ կիրսն ճշմարտութեան պատմել, որ լինի այս եւ վնասել խելապատակին ընդ վայրաբանութիւն, եւ հիւանդութեամբ բազում ինչ տեսեալ խօսի անհանձարաբար, զոր եւ արեցողաց իմն թուի շրջադայութիւն լինել երկրի զինքեամբք, եւ յայլայլեալ զգայութեանն ի ջերմութեանցն զայսպիսի սովորականութիւնն ի մեզ օրինադրէ զործ ինչ լինել. կամ զայն զոր դեւքն կերպարանալ ի նմանութիւն մոլորեալ մեռելոց՝ զոր գիտակն էին ի կեանս մարդոյն, եւ զնոյն նմանեալ յայտնին ի տըրտում երեսս կամ ի զուարթս իրքնս պատուէր ինչ տալով եւ զգուշացուցանելով, որպէս թէ մեռեալն եւ սպանեալ մարմնոյ Հոգիացեալ, եւ ի միասին գտեալ»²⁸, զոր ոչ յօդուտ, այլ ի վնաս եւ ի մոլորութիւն փութացեալ լինի եւ նա զայն անուսումնաբար ճարտարութեամբ պատմէ, այն արտաքոյ է Քրիստոնէութեան»²⁹:

Իր աշխատութեան մեջ Եղիշեն քննարկել է նաև օ-

դերեութաբանական և տոմարագիտական հարցեր, որոնցից, ցավոք սրտի, միայն հատակոտորներ են պահպանվել: Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում, օրինակ, №4166 գրչագրում պահպանված 6-րդ հատվածը, որտեղ մանրամասնորեն տրված է ձմռանը որոտ չլինելու պատճառների բացատրութիւնը³⁰:

Հայոց տոմարի պատմութիւն համար ևս բացմութիվ նշանակալից տեղեկութիւններ կան Եղիշեի մոտ, որոնցից մեկում նա հայտնում է, թե «Արեգ ամիս է սկիզբն դարնան և տարւոյ» (Ա, էջ 44ա), մի այլ տեղ էլ նշելով, որ Արեգ ամիսը համապատասխանում է ասորական Նիսան, իսկ Ահեկանը՝ Իսր ամսվան և այլն (Ա, էջ 43ա):

Եղիշեի մեկնութիւն մեջ լայնորեն զործածված են նաև քերականական, թվաբանական, պատմա-սոցիալական տերմիններ ու հասկացութիւններ, որոնք, հուսով ենք, հետազայում կարժանանան մասնագետ-լեզվաբանների ուշադրութիւնը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում տալ միայն Հայկազյան բառարանից դուրս մնացած մոտ 40 բառերի ցանկը, որոնցից միայն ինը տեղ են գտել Ստ. Մալխասյանի մեծարժեք բառարանում որպէս դավառական կամ հաղվադեպ օգտագործված բառեր.

Անփոխանորդ. — «Եւ գեկոյց զաւրն վերջին զաներեկոյ եւ զանփոխանորդ» (Ա, էջ 9ա).

Անկտրելի. — «Հարթ և զուգակշիռ ընթացիւք ի վեր եւ ի խոնարհ, անկարելի եւ անհատական» (Ա,

10ա).

Անքիդոս — «Զուկն անքիդոս, որ կոչի կողամայր» (Ա, էջ 17ա).

Աղաչական — «Ուստի գեղեցկաբանութիւն եղև ի մի խոշոր լեզուէն, փափուկ հելենն... աղաչական ասորին» (Ա, էջ 48ա).

Անանցութիւն — «Երկիր... անանցութեամբն զանապականութիւն ունի» (Ա, էջ 61բ).

Անկակուղ — «Իսաւն չէ անուն անդրանկան, այլ կակնոյ կոշտի եւ անկակղոյ» (Ա, էջ 64բ).

Ադամաստեղծ — «ԶԱդամաստեղծ ձեռսն եւ գերկնապարզ բազուկսն տարածեալ» (Ա, էջ 84ա).

Ամենաշարժ — «Զաւրութիւն է Աստուած ամենաշարժ» (Ա, էջ 29բ).

Արեգականացեալ — «Իսկ մարդանալոյ տեսոն եւ այսր արեգականացեալ համատարած ծովու» (№4166, էջ 208բ).

Ափադփուն — «Ափադփուն ակն երեւակի» (№4166, էջ 208բ).

Աւադացուցեալ — «ԶՀարեթ աւադացուցեալ ի վերայ Քամայ» (№2679, էջ 215ա).

Առերկրաւոր — «Յառերկրաւոր վայր հուպ են (մոլորակք)» (№2679, էջ 215բ).

Դուրդեալ — «Յամենայն աւուր հեշտասիրութեանն աղագաւ պատրէն զմեզ, որ դուրդեալ գնամք զկնի նորայ...» (№2679, էջ 214ա).

Ժանգային — «Քաղցր (ջուր) ըմպելին է... եւ աղ-

տաղտուկ՝ ծովային եւ ժանգային» (N°2679, էջ 216ա)։

Ժանդ — «Ոչ բնութիւն ջրոյն փոփոխելով, այլ ծովային ժանգն սրբէ» (Ա, էջ 43ա)։

Խզած — «Մի կարծեսցուք նոր արարչութիւն զլոյսն... այլ խզած ի Հրեղէն երկնիցն» (Ա, էջ 8բ)։

Խեռաբարոյութիւն — «Գործէին ոչ զգործ բանականաց, այլ զիշուց խառնակութիւնս եւ զխեռաբարոյութիւնս» (Ա, էջ 87բ)։

Խառնահաւ — «Անապատասէր է (տատրակ) ի բազմաց միաբանութենէ եւս խառնահաւուցն հեռի» (N°2679, էջ 215բ)։

Մերութ — «Քան զփիղ երկայնակեաց է չէ բարի ծերութիւն» (N°2679, էջ 216ա)։

Կարակնաբոլոր — «Երկուս գունդս կարակնաբոլորս... խտացոյց, մածոյց» (Ա, էջ 14ա)։

Կարթոզ — «Յակոր... կոչի կարթոզ եւ թաթոզ զմարմնականս» (Ա, էջ 62ա)։

Կշայ — «Նօթիւ ծեփեա, որ նա ինքն է կշայ (Ա, չկա)» (Ա, էջ 41ա-41բ)։

Կողեղ — «Զօրեղն կողեղ եւ կողաւոր եւ հարստակող կոչեմք զըմբիշս» (Ա, էջ 27ա)։

Հացանաղաց — «Եւ տայր Յովսէփ... ամենայն տան հաւր իւրոյ։ Յորեան ըստ բերան հացանաղաց» (Ա, էջ 79ա)։

Ճնոռողական — «Ճնոռողական՝ Հրեղիկն, համեղական՝ հայն» (Ա, էջ 48ա)։

Ճանգար — «Սօսի, զոր ճանգար կոչեն» (Ա, էջ 68ա)։

Մարջանեալ — «Որպէս Եսովսիս թաղաւորն Երիպտոսի եւ Դարեհ մարջանացան խառնել զծովն կարմիր ընդ ծովն որ կոչի Երիպտոսի» (Ա, էջ 11բ)։

Յասակ (լույսի տեսակ) — «Զսեռն եւ զլըստակն եւ զհրաշատն հարկ յաման արեգականն» (Ա, էջ 14ա)։

Յանկակից — «Խոհականաւ յանկակից է ընդ մարմնական բանաւորս» (N°4166, էջ 209բ)։

Նառազոյն — «Քան զյոյժ բարձրագոյնսն Հնդկտասան կանգուն բարձրացաւ ջուրն, քան զնստագոյնսն ո՞րքան» (Ա, էջ 43ա)։

Նոխազեալ — «Թէ ի տիկ առնուս աւդ կամ ջուր՝ նոխազեանայ» (N°4166, էջ 209բ)։

Ործուտ — «Մինչեւ հասուցին (աշտարակն) յործուտ եւ ի մղծկուտ (Ը՝ մղծկութիւն) օդն» (Ա, էջ 47բ)։

Ջլաեալ — «Իսկ զարունն աւդն պարարի խոնաւութեամբ... ջլանա զհարստութիւն» (N°4166, էջ 209ա)։

Սանդարամետք — «Սանդարամետք նոցա, այսինքն՝ մեռեալքն» (Ա, էջ 66բ)։

Տափախօս — «Տափախօս (Ը՝ չուկի) խավարածայն՝ երիպտացին» (Ա, էջ 48ա)։

Տասնապատուիրանք — «Նշանակ Հրէական ժողովոյն, որ էառ զտասնապատուիրանսն օրինացն» (Ա, էջ 68ա)։

Փառքաւ — «Հինգ ման առնու ի սողելն իւրում, երկուսին աչաց եւ երկուսին ականջաց, հինկերորդն՝ փառքուս բանից» (Ա, էջ 31ա)։

Ավելի ուշադիր քննութեան դեպքում, կարծում

ենք, հնարավոր կլինի այս ցանկը հարստացնել մեր կողմից չնկատված մի շարք նոր բառերով:

2. Եղիշեի «Արարածոց մեկնութեան»
աղբեցութիւնը հետադաս դարերի հայ
մատենագրութեան վրա

Հասկանալի է, որ պարունակելով բազմապիսի հետաքննական հարցերի մեկնաբանութիւններ, գրված լինելով գիտական լայն պատրաստութիւն ունեցող հեղինակի կողմից, քննարկվող մեկնութիւնը չէր կարող իր խոր աղբեցութիւնը չգործել հետադաս դարերի հայ մատենագրութեան վրա:

Նյութը սպասելու ոչ մի հավակնութիւն չունենալով, նպատակահարմար ենք գտնում սույն ենթագլխում ծամանակազրական կարգով ներկայացնել մեզ հայտնի այն բոլոր նշանակալից գիտական, գեղարվեստական ու պատմական երկերը, որոնցում նկատելի են Եղիշեի Արարածոց մեկնութեան ուղղակի կամ միջնորդավորված աղբեցութեան անձխտելի հետքերը:

Եղիշեի Արարածոց մեկնութեանը ծանոթ և նրանից օգտվող հնագույն հեղինակը է՝ դարի մեծագույն գիտնական Անանիա Շիրակացին է:

Սխալ կլինի կարծել, թե Անանիա Շիրակացին իր գիտական ու իմաստասիրական անսպառ և հիմնավոր գիտութիւնը ստացել է միայն հունական միջնադարում, հույն ուսուցչից, և հունական աղբյուրների յու-

րացումով: Ընդհակառակը, ինքնակենսագրութեան մեջ նա ուղղակի հաստատում է իր անմիջական կապը հայոց գիտութեան և դպրութեան հետ. «Ես, Անանիա Շիրակունցի, գրում է նա, բաւանդակեցի զդպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեայց, եւ հմուտ եղեալ Աստուածաշունչ գրոց եւ օր ըստ օրէ լուսաւորէի զաչս մրտաց իմոց...»³¹:

Բանասիրութեան մեջ արդեն ապացուցված է նրա կողմից Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի», Փիլոնի երկերի, Արիստոտելի «Յաղագս աշխարհի» և մյուս աշխատութիւնների թարգմանութիւնների բառացի օգտագործման փաստը³²: Ստորև բերվող բնագրական գուգորդումները հիմք են տալիս վստահորեն հայտարարելու, որ Շիրակացու նշված աղբյուրների շարքը պետք է դասել նաև Եղիշեի Արարածոց մեկնութիւնը.

Անանիա Շիրակացի «Տիեզերահայրութեան»
հատուածք յԱրարածոց
մեկնութեան և տոմար»³³ մեկնութեան և Եղիշեի վարդապետի

«Եւ Բանգի երկիրս չորեքուստիս - «Ձի իւր (երկրի) ծանրութիւնն սի ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ քանակն չորոգու զիմն ի վեր, եւ բոյլ տայ սմա երկին իւրով երա- ի ներքուստ հողմոյն բռնութիւնն՝ գուրեմարն ի ներքին կիսագունդն ի վայր: Այլ եւ յամենայն կող- խոնարհել: Քանզի երկիր իւրով մանց հարբ գոլով եւ հաւասարակշիռ՝ պատեառ է կալոյն հաս- ջանել՝ եւ հողմն իւրով ուժգնու- տատ...» (Ա, էջ 6ր):

բնամբն ջանայ ի վեր բերել զնա:
Եւ ոչ ծանրութիւն երկրիս բողա -
ցուցանէ ի վեր բերել, եւ ոչ ուժգ-
նութիւն հողմոյն բոյլ տայ ի վայր
իջանել ...» (էջ 9-10):

«Եւ ի վերայ ամենայնի է ան-
մոլար աստեղին բերին ի վերնում որք են ընդ հրաին կամարանան,
գօտուշն: Եւ են ամենեւին ցրտու-
քին, եւ միջնորդ են³⁴ արեգական ցութիւն, միջնորդ են արեգական
եւ արփոյ, եւ զանշէջ տոչորումն եւ արփո: Եւ զանշէջ տոչորումն
արփոյն յիւրեանց քնական սաս-
տիկ ցրտովն քարեխառնութիւնս վըն քարեխառնութիւն առնելով,
առնելով արեգական մատուցա-
նեն օգնութիւն: Իսկ արեգական քեզակն առեալ հեղու աւղն՝ առ -
առեալ հեղու ի ներքին գօտիսս, եւ զցրտութիւն եւ լոյսն զշեր -
եւ ի ձեռն մոլորականաց սփռեալ մութիւն մարմինն հրոյ» (ձեռ-
տարածանեն ընդ երկիր օդով եւ N^o 4166, էջ 209ա):
լուսով» (էջ 30-31):

«Իսկ առ ի յոյժ ցրտութեան «Որոտ ամերայնի ոչ լինի, զի
ձմեռնային ժամանակին ինքն ստերջանա մայն, եւ որ բերինն
ամայն կոտորտի հանդերձ խո-
նաւութեամբն բաժանի, րրդի, ղերձ ջրաին խոնաւութեամբն:
ղնի, ղիգու, ի քարձրաւանդակ Առ յոյժ ցրտութեանն ինքն
վայրսն՝ զոր եւ ձիւն անուա-
նեմք... ամայն կոտորտի խոնաւու -
րեամբն՝ րրդի, բաժանի, ղիգու,

Իսկ որոտումդ որ լինի յանկար -
ծակի յեղանակ երկից ժամանա -
կաց, եւ երբէք ի ձմերայնի ոչ լի-
նի: Այլ ի գարնան յանախ եւ
սաստկագոյն: Ասացից որպէ՛ս է
եւ բէ վասն է՞ր է: Քանզի ի ձմե-
րայնի ստերջ են ամպ, և որ բե-
րինն ի խոնարհ՝ ինքեանք են այնք, խաղա, եւ այլ աւղի կցին ի նա,
հանդերձ ջրային խոնաւու -
րեամբն, վասն որոյ և ոչ ձայն
կարեն արձակել: Իսկ ի գարնա -
նային ժամանակին օդն պարարի
խոնաւութեամբն և յարեգակնա-
յին ջերմութեանն ջլանայ գհա-
րըստութիւն, և առ ի յոյժ փո-
րորկեալն խոնարհի ի ծով, և բե-
րանացեալ յամրառնայ զջուրն ի
վեր՝ և ի սաստիկ արբմանէն
ծանրութեամբ յառաջ խաղայ:
Իսկ այլ հողմք շուրջ պատեալ
զնովաւ զօրէն կառավարի զե-
րասանակս ի ձեռս առաւել ստի-
պաւ անցանէ յերկնային ասպա-
րիսին, իրր առաջին և միջին և
վերջին բախմունս և նայրմունս
գործեն, չկարացեալ ընդ ան-
գայտութիւն մարմնոյն միանգա-

ղնի ի լերինս: Իսկ գարունն աւղն
պարարի խոնաւութեամբն, եւ ի
յարեգակնաին ջերմութեանն ջլա-
նա գհարստութիւն. առ յոյժ փո -
րորկելն խոնարհի ի ծով, եւ րե -
րանացեալ բառնա ջուր ի վեր: Եւ
ի սաստիկ ծանրութեանն յառաջ
րինն ի խոնարհ՝ ինքեանք են այնք, խաղա, եւ այլ աւղի կցին ի նա,
հանդերձ ջրային խոնաւու -
րեամբն, վասն որոյ և ոչ ձայն
կարեն արձակել: Իսկ ի գարնա -
նային ժամանակին օդն պարարի
խոնաւութեամբն և յարեգակնա-
յին ջերմութեանն ջլանայ գհա-
րըստութիւն, և առ ի յոյժ փո-
րորկեալն խոնարհի ի ծով, և բե-
րանացեալ յամրառնայ զջուրն ի
վեր՝ և ի սաստիկ արբմանէն
ղուցելոյ» (N^o 4166, էջ 209ա):

ընթերցողին³⁵:

Բացի վերոհիշյալից ուշադրավ է նաև Եղիշեի ու Շիրակացու կողմից օգտագործված բազմաթիվ տիեզերագիտական և տոմարագիտական տերմինների նույնության փաստը, որը նույնպես բնականորեն պետք է բացատրել վերջինիս վրա Եղիշեի Արարածոց մեկնության գործած ազդեցության անտարակուսելի իրողությամբ: Հմմտ.

Արբանեակ (Ա, էջ 68ա).

Անմռաբ (Ա, էջ 15ա).

Աւագ լրումն (Ա, էջ 14բ).

Երեւակ (N°4166, էջ 200ա).

Ձուգակչիռ (Ա, էջ 10ա).

Կիզողական հուր (Ա, էջ 9բ).

Կամարաձեւ ջուր (Ա, էջ 9բ).

Կենդանատեսակք (Ա, էջ 52բ).

Հրեղէն երկին (Ա, էջ 9բ).

Հրային կամար (N°4166, էջ 209ա).

Շրջագա պարունակք (N°4166, էջ 201ա).

Պարունակ (N°4166, էջ 200բ).

Ջրեղէն կամար (Ա, էջ 10ա).

Տրամագիծ (N°4166, էջ 209ա) և այլն:

Ժամանակագրական կարգով Եղիշեի Արարածոց մեկնության ազդեցությունը կրած երկրորդ մատենագիրը Ջաքարիա Ջագեցի կաթողիկոսն է (855-877 թթ.): Նրա «Պատճառ եւ պատմութիւն ծովուց եւ ջուրց, բուսոց եւ տնկոց, ծառոց եւ ծաղկանց» ճառի մեջ, որ

մայն հոսեալ զբազմութիւն ծովային ջուրցն, զօրէն դժուարածին կանանց բարձրանիչ ձայն արծա-կեն» (էջ 32-34):

«Այլ յորժամ եղիցին երկոյնեան (արեգակն և լուսին) ի վերնում ի վերինում կիսագնդին եւ զոյգ կիսագնդին, Բանգի արեգակն դիպին, զի արեգակն վերո է Բանգի ի վերոյ լուսնի է, և լուսին զլուսին, ի դէմ անկեալ արեգա-դիպեալ ի ներոյ արեգական. և կանն լուսին՝ բուի կորընչիլ արե-յորժամ հասարակագոյց լիցին՝ գակն, որ ոչ է այլ լուսնի պատ-մինն զի իցէ ի վերոյ, և միւսն ի ներոյ կշիռ նմին, և արեգակն Արեգակն ի կատարել զընթացս քերանթացեալ հոսէ հեղլով զիշերոյն մկրտի յովկիանենոս, ի գրոյրութիւն լուսոյն՝ հանդէպ ձեռն աւդո եւ ցանէ յաշխարհ, ուղիղ կշռութեամբ ի միջոյ լուս-գոր ցաւդ անուանեն» (N°4166, էջ 59):

էջ 209ա):

«... եւ ի բերին իմ ի վեր՝ զրագ-մութիւն ջուրց ցանեմ զաշխարհալ՝ զոր և դուք ցօղ անուանէք» (էջ 60):

Ազդեցության այլ հետաքրքիր օրինակներ կարելի է գտնել նաև Անանիա Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից» աշխատության մեջ, Հատկապես «Յաղագս որոտման» գլխի և մեր կողմից մեջբերված «Որոտ ձմեռայնի ոչ լինի...» Հատվածի (N°4166, էջ 209ա) միջև, որոնց Համեմատությունը թողնում ենք

պահպանվել է մեր գրչագիր ճառընտիրներից շատերում³⁶, Համարյա բառացիորեն օգտագործված է Ծընընդոց գրքի Ա, 10 Համարի առթիվ եղիշեի գրած ընդարձակ մեկնությունը³⁷:

Նպատակահարմար ենք Համարում Զաքարիայի ճառի մեզ հետաքրքրող հատվածը մեջբերել ամբողջությամբ. «Եւ յաւուրն երրորդի ասաց Աստուած՝ Ժողովեսցին ջուրք ի ժողովս իւրեանց և երեւեսցի ցամաքն: Եւ կոչեսց Աստուած զցամաքն երկիր, զի երկու երկիցս ծայր ունի՝ երկայն զարեւելս և զարեւմուտս, և երկու ի լայն՝ զհիւսիս և զհարաւ: Այլ և երկիր զի կրական է կրելով յինքեան զջուրն Համատարած, դարձեալ՝ զի յէրերման և ի տատանման կան երկրայինքս ի մէջ նեղութեանց և հալածանաց, մարդ և անասունք, երէք և թռչունք, զազանք և սողունք միշտ ի տառապանս և ի փորձանս: Որպէս ասէ Պօղոս՝ Երկիր և կաց ի կասկածի, գուցէ անկանիցիս. ըստ որում և աշխարհ ասելն զայն նշանակէ, որ է աշխար՝ կոծ և աղէտ ողբոց և հոգիտ տրտմութեան: Եւ զժողովս ջուրցն կոչեսց ծովս, և ոչ ծով, յայտ արարեալ զգոգս, զխորշս, զանկիւնս և զականջս ծովուց բազմաց: Եւ ծով ասացաւ՝ զի ի ծփման և ի շաչմանէ հանապազ ծաւալի և շարժի: Զի բերանաբացեալք առ իրեարս ճօճեն և ծաւալին: Եւ է առաջին և արտաքին ծով յեզր աշխարհիս, որ կոչի ովկիանոս, զի ոչ գոյ ի նմա կենդանի և ոչ նաւ կարէ կոխել զնա, զի անխորշ և անլեռոն է, հարթայտակ կոկեալ և ողորկեալ հողն ի ներքեւ ջրոյն: Եւ է մասամբ եզր աշ-

խարհի, ուր ոչ գոյ հող ի ներքեւ ջրոյն, այլ է ատակ ջրոյն հողմն սաստիկ, որ խլէ թափոտ և հանէ արագընթաց արշաւանօք զմերձեցեալսն ի նա: Եւ է այնմ ծովու յայս կոյս բոլոր աշխարհիս կղզին Քեոիոսս, և յայս կոյս այնմ կղզոյ՝ ծով է որ կոչի Անդլընդական: Քանզի Քեոիոսսն բոլորածիր կղզի է ի մէջ երկու ծովուցն, շուրջ զերկրաւ բոլորեալ, ուր զազանք ենք ահադինք և վիշապք վիթխարիք. և ի խառնակութենէ նոցա քրոահոտոյն լինին ցաւք յաշխարհիս ի մարդ և յանասուն, ի բոյսս և ի դաւաթս, ի ծառս և ի տունկս: Զոր առեալ հողմք և բերեալ արկանեն զկենդանեալք, և ամենայն ցաւք աշխարհի անդի ոլատահին: Իսկ ծովն Անդլընդական, որ յայս կղզոյն է գետին է, լեռնամէջք են և խորածորք, վասն որոյ զհատեալ են ջուրքն, և անվնաս ծնանին կենդանիս և սնուցանեն. և նաւորդք զնան ի վերայ նորա անվնաս վատահացեալք. և շուրջ զեզերօք նորա բնակեն մարդիկք բարեխառնեալք և յաջողեալք. և վասն այսորիկ ասի Անդլընդական, զի բնակեն անդ կենդանիք խնդական զբօսմամբ: Եւ յայս կոյս Անդլընդական ծովուն բաժանին չորս ծովք էզերօք և ծոցովք ի մէջ աշխարհիս՝ արեւելայինն և արեւմտայինն, հիւսիսայինն և հարաւայինն: Արիստոտէլ ովկիանոս զայս ասէ, որ շուրջ զցամաքաւս է, և որպէս թէ հիանայ վասն կենդանեացն բազմութեան, որ անդ կան, և ասէ հիացմամբ՝ զարմանք է, թէ ով կայ ի նա, արարիչն միայն զիտէ, և զայն, որ յայն կոյս Քեոիոսս կղզոյն է՝ Անդլընդական ասէ, այսինքն թէ անկար է

ումեք լինել անդ կենդանի: Եւ ասաց Աստուած՝ բխեաց է երկիր զբանջար խոտոյ, յորոյ հրամանէ բուսան ամենայն ծառք և տունկք, բոյսք և դալարք, կատարեալ սերմամբ և հասուն մրգօք, ընդ որս և դրախտն Ադամայ: Այս է գործ երրորդ աւուրն՝ ժողովել ջուրցն և էրեւել ցամաքին և բխումն ծառոց և տնկոց, բուսոց և բանջարաց, լի կատարեալ սերմամբք: Երանգ երանգ գունազարդեալ յիւրաքանչեւր կերպս՝ հոտօք և համօք պննեալք և զարդարեալք, ծառք գեղաղէչք և բարձրաբերձք բուսեալք և բխեալք յերկրէ կատարեալ և հասուն պտղօք: Ի ճաշակս համազարդս և վայելուջս, և սերմ իւրաքանչիւրոցն ի մէջ պտղոցն, և պտուղն ի մէջ տէրեւոցն, իսկ անպտղոցն՝ ծառոց և խոտոց յարմատն պատրաստեաց զաճումն...»³⁸:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Զաքարիա կաթողիկոսը, ասլոյնով Անանիա Շիրակացուց հետո, օգտագործում է մոլորակների ոչ թե Շիրակացու, այլ Եդիշեի գործածած անվանումները: Իր «Վասն վեցերորդ աւուր արարչութեանն և չարչարանացն Քրիստոսի» ճառում Զաքարիան գրում է. «... Քանզի Հինգ աւուր արարչութեանն, որ էին յառաջ քան զստեղծումն մարդոյն, ունի ըստ Հինգ աստեղացն շարակարգեալ ընդ իշխանութեամբ, որք մոլորական անուանակոչին, որոց անուանք են այսոքիկ՝ լուծ, եղջերու, ծկաւորի³⁹, արտախոյր, փառազնոտի...»⁴⁰:

Ավելի քան հավանական է, որ նշված տերմինները լիովին են առնված Եդիշեի Արարածոց մեկնությունից,

որի №2679 գրչագրով մեզ հասած հատվածներից մեկում իրոք գտնում ենք՝ «... Յոյցք⁴¹ մարդկան արուեստի են Ե աստեղքն՝ լուծ... եղջերի... արտախոյր... ծկաւոր... փառազնոտ...»⁴²:

Մի նշանակալից փաստի առկայութեամբ Եդիշեի մեկնությունից ազդեցությունը կրած Հեղինակների շարքը կարելի է դասել նաև վերածննդյան Հայոց գրականության ու գիտությունից նշանավոր գործիչ Հովհան Սարկավազին (մահ. 1129 թ.), որի աշխատություններից դժբախտաբար միայն հատակոտորներ են պահպանվել՝ դեռևս չուսումնասիրված ու մեծ մասամբ չհրապարակված վիճակում⁴³: Նրա խոր գիտական ու փիլիսոփայական իմացությունները ցույց տալու համար բավական է նշել, որ իր կարծիքները Հիմնավորելու նպատակով նա հաճախակի վկայակոչում ու մեջբերումներ է անում Արիստոտելի, Որոգինեսի, Ամոնիոսի և հատկապես Պլատոնի երկերից: Այսպես, օրինակ. «Արդ, յիշո՞ղականն է յիշման և վերստին յիշման պատճառ և շտեմարան: Եւ է յիշումն, որպէս Որոգինէս ասէ՝ տեսութիւն ի ներքս մնաց[եա]լ յուժեքէ զգայութենէ, ըստ ներգործութեան երեւցելոյ, իսկ որպէս Պլատոն՝ փրկութիւն զգայութեան և իմացման...»⁴⁴, կամ՝ «Պլատոն... ոչ ակնբերաց [ասել] յանձնէ և ի մարմնոյ գոլ զկենդանին, այլ զանձն մարմնով վարեալ և որպէս՝ զգեցեալ մարմին...: Իսկ Ամոնեսոս՝ վարդապետն Պլատոնի (պետք է լինի՝ Պրոտինի) զխնդրելիս այսու եղանակաւ լուծանէ...» և այլն:

Հայկազյան բառարանում «Իմոյք» բառի տակ բերված է Հովհաննես Սարկավազի մի աշխատություններից քաղված հետևյալ փոքրիկ վկայությունը. «Ի բնախօսից ոմանք բաժանելով զմարդն՝ ասացին ես, իմն և իմոյքն, նշանակելով զՀոգի, և զմարմին, և զստացուածս»։ Դժվար չէ նկատել այս քաղվածքի անմիջական կապը Եղիշեի Արարածոց մեկնության մեզ ծանոթ հատվածի հետ. «... Այլ մարմինս գործիք է նորա (Հոգւոյ) ըստ Պատոնի, թէ ես, եւ իմն, եւ իմոյքն, ես որ է անձն, իմն՝ մարմինն, եւ իմոյքն՝ դոյքն» (Ա, էջ 22ա)։ Միանգամայն հավանական է, որ Սարկավազն օգտվել է Եղիշեից, սակայն հնարավոր է նաև ենթադրել, որ Եղիշեի նման, Սարկավազն այս հատվածն անմիջապես քաղել է Պատոնի նույն երկի թարգմանությունից։ Այդ դեպքում ավելի ամուր կուվաններ ենք ստանում Պատոնից Եղիշեի կախման մասին մեր եզրահանգումների ճշմարտացիությունը պնդելու համար։

Եղիշեի Արարածոց մեկնության մի հետաքրքիր հատված էլ գտնում ենք Վարդան Այգեկցու դավանաբանական մի գրվածքում, որին ծանոթացել ենք Մատենադարանի №7255 գրչագրի միջոցով։ Գրվածքը վերնագրված է՝ «Համառօտ հաւաքումն սրբոց վարդապետաց յաղագս դաւանութեան ամենասուրբ երրորդութեան, ընդդէմ հերձուածողաց հակաճառութիւնք», գրված է 1209 թվականին Պարզավանում. «Եւ գրեցաւ սա ի Պարզաւան ՌԾԸ մերոյ թուիս, ընդ Հովանեաւ

սուրբ Աստուածածնիս և սրբոյ նշանիս, յառաջնորդութիւն տեառն Մանուկիի սրբասեռալ եպիսկոպոսի» (էջ 99բ)⁴⁵։

Եղիշեի մեկնության հատվածը, ամենայն հավանականությամբ, Վարդանի «Հաւաքման» մեջ տեղ է գտել ոչ թե բնագրից, այլ նմանատիպ մի ավելի հին ժողովածուի միջնորդությամբ։ Այդ հատվածը կրում է «Եղիշեի Հայոց վարդապետի» վերնագիրը և պարունակում է ընդամենը հետևյալ մի քանի տողերը. «Աստուած միայն մարգասէր և մարդ միայն աստուածասէր, Աստուած մարդոյ և մարդ Աստուծոյ։ Վասն մարդոյ Աստուած մարդացեալ և վասն Աստուծոյ մարդ աստուածացեալ»⁴⁶։

Մեր գրչագրերում պահպանվել է «Հարցումն Վաչագանայ իշխանի և պատասխան Պետրոսի Սիւնեաց վերադիտողի» վերնագրով անվավեր մի աշխատություն, որը գրվել է Հավանաբար ԺԲ-ԺԳ դարերում, քանի որ հիշատակություններ է պարունակում ԺԱ դարի պատմական անձնավորությունների (Անանիա Սանահնեցի, Պետրոս Գետադարձ) վերաբերյալ։ «Որպէ՞ս Հրեշտակք» հարցին այդ աշխատության հեղինակը, անկասկած աչքի առաջ ունենալով Եղիշեի «Վասն Հոգւոց մարդկան» վերնագիրը կրող գրվածքի «... զգոյացութիւնս Հրեշտակաց ծնունդ ասեմք երկնի, Հրոյ և օդոյ, որպէս և մեծն Դաւիթ ասէ՝ Ո՛րարք զՀրեշտակս իւր ի Հոգիս» պարբերությունը⁴⁷, տալիս է հետևյալ պատասխանը. «Եղիշէ ասէ զգոացութիւն նո-

ցա յաւգոյ և ի հրոյ, ըստ Դաւթի, որ ասէ՝ Ո՛ր արար զհրեշտակս իւր յօգոյ և բոց հրոյ, անդուստ ասէ և զմարդոյ հոգին»⁴⁸:

Ինչպես հայտնի է, «Վասն հոգեոց մարդկան» գրքովածքի հատվածներից ոչ մեկը չի մտել Վարդան Արևելցու «Լիով պատճառ Արարածոց» աշխատության մեջ, ուստի «Հարցումի» հեղինակը ձեռքի տակ ունեցել է կա՛մ Եղիշեի մեկնությունն աշխատության բնագիրը, կա՛մ Տիմոթեոսյան քաղվածո մեկնությունը:

Ժամանակագրական կարգով մյուս հեղինակը, որն իր երկասիրություններում այլևայլ առիթներով բառացի ու ընդարձակ մեջբերումներ է կատարել Եղիշեի Արարածոց մեկնությունից, Վարդան Արևելցին է (մահ. 1271 թ.): Նրա «Լիով պատճառ Արարածոց», «Լուծմունք ի սուրբ գրոց» (Ժղլանք) և «Հաւաքումն պատմութեան» աշխատություններում Եղիշեի Արարածոց մեկնությունից պահպանված հատվածների մանրամասն քննությունը տրված է նախընթաց գլուխներում: Ուստի այստեղ անհրաժեշտ ենք համարում խոսել միայն Վարդանի այլ գրվածքների մասին, որոնք նույնպես որոշ քաղվածքներ են պարունակում Եղիշեի Արարածոց մեկնությունից:

Վարդանի առաջին գրվածքը, որի մասին անհրաժեշտ է խոսել, մի համառոտագրություն է, կազմված կրոնական պետքերի համար, որպես «Տոնապատճառ» կոչվող ժողովածուի մասերից մեկը: Ընդհանրապես այս ժողովածուի կառուցվածքի, խմբագրություն-

ների և այլ հարցերի մասին բանասիրությունը դեռևս իր խոսքը չի ասել⁴⁹: Անկասկած է միայն, որ Մատենադարանի №4139 գրչագրում (1267 թ.) պահպանված Տոնապատճառի խմբագիրը Վարդան Արևելցին է, որը, ինչպես հայտնում է Տիրացու գրիչը, «... Բազում ինչ բան թիւրեալ ի սուրբ գրոց ուղղեաց ի մեկնաց սրբոց, նաև զսաղմոսն գլխովին և զերկարութիւնն յայլ և այլ մեկնաց ի մի վայր ժողովել, կարճ և համառաւութեամբ սեփականել՝ դիւրահաս ընթերցողաց, որպէս և զայս մեծ հոգևոր բուրաստանս ամենալիւր ծաղկոցաց՝ պատճառս տաւնից տերունականաց և հաւաքմունք սուրբ բանասիրաց...»⁵⁰:

Ահա այդ գրչագրի 147բ-154ա էջերում արտագրված է «ի սկիզբն Արարածոց մեկնութեան», զոր արարեալ է սրբոց վարդապետաց՝ վերնագրով մի հոգված, որում, ի թիվս այլ հեղինակների (Բարսեղ, Եփրեմ, Փիլոն և այլն) գործերի, երկու հատվածներ են բերված նաև Եղիշեի Արարածոց մեկնությունից: Դրանց համար, անկասկած, սկզբնաղբյուր է հանդիսացել ոչ թե Եղիշեի մեկնության բնագիրը, այլ Վարդանի քաղվածո մեկնությունը: Բերում ենք այդ հատվածներն ամբողջությամբ.

ա) «Բայց սակաւ մասամբք նման են արարածքս Արարչին, զի անժամանակք ար[ար]ան, և անհասք են և անտեղի է, որպէս և Աստուած անժամանակ և անքննելի է, և ինքն իւր տեղի է: Վասն զի Մաւսէս լռեաց զժամանակն, զորպէսն և զչափն: Լռեաց ժամանակն,

զի մի ասիցէ ոք, եթէ հետոյ իմացաւ առնել»⁵¹:

բ) «Եւ զի խնդիր եղև վասն սորա ի մէջ առաջնոցն. և ասացին վասն հոգմոյն, թէ զհոգին սուրբ պարտ է իմանալ: Իսկ եթէ զինչ իցէն պատճառք հոգւոյն սրբո երթեակի, վասն զի ի կազմութենէ թերի էին, սուրբ հոգին տայր շարժութիւն ջրոյն և աւզո, և կենդանական զաւրութիւն, զի որ ի ջուր և որ ի ցամաքի ամենեցուն շունչ՝ պատճառ կենաց բաշխեացէ, զի ամենեցուն կեանք կախեալ կա զնմանէ: Եւ կամ որպէս հաւ թխելով զձուս խլրտումն առնէ ի ներս, այսպէս և հոգին սուրբ առ զրգիչ գթոյն շրջէր և արկանէր կենդանական զաւրութիւն ի ջուրն և յերկիրն որ է ներքո նորա, զի յորժամ հրամանացէ Աստուած, որպէս յշտեմարանէ յառաջ ածցեն զրոյսս և զլուղակս և զթռչուն բնութիւնս: Եւ դարձեալ ժամապահ եղեն գիրք մուծանել զմիանձնութիւն հոգւոյն, զի կատարումն փառաւորեալ երրորդութեանն ցուցցի»⁵²:

Առաջին հատվածը Ծն. Ա, 1 Համարի Եղիշեի մեկնության Վարդանի մոտ պահպանված քաղվածքի («Քանզի դերբն և զուրն և գորպէսն աշխարհի չասաց...») պարզեցված խմբագրությունն է, իսկ երկրորդը, կարծում ենք, Տիրացու զրչի շփոթության հետեւանքով է վերագրված Եղիշեին, որովհետև Վարդանի Հնգամատյանի մեկնության մեր համեմատած գրչազերը այն միաբերան վերագրում են Եփրեմին:

Նույն՝ №4139 գրչազրում պահպանվել է նաև Վարդան Արևելցու մի այլ գրվածք՝ «Թաղադս է ա-

ւուրն արարչութեան, զոր արարեալ է սուրբ վարդապետին Վարդանա» վերնագրով⁵³: Ինչպես և սպասելի էր, գրվածքում կան բազմաթիվ մաքեր ու արտահայտություններ, որոնք թեկուզ առանց հեղինակի անվան հիշատակության քաղված են Եղիշեի մեկնությունից:

Այսպես, օրինակ, Ծն. Ա, 6 Համարի մեկնության Եղիշեի հատվածի բովանդակությունը այդ գրվածքում վերարտադրված է հետևյալ կերպ. «Վասն զի արարիչն զայս այսպէս առնելով Բ իրք աւզուտ արար, մի՛ գերկիր թեթեացոյց ի ծանրութենէ, և մեւս ևս՝ զայրեցողութիւնն և զանտանելի տեսիլ հրեղէն երկնից արգելեաց և ի վեր փակեաց, գյորգութիւն և զթանճրութիւն ջրոյն ընդդէմ տուեալ...»⁵⁴:

Ծն. Ա, 14 Համարի մեկնության Եղիշեի հատվածն այս գրվածքում ունի հետևյալ տեսքը. «Քանզի էառ արարիչն զլոյսն զոր արար յառաջնումն աւուրն, և տար աման աւղեղէն արեգականն և լուսնին և աստեղացն, և զառաւել յատակ լոյսն և զջերմութիւնն էարկ յաման արեգականն և զայլ աղաւտն և զիգագոյնն ի յաման լուսնին և զմրրատեսակն՝ յաստեղսն...»⁵⁵:

Իսկ Ծն. Ա, 6 Համարի Եղիշեի մեկնությունը⁵⁶ Վարդանի կողմից մեջ է բերված հեղինակի անվան հիշատակմամբ. «Թայտ է թէ կամար մի հրեղէն երկին է, և կամար մի՛ ջուրն, և ի ներքո նորա՝ կամար մի՛ հաստատութիւնն, որ և նա երկինք անւանի, այս Գ կամարքս հեռի իրերաց հոգմովք խառնեալ շուրջ զան բազում միջոցաւ հեռի ի միմեանց բոլորեալք, և զեր-

կիրն և զՂուրն, որ ի վերայ երկրի՝ ի մէջ իւրեանց ունին, որպէս և ասէ մեծն Եղիշէ, թէ դու մի տարակուսիր, թէ Ղուրն վերին միապաղ[աղ], միաձոյլ, հաւասարակշիւ, զիւրդ շուրջ գա զհետ երկու երկնիցն ի ներքո երկրիս անցանելով և դարձեալ անցանելով կամար գոլով վերագոյն քան զհաստատութիւն, այլ տէս, ասէ, զամբտ ջրով լցեալ, որպէս ի տիկս, և ի կախ ունի յաւդտ և ոչ թափի ի վայր մինչև Արարիչն հրամանացէ»⁵⁷:

Այսուհետև քննարկվելիք երկերում Եղիշեի Արարածոց մեկնությունն օգտագործվել է ոչ թե անմիջաբար բուն բնագրի կամ տիմոթեոսյան քաղվածուի հիման վրա, այլ Վարդանի «Լիով պատճառ Արարածոց» աշխատության միջնորդությամբ:

Այդ ճանապարհով Եղիշեի գործին ծանոթացել և իր «Յաղագս երկնային շարժմանց» աշխատությունը շարադրելիս նրանից օգտվել է ԺԳ դարի նշանավոր գրական ու եկեղեցական գործիչ Հովհաննես Երզնկացին: Վերջինս, որն իրեն համարում է «աշակերտ հոգելից հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ», իր մատենագրական գործունեությամբ հանդիսանում է իր ուսուցչի ուղղության շարունակողը: Վարդանի Սաղմոսների և Հնգամատյանի մեկնությունների գիտական սկզբունքներով նա կազմել է Դիոնիսիոս Թրակացու քերականության մեծարժեք հավաքածո մեկնությունը, նոր խմբագրությամբ լույս է ընծայել իր ուսուցչի կողմից Ձագավանից ժողովում ձևակերպված

կանոնները և այլն:

Իր «Յաղագս երկնային շարժմանց» աշխատության մեջ, որը 1284 թվականին Հովհաննես Երզնկացին բանավոր ընթերցել է Տփղիսում, ապա գրի առել պարոն Ումեկի որդի Վախթանգ պատանու խնդրանքով, հեղինակը հիմնականում սահմանափակվել է Վարդանի Արարածոց մեկնության պարզեցված վերաշարադրմամբ՝ չաղկապված այլ աղբյուրներից քաղված տվյալների հետ: Նրա նպատակն է եղել տիեզերագիտական հարցերը, «Վասն դիւրաւ հասկանալի լինելոյ ընթերցողաց», շարադրել «համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք»⁵⁸, և իր առջև դրված խնդիրն իրագործել է մեծ հմտությամբ ու բարեխղճությամբ: Նրա աշխատության միջոցով շարքային ընթերցողն իրեն հասկանալի լեզվով հնարավորություն է ստացել տեղեկանալու տիեզերքի կառուցվածքի, երկնային մարմինների ու նրանց շարժման, տարվա եղանակների, մթնոլորտային տեղումների, որոտի, կայծակի, ծիածանի և բազմաթիվ այլ հետաքննական հարցերի գիտական բացատրություններին:

Ահա այդ աշխատության մեջ շարադրանքի որոշ պարզեցմամբ ընդարձակ քաղվածքներ են կատարված նաև Եղիշեի Արարածոց մեկնությունից: Ստորև բերում ենք դրանցից մեկը՝ ոչ այնքան այդ կապը հաստատելու, որքան Երզնկացու խմբագրության հետևանքով օգտագործված սկզբնաղբյուրի կրած փոփոխությունների չափն ու բնույթը ցուցադրելու նպատակով. «Ա-

րարիչն Աստուած իմաստութեամբ և զօրութեամբ արար զաշխարհս ամենայն: Եւ երեւի զօրութիւն նորայ, զի յոչընչէ արար զամենայն արարածս, և տեսանի իմաստութիւնն, զի զեղեցիկ արուեստիւ յօրինեաց զերկինս և զերկիր: Չորս նիւթ արար Աստուած ի պէտս շինութեան աշխարհի՝ հուր և հողմ, ջուր և հող. սոքա սկզբունք և արմատք են ամենայն գոյիցս, և են հակառակ միմեանց, իսկ այլ արարածքս՝ ծայրք և ծրնունդք ի սոցանէ յառաջ եկեալ և խառնեալ ընդ միմեանս, յորմէ ստեղծան եղականքն՝ բոյսք և կենդանիք: Եւ պիտոյ էր այս չորս տարերքս, զի առանց հողոյ ոչ լինէր թանձր մարմին, և ոչ առանց ջրոյ՝ շաղղումն և միաւորութիւն, և առանց օդոյ՝ որ է հողմ, շարժումն ոչ լինէր, և ոչ առանց հրոյ՝ գոյն և երևումն: Վասն որոյ ստեղծ զամենայն զգալի և նիւթական եղեալքս ի հողոյ և դաւարացոյց ջրովն, ետ շարժումն ի յօդոյն, և երևումն և գոյն ի հրոյն...»⁵⁹:

Բերված հատվածը պարզեցված շարադրանքն է Վարդանի միջնորդությամբ մեզ հասած Ծն. Ա, 1 համարի Եղիշեի մեկնություն («Հավելված», հատված Ա):

Հովհաննես Երզնկացին իր այս աշխատության բովանդակությունը շարադրել է նաև «Թաղապս երկնային զարդուց» չափածո ստեղծագործության մեջ, որն ինչպես ցույց են տալիս նրա տնտառները, գրված է «ի խնդրոյ բարեպաշտ իշխանի Ապլոցի»⁶⁰: Նմուշի համար բերում ենք մի հատված այդ չափածո տիեզերագիտությունից, որը քաղված է Եղիշեի մեկնություն

նույն դրվագից.

«Սոքա չորից՝ տարերց մասունք՝ սկզբնական,
 Յորմէ մարմինք՝ տարրականաց՝ հաստատեցան,
 Ի չոր և ցուրտ՝ բնութիւն հողոյ՝ որ ըստորացան,
 Յրտին և գէճ՝ բնութիւն զջրոյ՝ որք խառնեցան.
 Բաղկացութիւնք՝ երկրիս կայից՝ կատարեցան,
 Որք միշտ անշարժ՝ կայիւք շարժին՝ յեղյեղական,
 Այլ և գիճին՝ բնութիւն օդոյն՝ և ջերմական,
 Որ ընդ հրոյ՝ ջերմին և չոր՝ վերամբարձման...»⁶¹:

Ժամանակով Հաջորդ մատենագիրը, որն իր աշխատություններում Վարդանի միջնորդությամբ օգտվել է Եղիշեի Արարածոց մեկնությունից, Գրիգոր Տաթևացին է: Իր գրական, ուսուցչական և քաղաքական գործունեությունում Տաթևացին մի պատկառելի մեծություն է, որի թողած հսկայական ժառանգության մասնագիտական ուսումնասիրությունը դեռ նոր պիտի սկսվի: Մենք չենք համարձակվում որևէ գնահատական տալ նրա գործունեությանն ու գրական վաստակներին, կարող ենք ասել միայն, որ նրա ստեղծագործություններում ի մի են բերված և համակարգավորված հայ մատենագրության թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական երկերի պարունակած բոլոր դրական և ուսանելի արդյունքները: Դա վերաբերում է, ի դեպ, ոչ միայն աստվածաբանական, փիլիսոփայական և տիեզերագիտական խնդիրներին, այլև զրգոթյան արվեստին, երաժշտությանը և այլն, մի հանգամանք, որ հիմք է տալիս Տաթևացուն վեր դասել ինչպես իր ժամանակի,

այնպես էլ նախորդ դարերի շատ հայ գիտնականնե-
րից:

Եղիշեի Արարածոց մեկնության ազդեցություննե-
րի այնքան բնորոշ ու բազմաթիվ օրինակներ կան նրա
հանրագիտարանային բնույթ ունեցող «Գիրք հարց-
մանց» աշխատության մեջ, որ հետագա որոնումների
կարիք չի զգացվում: Տաթևացին իր օգտագործած աղ-
բյուրները ձևափոխում է ըստ իր գիտական հայացք-
ների, փոխում է նրանց չափերանքը, այն համապա-
տասխանեցնելով իր աշխատության առանձնահատ-
կություններին, որը կազմված է հարցերի և պատաս-
խանների ձևով: Հաճախ աղբյուրի որևէ ամբողջական
հատված Գրիգորը բաժանում է մի քանի կետերի, շա-
րահյուսում այլ աղբյուրների տվյալներին և այլն: Սա-
կայն անգամ այդպիսի ձևափոխություններ կրելուց
հետո Եղիշեից եկող հատվածները ճանաչվում են ա-
ռանց դժվարության: Համար.

«Հատուածք յԱրարածոց մեկ-
նութենէ Եղիշէի վարդապետի».

Գիրք հարցմանց Գրիգո-
րի Տաթևացոյ⁶²

«Որ և ի ներքոյ անցեալ (հոդմն)
հրամանաւ արարչին փչեաց, փե-
ռեկեաց, գեռւն ի վեր եւ ի խո-
նարի՝ յերկուս կիսագունդս, մեծ
գործելով ծոցս շրջաբոլոր, վեցա-
կուսի, յամենայն առաջս, զներ-

«Հարց. որպէ՞ս է երկիրս ի մէջ
երկնից հաստատեալ և անշարժ
մնայ:
Պատասխանի. ետի՜ աշուպէս
ասեն քէ տարերբն զնդածն
պատեալ են զմիմեանս և ամ-

բին կիսագունդն ի վայր մղելովն՝ րացեալ...:

ներքին ծոցովն, եւ զերկիր ի վեր Երկրորդ՝ աշուպէս է, զի օդն հող
փչելով, ըստ նմին և ի վերին մով փեռեկէ գեռւն ի Ռ կիսա-
փորուածս, և զերկին ի վեր և զեր- գունդս՝ վերոյ և ներքոյ: Արդ՝
կիր ի խոնարի օգելով, երկուցն՝ ներքին հողմն ի վեր օգէ զերկիր,
գտանի պատճառս շարժութեան և վերին հողմն ի վայր, և այս -
երկնի անդադար զնդելով և տա - պէս մէջն հաստատ մնա երկիր:
նելով, և զերկիր անխլիրտ պահե- Երրորդ՝ ծանրութիւն երկրիս ի
լով. զի իւր ծանրութիւնն բնական վայր հակէ և բռնութիւն հողմոյ
չքողու զինքն ի վեր, և ի ներքուստ՝ ի վեր:

հողմոյն բռնութիւնն՝ ի վայր, այլ Զորրորդ՝ հաւասարակշիռ է
և յամենայն կողմանց հարթ գո - երկիրս բոլորակի, և յամենայն
լով և հաւասարակշիռ՝ պատճառ է կողմանէ ծանրութիւնն ի մէջ
կալոյն հաստատ, մանաւանդ զաւ- ժողովի, և աշուպէս ինքն ի վե-
րութիւն արարչական բանին, որ րայ իւր հաստատեալ է:
կրէ զամենայն և պահէ ի կարգի Հինգերորդ՝ երկինքն բերք է ի
իւրում, որպէս և ասէ՝ Ի սկզբանէ՝ վեր բարշէ, և երկիրս ծանր ի
արար Աստուած զերկինք.» (Ա, էջ վայր հակէ, և աշուպէս մի զմի
նա-ր): հաստատուն պահեն:

Վեցերորդ՝ քանն Աստուծոյ կրէ
զամենայն զօրութեամբ իւ-
րով...» (էջ 181-182):

Նման օրինակներն թիվը կարելի է անչափ շատաց-
նել, սակայն մեր խնդրի կապակցությամբ այսքանն էլ
բավական է⁶³:

Քննվող Հարցի տեսակետից Հատուկ Հետաքրքրու-
թյուն է ներկայացնում նաև Տաթևացու դասընկեր

Գրիգորը Խլաթեցու (Ծերենց, մահ. 1426 թ.) Արարածոց մեկնությունը, որից մեր Մատենադարանում պահպանվել է ութ ընդօրինակություն. հնագույնը 1400 թվականին Գրիգորը գրչի (Հավանաբար Հեղինակի) կողմից ընդօրինակված №5435 գրչագիրն է: Մեկնությունը վերնագրված է՝ «Համառատ մեկնութիւն գրոցն արարածոց, Հաւաքեալ ի մեկնութենէն Վարդանայ վարդապետի, առն Հոգելի և իմաստնոյ, աշխատութեամբ Գրիգորի՝ անմտի և մեղապարտի»:

Վերնագիրն ինքնին ցույց է տալիս, որ Գրիգորը միայն Համառատել է Վարդան Արեւելցու «Լիով պատճառ արարածոց» աշխատությունը, առանց դիմելու այլ աղբյուրների: Վարդանի ծավալուն մեկնությունը Խլաթեցին Համառատել է մոտավորապես կիսով չափ, դուրս է նետել Հատվածներին առընթեր նշված Հեղինակների անունները, փոքր ինչ պարզեցրել է լեզուն ու խախտել բնագրի չարահայտությունը: Այսպիսով, Գրիգորը Խլաթեցու «Համառատ մեկնութիւն գրոցն արարածոց» աշխատության մեջ տեղ են գտել Եղիշի Արարածոց մեկնության Համարյա բոլոր այն Հատվածները, որոնք կան Վարդանի մոտ, ենթադրվելով երբեմն աննշան, իսկ ավելի հաճախ՝ էական սղումներով ու փոփոխություններով:

Այս մեկնությունը Վարդանի երկի բազմաթիվ գրչագրերի առկայությամբ Եղիշիի Հատվածների բնագրերը ճշտելու տեսակետից զուրկ է որևէ արժեքից, սակայն անկախ մեզ Հուզող խնդրից, լինելով դպրոցա-

կան պետքերի Համար կազմված մի Հաջող քաղաքություն, այն կարող է և պետք է նյութ դառնա ինչպես ԺԳ-ԺԵ դարերի Հայկական դպրոցական դասագրքերի, այնպես էլ Գրիգոր Խլաթեցու գրական վաստակի ուսումնասիրման բնագավառում: Չենք կարող Հատուկ կանգ չառնել նաև Վարդան Արեւելցու «Լիով պատճառ Արարածոց» աշխատության մի չափածո մշակման վերա, որը զեղարկեստական բարձր մակարդակով իրականացրել է Հովհաննես Թլկուրանցին: Այս մեծատաղանդ բանաստեղծի անձնավորության, մանավանդ նրա ապրած ժամանակի վերաբերյալ հակասական և խառնաշփոթ տեղեկություններ են պահպանվել գրչագիր աղբյուրներում: Հետազոտողներն ընդունում են առնվազն նույնանուն երկու Հեղինակի գոյությունը, որոնցից մեկը և Հավանաբար ամենանշանավորը տպել է ԺԴ դարում, իսկ մյուսը ԺՁ դարի առաջին տասնամյակներին եղել է Սսի կաթողիկոսը:

Սակայն անկախ Հեղինակային պատկանելության խնդրից, մեզ Համար առայժմ կարևոր է միայն ընդգծել, որ Արարածոց գրքի խնդրո առարկա չափածո մեկնությունը անչափ սիրված ու տարածված է եղել միջին դարերում. բավական է նշել, որ միայն մեր Մատենադարանի գրչագրերում պահպանվել է նրա 24 ընդօրինակություն⁶⁴:

Աշխատության վերնագրում Թլկուրանցին Հայտնում է՝

Ես Յովհաննէս Գուսատ ոգի,

Որ մականունն թուլկուրանցի,
 Կամալ իմով ի հոգ մտի
 Զբան ժողովել ինձ յիշելի.
 Աստ կարնարան հաւաքեցի
 Յարարածոցըն Մովսէսի,
 Մեկնեալ Վարդան վարդապետի,
 Քաղեալ ի հարցն հոգելի⁶⁵:

Պարզ է, որ Վարդանի «Լիով պատճառ արարածոց»-ի մոջոցով թուլկուրանցու այս հետաքրքիր տիեզերագիտական ու աստվածաբանական քերթվածում տեղ պետք է գտնեին նաև Եղիշեի Արարածոց մեկնության հատվածներից շատերը՝ բնականաբար ենթարկված լինելով որոշ ձևափոխությունների, որոնց բնույթն ու չափը հույց տալու նպատակով բերենք մի բնորոշ օրինակ.

Մեկնելով Ծննդոց գրքի Ա, 24 համարը («Արար Աստուած զգազանս երկրի...»), Եղիշեն գրում է. «... Իսկ յառաջն ոչ այսպէս, այլ ծնանէին եւ սնուցանէին եւ աճեցուցանէին եւ ընտանիք վայրենիք վայելէին ի միասին. ճնճողակ ընդ վարուժանի, եւ կաքաւ ընդ բազէի, եղն եւ առիւծ միաբան ճարակէին, եւ ինձն առ ուլոյ մակաղէր...» (Ա, էջ 19ա):

Այս պարբերությունը բանաստեղծ-մեկնիչի գրչի տակ ձևափոխվել ու ստացել է հետևյալ կերպարանքը.

Նոյնպէս գազանացըն ջոկի
 Ոչ թէ մարդակերք արարան,
 Ի գկգրանն հնազանդ էին

Ընդ մարդոյ ինքնիշխանութեան
 Մինչ չէր մեղանչել Ադամ
 Զունէին ոխ թըշնամական,
 Ինձն, առիւծ եւ գայլն եւ արջն
 Ընդ ոչխարս էին միաբան⁶⁶:

Ողջ գործը գրված է հայրենի չափով: Նրա գեղարվեստական և գիտական արժանիքների մասին որոշ դադափար տալու նպատակով բերում ենք տիեզերագիտական բովանդակությամբ մի հատված.

Խաւարն չէ գոյութիւն,
 Լոյսն է գոյ եւ յոյժ պիտեան,
 Ի պակասութիւն լուսոյ
 Տարեբացն ստուերք գաւրանան,
 Արևն ի յովով գընայ,
 Եւ լուսինն ի սահ սողըման,
 Անմոլար մոլորականք,
 Աստեղունք ոստոստ ընթանան:
 Արեգակն է լուսոյ ակն
 Եւ լուսինն է երկու բերան,
 Զլոյսն արեգականէն առնոյ
 Կամ ծածկոյթ է բաց խրական:
 Սոքայ են քանոնք եւ չափ
 Տարեբց եւ ամսոց զուգական,
 Ժամուց եւ ժամանակաց
 Շրջանից, գետոց հանգրստեան:
 Արևն յայծեղջուրն իջեալ
 Մեզ ձմեռն եւ գետ սուգական,

Ի հարաւ ամառնանայ՝

ժամանակ պտղոց հասըման...⁶⁷

Եղիշեի Արարածոց մեկնութեան ազդեցութեան խոր հետքեր նկատվում են ոչ միայն վերոհիշյալ քաղվածութեան մեկնութեաններում, այլև այլ բնույթի բազմաթիվ երկերում: Այսպես, օրինակ, Մն. Խթ. 8-12 համարների Եղիշեի մեկնութեան «անորակ և անորակիսութիւն է Աստուած, սակայն լոյս ասի...» հատվածը որպես Եղիշեի աշխատութեան մաս հայտնի է եղել Հայկազյան բառարանի հեղինակներին Մխիթար Ապարանեցու կամ Ֆրա Մխիթարիչի (ԺԵ դար) ինքնագիր «Տրամախօսութիւն կամ վիճաբանութիւն ի վերայ հաւատոյ և կրօնից» աշխատութեան միջնորդութեամբ⁶⁸:

Ձեռքի տակ չունենալով Մխիթարի այդ աշխատութեան որևէ բնագործնականութիւն՝ զրկված ենք հետևյալ հարցերի պատասխանը տալու հնարավորութեանց. ա) Մխիթարը Եղիշեի մեկնութեան բնագի՞րն է ձեռքի տակ ունեցել, թե՞ Վարդանի «Լիով պատճառ Արարածոց»-ը, կամ՝ բ) միայն վերոհիշյալ հատվածն է մեջբերել, թե՞ նաև այլ հատվածներ:

Մխիթարի աշխատութեան մասին կարող ենք որոշ պատկերացում կազմել միայն Հայկազյան բառարանի հետևյալ տեղեկութեան հիման վրա. «Կան [անդ] յիշատակք պէսպէս հնութեանց և երկպառակութեանց եղելոց յաւուրս իւր. ոճն է ստորին՝ հանգոյն Տաթևացւոյն Գրիգորի՝ իւրոյ ժամանակակցի և ոսոխի, երբեմն կարծեցեալ բարեկամի»⁶⁹:

Հենվելով նույն բառարանի վրա, կարող ենք ավելացնել, որ Եղիշեի մեկնութեանից այլևայլ հատվածներ տեղ են գտել նաև Տոնական, Տոմար և Ոսկեփորիկ կոչվող ժողովածուներում⁷⁰, սակայն այդ հատվածների ծավալի ու բնույթի վերաբերյալ նույնպես անկարող ենք ուղեղնորոշակի բան ասել:

Եղիշեի Արարածոց մեկնութեանից հետաքրքիր հետքեր են պահպանվել նաև միջնադարյան քերականական երկերում, որոնցից մեկի՝ Առաքել Սյունեցու (ԺԵ դ.) Քերականութեան մասին ցանկանում ենք փոքր-ինչ մանրամասնորեն խոսել:

Առաքելի «Թաղազս Քերականութեան» աշխատութեանը որոշ առումով հանրազումարն է հայ քերականագիտութեան անցած հազարամյա ուղու: Հետեւելով իր ուսուցչի և մորեղբոր՝ Գրիգոր Տաթևացու գիտական մեթոդներին, Առաքելն ի մի է բերել, ամփոփել և ժամանակի գիտական ու ուսումնական նպատակներին հարմարեցրել Դիոնիսիոս Թրակացու Քերականութեան մեկնաբանման եղանակով նախորդ դարերում զրկված բոլոր երկերի հիմնական արդյունքները: Սակայն նա չի անտեսել նաև այլ տեղի երկերում առկա քերականագիտական գիտարկումներն ու ձևակերպումները. մասնավորապես շատ տեղին օգտագործել է Եղիշեի Արարածոց մեկնութեան մեզ արդեն ծանոթ քերականագիտական գիտողութեանը: Վերհիշենք այն. Մնեղոց զրքի Բ, 19 համարի («Ամենայն շնչոյն կենդանոյ զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է նորա») մեկնու-

թյան հատվածում Եղիշեն գրում է. «Զի ոչ անդէպս ինչ կոչեաց (Աղամ զանուանս կենդանեաց) այլ զյարմարն և զնմանն, որպէս առիւծն յառնլոյն եզն ի հեզութենէն, շուն՝ ի շողոքորթելոյն, կատուն՝ ի տան կալոյն, խոզն՝ ի խուզողութենէն, եւ այլք այսպիսիք» (Ա, էջ 26ր):

Ահա այս քերականական սկզբունքը միևնույն ստուգաբանությունների հետ միասին, որոշ հավելմամբ ու խորացումով, մեջ է բերել Առաքել իր հետաքննական աշխատության⁷¹ «Ստուգաբանութիւն» բաժնում: Անկախ մեզ հետաքրքրող խնդրից այն մեծ կարևորություն ունի հայ քերականագիտության պատմության համար, ուստի մեջ ենք բերում առանց հապավումների. «Այն, որ անունն զընութիւն իրին յայտնէ և զգործն (է ստուգաբանութիւն), որպէս ասելն կատուն՝ այսինքն ի տուն, կամ շուն՝ այսինքն շողոքորթող, կամ սողոց, կամ տարգաղ, կամ սափոր, կամ սապատ, կամ մածուն և այլն: Եւ այսպէս է ստուգաբանելն, որպէս ասելն թէ յափշտակութիւնն՝ այսինքն յափշտ արկութիւն: Եւ այն է ստուգաբանելն որ փոխես զմին զիրն յանուանէն կամ ի բայէն, ի ձայնաւորացն կամ յանձայնիցն, այսինքն զլծորդն: Եւ սոքա (են) լծորդք, որպէս ասել՝ Բեն, Մեն (*), Պե, Փիւր. դորձեալ՝ Դա, Թաւ, Տիւն. դարձեալ՝ Զա, Սե, Շա, Զա, դարձեալ՝ Զա, Մա, Ծաւ և այլ այսպիսիք...: Իսկ յորժամ կամիս ստուգաբանութիւն առնել, ի թիւրեալ անուանէն զեզեալ զիրն փոխէ, այսինքն՝ որպէս ասելն

եթիւ (իմա ըթիւ), թէ կըրակ, դըրգալ, սըղոց, և զրես զեչն և զԱյբն և զՈյն, որ ստուգի՝ կերակ, տարգալ, սողոց: Նոյնպէս և ի տարգալին, թէ փոխես զԼիւնն ի Ղատ՝ լինի գաղ. և թէ Լիւնիւն՝ ստուգաբանի տար ի զայլն, իսկ Ղատիւն ստուգաբանի թէ տարգաղ է: Այսպէս յառաւելուլ տառին, և ի նուագելն լինի ստուգաբանութիւն, որպէս կանթեղն, թէ զԿենն բառնաս ստուգի անթեղ, այսինքն թէ զՀուրն ծածկեալ ունի յինքն, իսկ թէ կենիւ՝ լինի կանթեղ, այսինքն՝ բազում կանթ ունի, որպէս ասելն՝ մաղեղ, մսեղ, ուղիղ, այսպէս և զայլն իմասցիս»⁷²:

Մասնագետ լեզվաբաններին թողնելով բերված հատվածի քննությունը և Առաքել Սյունեցու տեղը հայ լեզվագիտության պատմության մեջ որոշելու կարևորագույն գործը, ասենք միայն, որ ակամայից ցանկություն է առաջանում զուգահեռ անցկացնել նրա և մոտ անցյալի հայ լեզվաբանական մտքի որոշ ներկայացուցիչների միջև:

Այսպիսով, Եղիշեի Արարածոց մեկնությունը սկըզբում անմիջաբար, ապա Վարդանի «Լիով պատճառ արարածոց» աշխատության միջնորդությամբ խոր հետքեր է թողել հայ մատենագրության այլևայլ բնագավառներում: Հայ տիեզերագետները, տոմարագետները, քերականները, մեկնիչներն ու դավանաբանները նրանից քաղել են հին հունական գիտության ակունքներից բխած առատ և արժեքավոր նյութեր, հաճախ անտեղյակ լինելով այն իրողությանը, որ կրկնում են

այն հեղինակի մտքի ու գրչի արտադրանքը, որը հայ գրականությունն է պարզեցնել նաև Վարդանանց հերոսամարտերի անմահ պատմությունը:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

1. Եղիշեի Արարածոց մեկնությունն ամբողջական բնագիրը արդեն ԺԳ դարում գոյություն էի ունեցել. նրանից մեր զբնագրերում պահպանվել են միայն առանձին քաղվածքներ ու հատվածներ, որոնց ի մի բերմամբ հնարավոր է լինում վերականգնել այդ մեկնության կառուցվածքը՝ որոշ դեպքերում համարյա բնագրի ծավալով, իսկ մեծ մասամբ՝ թերի ու հատվածո:

2. Այդ մեկնությունից ընդարձակ հատվածներ են պահպանել հետևյալ աղբյուրները.

ա) Վարդան Արևելցու «Լիով պատճառ Արարածոց» քաղվածո մեկնությունը, որը նա կազմել է որպես Ծննդոց գրքի դասադիրք — մեկնություն 1261 թվականին, Հաղպատի վանահայր Համազասպի և Սանահնի փակակալ Գրիգոր վարդապետի խնդրանքով.

բ) Նույն Վարդանի «Լուծմունք ի սուրբ գրոց» (Ժղլանք) աշխատությունը, գրված Հեթում Ա թագավորի խնդրանքով, 1240-1246 թվականներին.

գ) Մեր Մատենադարանի №2679 (981 թ.) գրչագրի ՄԼԲ հոգվածը, որն իրենից ներկայացնում է Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու և Եղիշեի Ծննդոց գրքի մեկնություններից կազմված մի համառոտ և թերի գրվածք.

դ) Նույն գրչագրի «Վասն հոգւոց մարդկան, թե ուստի դան եւ յետ ելանելոյ ի մարմնոյ առ ով երթան,

կամ թէ առաւել իմաստնայցեն» Հոգւածը, որն ընդարձակ քաղվածք է Մենդոց գրքի Բ, 7 համարի Եղիշեի մեկնությունից, և որն ընդգրկված է Եղիշեի «Մատենագրության» վենետիկյան գույգ հրատարակությունների կազմում:

ե) «Սրբոյն Եղիշեի» վերնագիրը կրող 9 համառոտ մեկնողական հատվածները, որոնք պահպանվել են մեր Մատենադարանի №4166 և №5254 (թերի) գրչագրերում:

3. Վերոհիշյալ բոլոր աղբյուրներում Եղիշեի երկից պահպանված հատվածները ոչ թե անմիջապես բխում են նրա բուն բնագրից, այլ Տիմոթեոս վարդապետի կողմից Ոսկերեքանի, Եփրեմի, Եղիշեի և այլ հեղինակների երկերի հիման վրա կազմված մի քաղվածո Արարածոց մեկնությունից, որից մեր Մատենադարանի №1981 գրչագիրը պահպանել է մի պատառիկ՝ «Թառաջաբան համառոտ ի Մենդոց, զոր արարեալ է Տիմոթիա լիւսաւոր վարդապետի» վերնագրով:

4. Մեզ հասած հատվածները իրենց շարադրանքով ու բովանդակությամբ ներկայացնում են Եղիշեի նախնական բնագիրը, կրած լինելով միայն խմբագրական բնույթի որոշ փոփոխություններ ու սղումներ. ուստի առ ի չգոյ է նախնական բնագրի, նրանք զգուշավոր օգտագործման դեպքում կարող են փոխարինել Եղիշեի բուն գործին:

5. Ինչպես Տիմոթեոս վարդապետը, այնպես էլ Վարդան Արևելցին, իրենց քաղվածո Արարածոց մեկ-

նությունները կազմել են ելնելով օգտագործվող բնագրերը հնարավորին չափ ճշգրտորեն ներկայացնելու սկզբունքներից:

6. Եղիշեի անունով հասած Արարածոց մեկնության հատվածների հեղինակը «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» հանրահայտ պատմության հեղինակ Եղիշեն է, որն ամենայն հավանականությամբ ծնվել է Կողբ գյուղաքաղաքում:

7. Եղիշեն իր մեկնությունը գրելիս օգտվել է Եվսերիոս Եմեսացու «Մեկնութիւն Սուրբ Գրոց», Հովհան Ոսկերեքանի «Թաղադս արարչութեանն աշխարհի» և Եւսեբիոս Կեսարացու «Ժամանակականք» աշխատությունների ոսկեդարյան համարվող թարգմանական բնագրերից:

8. Սակայն նրա աղբյուրների շարքում չառնվելի նշանակալից դեր են կատարել Հունարան դպրոցի առաջին շրջանի թարգմանությունները.

ա) Փիլոն Եբրայեցու համարյա բոլոր աշխատությունները.

բ) Հերմես Եռամեծի «Առ Ասկղեպիոս սահմանք» գրվածքը.

գ) Պլատոնի «Առ Տիմէոս», Թերևս և այլ երկերը:

դ) «Բարոյախօս» ժողովածուն.

ե) Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը.

զ) Հերակլիտ Եփեսացու «Վասն բնութեան» աշխատությունը (հավանորեն միջնորդաբար):

9. Եղիշեի «Արարածոց մեկնության» մեջ շոշափ-

ված են տիեզերագիտության, բնագիտության, օդերև-
 վութաբանության, կենդանաբանության ու բուսաբա-
 նության բնագավառներին վերաբերող բազմաթիվ
 խնդիրներ, որոնք լուծված են ժամանակի գիտական
 մտքի մակարդակին համապատասխան: Շատ առում-
 ներով Եղիշեն տվյալ հարցում վեր է կանգնած ինչպե-
 նախորդ, այնպես էլ հետագա դարերի մի շարք աստ-
 վածաբան-գիտնականներից:

10. Եղիշեի մեկնությունը դրված լինելով հունա-
 կան գիտական և իմաստասիրական գրականության մի
 շարք լավագույն երկերի օգտագործմամբ, դարերի ըն-
 թացքում մնացել է հայկական գիտական մտքի ուշա-
 դրության կենտրոնում և խոր ազդեցություն թողել
 հետագա հայ մատենագրության վրա: Նրա ազդեցու-
 թյան հետքերն ակնհայտ են Անանիա Շիրակացու,
 Զաքարիա կաթողիկոսի, Հովհաննես Սարկավազի, ինչ-
 պես նաև՝ Վարդանի «Լիով պատճառ Արարածոց» երկի
 միջնորդությամբ՝ բազմաթիվ այլ հեղինակների (Գրի-
 գոր Տաթևացի, Գրիգոր Խլաթեցի, Մատթեոս վարդա-
 պետ, Հովհաննես Թլկուրանցի և այլն) տիեզերագի-
 տական, քերականագիտական, օդերևութաբանական,
 տոմարագիտական, անգամ դավանաբանական և աստ-
 վածաբանական աշխատություններում:

ԾԱԻԵԼՈՒԱԾ

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՔ ԾԱՐԱՐԱԾՈՑ
 ՄԵԿԵՆՈՒԹԵՆԷ ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Եղիշեի Արարածոց մեկնության մեզ հասած հատվածների համեմատական բնագրերի հրատարակությունը, որքան ցանկալի և անհրաժեշտ, այնքան էլ ծանր, երկար ժամանակ ու տքնաջան աշխատանք պահանջող գործ է:

Այդ աշխատանքը մենք արդեն սկսել ենք և հույս ունենք մոտ ապագայում ավարտել, սակայն ուսումնասիրության նյութ ծառայած աշխատության մասին որոշ նախնական ծանոթություններ տալու նպատակով անհրաժեշտ ենք համարում սույն հավելվածում բերել մի շարք հատվածներ, որոնց միջոցով հնարավոր է որոշ գաղափար կազմել ամբողջի մասին:

Հավելվածի փոքրածավալության պատճառներից մեկն էլ ուսումնասիրության ընթացքում այլևայլ առիթներով բերված հատվածների ու պարբերությունների առատությունն է, որոնց միջոցով, կարծում ենք, ընթերցողն արդեն որոշ գաղափար ստացած պետք է լինի Եղիշեի մեկնության բնույթի և առանձնահատկությունների մասին: Ավելին, քան տալիս են հավելվածում և ուսումնասիրության մեջ բերված հատվածները, կարելի կլինի ստանալ միայն ողջ բնագրի հրատարակությամբ:

Հատվածների ընտրությունը կատարել ենք աչքի առաջ ունենալով հայ գիտական մտքի պատմության համար նրանց ունեցած արժեքը կամ բանասիրական այս կամ այն խնդրի լուծման տեսակետից տվյալներ պարունակելու հանգամանքը:

1. Վարդան Արևելցու «Լիով պատճառ արարածոց» աշխատության մեջ պահպանված հատվածները բերել ենք ըստ համեմատական բնագրերը կազմելու աշխատանքների ընթացքում գերադասելի համարված №1267 (Ա) գրչադրի, սակավ գեպքերում միայն նշելով նրա նկատմամբ №7452 (Ը) գրչադրի տված կարևոր տարբերակները: Հատվածների մեծ մասը մեր կողմից համեմատված բոլոր ութ գրչադրերի տվյալներով պատկանում է Եղիշեին. հեղինակի վերաբերյալ տարաձայնություններ լինելու դեպքում տողատակում նշել ենք գրչադրերի հաղորդած տարբեր տվյալները: Ահա այդ ութ գրչադրերը.

Ա — Մատենադարան, ձեռ. №1267 (ԺԵ Գ.).

Բ — Մատենադարան, ձեռ. №1136 (1381 թ.).

Գ — Մատենադարան, ձեռ. №1135 (1288 թ.).

Դ — Մատենադարան, ձեռ. №1094 (ԺԴ Գ.).

Ե — Մատենադարան, ձեռ. №1050 (1732 թ.).

Զ — Մատենադարան, ձեռ. №2510 (1393 թ.).

Է — Մատենադարան, ձեռ. №1324 (1281 թ.).

Ը — Մատենադարան, ձեռ. №7452 (1271 թ.).

2. Վարդանի «Լուծմունք ի սուրբ գրոց» (Ժղլանք) աշխատության մեջ պահպանված հատվածների բնագիրը ներկայացնում ենք ըստ Մատենադարանի №750 (ԺԴ Գ.) գրչադրում պահպանված ընդօրինակության, երբեմն օգտագործելով նաև նույն հավաքածուի №2189 (1394 թ.) և №2544 (ԺԴ Գ.) գրչադրերի ընթերցվածները:

3. «Սրբոյն Եղիշեի» վերնագրով հասած հատված-

ները, ինչպես արդեն գիտենք, թվով ինն են, և պահպանվել են Մատենադարանի №4166 (ԺԴ դ.) և №5254 (1280 թ.) զրչագրերում. վերջինում թերթերի կորուստի պատճառով պահպանվել են միայն ա-ե հատվածները: Հավելվածում բերել ենք միայն դ, ե, զ, է, Թ հատվածների բնագրերը:

4. Մատենադարանի 2673 համարը կրող հնագույն թղթյա ձեռագրի (981 թ.) ՄԼԲ հոդվածից բերում ենք Եղիշեի Արարածոց մեկնությունից քաղված երեք հատված:

5. Նույն ձեռագրում, ինչպես արդեն նշվել է, պահպանվել է նաև Եղիշեի մեկնությունից քաղված «Վասն հոգւոց մարդկան» գրվածքը, որի բնագիրը, սակայն, հավելվածում բերում ենք ըստ Եղիշեի «Մատենագրութեան» 1859 թ. վենետիկյան հրատարակության:

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՔ ԾԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ա

Ծննդոց գիրք, Ա դուռ 1 համար

Անմարմին եւ անհատական բնութիւն է Աստուած եւ յամենայնի բաւական. զաննիւթն նիւթացոյց եւ զանէն գոյացոյց. բան գոլով ձայնիւ զամենայն ինչ արար. չորք տարր նիւթեղէն ի պէտս շինութեան աշխարհի արար՝ հող եւ ջուր, աւդ եւ հուր: Զի առանց հողոյ ոչ լինի թանձրութիւն շաւշափելի եւ առանց ջրոյ՝ կալումն եւ լմբոնումն, եւ ոչ առանց աւդոյ՝ շարժութիւն, եւ առանց հրոյ՝ երեւումն:

Երկիր ծանր գոլով գներքին վայրն էառ, եւ ջուր թեթեւ քան զերկիր եւ ծանր քան զաւդ՝ ի վերոյ հողոյ եւ ներքոյ աւդոյն զետեղեցաւ, եւ աւդ ծանր գոլով քան զհուր, զի գիճութիւն ջրոյ գոյ ի նմա, ի ներքոյ հրոյն կայացաւ. քանզի հուրն յինքն գնդեալ, խտացեալ, կարծրացեալ ի վայր սարգեաց զաւդ եւ զհողմն, որ բնութիւն է աւդոյ, որ եւ ի ներքոյ անցեալ հրամանաւ արարչին՝ փչեաց, փեռեկեաց, զհուրն ի վեր եւ ի խոնարհ յերկուս կիսագունդս մեծ գործելով ծոցս շրջաբոլոր, վեցակուսի յամենայն առաջս, զներքին կիսագունդն ի վայր մղելովն՝ ներքին ծոցովն, եւ զերկիր՝ ի վեր փչելով, ըստ նմին եւ ի վերին փորուածս, եւ զեր-

կին ի վեր եւ գերկիր ի խոնարհ ձգելով. երկուցն գտանի պատճառս շարժութեան երկնի, անդադար դնելով եւ տանելով եւ գերկիր անխլիրտ պահելով. զի իւր ծանրութիւնն բնական չթողու գինքն ի վեր, եւ ի ներքուստ՝ հողմոյն բռնութիւնն՝ ի վայր, այլ եւ յամենայն կողմանց հարթ գոլով եւ հաւասարակշիռ պատճառ է կալոյն հաստատ, մանաւանդ զաւրութիւն արարչական բանին, որ կրէ զամենայն եւ պահէ ի կարգի իւրում, որպէս եւ ասէ՝ ի սկզբանէ՝ արար Աստուած գերկին:

«Լիով պատճառ Արարածոց» գրչ. Ա. (1267), էջ 6ա-6բ:

Բ

Ծն. Ա 1

Քանզի գերքն եւ դուրն եւ գորպէսն աշխարհի չասաց Մովսէս, այլ թէ ի սկզբանէ արար Աստուած: Զի մարթ էր մատաժը նման գոլ արարածոցս արարչին, զի որպէս Աստուած յինքեան է եւ չիք նմա տեղի, նոյնպէս եւ աշխարհս յինքեան է: Եւ որպէս Աստուած աննրբ եւ անժամանակ է, եւ աշխարհի արարչութեանն երբ ոչ գրեցաւ: Եւ որպէս ոչ ոք է գիտաւ զգլխորդն եւ գորպէսն Աստուծոյ, նոյնպէս եւ ոչ ունի ասել ոք բովանդակ զամենայն արարածոցն գորպիսութիւն, բայց միայն որ արարն գիտէ զամենայն:

«Լիով պատճառ...», Ա, էջ 6բ:

Գ

Ծն. Ա 3

«Եւ ասաց Աստուած եղիցի լոյս եւ եղեւ լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է»:

Եւ ընդէ՞ր վասն երկնի եւ երկրի լինելութեանն չասաց թէ եղիցի, այլ զարարն միայն, զի կամեցաւ կարծեմ զհայհոյիչ լեզուս, որ անարար եւ անեղ ասէին, եւ ինքեանց՝ արարածոց երկիր պապանէին: Եցոյց եթէ երկրպապեալքն ի նոցանէ արարածք են ճշմարտին Աստուծոյ, յԱստուծոյ այնպէս շարժեալ Մովսէս ասաց:

Եւ քանզի Աստուած լոյս է, չէր պիտոյ նմա լոյս եւ ժամանակ առնելոյ գերկինս եւ գերկիր. իսկ յորժամ արար զյարկս զայս մեծ՝ պիտոյ էր սմա եւ լոյս եւ ժամանակ, որպէս նախ տուն կազմէ ոք եւ ապա ի խնդիր ելանէ լուսոյ արեգականն եւ ճրագի: Այս առաջին բարբառ Աստուծոյ առանց չրթանց շարժելոյ եւ լեզուի տատանելոյ եւ աւելոյ հնչելոյ եւ ատամանց ընդհարկանելոյ, զի ոչ գործիք եւ յաւգապատ բան է կարծել զԱստուծոյ, այլ վասն զմեզ ուսուցանելոյ վարի մերովս աւրինակաւ, նախ զարարն դնելով՝ ի ցոյցս գործոյն, եւ ապա զասացն՝ զանաշխատն յայտ առնելով:

«Լիով պատճառ», Ա, էջ 8ա-8բ:

Դ

Ծն. Ա 3

Բայց մի կարծեսցուք նոր արարչութիւն զլոյսն արտաքոյ չորից տարերցն, այլ խզած ի հրեղէն երկ-

նիցն՝ գյատակութիւն լուսոյն յայրեցողութենէն ի վայր կորզելով: Քանզի լոյսն ծնունդ է հրոյ, եւ այլ է ծընունդն եւ այլ է ծնաւդն. զհուրն մերձաւորքն ճանաչեն եւ զլոյսն հեռաւորքն տեսանեն: Գոյացութիւնն մի է որոշողութիւնն՝ յերկուս հատանի: Եւ ոչ միայն հրոյն է այս ընտրութիւն, այլ եւ երկոց տարերցն. այլ է խստութիւն հողմոյ եւ այլ է սննդական աւդ, այլ է գիճութիւն ջրոյ, ուստի ծնունդ լինի, եւ այլ է անուշութիւն նորա, որ փոփոխի ի գոյնս, ի համս եւ ի հոտս. այլ խոշորութիւն հողոյ՝ քարուտն եւ այլ քրքիրն եւ արդաւանդն ի բերս բուսոց. եւ այսու խառնին սիրով եւ տեւեն յաւիտեան:

«Լիով պատճառ», Ա, էջ 8ր:

Ե

Ծ՞ն. Ա 6

«Եւ ասաց Աստուած՝ եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ»:

Եւ արդիւնացաւ հրամանն, թանձրացաւ հողմն, խտացաւ բնաւին անպախելի եւ անպայթելի, եւ էանց ընդ մէջ ջրոյն: Եւ յորժամ ասաց՝ եղիցի մեկնել ի մէջ ջրոցդ եւ ջուրց, վերացաւ հասարակն ջրոյն եւ գինի նորա հաստատութիւնն՝ ի սահմանեալ տեղին իւր:

Եւ զի ասաց՝ Արար Աստուած զհաստատութիւնն, եւ անջրպետեաց ի հաստատութիւն հաւատոց վասն բանին զաւրութեան, զի ասացն՝ արար է, եւ անջրպետելն յայտ առնէ թէ չէ արկեալ զջուրն ի վերայ հաս-

տատութեանն որպէս ի կոնք, եւ սեղմեալ, այլ զայն ցուցանէ թէ հաստատութիւնն միջոց է ջրոյս, որ ի վերայ երկրի, եւ ջրոյն՝ որ ի վեր է քան զնա, որքան այս ի վայր քան զնա, որպէս Դաւիթ ասէ՝ Ջուրն որ ի վեր է քան զերկինս:

Եւ պատ առին երկոքին զամենայն աշխարհաւս, ընդ վերինն երկին գնդաձեւ, ոչ կարի հեռի եւ ոչ բնաւին մերձ. հասարակակշիռ աւդոյ շնչմամբ ի ջրոցն կենդանութիւն առ երկու իրս աւգտակար՝ զծանրութիւն երկրի թեթեւացուցեալ եւ զկիզողական հուրն արգելեալ ի վեր, եւ կամարաձեւ ջուրն՝ ի հաստատութիւնն, եւ հրեղէն երկինն՝ ի վեր եւ ի խոնարհ: Եւ յամենայն կողմանց հեռացեալ յերկրէ եւ հողմով խառնեալ ընթանան անդադար: Եւ ջրեղէն կամար ոչ չըփոթմամբ տեղի ինչ ծանծաղադոյն է եւ տեղի ինչ թանձրագոյն, այլ հարթ եւ զուգակշիռ ընթացիւք ի վեր եւ ի խոնարհ, անկարելի եւ անհատական: Եւ չէ զարմանք յորժամ տեսանեմք ջուրս յամպս կապեալ, եւ ոչ արձակէն առանց հրամանի. եւ զի շարժին ջուրքն յալիս եւ ի ձայնս, վկայէ մարգարէն՝ Որ արար զքաղմութիւն ջուրցն ծփանաց յերկինս՝ տէր ամենակալ տնուն է նորա:

«Լիով պատճառ», Ա, էջ 9ր-10ա:

2

Ծ՞ն. Ա 10

... Հարթայատակ կոկեալ, ողորկեալ եւ ջուրն որ ի

վերայ՝ հողմով մրրկեալ արագավազս եւ փախուցեալս միշտ, այնքան զի ոչ կարէ օգն առնուլ ի նմանէ ջուր, խլէ, թափէ եւ հանէ արագընթաց արշաւանքն: Վասն որոյ յոլովք ոչ ծովս, այլ գետս կոչեն, ոչ վասն սակաւութեանն, այլ վասն եռանդնաշարժ գնացիցն: Իսկ որ յայնկոյս Քեռոնոս կղզոյն կոչեցելոյ ծովն է՝ Անգլլընդական կոչի, քանզի նա բոլորածիր կղզի է ընդ մէջ երկուց ծովուցն շուրջ զերկրաւ բոլորեալ, ուր գազանք են ահագինք եւ վիշապք վիթխարիք. եւ ի խառնակութենէ նոցա ելանեն ցաւք եւ հիւանդութիւնք ի մարդ եւ յանասուն, զոր հողմք առեալ բերեն եւ արկանեն զկենդանեօք: Իսկ որ յայս բնակութիւն ջուրց գետին է՝ լեռնամէջք են եւ խորածորք, եւ յաղագս այնորիկ գետեղեալք են ջուրքն եւ անվնաս ծնանին կենդանիս եւ սնուցանեն եւ նաւորդք գնան ի վերայ նորա վստահութեամբ, եւ շուրջ զեզերօք նորա բնակեն մարդիկ բարեխառնեալք եւ յաջողեալք:

Վասն որոյ կոչի Անգլլընդական, զի անդընդականք, որ է եզերականք, բնակէն անդ խնդական զբօսմամբ: Դարձեալ կոչեցաւ ծով, զի ծալմամբ եւ ծաւալմամբ այլայլի միշտ եւ զսահմանն իւր զեղեալն յարարէն ոչ թողու պատկառելով ի դրացւոյն՝ ի չընչին աւազէն, որում ասացաւ ցայդ վայր եկեսցես եւ մի գանցանիցես:

«Լիով պատճառ», Ա, էջ 11բ:

է

ԾՆ. Ա 14

Երկուս գունդս կարակնաբոլորս (Ը. կարակնածեւս՝ բոլորս), օղեղէնս խտացոյց, մածոյց որովայնոցոյց, բերանացոյց եւ զհամատարած լոյսն արկ ի նոսա զըսեռն եւ զյըստակն եւ զհրաշատն հարկ յաման արեգականն, եւ զնուաղն (Ա, զնուաղն) եւ զիգագոյնն՝ յանօթն լուսնին, եւ զեւս աղօտագոյնն եւ զթանձրատեսակն ըստ աւելեաց եւ պակասման, հարկ յաստեղս եւ եղ զնոսա ի ներքոյ հաստատութեանն:

«Զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնջեան, եւ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ և զաստեղս...» (ԾՆ. Ա, 14ա):

Նախ զերկուսն մեծ ասելով փոքրկացոյց զայլսն, եւ զարեգակն մեծ կոչելով առաւելեցոյց զնա՝ որ զէութիւն գոյին ունի զիշխանութիւն, քան զայն, որ զստուէրին, մանաւանդ զտիւն արեգակն առնէ եւ ըզգիշերն՝ գալով եւ գնալով: Իսկ լուսին զգիշեր ոչ առնէ, այլ միտիթարէ զտխրութիւն ստուէրին՝ ցանկալի գործելով, եւ զաստեղս[ն] առաւել պայծառացուցանէ զաղօտ լոյսս նոցա յորդորելով:

«Լիով պատճառ», Ա, էջ 14ա:

Ը

ԾՆ. Ա 17

«Եւ եղ զնոսա Աստուած ի հաստատութեան երկնից»:

Ոչ անշարժապէս կառուցեալ, այլ որպէս զԱզամ
ասի դնել ի դրախտին, զի շրջեցի ի նմա յընդարձակի,
նոյնապէս զնոսա զի գնասցեն ընդ նա եւ ի ներքոյ նո-
րա, ոչ ոտիւք արագ վազելով եւ ոչ թևովք թռուցելովք,
եւ ոչ, ըստ ջրայնոցն, լաւդելով, այլ յԱստուծոյ զօրա-
ցեալք ի Հրամանէ եւ յեղեալ սահմանէն ոչ խոտորելով
բնաւին, դնան ոչ յերձկի շաւիղն այսօր, այլ չափելով
իմն ի Հարաւոյ ի Հիւսիս, եւ ի Հիւսիսոյ ի Հարաւ շար-
ժելով:

Թորժամ ի Հարաւ շարժի, արեգակն սառնասառոյց
պաղին կողմանք Հիւսւսոյ, եւ ձմեռնային ցրտութիւնն
ազդէ ի միջոցս աշխարհի. եւ աշխարհն Հնդկաց ամառ-
նանայ ի պտղահասութիւն, քանզի ծով Հրեղէն է Հա-
րաւ, վասն բնական ջերմութեանն, եւ արեգակն եւս
տայ նմա օգնութիւն: Եւ զմեր քախառն ձմեռնն առնէ
նոցա քաջախառնութիւն: Եւ պտուղք աշխարհին որ
բղխեն որիչ են ի պտոյ մերոյ աշխարհիս՝ Համով եւ
Հոտով եւ գունով. եւ եւղք եւ խունկք յոլովագոյն ու-
նին զմասունս Հրոյ. եւ սեաւ մաղձն յոլով է ի մար-
դիկն, վասն որոյ լինին իբրեւ զարջասպաններկս. եւ
ոչխարք՝ անքրդաբերք, ուղտք եւ գոմեշք՝ մերկք եւ
լերկք, բայց քանզի Հրուտք են, առողջաբերք եւ երկա-
րակեացք են բնակիչքն:

Եւ մեզ դարձեալ անտի բանին դրունք դարնայ-
նոյն, իբրեւ արեգակն ի յայս (Ա. սայլը) կոյս կամի
չուել Հրեղէն իւրովք զօրաւքն. եւ Հիւսիսայինն ընդդէմ
նորա գումարեալ իբր նիգակաւ Հարկանէ, եւ անդրէն

փախչի, եւ նորա զՀետ մտեալ առ սակաւ սակաւ մա-
շելով զնա տանի ի տեղի իւր:

«Լիով պատճառ», Ա, էջ 14ա-14բ:



ԾՆ. Ա 16

Արու ասեն զարեգակն եւ էդ զլուսինն, զոր արե-
գակն ի տուընջեան պնդէ, լուսինն ի դիշերի քրքրէ եւ
սնուցանէ զապականացու մարմնոյս որպիսութիւն:
Նոյն լինի եւ պատճառ նուաղման (Ա. նուաղման),
քանզի ի լնուլն՝ լնուն ծովք եւ կենդանիք ուղղով, եւ
ծառք՝ կեղեւով. եւ ի թերանալն (Ը. պակասիլն)՝ թերա-
նան: Եւ յիրաւի ասացաւ եւ նա մեծ ընդ արեգական,
յորժամ այսքան փոփոխմունք (Ը. լինին եւ) հետեւին
նմա, զի թէ միշտ աճէր՝ վայրափառեալ ցրուէր ամե-
նայն, եւ եթէ միշտ նուաղէր՝ ի բաց կորնչէր. եւ այս
նշանակ առողջութեան եւ Հիւանդութեան, թէ զայս ոք
գնէլ նշանս, քանզի զթուլացեալն ի լուսնէ պնդէ արե-
գակն, ուստի գոյանան Համք⁶ եւ Հոտք յառողջութիւն.
Եւ ոչ միայն նշան ցուցանեն այլեւ կրակիցք են բերրի
տարերցս: Նոյնապէս եւ դասք աստեղաց զործակից լի-
նին արեգական եւ լուսնի, ոչ միայն զարդարելով գեր-
կին ի նոցա՝ զատչիլն, ի ձեռն մոլորակաց եւ անմոլա-
րից աստեղաց, Հանգէտ նոցա, աւգնականութիւն մա-
տուցանեն արեգական Հոլովման, եւ լուսնի՝ բարեխառ-
նութիւնս՝ առնելով կարի ցրտութեան եւ ջերմութեան:

Այլ զի ասէ զարեգակն մեծ քան զլուսին. զի մեծ է

որ տայ, քան որ առնու, զի տայ լոյս լուսնի արեգակն
մինչեւ լնու զնա, եւ Հանէ՝ մինչեւ սպառէ:

«Լիով պատճառ», Ա, էջ 14բ-15ա:

Ժ

Ծն. Ա 28

Այլ եւ իշխանն օտարակերպ է յիշխեցելոցն. ոչ իբրեւ զառիւծ մագլաւոր, կամ իբրեւ զփիղ ժանաւոր, կամ իբրեւ զուարակ եղջիւրաւոր, կամ իբրեւ զարծուիս ճապուաւորս, կամ իբրեւ զկոկորդիլոս խեցեմորթ. ոչ կնճթեղ, ոչ ցոկեղ, այլ մերկ, փափուկ, դիւրապատահ: Եւ ամենայնիւ ցուցանէ զձեւ իշխանութեան եւ զթաղաւորութեան կերպարան:

«Լիով պատճառ», Ա, էջ 19բ:

ԺԱ

Ծն. Բ 2

Բարեւք ասաց մարգարէն երեք աշխարհք գոլ՝ աշխարհարարն եւ աշխարհ եւ մարդ. Աստուած՝ իմանալի աշխարհ, աշխարհ՝ զգալի, մարդ՝ զգալի եւ իմանալի աշխարհ: Եվ չէ անպատեհ Աստուծոյ ի Համար անկանել իւրոցն գործոց, զի կտակ եթէ ձեռն եւ պատկեր թագաւորի ոչ կնքէ՝ զնա չէ Հաստատուն, վասն որոյ եւ այժմ արարիչն կնքէ զաշխարհ՝ Հանգչելովն յեւթներորդում աւուր:

«Լիով պատճառ», Ա, էջ 20բ:

ԺԲ

Ծն. Բ 18

Բարի է բնութեամբ Աստուած եւ նախագէտ. Հարժեցաւ բարին առնել զԱդամ եւ զԵւայ: Նախագիտութիւնն որ ի նմա, զիտաց զոր ինչ լինելոց էր, եւ ոչ կարաց նախագիտութիւնն Աստուծոյ արգելուլ զբարի Հարժումն Աստուծոյ յառնելոյ զմարդն եւ զաւգնականն իւր, զի անկեալ ի Հրեշտակական անախտ անմանէն՝ աւգնեսցէ կինն առնն անասնապէս անմանն եւ բազմանալոյ, ըստ աւրՀնութեանն որ ասաց՝ Աճեցէք եւ բազմացարուք եւ լցեք գերկիր, եւ ոչ զգրախն անմեղապէս եւ Հրեշտակավայելուչ:

«Եւ ստեղծես տէր Աստուած զամենայն գազանս եւ զամենայն սողունս» (Ծն. Բ 19):

Ըստ վերագոյն ասիցն վասն ծառոցն ասի. եւ այս գազան եւ թռչուն ստեղծանել Աստուծոյ ի տեսիլ Ադամայ, Հաւատալ թէ եւ այլքն նոյնպէս ստեղծան: Բայց եւ զամենայն գազանս եւ զամենայն թռչունս ասելովն զառաջինն ստուգէ, եւ Հաւաստէ զստեղծուածս, զանասունս ընդ գազանացն եւ ընդ թռչնոցն ծածկապէս յիշելով:

Եւ զեւսն զի՞ յաւել. քանզի անուանս Հանդերձեալ էին առնուլ, եւ որպէս թէ այնու յեւթիւն գալ ի չէութեանէ, որք առանց անուան ընդ ոչէսն ունին զՀաշիւն:

«Եւ ած զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեսցէ. եւ ամենայն շնչոյ կենդանոյ զինչ եւ անուանեաց Ադամ՝ այն անուն է նորա» (Ծն. Բ 19):

Առ Ադամ ածելն զամենայն ստուգէ արտաքոյ զրախտին կոչել անուանս, եւ ոչ յեզերս զրախտին, որպէս ասեն:

Տեսանել ասէ զինչ կոչեսցէ: Քանզի արար զնա բանաւոր եւ իմաստուն, փչելով ի նա շնորհս. տեսանել կամի զոգւոյ նորա զլաւ ծնունդն, ցուցանել՝ զոր ունի հանճարն, ոչ թէ անգիտանայ եւ փորձել կամի թէ զինչ կոչեսցէ զնոսա, այլ զինքն իշխանութիւնն յայտ առնէ, որպէս թէ զոր ինչ եւ կամի իշխան է կոչելոյ, զի նոքօք հանգերձեալ էր վարիլ աւդնականաւք, որպէս իշխան՝ իշխեցելովք: Նախ անուանս հրամայէ կոչել, զի զկնի ասելոյն՝ Արասցուք աւդնական, առնթէր զանուանակոչութիւնն դնէ (այլք՝ յիշէ):

«Լիով պատճառ», Ա, էջ 26ա-26բ:

ԺԳ

Ծն. Բ 19

Զթանձրութիւնն աչաւք տեսանեմք եւ մտաւք որոշեմք, իսկ զհրնչումն ճայնից ականջաց եւ աչաց մտաց թարգմանեն, իսկ զանհրեւոյթսն միտք միայն իմանան, առանց աչաց եւ ականջաց, բայց անուն ոչ ընդունի, վասն որոյ եւ խաւսել իսկ ոչ կարեմք զնմանէ բանիւ: Եւ մարդ ոչ մարմնով, այլ մտաւք է պատկեր Աստուծոյ: Եւ Աստուած յառաջ քան զլինելն տեսանէ, եւ հաստատ տեսութիւն մտացն է քան զաչացն, եւ նախատանգծ մարդոյն աչաւք եւ մտաւք միանգամայն եւ ից զպակասութիւնն կոչելով անուանս կենդանեացն,

զի ոչ վայրապար ինչ արար Աստուած, այլ զկարեւորն, վասն որոյ եւ ասէ՝ Ամենայն շնչոյ կենդանոյ զինչ եւ անուանեաց Ադամ, այն անուն է նոցա: Զի ոչ անդէպս ինչ կոչեաց, այլ զյարմարն եւ զնմանն, որպէս առիւծն յառնլոյն, եզն՝ ի հեզութեանէն, շուն՝ ի շողոքորթելոյն, կատուն՝ ի տան կալոյն, խոզն՝ ի խռողողութեանէն, եւ այլք այսպիսիք (Ը, նոյնպէս):

«Լիով պատճառ», Ա, էջ 26բ:

ԺԴ

Ծն. Գ 8

... Համարձակեցան ոմանք, յարտաքնոցն, ասել լինել մարդոյն ի զրախտն զհազար ամ, վկայ ածելով զասելն Դաւթի՝ Հազար ամ յաչս տեառն, որպէս օր երեկի: Իսկ այլք՝ յընտանեաց՝ ինչ օր ասացին, ըստ հոգեծնութեանն արուի. իսկ մեք ընդդէմ ոչ կարեմք ասել ինչ եւ ոչ զմերն հաստատել, քանզի է ինչ զոր յայտնեաց Աստուած մարդարէին, եւ է՝ ինչ զոր ծածկեաց, որպէս գերկնիցն զարարն եւ եթ ասաց եւ գերբն լոեաց. նոյնպէս եւ վասն ծառոյն զիտութեան բարւոյ եւ չարի ասաց եւ վասն պտղոյն լոեաց: Զի թեպէտ են արմատք մահաբերք, այլ նոքին ոչ կարեն կենաց պատճառ լինել, զի երկու բնութիւն ի մի ծառ ոչ կարէ գոլ, այլ բանն է աստուածային սաստկութեան եւ քաղցրութեան, ծառն՝ միջնորդ ընդ մարդ եւ ընդ Աստուած:

«Լիով պատճառ», Ա, էջ 30ա:

Ծն. Զ 22

Եւ զհարիւր ամ յերկարեալ գործոյն եւ համբաւուն եւ ձայնին կացնաւորաց, ուռնաւորաց, դրածակից, երկաթագամս, պղնձագամս, մամարազարկս, թակակոփս հնչումն գործելով լնոյր զտիեզերս, եւ ի գիշերի նշոյլս արձակէր լուսով լուսնի, եւ ի տուրնջեան յարեգականէ փայլատակունք հատանէին ի պղնձոյն եւ յերկաթոյն: Եւ հարցումն եւ տարակոյս եւ պատասխանիք: Եւ տրտմութիւնք եւ արհաւիրք յարս եւ ի կանայս եւ ի տղայս. եւ զօրութիւն արարչական խնամոցն հարկանէր զսիրտս նոցա, այլ խստասրտութիւն բազմաց (Ը. նոցա) եւ սովորական հեշտախտութիւնն յաղթէր, եւ այպն կատականաց արարեալ ի ծաղր յաճախէին ի հարսանիս, ուտէին, ասէ, ըմպէին, արանց լինէին եւ կանայս առնէին մինչեւ յօրն յորում եմուտ նոյ ի տապանն, եւ ոչ գիտացին արբեալքն պղծութեամբ...:

«Լիով պատճառ», Ա, էջ 42ա-42բ:

ԺԶ

Ծն. Է 7-9

Հոտ կենաց բուրեաց ի տապանէն. եւ այնքան ա-նոյշ հոտ բուրեաց (Ը. բորբոքեցաւ) ի տապանէ անտի, մինչեւ մոռանալ արօտականացն զարօտն իւրեանց եւ որսականացն զորս իւրեանց: Եւ վաղվաղակի դիմեցին ընդգէմ անոյշ հոտոյն (Ը. անուշահոտութեանն), եւ մինչեւ ի տեղին հասին ոչ կարացին ուրեք զտեղի եւ

զդադար առնուլ. տկարքն աներկիւղ ի հզօրագունիցն եւ յափշտակաւքն ոչ յիշէին զսովորականն: Երկնաւոր ձայն լսելի լինէր եւ հրաման երկնաւոր թագաւորին: Եւ դիմեցին ի ներքս. բայց թուով առնոյր նոյ ի տապանն եւ զայլսն արգելոյր, սակայն ոչ մեկնէին ի տեղ-ւոյն մինչեւ ցլրումն եւթն աւուրն ցսկսանել անձրե-ւին, յորում բառաչելով եւ մոնչելով եւ ոռնալով գնա-յին յո եւ զնային:

«Լիով պատճառ», Ա, էջ 42բ:

ԺԷ

Ծն. Ը 3-4

Արարատու լեառն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ: Գոյ ի Պաղեստին եւ ի Գամիրս Արարատ, այլ մերս Այրարատ: Երկու գետով եւ տապանաւն գեր ի վերոյ եմք քան զյոլովս: Եւ թէ զի՞նչ օգուտ է, նախ՝ իմաստութեան պատճառ է մեզ, անմոռաց պահելով զԱստուծոյ արար-չութեան, եւ ակն ունել փոփոխմանն ի նոյնն, ապա եւ՝ երիս բարեխօսս ունիմք առ Աստուած, զի այն որ եղեւ պատճառ փրկութեան միոյ տանն, լիցի եւ մեզ: Եւ գետքն հրաւիրակք են մեզ, զի յակն գնացուք ուստի գան սոքա:

«Լիով պատճառ», Ա, էջ 43բ:

Ծն. Թ 3

... Եւ զի արեամբ ազգակից են մարդ եւ անասուն, արգելու զհարազատն ուտել, զի հսկայքն որպէս ան-
յադ էին ի խառնակութիւն եւ անխտիր՝ ի մարմնակե-
րութիւն, յայն սակս զի ուտէին անհրաման՝ հրամայէ
ուտել, թէ չկարէն ժուծալ, սակայն ի բաց արձակեալ
զօդ եւ զհուր եւ ասղա ուտել զհող եւ զջուր: Զի արուն
եւ էգն շարժին ի խառնիլ եւ միաւորին. օդ եւ հուր ա-
ւելի է յարուէն, ջուր եւ երկիր հոլով է յէգն: Հուրն մա-
ծուցանէ, ջուրն եւ հողն մածնուն, օդն սնուցանէ չոր-
քըն միաբանեալ լինին մի գոյացութիւն (Ա, գոյութիւն)
կենդանոյ: Եթէ ոչ արեւնայ հուրն՝ ոչ կարէ ջեռու-
ցանել զօդն եւ ջեռուցեալ շնչէ ընդ արեան երակսն, եւ
ջերմութեամբ եւ հովութեամբ շարժի սաղմն ի կենդա-
նութիւն եւ յաճումն եւ ի սնունդ: Եւ մի է առ անա-
սունն եւ առ մարդ, եւ միապէս ունին զցաւելին եւ
զչարչարելին: Մի կերիցեն զազանաբար, զի մի ընդ
զազանս եղիցին, զի մսակերքն անողորմք են եւ գա-
զանամիտք, ուստի եւ առանց օրինաց յոլովք պար-
կեշտացան: Այլ իբրեւ զբանջար զի՞ սասաց, քանզի ոչ
ամենայն բանջար ուտելի է, որպէս ցմախ, բանգ, շա-
ղինգ եւ այլք, որք գառինք եւ ոմանք մահաբերք իսկ
են:

«Լիով պատճառ», Ա, էջ 44բ:

Ծն. ԺԱ 1-4

Յետ այնորիկ ասէ՝ էր ամենայն երկիր լեզու մի եւ
բարբառ մի ամենեցունց: Եւ եղեւ ի խաղալ նոցա յա-
րեւելից գտին զաշտ մի յերկրին Սենայար եւ բնակեցան
անդ: Եւ ասէն այր ցընկեր իւր՝ եկայք արկցուք աղիւս
եւ թրծեսցուք զայն հրով. եւ եղեւ նոցա աղիւսն ի տե-
ղի քարի եւ կուպր՝ ի տեղի շաղախոյ: Եւ ասեն՝ եկայք
շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի զը-
լուխն մինչեւ յերկին:

Զմիաբանութիւնն ի չարն այսպէս ամբաստանէ.
էր, ասէ, ամենայն երկիր լեզու մի, որպէս ձայնք եւ
բարբառք ի ձայնական գործեաց յառաջ եկեալ միա-
նան ի լեզու եւ ի շրթունս, որք դրունք են ազգի ազգի
խօսից, այսպէս եւ տանուտերքն ի բաց կացեալ ի բարոյ
բնաւին, միաբան գործէին զվատթարն եւ խորհեին:
Ընդ որս եւ յազազս դրախտին խորհեցան, զոր լուան
տնկեալ յարեւելս, յորմէ զրկեցին զինքեանս նախա-
ստեղծքն. եւ գնացին խնդրել զնայ, իրեւ ոչ գտին, զի
ջուր ծովու եւ Շամանդաղ ծածկեալ էր զնա, յիշեցին եւ
զտապանն, եւ այն եւս չէր յայտնի: Երկեան ի նոյն-
պիսի պատուհասէ, զի գործք իւրեանց նոյնպիսիք էին:

«Եւ խորհեցան շինել քաղաք եւ աշտարակ»

Քաղաք զատելութիւնն յայտ առնէ եւ աշտարակ
գերկիւղն ի ջրհեղեղէն. յայն ապաւինեցան եւ ոչ
յԱստուած, զոր ասեն մեհեանս շինէին, զի լինիցի նո-
ցա ապաւէն ի ջրհեղեղէն: Նախ քաղաք եւ տեղի վա-

ճառու ի գիւտ պիտոյիցն, եւ ապա զաշտարակն հաս-
տահիմն, լայնամիջոց, սերտաշէն, աստիճանաձեւ ելա-
նելիւք (Ա, ելիւք), փորափողոց, լուսանցոյց պատու-
հանիւք ընդ լեռնաձեւ բարձրութիւն երկայն ճանա-
պարհիւք՝ ելիւք եւ ի ջիւք, խորովեալ հրով աղիւսիւք եւ
կշայիւք (Ա, շկայիւք) ծեփովք, թեթեւ ի բարձրութիւն:
Սկսեալ ի սկիզբն ծննդեանն Ռաբայ, մինչեւ ց' Խ ամն
ոչ դադարեալք զամառն եւ զձմեռն, վասն բարեխառ-
նութեան տեղւոյն, մինչեւ հասուցին յործուտ եւ ի
մղծկուտ օդն, որպէս ուր ոչ կարեն ընթանալ թռչունք,
զի այրին թեւաթափեալք եւ անկանին յերկիր:

Տասն ամսեա ճանապարհ, որպէս ասեն, ընդ ելա-
նելն եւ ընդ իջանելն:

Եւ ի շխանք Բէլն եւ Ղամսուրն եւ Հայկն: Եւ Բելն
որսայր նոցա որս, որք շինէին անխոնջ եւ անվաստակ՝
արք եւ կանայք: Ոչ ոք ասէր «չատ գործեցի» ցընկերն,
այլ թէ՛ դու շատ գործեցէր:

Ոմանք ասեն, թէ սալք ոսկւոյ եւ արծաթոյ ի հի-
մանէն մինչեւ ցաւարտն դնէին շուրջանակի, ընդ մի-
ջոցս աղիւսոյն, զոր աստի անտի դնելն պահելով
զոսկին՝ ի պահել զորմն անխախուտ եւ լինել գանձ
որդւոց իւրեանց:

«Եւ էջ տէր ի տեսանել զքաղաքն եւ զաշտարակն
զոր որդիքն մարդկան շինեցին» (Ծն. ԺԱ 5):

Անբովանդակ բնութիւն եւ ամենակալ ուստի՞ ի-
ջանէր, եթէ ոչ ի գութ ողորմութեան, յորժամ իրա-
ւունքն հարկանել խնդրէ եւ կորուսանել զքաղաք եւ

զաշտարակ. զոր կաւեղէնքն ի կաւոյ շինելն ամբոցս
յերեսաց տեառն, որ ասաց. հող էիր եւ ի հող դարձցիս,
որում էէր արժան կաւուն ընդդէմ դառնալ բրտին:

Եւ ասէ տէր՝ «Ահա ազդ մի եւ լեզու մի եւ զայդ
սկսան գործել: Եւ արդ ոչ ինչ լիցի դոցայ պակաս առ-
նել, զոր ինչ եւ կամեսցին ի սէր ազգակցական եւ ի մի
լեզու խօսակցութեան» (Ծն. ԺԱ 6):

Ասէ՛ «Կապեցի զդոսա ի մի զօրաւոր յաստուածա-
պաշտութիւն, դոքա ի հակառակն՝ ի չարն զօրանան եւ
չթողուն ինչ պակաս՝ եկայք ի ջնուք եւ խառնակեցուք
զլեզուս նոցա» (Ծն. ԺԱ 7):

Ընդ որդի եւ ընդ հոգի է բանս, որովք արար
զմարդն ազգ մի եւ լեզու մի: Խառնակելն ոչ թէ շփո-
թել է զնոսա, այլ զի խառն գտանի ազգացդ բառ եւ
բան եւ անուն:

Ուստի գեղեցկաբանութիւն եղեւ ի մի խոշոր լեզ-
ուին. փափուկ՝ հելլենն, սաստիկ՝ հռոմայեցին, սպառ-
նական հոնին, աղաչական ասորին, պերճական պար-
սիկն, գեղեցկազարդ ալանն, ծաղրական գութն (Ա,
գունդն), տափախօս խաւարաձայն եգիպտացին, ճճուո-
ղական հնդիկն, համեղական հայն, որ կարէ զամենն
յինքն ամփոփել:

Եւ որպէս գոյն առ գունով պայծառանայ, եւ դէմք
ի դիմաց, եւ հասակ առ հասակ, եւ արուէստ առ ար-
ուէստ, եւ գործ առ գործով, նոյնպէս եւ լեզու լեզուաւ
գեղեցկանա, պիտանացու առ ստուգաբանութիւն: Եւ
որ կարի խաղտալուր լեզուն է՝ օգուտ գտանի: Եւ այս

գործ Աստուծոյ է ի պատուհասելն խառնել բազում բարութիւնս. զայսմանէ ասաց Մովսէս՝ Կացոյց սահմանս ազգաց (Ը Հեթանոսաց): Եւ բաժանեաց բարձրեալն զազգս ամենայն ըստ թուոյ Հրեշտակաց Աստուծոյ, զի որպէս առ Սեթաւ եւ Ենոփաւ կոչեցան որդիք Աստուծոյ եւ աստ՝ Հրեշտակք Աստուծոյ, մարդիկ պատգամաւորք Աստուծոյ իմաստութեանն եւ յոյժապատիկ իմաստութեանն սահման ոչ փորելով փոս, ոչ թագելով քարինս կամ արկանելով պարիսպս, զի այսոքիկ դիւրափոփոխք եւ անհաստատք են, իսկ զայս եւ ոչ թագաւորք ամենայն երկրի կարեն փոփոխել (Ա փոխել), բայց միայն Աստուած որ ետ զսա յորժամ ի լեզուս Հրեշտակաց խօսիցիմք ամենեքեան, եւ ոչ որպէս ասեն՝ յԱդամայն:

Իսկ թէ ո՞ր է լեզուն յորմէ բաժանեցան.

Քաղղեացիին է, որ մնաց առ եբեր, որպէս եւ արդ գտանին առ նոսա անուանք նահապետացն՝ Ադամ, Սեթ, Ենոփս, որ մերձ են յասորին, եւ ոչ Հեռի:

Ողորմեցաւ Աստուած զուր վաստակելոցն, եւ ոչ նոցա տայր քակել, զի մի կրկին աշխատ լիցին. այլ գործ դնէր Հոգւոյ եւ բեկոտեալ ցրուէր զՀինուածն, ոչ փլուցանելով ի վերայ շինողացն ի կորուստ նոցա, թէպէտ ասեն զԲել յայնմանէ մեռեալ: Այլ յետ այնորիկ ի Հայկա՝ որդւոյ Թորգոմայ: Քանզի տկարաց՝ իւրոց ձեռադործաց՝ մարդկան, որք տխմարութեամբ առ Աստուած դիմեալ գնացին (Ը երթային) խնայող եղեալ, զանճառելի Հոտ դրախտին առեալ, արկանէր զՀԲ տա-

նուտէրօքն եւ զնոցին ազգակցաւքն: Զի Հանդէպ դրախտին կայր, ասեն, զլուխ աշտարակին: Այլ եւ ինքն Աստուած անդ եկեալ գործէր դրախտ զվայրն եւ տայր տեսանել նոցա իմանալի տեսութիւնս, եւ լսել՝ լուր իմանալի, եւ առնուլ՝ Հոտ իմանալի: Եւ այնպէս մոռացան զառաջինն, եւ յանկարծակի, որպէս ի քնոյ զարթուցեալք, ոչ լսէին զիրեբաց...:

«Լիով պատճառ», Ա, էջ 47բ-48բ:

Ի

Ծն. Ժէ 5

... Այլ գիտել պարտ է, թէ մարդ պատուական բանիւ է, եւ նովաւ տիրէ ծովու եւ ցամաքի: Եւ բանի պարբեկութիւնք է. են. է զիր որ ձայնանան եւ բանանան, զի գործիք են բանի գիծքն, որ եւ ի մեր լեզուս ԼԶ լինի:

Եւ ամենայն տառից առաջին եւ Հայր այբն է. եւ առաջին ձայնաւոր եւ սկիզբն բոլորից թուոց: Եւ ընդ ամենայնի միարանի, ընդ պարզին պարզանա եւ ընդ թաւին թաւանա եւ ընդ սոսկին սոսկանա: Եւ խառնելովն ընդ ամենայնի՝ ամենայն լինի, եւ մնա անխառն: Մատամբ գրչի մտէ ի բառ եւ առանց բարբառի խօսի, ձեւանայ եւ տեսանի աչաց. ձայնիւ հնչէ ի լսելիս եւ մտաց ուսուցանէ իմաստութիւն. թուէ զինչս մեծատանց եւ չտա ծառայից գողանալ. արբանեակ թագաւորաց եւ մեկնիչ խորհրդոց: Առանց ոտից ընթանա, առանց թեւոց թռչի, գործէ առանց ձեռին եւ խօսի ա-

ռանց լեզուի: Նովաւ կոչեմք զԱստուած, նովաւ մխիթարիմք արքայութեան յուսով, նովաւ երկնչիմք ի դատաստանացն Աստուծոյ. չիք քան զսա մեծ պարգեւ Աստուծոյ ի կենցաղս յայս¹:

Հարցին ցոմն, զի՞նչ երեւի քեզ ընտիր ամենայն բարութեանց Աստուծոյ, ասաց՝ իմաստութիւն: Քանզի ամենայն ինչ Հակառակ ունի, մեծութիւն զաղքատութիւն, կեանք զմահ, առողջութիւն զհիւանդութիւն. իմաստութեանն չկա Հակառակ: Եթէ մեծանա՝ մատակարար լինի, թէ աղքատանա՝ յԱստուած մերձենա, թէ առողջ՝ դռհանայ, թէ հիւանդ՝ փառաւորէ, թէ կեայ՝ յաւելու յարդարութիւն, թէ մեռանի՝ անխէղճ դնաց յաշխարհէս:

Այբն է մայր իմաստութեան, վասն որոյ եւ զայբն սկիզբն եղեալ զայլ բարիսն զհետ բերէ:

«Լիով պատճառ», Ա, էջ 53ա:

ԻԱ

Ծն. ԻԵ 21

Ամենայն եղականք երկու են՝ անապական եւ ապականացու, եւ երկիր մայր է բոլորին, որ անսնցութեամբն զանապականութիւն ունի: Եւ ծնունդք նորա յարագոյք (Ա, յարգոյք) անհատութեամբն՝ անհատ ունելով զփոխանորդութիւնն տարեւոր պտղաբերութեամբ², եւ ինքն՝ յաւիտեան կայ տեւողութեամբ (Ա ինքն՝ յաւիտենական):

Եւ ողորմութեամբ մարդ մասն գոլով սմա, մարմ-

նով փոփոխի եւ շարժի, եւ Հոգին կայ եւ մնայ, որպէս եւ էն: Եւ ազատ կամօք փոփոխի ի լաւն եւ ի վատթարն, ուստի դատաստան գոյանայ: Նախ խրատի եւ կրթի օրինօք եւ բանիւք Աստուծոյ. եւ ընտրող մարդ ինքն իցէ իւր պատճառ կելոյ որպէս եղեւ Աբրահամ Հայր արդարոց ոչ բնութեամբ...:

«Լիով պատճառ», Ա, էջ 61բ:

ԻԲ

Ծն. ԻԵ 29-34

Եւ քանզի տեսանէր Յակոբ զանդրանկութիւնն անարգեալ ի Յիսաւ՝ գնեաց զնա իմաստութեամբ, զոր եւ ի վաճառելն կրկին արհամարհեաց.. Լաւ Համարեալ զչիկաթանն, սիրելով զնմանագոյնն՝ շէկ գոլով ինքեան: Զորօրինակ ունելով ոք թագաւորական պատկեր ընդ ցիխ եւ ընդ դայռ քարշիցէ:

Իսկ թէ զի՞նչ իցէ պատիւ անդրանկութեանն. իրիցութիւն ասի անդրանիկ, որպէս Աստուած երէց է քան զաշխարհս, անդրանիկն՝ պատկեր Աստուծոյ գոլով Հայր է, եւ ոչ եղբայր, Հարազատացն իւրոց:

«Լիով պատճառ», Ա, էջ 62բ:

ԻԳ

Ծն. ԻԷ 19

... Ըստ կարգի կրցնր եւ ըստ առաքինութեան անդրանիկ, զի անդրանիկ է, որ զկամս երկնաւոր Հօրն Հաճել կարէ: Եւ աչք զմարմին տեսանեն եւ միտք զՀոգիս

իմանան, հաց հաստատե՛լ զսիրտ, գինի ուրախ առնէ՛:
Խնդալից եղեւ յոգի փոխանակ իւղոյ, որ զուարթ առնէ
զՀոգին սուրբ զգեցաւ. զշուրթն որդւոյն համբուրելով
ծանեաւ զայն, որ շուրթն զգենլոց էր ի նմանէ. եւ
սփռէին շնորհք ի շրթանց նորա:

Եւ որպէս Իսահակ ծերացեալ ոչ կարէր մերձ երթալ
Յակոբայ, այլ առ ինքն աղերսէր, նոյնպէս ծերացեալ
աշխարհ, կոյր մտօք իմաստից ոչ կարէր առ Աստուած
երթալ, եթէ ոչ ինքնին տէր խոնարհ էր յաղօթս արդա-
րոցն առաջնոց:

Եւ Աբրահամ քնդէ՞ր ոչ օրհնեաց զԻսահակ, որպէս
նա՝ զՅակոբ, նա՝ զՅովսէփ եւ զայլսն: Նախ՝ զի ասէ
թէ Աստուած օրհնեաց զԻսահակ, յետ մահուն Աբրա-
համու: Երկու՝ զի Սահակայ ոչ գոյր եղբայր, թէ բաժա-
նորդ լինէր ժառանգութեան տանն եւ պատուաց անդ-
րանկութեանն, վասն որոյ ասելովն թէ զամենայն
ինչսն ետ Իսահակայ, յայտ է զի օրհնեաց եւս:

«Լիով պատմառ», Ա, էջ 64ա:

ԻԴ

Ծն. ԽԹ 4

Ծառ ոռոգեալ յարմատ եւ ջրով եռայ ի վեր յոստան
եւ ի ծայրսն, շարժելով զտունկն ի տեր եւ ի ծաղիկ եւ
պտուղ, ի գոյն, ի հոտ, ի համ: Եւ թէ չեռայ ի վեր
ջուրն՝ զաւսանայ եւ չորանայ ի յայրումն հրոյ:

«Լիով պատմառ», Ա, էջ 82ա:

ԻԵ

Ծն. Ա 1

Հրեղէն երկինն շրջագայէ ոչ յոք մերձ բաժանեալ
յերկուս կիսագունդս՝ ի վեր եւ ի վայր. եւ քնդ հողմոյ
խառնեալ շուրջ գայ, եւ անդի ի վեր փչեալ չտայ երկրի
ի վայր քնկղմել: Եւ բնական ծանրութիւնն երկրի ի վեր
չթողու: Եւ է հրեղէնն երկին զամենայն ի ներքս փակ-
եալ, եւ ոչ ինչ արտաքոյ է մնացեալ (գրչ. 750 թողեալ),
զի ի վեր եւ ի վայր եւ շուրջանակաւ պատեալ է զամե-
նայնն:

«Լուծմունք ի սուրբ գրոց», գրչ. №750, էջ 59ա:

ԻԶ

Ծն. Ա 6

Յերկրորդ աւուրն արար զհաստատութիւնն: Շատ
ինչ ասեն զնմանէ, այլ գրեմ քեզ զԵղիշէին, զոր սիրեմ
մանաւանդ եւ հաճոյ է ինձ:

Զբնութիւն աւդոյն խստացոյց եւ կարծրացոյց,
թանձր գործեաց, ոչ որպէս երկաթ կամ քար, այլ
սեղմեաց եւ անփոփոխ գործեաց եւ կազմեաց երկին:
Եւ զջրոյն կէսն, զոր երկիր ի վերայ իւր ունէր՝ զոգեաց,
տարաւ, հհան ի վեր. Որ չկարէ ոք ասել թէ բնութեանն
զհետ զնաց արարիչն, թեթեւն ի վեր եւ ծանրն ի վայր,
ահա ծանր եւ ի վեր: Եւ ոչ արկ զնա ի վերայ հաս-
տատութեանն, այլ բարձր ի նմանէ, ոչ կարի հեռի, եւ է
շրջաբոլոր զհետ հաստատութեանն. եւ ներքին ջուրն

չէ կտրեալ ի նմանէ, այլ հողմ ուժգին վարէ, շրջէ, տանի ի վեր եւ ի խոնարհ, եւ մի աստուծոյ թէ զիարդ է վայր շրջամբն չվայթի եւ հեղու, զի գամպո՞ւ ո՞չ տեսանես, կապեալ ջուր որպէս ի տիկ, եւ ուր կամի արարիչն տանի, շրջեցուցանէ: Զի չէ այնպէս թէ տեղի ծանծաղ եւ տեղի ինչ թանձր, այլ միահարթ, հաւասար, զոյգ, կշիռ յամենայն կողմանց: Եւ է այսպէս երկիր ի վերայ ոչընչի կայ եւ ջուր ի վերայ երկրի, եւ այս ծովս որ նաւք գնան ի վերայ, եւ զեղերաւքն բնակութիւն է այսր եւ ձորք են եւ գոգք, ուր զետեղեալ կայ ջուր ծովուն: Իսկ աւագն ովկիանոս՝ կայ ի վերայ հարթայտակ հաւասարեալ, կոկեալ երկրի, եւ հողմով ուժգնագունիւ հիւռ գայ այնպէս սրբնթաց, որ աւգն ջուր չկարէ առնուլ անդի: զի լսէ, հանէ, տանի յարագութիւն նորա, վասն որոյ գետ ասի նա եւ ոչ ծով. եւ հաստատութիւն կից ի վայր եւ ջուրն, որ ի վերոյ նորա, որպէս ասէ Դաւիթ՝ ջուրք որ ի վերոյ երկնից, չասէ ի վերայ: Եւ ներքին ջուրս չէ կտրեալ ի վերնոյն, այն ի վայր գայ, եւ այս ծառացեալ ելանէ միահաւասար:

Եւ Գ իրաւք պիտանացու եղեւ վերացումն ջրոյն, Ա. զի արգելցէ զկիզանողութիւն հրեղինին երկնի, Բ. զի գառաւել ծանրութիւնն թեթեւցնէ յերկրէ, Գ. զի զցամաքեալ երկիր բուսուսցէ:

«Լուծմունք ի սուրբ գրոց», գրչ. №750, էջ 63ա:

ԻԷ

Ծն. Ա. 2^o

Ապա թէ ասիցէ ոք հաստատութիւնն դեռ չէր լեալ, եւ փակեալ զհրեղէն երկնիցն զլոյսն ընդէ՞ր էր խաւարն:

Ասէ ոմն ասորի Մովսէս անուն եւ մերն Եղիշէ, թէ ամպով ծածկեաց Աստուած, ընդէ՞ր, զի արար գամպն, քանզի գիտացես թէ արարած է ամպն, եւ թէպէտ էութիւն չունի մշտակայ, այլ Աստուած սահմանեաց նմա բնութիւն անդէն յարարչութեանն:

«Լուծմունք ի սուրբ գրոց», գրչ. №750, էջ 60ա:

ԻԸ

Ծն. Ը, 13

Եւ Եղիշէ ասէ՝ Ե[ր]բ ցամաքեցաւ երկիր ի ջուրցն գէճ ամպով ոռոգէր, բայց ասէ՝ զերեսս երկրի, եւ ոչ զերկիր. երես երկրի զբուսարերն եւ զպարարտն կոչէ, զոր ձեռք մշակաց հանդերձեալ էին գործել:

«Լուծմունք սուրբ գրոց», գրչ. №750, էջ 77ա:

ԻԹ

Ծն. Ա. 1

Որպէս կենդանածնեցաւ երկիր, կենդանածնեցաւ երկին, ախտականս զախտականսս եւ անախտն՝ զանախտսն, ի հրոյ եւ յաւդո գոյացեալք: Բնութիւն հրեղեն եւ տեղի աւդեղեն. կամաց փոփոխումն եւ ոչ բնութեան, մեծ պատերազմ հոգոց քան մարմնոց, որպէս

անէծքն մեծամեծք, որ յանկեալսն ցուցաւ, որ էր ի յեւթն պարունակն, ուր արեգակն է, եւ ի վեր չէր իշխան անցանել: Յապըստամբելն, նաեցեալ ի վայր, ետես զվայելչութիւն աշխարհի՝ եւ զմարդն տէր, խորհեցաւ հանել զմարդն եւ տիրել. եւ ի յայս շարժիլն անկաւ իշխանն՝ սատանա անուանեցաւ, որ է ապըստամբ, եւ որ ընդ նովաւ զաւրքն՝ դեւք, որ է անմարմին չարութիւն, զի ծառա եղեւ ախտի, որ երկեւի ծնանի, եւ երկեւի զատելութիւն, եւ նա՝ զաւտարութիւն, որպէս ազատ մնալն այլոցն զսէրն ծնաւ, եւ նա՝ զընտանութիւն, եւ նա՝ զորդեգրութիւն եւ որդեգրութիւնն՝ իշխան հայրենեացն:

«Արքայն Եղիշէի», գրչ. N°4166, էջ 208բ-209ա:

Լ

Ծն. Ա 16

Ի վերո եւթն մոլորակացն, որք են ընդ հրայիին կամարանաւն, եւթն անմոլար աստեղք են: Եւ են ցուրտք. միջնորդ են արեգական եւ արփոյ: Եւ զանչէջ տոչորումն արփոյն, իւրեանց սաստիկ ցրտովն բարեխառնութիւն առնելով, արեգականն մատուցանեն, եւ արեգակն առեալ հեղու աւղն՝ առեալ զցրտութիւն եւ լոյսն զջերմութիւն մալրմինն հրոյ:

«Արքայն Եղիշէի», գրչ. N°4166, էջ 209ա:

Որոտ ձմերայնի ոչ լինի, զի ստերջանա ամալն, եւ որ բերինն ի խոնարհ ինքեանք են այնք հանդերձ ջրայիին խոնաւութեամբն: Առ յոյժ ցրտութեանն, ինքն ամալն կոտորատի խոնաւութեամբն՝ բրդի, բաժանի, դիզու, դնի ի լերինս: Իսկ գարունն աւղն պարարի խոնաւութեամբն եւ ի յարեգականին ջերմութենէն ջլանա զհարստութիւն. առ յոյժ փոթորկելն խոնարհի ի ծով եւ բերանացեալ բառնա ջուր ի վեր: Եւ ի սաստիկ ծանրութենէն յառաջ խաղա, եւ այլ աւղք կցին ի նա, ընդ անաւսրութիւն չկարացեալ հեղուլ զջուրն, ձայն արձակեն ընդ երկանց կանանց ծնանիլ մարմին յերկրէ: Եւ ձմեռն ոչ երկնէ, զի սառնացեալ, ամուլ է երկիր, շանդին ի հրեղէն մարմնոյն կտրեալ չդադարէ մինչ ի ներքին կիսագունդն յիւրն մարմին՝ ի պատուհաս եւ յաճ մեղուցելոց:

«Արքայն Եղիշէի», գրչ. N°4166, էջ 209ա:

ԼԲ

Ծն. Ա 16

Լուսինն ի լրմանն, կամ ի միջոցի, կամ մերձ ի հինն. եւ դիպի լուսինն ի վերին կիսագնդին, եւ արեգակն ի ներքին կիսագնդին, կշիռ միմեանց ի միջի տրամագծին: Ի միում ժամու ոչ բաւէ արեգակն ըստ սովորութեանն ձգել լոյս յանիւ լուսնին՝ ընդ հիւսւսայիին կողմն խաւարի լուսին. իսկ յորժամ երկոքին իցեն ի վերինում կիսագնդին եւ զոյգ դիպին, զի արեգակն

վերո է քան զլուսին, ի դէմ անկե[ա]լ արեգականն լուսին՝ թուի կորընչիլ արեգակն, որ ոչ է այլ լուսնի պատճառ:

Արեգակն ի կատարել զընթացս գիշերոյն մկրտի յովկիանենոս, ի ձեռն աւդո եւ ցանէ յաշխարհ զոր ցաւդ անուանեն: Իսկ ի յոյժ բախման շրջագա պարունակացդ, շարժելով ղյարմարական գնացսն, երեւումն լինի վերին լուսոյն, իբր ընդ անաւսր ինչ փապարս աւդեղէնս: Եւ յաղամողեալ լուսոյն եռան փայլատակունք առ ի ցրելոյ ուժգնութեան աւդոյն. եւ վաղվադակի ծածկի, եւ հիացեալ՝ աստեղաց թափումն ասեն, որ ոչ է իսկ:

«Սրբոյն Եղիշէի», գրչ. N°4166, էջ 209ա-209բ:

Լ Գ

Արարող Հոգին կրական զաւրութեամբ թափանցանցէ ընդ ամենայն արարածս, իսկ խոհականաւն՝ յանկակից է ընդ մարմնական(սն)՝ բանաւորս, եւ ընդ անմարմինսն՝ վերին բանաւորս:

Մարդ կրկին է եւ նա մեկին: Եւ կրկին մարդս դարձեալ բազում է՝ ցուրտ աւդով, ջերմ հրով, խոնաւ ջրով, ցամաք հողով: Եւ սոքա ոչ են սեռք, այլ՝ խզածք: Եւ այսպէս խզեցան մանրագոյնն՝ հողո, եւ համեղագոյնն՝ ջրո, կակղագոյնն՝ աւդոյ, փափկագոյնն՝ հրո, բաղկացեալ ի մի բնութիւն:

Աւդ եւ ջուր անձեւ եւ անորակ է, թէ ի տիկ առնուս

աւդ կամ ջուր՝ նոխազանա, եւ թէ յայլ ինչ՝ զնորուն ձեւ առնու:

«Սրբոյն Եղիշէի», գրչ. N°4166, էջ 209բ:

Լ Դ

Ծն. ԺԵ 9

Ընդէ՞ր ասէ՝ Առ ինձ երինջ երեմեան եւ այծ երեմեան եւ խոյ երեմեան, եւ տաւրակ եւ աղաւնի:

Երինջ էգ՝ զմարմինս ասէ, զի երինջ երկրագործ է եւ ակաւսածիգ, զորս պարտ է մղել, զի զլուծն յուս առցէ, որ է խաչն Բրիստոսի: Այս է հողոս մասն, վասն այնորիկ կոչին անդեայք արջարոց, իսկ այծն՝ ջրոյ մասն, զի ջուր սահող է եւ ցրտին, նոյնպէս եւ այծ սահող է, որ սահեցանէ ի մեղս: Իսկ խոյ աւդոյ եւ հողմոյ աւրինակ է, զի նման աւդոյ եւ ամպոյ ունի զարսն. եւ բնութիւն իւր ջերմին է, որ է զարնանաին մասն, վասն այնորիկ եւ աւդի կոչին գեղմնաւորքն: Իսկ աղաւնին եւ տաւրակն՝ հրոյ մասն եւ լուսոյն, որ ի միտս, վասն զի յերկնից են, որպէս զթռչունս, որ են աւրինակ մոլորակացն եւ անմոլորիցն. աղաւնին՝ մոլորակացն, զի ընտանի եւ ձեռնընդել է, եւ ընդելագոյն մերն՝ մոլորակքդ են, զի յառ երկրաւոր վայրս հուլ են, եւ ախտակից լինին, իսկ անմոլորացն՝ զտաւրակն, զի անապատասէր ի բազմաց միաբանութենէ, եւս խառնահաւուցն, հեռի, ուրեմն եւ որ յերկինս է՝ անմոլար գունդն: Եւ նմանեցան երկոքինն զաւրաց երկնից: Եւ որպէս արագաթեւ հաւքն, նոյնպէս եւ աստեղքս՝ շուրջ գան

զերկնով, զի ցոցք (իմա՝ ցոյցք) մարդկան արուեստի են:
Ե ասաղն՝ լուծ՝ հող, եղջերի՝ ջուր, որ է այծ, արաս-
խոյր՝ զմիտս ասէ, զոր ի գլուխն, զի խոյր պսակ ասի,
ծպաւոր՝ զգդեասն ասէ, որ է աւդն, վառազնոտ՝
զհուրն, իսկ առնուլ զկենդանիսն եւ ողջակիզել՝ Քրիս-
տոսի չարչարանացն աւրինակ է եւ մարտիրոսաց:

«Նրաճեւոյն եղիշայի», գրչ. №2679, էջ 218բ:

ԼԾ

Ծն. ԺԵ 10

Զինչ է՝ Հաստ զնա ընդ մէջ, եւ եղ գէմ ընդ դէմ:

Յաւշել զողջակէզսն եւ հատանել ընդ մէջ, զի
միաբան եկեացեն ի մեզս, այդ յանմեղութիւն լուծանէ
ի մեղաց յարդարութիւն, իսկ դնել գէմ ընդ դէմ՝
միաւորէ յարդարութիւն զգդայարանսն՝ զԲ աղանջսն
գէմ ընդ գէմ, զԲ աչսն, զԲ ձեռսն, զԲ ոտսն, զԲ
ստինսն: Արդ, ոչ միայն զմարմնոյ մասունս բաժանէ,
այդ եւ զհոգեկանս:

Նա եւ երկիր բաժանի յերկուս մասուն, եւ են գէմ
ընդ գէմ լեւինք եւ դաշտք հայեցեալք, ջուրք ի քաղցր
եւ յաղտատուք. քաղցր ըմպելին է աղբերց եւ գետոց, եւ
աղտաղտուկ՝ ծովային եւ ժանգային: Եւ աւդ ի Դ բա-
ժանի՝ յամառն, ի ձմեռն, ի դարուն եւ յաշուն, որ է աւ-
րինակ ոգւոյ ի մարմնի, իսկ փոփոխելն՝ մեղաց եւ ար-
դարութեան: Այսով Հերակղիտոս իմացեալ զընութիւնս
գիրս յաւրինէ վասն բնութեանս, եւ բազում աշխատեալ
եւ իմացեալ:

«Նրաճեւոյն եղիշայի», գրչ. №2679, էջ 218բ-219ա:

ԼԶ

Ծն. ԺԵ 16

Ընդէ՞ր ասէ՝ Դ դարք դարձցին այսր:

Իսկ որ ասէ Դ — որդ դարք դարձցին ի էղ ի Դ որ-
դին եւ յեզիպտոսէ. եւ մեղաւորին ցԴ հատուցանէ
զմեղս հարց: Է եւ այդ բազում ըստ նհանջից խորհրդոյ
եւ ըստ Դ նիւթից մարդոյն, եւ սուրբ խաչին: Նա եւ
յամենայն կենդանիք կրին նահանջքս այսոքիկ. ի
մարդոյ ստեղծանիլն նախ սերմանի յարգանդ, ապա
պատկերի եւ ապա աճէ եւ ապա զարգանայ, այս է Դ
դարք: Այսպէս եւ կեալն՝ Դ եղանակս առնու եւ մեռա-
նի. նոյնպէս եւ բոյսք եւ տունկք եւ միրգք, եւ տարին
աւրինակեալ նհանջի, իսկ նհանջից նհանջ՝ մահն է:

«Նրաճեւոյն եղիշայի», գրչ. №2679, էջ 219բ:

ՎԱՍՆ ՀԱԳԻՈՑ ՄԱՐԴԿԱՆ

Թէ ուստի դան, եւ յետ ելտնելոյ ի մարմ-
նոյ առ ով երթան, կամ թէ առաւել իմաստ-
նայցեն

Զի դոն և հոգիք՝ զայս և բնութիւն մերոյ լինե-
լութեանս ցուցանէ. քանզի կրկին է տեսակ մարդոյ,
մին շարժէ և միւսն շարժի. շարժողն ունի զիմացական
բնութիւն, և շարժեցեալն դործէ զսննդական տեւողու-
թիւն. և է միութիւնս յորժամ երկոքեան ունիցին
զտնկեցութիւն. ապա թէ թողցէ շարժողն, անկեալ դնի
մարմին անխլրտելի: Բայց օրինադիրն մեր զհոգի մար-
դոյ փշուամն Աստուծոյ ասէ. և նորուն ծանօթ և բարե-
կամ ոմն մարգարէ իբրեւ յերեսաց Տեառն ասելով. «Հո-
գիք յինէն արձակին, և զամենայն շունչ ես արարի,
ասէ Տէր». նովին հոգւով Ովսէէ մարգարէ ասէ. «Ո՞վ
Հաստատեաց զհոգի մարդոյ՝ ի նմա»: Բարւոք է այն
միաբանութիւն, զի առանց Աստուծոյ եղեալ և ոչ ինչ.
այլ զորպիսութիւնն պիտի իմանալ: Զի արար Աստ-
ուած զարարածս գիտեմք՝ ոչ ի նիւթոյ և ոչ ի հատոյ
իմիք էութենէ, քանզի անհատ բնութիւն իմանամք
զԱստուած. իսկ արարածս Հատկոտոր: Դարձեալ յոչնչէ
ոչ կարեմք ասել զայս մեծ մարմինս արարածոյս, և ոչ
ինքնաբոյս գոյացութիւն, նա և ոչ ի վարանս տարա-
կուսի անկանիմք թէ ուստի՝ եղեւ բնական կամքն Աս-
տուծոյ իմանալ և առնել ինչ. այլ միշտ Աստուած,

միշտ արարող զօրութիւն ընդ իւր: Եւ յորժամ կամե-
ցան՝ նոյնպէս կամեցաւ. զոր ունէր յիմանալու ջն՝ էած
ի գոյացութիւն, զի իմանալեաց իցէ արարիչ բնական
իմացութիւն: Իսկ արարչական զօրութիւնքն՝ զիա՞րդ
նիւթն անմարմին. իսկ արարչութիւնն զանմարմնոց և
զմարմնացեալն՝ ի բազմադիմի մասունս, յիւրաքան-
չիւր ի զարգս, զի իցէ ոստն մի, և ստեղն մի, և արմատն
բազում, և յոստոց անտի բազմատեսակ շառաւիղք:

Արդ որպէս վերադոյն ասացաք՝ յերկնէ երկնա-
յինքն և յերկրէ երկրայինքս, և մարդ խառնուած յերկ-
նէ և յերկրէ. անօսրագոյնն յերկնէ, թանձրագոյնս
յերկրէ: Զի թէ զգոյացութիւնս Հրեշտակաց ծնունդ
ասեմք երկնի, հրոյ և օդոյ, որպէս և մեծն Դաւիթ ասէ.
«Ո արար զՀրեշտակս իւր ի հոգիս» և զպաշտօնեայս
անուանէ հուր կիզելոյ, ապա յայտ է եթէ ոգիք մարդ-
կան ի նմին նիւթոյ գոյացեալք՝ կամօք արարչին առա-
քին ի բնութիւն մերոյ լինելութեանս, ոչ Հրեշտակա-
ցեալք և ոչ զիւացեալք ըստ ոմանց անուանելոյ, այլ
միայն հոգիք և հոգիք մարդկան: Հոգիք Հրեշտակաց
պարզ բնութիւն, անմարմին, անյօդ, անորակ, անքա-
նակ, անձն կատարեալ. և կատարելութիւն անձին ոչ
յումեքէ, այլ ինքնակատար էութիւն, կատարեալ գոյա-
ցութիւն:

Իսկ ոգիք մարդկան գոյացութիւն պարզ, էութիւն
յստակ, սուրբ, մաքուր, իմացական բնութիւն, ճեւ
սկզբնատալին, Հարկաւոր շարժմունք, վերաբերութիւն,
անմահ տեւողութիւն, յարկակից մարմնոյ, միաբան ո-

րակութիւն, անձանձրանալի միութիւն, անբաժանելի մասունք, անհատ զօրութիւն, անծերանալի յերկարութիւն, անտեղի բնակութիւն, յառաջ քան ըզգալն ի մարմին ի գոյացութիւն եղանութեանն՝ ունի իմացական, անքանակ. և ի մարմնի եղեալ զամենայնն ունի զիարդ որպէս կամի ախորժել: Եւ իմանի բնութիւն տարբերել ընդ մարմնոյն. բայց ես ասեմ ըստ բնութեան և ըստ բարոյական ձեւացելոյ Հոգւոյս զառ ի միմեանց զմերձաւորութիւն:

Գովի քնար, այլ ի ձեռն քնարահարին. գեղեցիկ են ձայնք երաժշտականք, այլ երաժշտականաւն. տեսեր զչքնաղ ինչ շինուած, ոչ ի նմին հարեր կացեր, այլ ճարտարապետին ետուր զգովութիւնն: Ապա թէ ոչ իցէ քնարն, չերեւի քնարահարն. սոյնպէս և ամենայն գործիք ձայնաւոր երգոցն ի ձեռն արուեստաւորին երեւին: Ապա թէ գործիքն ապականեալ իցեն, իբրեւ թէ որպէս փող ջախջախեալ, աղի խոնաւեալ, և ճարտարն առողջ և ի արուեստիւն և գիտութեամբ, ոչ կարէ ցուցանել զհանդէս առաքինութեան արուեստին. և գտանի ամենայն մասամբ ապականեալ ի գիտութեանն: Ապա թէ կատարեալք առ միմեանս հանդիպիցին, սփոփիչք և մխիթարիչք առ միմեանս հանդիպեացեն բազմամարդոյ քաղաքաց, և պաշի իւրաքանչիւր բնութիւնք զատ և ուրիշ խառն բնութեամբն:

Ապա կարի գեղեցիկ մեր արարիչն զբնութիւն մարմնոյն հաստատեաց շինուած բաժանելի, և զգոյացութիւն Հոգւոյս արար անբաժանելի բնութիւն. և

միաբանեաց իբրեւ քնարահար ընդ քնարի, զի շարժեսցի և շարժեսցէ զակն ի տեսանել, զընդունս ի հոտոտել, զքիմսն՝ ի ճաշակել, զլեղու ի խօսել, զխելսն՝ յիմանալ: Զայս ամենայն զբազմութիւն մասանցս մարմնոյ շարժէ ի կենդանութիւն և ի գործառութիւն ցորքան ժամանակ միաբանութիւն է շարժողին և շարժեցելոյն: Ապա եթէ չբաւեսցէ՝ սա քակտեալ և նա ի բաց կացցէ, լոռալ դադարեալ լինի ամենայն բազմութիւն արուեստիցն. սա գառնայ յիւր բնութիւնս, և նա վերանայ յիւր կայանն. ինքն յինքեան իմանայ, ինքն յինքեան հանգչի, ինքն յինքեան առաւելու, ինքն յինքեան խնդայ, ինքն յինքեան տրտմի, ինքն յինքեան շարժի, ինքն յինքեան և դադարի, ինքն իւր բաւական ինքնազոյ իմացութիւն, ինքնալուր, ինքնատես:

Իսկ եթէ ոք զտեղեաց կամ զկայնից Հոգւոց կամեսցի դիտել, զհետ եկեսցէ բանից մերոց. մի՛ գետնաքարչ գնացիւք և մի՛ ծովական ճանապարհորդութեամբ և մի՛ առասպելական քարբանջմամբ, այլ ճշմարիտ վարդապետութեամբ վկայութեամբք սուրբ գրոց. ուր Առաքեալն յափշտակեցաւ, ուր պարգեւքն պատրաստեալ են. զոր մարմնաւոր զգայութեամբքս թարգմանել ոչ կարեմք, զանյօդ տեղեացն՝ վերնոց քաղաք ասեմք, վերին նրուսադէմ անուանեմք նմա, այլ ազատ բանակետդ. անդ բիւրաւորք հրեշտակաց, բանաւոր իմանալի, և ոչ զգալի հոգիք են անդ մարդկան: Այլ զարդարոցն կատարելոց կամիցիս գիտել, թանձրագոյն ասացից. յորմէ նիւթոյ առաւ, ի նմին և չոգաւ դադա-

րեաց: Լուր և մեծին Սիմոնի վիմի յուսուցանելն մանաւանդ և զճարտարապետսն փրկիսոփայից. իբրեւ Հաճեաց զմիտս նոցա արարչութեանն ճառիւք, ասաց և վասն Հրեշտակացն կայանից՝ զսուրբ զանապական զանպղտոր զՀողման վերինս, զոր և բանակետղ Առաքեալն անուանեաց:

Ապա թէ ոք ի գրեալսն Մովսէսի ընթացի, և փչումն յԱստուծոյ զՀոգիս մեր ասիցէ, և զայն եւս իմասցի անկանել նմա ի մեծ վարանս տարակուսի, մինչեւ զանմարմին Աստուած, ի ձեւս մարմնոյ ածել՝ փչելն որպէս թէ բերանով, ուրնգամբք և շրթամբք, Հարկ է եթէ ամենայն անդամքն զՀետ գայցեն, զորքաւ և մի՛ լիցի, և մի՛ ի միտս անդամ այս եկեսցէ ուրուք՝ զԱստուած ի կաթօտութիւն զգայական գործոյ ածել. այլ իմասցուք զփչելն ոչ ի նմանէ ի նա, այլ նմա փչելն զնա Հոգիացոյց, որպէս զանգոյսն գոյացոյց, որպէս զանՀոգին Հոգիացոյց և զկենդանութիւն եղ ի վերայ նորա:

Զի եթէ յԱստուծոյ էութենէն փչումն ասէք, զի՞նչ պիտոյ էր լսել զձայնն «Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղեւ մարդն ի Հոգի կենդանի»: Իբրեւ յայտնի է զօրութիւն բանիդ, անուանեաց զառաջին արարչութիւնն Հոգւոյն շունչ կենդանի իբրեւ զմի արարչութիւն. այլ վասն մեծախորհրդութեան՝ զի պատուականագոյն երեւեսցի մարդն յարարչութեանն՝ մեծարեաց զնա. իբր զի ստեղծ ձեռօք զմարմինն, և բերանով զփչումն Հոգւոյն: Քանզի աննախանձ է աստ-

ուածութիւնն և անչարակնութեամբ պարգեւասէր, ոչ ինչ դանդաղեցաւ անուանել զմեր բնութիւնս պատկեր աստուածութեանն. իբրեւ յայտնի է իմաստնոց եթէ որչափ Հեռի են ի միմեանց մարդ և Աստուած՝ բնութեամբ: Ուստի և մեծ մարգարէն Նսայի ետես զԱստուած և Հիացեալ զարՀուրեցաւ. զգօրութիւնսն պատմէ, զիսկութիւնսն լռէ, և գիտացեալ զմեր բնութիւնս՝ խոնարՀութեամբ բարբառի. «Թինէն արձակին Հոգիք, և զամենայն շունչ ես արարի, ասէ Տէր»:

Ահա յայտ է արարչութիւն Հոգւոյ. արձակին կամօքն Աստուծոյ յանօսր բնութենէ, որպէս վերագոյն ասացաք. կենդանածնեցան երկինք մօտաւորս իմանալիս և ոչ շօշափելիս: Սոյնպէս և յորժամ արտաքոյ մարմնոյս եղեալ ոգիք, զամենայն արտաքնոց զգոյսն տեսեալ և ընդ նոսա լինելով՝ ոչ կարէ ի մարմնի լինել, և ոչ զպէտս մարմնոյ կատարել. որպէս Հարկեալ էր յառաջագոյն ի բնութենէն չելանել ի մարմնոյն, նոյնպէս ոչ յետ ելանելոյն անկանել նմա ընդ մարմնական պիտոյիւք մինչեւ յօրն յայն յորում յայտնեսցի արարիչն արարածոց:

Բնութեամբ կրկին է տեսակ մարդոյ, մին կառավար և երասանակալ և ուղղիչ, և միւսն բնակարան բրնակողին և շինած զարմանալի, անմահական Հոգւոյն անուրանալի բնակարան. որով իմանալին ընդ մարմնականս ընդ այս կենցաղավարութիւնս սովաւ Հաղորդի մնալով յուրախութիւնս, և տեսանելիս ընդ անտեսանելին Հաղորդեալ՝ ոչ Հեռանայ ի թանձրութենէ: Զի

սա քաղաք է իշխանականին, դարմանաւոր, սննդական
և կենդանի տաճար, այլ եղծանելի և արագալոյծ և առ-
ժամայն վայելչութիւն. իսկ տիրական՝ իւր զթագաւոր
և տեսուչ և դատաւոր իրաւախորհողութեան, զի ոչ ու-
նի պէտս առ դարման սննդեան. սակս այսորիկ և անա-
պականելի և անապական. զսա աստուածային օրինա-
դիրն Մովսէս փչումն յԱստուծոյ ասաց: Արդ մի՛ ոք
ծառայեսցէ բանին, այլ մտացն Հնազանդեսցի. զի ան-
Հանճար խորհրդոյ է իմանալ փչումն յԱստուծոյ՝
բերանոյ և ռընգանց որոշեալ տեղի. ապա և այլն ի
ներքս եկեալ լինին մասունք մարմնոյն, և զանմարմին
և զանկարօտն ընդ զգայականիս շինեալ կարօտու-
թեամբ: Այլ ի սա փչել զգոյացուցանողն Հոգմաշարժ
կենդանութեամբ Հաւանելի է. յորմէ եղեալ մարդն ի
Հոգի կենդանի՝ աստուածաՀրաշ միաւորութեամբն
Հաստատեալ ըստ եղութեան թագաւորական բանին թէ
«Ո Հաստատեաց զոգի մարդոյ ի նմա»: Այլ և ար-
ձակեալ որ ոչ Հաստատեալ, զոր Երեմիաս ասէ. «Կեն-
դանի եմ ես, ասէ Տէր, զի Հոգի յինէն ել». որով յայտ
արար զնա միայն զոլ արարիչ բարեացն կամողաց:

Աստուած անՀատանելի բնութիւն է, ոչ ինչ Հա-
տեալ լինի յԱստուծոյ. և դարձեալ ոչ այլ ինչ յառաջն
կայր նիւթ յորժամ ստեղծանէր զպատուական զայս
Հոգի. այլ և ոչ ինքնաբոյս եղեալ ըստ ինքեան, զի չէ
ոք մշտնջենակից Աստուծոյ. զի ոչ է յումեքէ եղեալ.
զնորա սահման լինելութեան ոչ ոք զիտէ. այլ սա ոչ է
անխնդրելի, զի արարիչ սորա Աստուած է: Եւ զի երկ-

նային է Հոգւոյն բնութիւն, ցուցանէ զի ելանելով ի
մարմնոյս՝ ոչ ստորիջէ յերկիր. այլ զբարձրանալոյ
մայրածնեղեան իւրոյ ցուցանէ զիմանալի երկիրն: Եւ
որոշեալ մարմին յիմացականէն՝ ոչ վերաբերի ի գերա-
կայն, այլ վայրիջի յերկիր ծնող իւր. յորմէ յայտ է թէ
յախտականէս զախտաւորն ստեղծ Աստուած, և յա-
նախտէ զանախտն. և յես որոշման ոչ Հեռանայ, այլ
յիւրն երթեալ դադարէ ի տեղիս, ըստ բանին «Գնաց
մարդ ի տուն իւր յաւիտենից. և Հոգին դառնայ առ
Աստուած որ ետն զնա»:

Արդ երթեալ միանայ ի լոյսն ուստի ծնաւ, զի լու-
ծաւ ի կապաւոր մարմնոյն որպէս կապեալ ունէր միու-
թեամբ: Զի որպէս քար մեքենայի յօդ պարզեալ, զի
յորժամ լուծանի՝ Հասանի վաղվաղակի յերկիր ուստի
առաւ, նոյնպէս և Հոգին զի այժմ ծանրացեալ է քան
զբնութիւնս օդոց, իսկ ի միւսում խառնուածին դար-
ձեալ զօրանայ քան զնա, և առ ինքն վերամբարձեալ
ձգի: Եւ է նա Հուր, Հոգմ, լոյս. իսկ մարմին Հուր, Զուր,
օդ, Հոգ, Հակառակախառն զուգակշիռ միութեամբ ըն-
տանեցեալ, երկու՝ վերաբերական Հանապազաթուիչ
թիթեւութեամբ. իսկ երկու՝ վայրաբերք ծանրութեամբ
մշտաշարժ երկրասողութեամբ. զի ոչ այլ ինչ քան
զբնական իմաստութիւն Աստուծոյ իմանալ նիւթ ա-
րարելոյ այս է, զոր մշտնջենապէս յիմանալոյն ունէր
զիմացեալն. յորժամ կամեցաւ ի գոյութիւն ածել, սահ-
մանեաց և եղեւ իբրեւ մայր իմանալին: Եւ երկու ի նը-
մանէ երեւեցան ծնունդ, տեսանելի և իմանալի. և յեր-

կոցուկնց եղեն բազում տեսակք, յանմարմնոյն անմարմինք և ի մարմնոյ մարմնաւորք, ոյք են Հրեշտակք և մարդիկ:

Մարդ յերկնէ է և յերկրէ խառնուած գեղեցիկ, զղէմսն ի միասին կապեալ արուեստաւոր իմաստութեամբն Աստուծոյ. պարզ և թեթեւագոյնն յերկնէ, ծանր և շարադրական յերկրէ: Զի թէ զայլ ազգաց զգայականաց զբնութիւն աստ իմանամք, սակայն ծառայականք և անհանճարք. իսկ իմանալիս այս ի մեզ վեհագոյն ազատ և անկարեկան նիւթից, մօտաւոր Աստուծոյ բնութեանն, Հրեշտականման և ի նոյն էութենէ, այլ ոչ Հրեշտակ. այլ Հոգի միայն և ընդ անարգ նիւթոյս կապեալ, և ի բարձանց և երկնային, Հակառակ և երկմիտ և անընտանի ստորակայից, այլ Հնազանդեալ կապանօք մարմնոյ:

Զի թէ զմարդկան Հոգւոյ կամի ոք ուսանել զկայանս, մի՛ թանձրագոյն մտօք Հայիցի երկրաքարչ ակսիւք ծանրացեալ. այլ թուուցեալ ըստ սրբոյն Պաւղոսի որ ասէ՝ անճառելի տեղի, զոր զրախտ անուանեաց և երրորդ երկինս. այլ իմացեալ քան զվերին զայն և զՀաստատութիւն: Արդ աստի յափշտակեալ Հոգիս՝ ի Հոգեւորականն եհաս կայանս, որ աստուածային պատմութիւն՝ վերին անուանէ Երուսաղէմ, ուր բիւր Հոգիք արդարոց կատարելոցն ուրախանան, յառաջատես լեալ Աստուծոյ բարեացն. անպատմելի և անուշահոտ և լուսաւոր օդն, յորս ոչ է այլախառնութիւն դառնութեան:

Այլ ասացի պարզագոյն ինչ բանիւք, զի ուստի ե-

ղեն Հոգիքն՝ առ իւրն երթեալ լինին ի բնակութիւն. և մարմին դարձեալ յիւր տեղին միանայ ազգակցեալ և յապականութիւն դարձեալ: Այլ անտեսանելին և անեղծական յառաւելատեսիլ փոփոխեալ, չունի պէտս առ մարմնականս առ այս կեանս, և ոչ կարօտութիւն ի տեսութիւն. և ոչ կարող իսկ են և ոչ նոքա որ առաւելագոյն արժանաւոր եղեն պատուոյ՝ մարտիրոսքն: Նոքա յայտնիլ ումեք ոչ կարեն . ոչ ի : տ : գ : Ապա թէ անգոսնաբար ոք կամ անխրատ սովորութեամբ երազովք վարեացի, վերստին անցանելով ըստ Հեթանոսական սովորութեամբ, բազում են օրինակք, որ մոգ քաղդեացիք աստեղագիտութեամբ աստուածածանօթ, և բարեւացւոց գաւազանահարացն և լերդահմայ, և ընդ աջմէ ելանել Հմայիցն Հրէաստանի և Երուսաղէմի, զոր մտանել սրոցն ընդ Ռաբովթ՝ որդւոցն Ամոնայ եկեալ ի գլուխ երկուց ճանապարհացն, երկու առաջք ի միոյ աշխարհէ, և ստութեամբ արդարացեալ լինին Հմայքն մտանել սրոցն ի պարանոցն Ղովտայ խնդրէր զանիրաւութեան վրէժս ի նոցանէ: Այլ և կին ոմն վհուկ Սաւուղայ ճշմարտապատումն, և իղձն Բաղասմայ ի Միջագետաց մարդարէ ստուգատես. Երեմ ի Հրէաստանէ բարելոնացւոյն իմաստնէն ապրեցուցիչ երազահանութեամբ. և Յովսէփ երազատես և երազահան Փարաւոնի: Այլ այս ի բաց մերժեալ է յեկեղեցւոյ Քրիստոսի ըստ ճշմարտապէս զրոց. զի այս Հեթանոսաց է և ոչ քրիստոնէից:

Ապա թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածու-

թիւնս անցանէ՝ օտար խորհրդովք նշանադիրս գծել, կամ մարգարէանալ առ յապայսն և երազաՀմայ լինել, ցնորել մոլորութեան երազահան ստութեան, ընդ անկոխելին գնալ պողոտայ անքրիստոնէաբար, և բնական ի մեզ կիրսն ճշմարտութեան պատմել, որ լինի այս և վնասել խելապատակին ընդ վայրաբանութիւն, և Հիւանդութեամբ բազում ինչ տեսեալ խօսի անհանճարաբար, զոր և արբեցողաց իմն թուի շրջագայութիւն լինել երկրի զինքեամբք, և յայլայլեալ զգայութեանն ի ջերմութեանցն զայսպիսի սովորականութիւնն ի մեզ օրինադրէ գործ ինչ լինել: Կամ զայն զոր դեւքն կերպարանեալ ի նմանութիւն մոլորեալ մեռելոց՝ զոր գիտակն էին ի կեանս մարդոյն, և զնոյն նմանեալ յայտնին ի տրտում երեսս կամ ի զուարթս իրրեւ պատուէր ինչ տալով և զգուշացուցանելով, որպէս թէ մեռեալն և սպանեալ մարմնոյ Հոգիացեալ, և ի միասին գտեալ. զոր ոչ յօգուտ, այլ ի վնաս և ի մոլորութիւն փութացեալ լինի, և նա զայն անուսմնաբար ճարտարութեամբ պատմէ, այն արտաքոյ է քրիստոնէութեան:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Խրատ միանձանց», «Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց», «Յաղօթսն որ ասէ Հայր մեր», «Ի մըկըրտութիւնն Քրիստոսի», «Յայլակերպութիւնն Քրիստոսի», «Ի Հարչաբանսն Քրիստոսի», «Վասն դատաստանին և միւսանդամ զալստեանն», «Վասն յիշատակաց մեռելոց», «Կանոնք», «Վասն Հոգւոց մարդկան», տե՛ս «Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1859 (Այսուհետեւ՝ Եղիշե, Մատենագրութիւնք):

2 Մանգր. խմբ. Բնագիրը նախ լույս է տեսել Հանդիպադիր Փրանսերեն Թարգմանությամբ (Elisée Vardapet, Questions et Reponses sur la Genèse, publiées et traduites par les RR. PP. N. Akinian et Dr. S. Kogian, Vienne, 1928), իսկ այնուհետեւ նաեւ առանձին, միայն Հայերեն (Եղիշէի Վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի գիրս Ծննդոց, «Քննական Հրատարակութիւն մատենագրութեան եւ Թարգմանութեան նախնեաց Հայոց, Հատ. Բ, պրակ 2, Հրատ. Հ. Ն. Ակինյան, Վիեննա, 1928): Երկրորդ Հրատարակությունը չի եղել ոչ Լ. Պալիկյանի, ոչ էլ խմբագրի ձեռքում: Նրա մասին տեղեկացել ենք Ա. Վարդանյանի գրախոսությունից («Հանդէս Ամսօրեայ», 1929, էջ 1):

3 «Եղիշէի Վարդապետի Հարցմունք և Պատասխանիք...», Թառաջաբան, էջ 4-5 (Մանգր. խմբ. Հատ Ա. Վարդանյանի գրախոսության. տե՛ս ծանոթ. 2):

4 Ա. Վարդանյան, Եղիշէի Վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի Գիրս Ծննդոց (գրախօսութիւն), «Հանդէս Ամսօրեայ», 1929, էջ 1-10, 65-79:

5 Հ. Մանանդյան, Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 196:

6 Ղ. Ալիշան, Հին Հաւատք կամ Հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 172, 179 և այլն:

7 Н. Я. Марр, Из летней поездки в Армению, СПб, 1891-92 г., § IV.

8 Հ. Տաշյան, Յուդայական Հեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 368-370:

9 Elisée Vardapet, Questions et Réponses..., p. 8:

10 Եղիշէ, Մատենագրութիւնք, էջ 370:

11 Elisée Vardapet, Questiones et Réponses..., p. 15:

12 Տե՛ս «Եզնկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց», Կ. Պօլիս, 1871, էջ 128:

13 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. №1267, էջ 32բ (այսուհետեւ սույն ձեռագիրը նշվում է Ա հաւաքովմամբ):

14 Ավելորդ չենք համարում հիշատակել, որ Հ. Աճառյանի այն Հարցին, թե ի՞նչ հիման վրա է «Հարցմունք և պատասխանիք ի գիրս Ծննդոց»-ի բնագիրը վերագրված Եղիշէին, Ակինյանը պատասխանել է. «Որ այդպես լինի լավ կլինի»:

15 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, Վենետիկ, 1836, էջ 11:

16 Տե՛ս Հ. Տաշյան, Յուդայական Հայերէն ձեռագրաց..., էջ 592-596:

17 ա) «Քանզի գերբն եւ գուրն եւ գորպէսն աշխարհի չասաց Մովսէս, այլ թէ ի սկզբանէ արար Աստուած, զի մարթ էր մասամբն նման գոլ արարածոցս արարչին» ևն, էջ 592 (Ծն. Ա, 1-ի մեկնությունից):

բ) «... Մահկանացու անմահանալն չէր մարթ, եւ եթէ էր՝ լինէր իբրեւ զառասպելն զոր ասեն՝ Աղեքսանդրոս ոմն անմահ կայ, այնքան մաշեալ, որ լեզու միայն է մնացեալ. զոր արկեալ ի շիշ, ասեն, հեծէ եւ ասէ՝ ուրեմն թէ Ագամ անմահացեալ էր՝ լինէր իբրեւ զիս. թերեւս դիւացն է ցնորքս այս», էջ 593 (Ծն. Գ, 22-ի մեկնությունից):

18 Բացի №229 գրչագրից Վիեննայում պահվում է նաև Վարդանի Հնգամատյանի մեկնության 1602 թվվին արտագրված մի այլ գրչագիր՝ 482 համարի տակ:

19 Բ. Կյուլեսերյան, Եղիշէ, Քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1909, էջ 160:

20 Գ. Հովսեփյան, Զազավանից ժողովը, «Շողակաթ Հայագիտական ժողովածու», Վաղարշապատ, 1913, էջ 32:

